# ԳԻՐՔ
# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Կայսերն Փոնցիանոսի · և կնոջն
Թագուհւոյ · և որդւոյ նորին
Դիոկղետիանոսի · և Եօթանց
Իմաստասիրաց:

Տպագրեցաւ՚ի Հայրապետութեան Գերա
գահ Ս. Աթոռոյն Ս՟յ Էջմիածնի Տ՟ն
Ղուկասու Սրբ՟զն կաթուղիկոսի
Ամ՟ն Հայոց:

Եւ ՚ի Պատրիարգութեան Ս՟յ Եր՟մ
Տ՟ն Յովակիմայ Երջանկափառ
Վարդապետի:

Վեհափառ հրամանաւ Սուլթ[ան]
Սելիմխանին Մայրաքաղաքիս Կոս
տանդնուպօլսոյ Սբ՟զն Արքի Եպիս
կոպոսի Տ՟ն Զաքարիոյ Ազգասէր
Կարգաւորի Աճառեան Պատրիարգի:

՚Ի թուին Հայոց՝ ՌՄԽԱ: Ապրիլի ԺԲ

՚Ի տպարանի յօհաննէսի և պօղոսի:



✲ Երեք մանկունքն՚ ի բոց հնո կի

✲ Ա՜ հրեշտակ տն՚ ի մէջ նո կի

## ※ Պատմութիւն Կայսերն Փոնցիանոսի և Կնոջն․ և որդւոյ նորին Դիոկղէ‿տիանոսի․ և Եօթն Իմաստ‿ասիրացն ։

ԸՑՐ Ի ՀՌՈՄ

Թագաւոր մի՝ անուամբ Նորա
մոգոլոս կայսր։ Նա ունէր
իւր ըատրատելատ մի փոն‿
ցիանոս անուամբ․ յոյժ զօրեղ և քաջ․
որև ՚ի բազում տեղիս ՚ի պատերազ
մի՝ արարեալ էր քաջութի՟ մեծ ։
Սաստի հաճոյ թուեցաւ փոնցիա‿
նոս առաջի կայսերն մոգոլոսի․ և



գո

Гос. Библиотека
1590

գովեաց զնա յոյժ . և խոստացաւ
տալ նմա զդուստրն իւր գեղեցիկ
'ի կնութի . զի յետ մահուան իւրոյ
ժառանգեսցէ փոնցիանոս զաթոռ
նոր : որև եղև իսկ :

Եւ յորժամ եառ փոնցիանոս ըզ
դուստրն մողոսի և փեսայացաւ
նմա , յայնմ հետէ յանձնեաց մողո
լոս զթագաւորութին իւր փոնցիանոսի
փեսային իւրոյ և ասէ : Ահա ես
ծերացեալ եմ և այլ ոչ կարեմ կա
ռավարել զզօրսդ իմ . արդ օրհնութբ
իմով բարով և խաղաղութբ վայե
լեսցես զաթոռն քո : Եւ տուեալ
հրաման որ աղաղակեաց մունետիկն
'ի մէջ քաղաքին ասելով . թէ այսու
հետև կայսր և թագաւոր հռօմայ՝
փոնցիանոսն է : Եւ ամենայն նախա
րարքն և կուսակալքն և մեծամեծ
իշխանքն՝ եկեալ երկրպագանէին
փոնցիանոսի և ասէին . կեցցէ' ար
քայ : Եւ կայսրն մողոս յետ սա
րոյ միոյ՝ մեռաւ խաղաղութբ :

 4672-ով Եւ

31313-64

Այս յոյժ զուարձացոյց Փոնցիանոս
զերկիրն իւր։ Որ և ՚ի մեծամեծաց
մինչև ցփոքունսն՝ ամենեքեան գոհ
կային մատուցանէին։ Այս յետ երկու
ամի թագաւորութեն իւրոյ՝ եղև նր
մա զաւակ արու․ որ եղև յոյժ խըն
դութիւն արքային և նախարարացն․
որք անուանեցին զանունն նորա՝

Դիոկղետիանոս։

Այս յորժամ եղև մանուկն Դիոկ
ղետիանոս է ամաց , մայր նորա
հիւանդացաւ մերձ ՚ի մահ․ և կո
չեաց առ ինքն զկայսրն և ասէ ցնա։
Արքայ՝ աղաչեմ զքեզ․ զի ունիմ
խնդիրք մի փոքրիկ ՚ի քէն զի կատա
րիցես ինձ։ Ասէ կայսրն՝ խօսեաց
թագուհի և ես շուտով կատարե
ցից զխնդրուածս քո։ Ասէ թա
գուհին․ գիտեմ որ այս ցաւս որ
դիպաւ ինձ՝ ցաւ մահու է․ աղա
չեմ զքեզ արքայ՝ զի յետ մահուան
իմոյ յորժամ առնես այլ թագուհի
մի՛ տայցես հրաման թագուհոյն քո


որ

որ իշխեաց 'ի վերայ որդւոյ իմոյ։
Զի եթէ նա իշխեաց ի վ̅ր որդւոյ
իմոյ, որդին իմ ո՛չ զերծանէր 'ի մահ
ուանէ ։ Այլ եղեալ պահեալ յօ-
տար երկրի՝ մինչև զարգասցի և զօ-
րասցի որդին իմ։ Եթէ զայս արաս
ցես՝ բազում բարութիս հանդիպի
քեզ և որդւոյ իմոյ ։ Ասէ կայսրն.
ո՛վ սիրելի Թագուհի իմ կատարե-
ցից զխնդրուածս քո ։

Եւ ապա յետ սակաւ աւուրց ,
վախճանեցաւ Թագուհին. և ա-
րար կայսրն կոծ մեծ ի վ̅ր Թագու-
հոյն և թաղեաց զնա պատուով։
Յայնժամ Թագաւորն յետ կոծոյն՝
սկսաւ տրտմիլ և զմտաւ ածել թէ
զի՞նչ արասցէ զմիամօր որդին իւր։
Եւ հարցեալ իշխանացն՝ թէ զմիա-
մօր որդին իմ զի՞նչ արարից՝ որ և
յետ մահուան իմոյ կառավարեսցէ
զաթոռն իմ։ Ասեն նախարարքն և
իշխանքն. ա՛րքայ յաւիտեա՛ն կեաց։
Կան արտաքոյ քաղաքիս իմաստա-

 ունք

սէրք է · կոչեմ զմիտս 'ի նոցանէ և
տո՛ւր զորդին քո 'ի ձեռս նոցա զի
իմաստնացուսցեն զնա։

Յայնժամ հրամայեաց արքային գը
րել հրովարտակ՝ զի եկեսցեն նո
քա առ ինքն · որք եկին իսկ։

Նա՛ արքային ողջունեաց զնոսա սիրով ·
և մեծարեաց զնոսա և պատուեաց։

Նա՛ ասէ արքային ցիմաստասէրսն ·
գիտէք սիրելիք իմ թէ վասն է՞ր կո
չեցի զձեզ ։ և նոքա ասեն՝ ոչ գի
տեմք։ Նա ասէ արքայն · ունիմ որդեակ
մի՝ որ միամօր է ինձ · և կամիմ զնա
տալ ձեզ · զի իմաստութեամբ ձերով
ուսանիցի զհանճար · որ և յետ մա
հուան իմոյ կառավարեսցէ զաթոռ
թագաւորութեան իմոյ։

Նա ասէ առաջին դպրապետն (որում
անուն էր պանցիլիոս ·) արքայ
յաւիտեան կաց · տո՛ւր զորդին քո
'ի ձեռս իմ · և ես ծառայեցից որ
դւոյ քո · և ուսուցից նմա՝ զոր ինչ
ես և ընկերքն իմ գիտեն · մինչև


յեօթն

յեօթն ամ։ Ապա ասէ երկրորդ դպ
րապետն․ ո՛րքայ յաւիտեան կաց․
տուր զորդին քո 'ի ձեռս իմ․ և ես
ծառայեցից որդոյ քո․ և ուսուցից
նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գի
տեմ․ մինչև 'ի վեց ամ։ և անուանի
ծառայ քո՝ չենթալոս։ Ապա յառաջ
գոյ երրորդ դպրապետն որում ա
նունն էր գարդոն․ խօսի և ասէ․
ո՛րքայ յաւիտեան կաց․ տուր զոր
դին քո 'ի ձեռս իմ․ և ես յօժարութ
ծառայեցից որդոյ քո․ և ուսուցից
նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գի
տեմ․ մինչև 'ի հինգ ամ։ Ապա խօսի
չորրորդ դպրապետն որում անունն
էր մալխիորոսն և ասէ․ ո՛րքայ յաւի
տեն կաց․ տուր զորդին քո 'ի ձեռս
իմ․ և ես յօժար կամօք ծառայեցից
որդոյ քո․ և ուսուցից նմա՝ զոր ինչ
ես և ընկերքն իմ գիտեմ․ մինչև 'ի
չորս ամ։ Ապա յառաջեաց հինգե
րորդ դպրապետն․ խօսի և ասէ․ յի
շեա զիս տէր՝ զի բազում ամ ծա



ռայ

ուայեալ եմ հօր քո։ արդ տուր զոր
դրին քո ՚ի ձեռս իմ. և ծառայեցից
որդւոյ քո. և ուսուցից նմա՝ զոր ինչ
ես և ընկերքն իմ գիտեմ. մինչև
յերեք ամ։ և անուանի ծառայ քո
յովսէփ իմաստասէր։ Այլ գոյ յա-
ւուր վեցերորդ դպրապետն որում
անուն էր կղէոպաս և խօսի ասե-
լով. մրքոյ յաւիտենին կաց. ծառա՛յ
եմ արքայի իմոյ. արդ տուր զոր-
դին քո ՚ի ձեռս իմ. և ես միամտութ̅
ծառայեցից որդւոյ քո. և ուսուցից
նմա՝ զոր ինչ ես և ընկերքն իմ գի
տեմ. մինչև յերկու տարի։
Այլ եօթներորդում դըպրապետն
անուանմբ յովակիմ՝ ձայնեաց առ
արքայն և ասէ. մրքոյ յաւիտենին
կաց. և ունկնդի՛ր լեր ծառայի. զի
ծառայ քո եմ ես և ընկերքն իմ.
արդ տուր զորդին քո ՚ի ձեռս իմ
և ծ̃յեցից նմա յօժար կամօք. և ու-
սուցից նմա՝ զոր ինչ ես և ընկերքն
իմ գիտեմք. մինչև ՚ի մէկ տարի։

Իսկ այսպէս եօթանեքին իմաստա-սէրքն խոնարհութեամբ և հեզութեամբ և ամօթխածութեամբ զայս արարին պատասխանի արքային։

Իսկ ասէ արքայն. շնորհակալ եմ ձեզ ով իմաստուն դպրապետք. որ սիրով ընդունեցիք զմիամօր որ դեռակն իմ։ Բայց եթէ տայց զոր-դին իմ միոյդ միայն, միւսքդ արհա-մարհեալ եղանէք ասաի. ապա տայց զորդին իմ ձեզ ամենեցուն. և զձեզ յանձնեմ նմա. որ խնամ տանիք որ-դոյն իմոյ յօժարական կամօք. և հո-գաբարձութեամբ ուսուցանէք զիմա-տասիրութիւն և զհանճար. մանաւանդ զաստուածգիտութիւն և զամենայն փիլիսո-փայական արարողութիւն։ Զայս ա-սացեալ արքային՝ համբուրեաց ըզ-մանուկն. և առեալ զձեռանէ որ-դոյն՝ ետ ՚ի ձեռս դպրապետացն և ասէ. երթիջէք խաղաղութեամբ. և Տէր եղիցի ընդ ձեզ։

Իսկ դպրապետքն խոնարհեալ եր-


կեր

կիրպագին արքային . և առեալ զոր_
դի արքային զմանուկն դիոկղետիա
նոս` գնացին յօթևանս իւրեանց:
Այլ դպրապետն պանցկլխան` ետուր
կազմել գեղեցիկ դարպաս մի զար
մանալի յօրինուածով արտաքոյ քա_
ղաքին . և անդ եդին զորդի ար_
քային : Այլ զդարպասի բոլորն և
զառաստաղն` թէ 'ի ներքուստ և
թէ արտաքոյ դարպասին` զամենե_
սեանն բովանդակ գրովք լցին . զի
յելանելն և 'ի մտանելն` որդին ար
քայի 'ի գիրն հայի . և ինքեանք յօ_
ժարութե̅ և հոգաբարձութե̅ ուսու_
ցանէին զմանուկն մինչև յամ մի:
Այլ 'ի լնուլ ամին` ասէ պանցկլխան
դպրապետն . որպ̅ փորձեսցուք զա
շակերտս մեր` թէ առեա՞լ է ինչ 'ի
դպրուե̅ս մերմէ թէ ոչ: Պատաս_
խանի ետ դպրապետն կաթոն և
ասէ . բարւ է զոր ասեսդ . յորժամ
ննջեսցէ` յայնժամ դիցուք իներքոյ
չորեցունց ոտիցն մահճին տերևս

 ծա

ծառոց · և մեք կացցուք յանդիման նր̃ մինչև զարթիցէ · և տեսանեմք թէ զինչ խօսի մեզ մանուկն ։ Աշ. դպրապետքն ա̃մքեան՝ ասացին այո՛ այդպէս արասցուք ։ Աշ. յորժամ ննջելոյ որդի արքային , յայնժամ եդին զճիւղս ծառոյն ի ներքոյ ո-տից մահճին · և ինքեանք կացին յանդիման նորա մինչև զարթեաւ մանուկն ։ Աշ. իբրև զարթեաւ , պշուցեալ հայէր ընդ առաստաղն և ընդ գետինն · զոր տեսեալ դըպրապետացն, ասեն՝ որդեակ ընդէ՛ր պշուցեալ հայիս ընդ առաստաղն և ընդ գետինն ։ Պատասխանի ետ որդի արքային և ասէ · վս̃ այն հայիմ զի կամ առաստաղ տաճարիս ցածուցեալ է , և կամ գետնին յատակն բարձրացեալ է ։ Զայն լուեալ դպ-րապետացն՝ ասեն ցմիմեանս · եթէ Մնասցէ մանուկս կենդանի , լինի կատարե̃լ իմաստասէր ոպ̃ պղատոն · կամ ոպ̃ արիստոտէլ ։

Սա՛ յայնժամ ժողովրդեան դպրա_
պետքն և եկին առ կայսրն և ա_
սեն՝ արքայ յաւիտեան կաց· երա_
նի՛ է քեզ և երանի՛ է օր ծննդեան
մանկանն քո· որ այսպիսի սուր մը
տօք մանուկ չէ տեսեալ մեր· զի
դեռ ամ մի է՝ և ջանայ որ զմեզ ան
ցանի· և եթէ հասանի նա 'ի չափ
հասակի՝ ո՛չ լինի նման 'ի վր̄ երկ
րի: Բայց լա՛ւ էր քեզ արքայ՝ զի
ունկնդիր լինէիր մեզ զոր ինչ խօ
սելոց եմք առաջի արքայիս· և մի՛
բարկանայցես խօսից մերոց:

Ասէ կայսրն· վս̄ է՞ր բարկանամ
եթէ բարի լինի խօսք ձեր:

Ասեն դպիրքն· լաւ էր քեզ արքայ
զի ամուսնանայիր դու և լինէր քեզ
բազում որդիք· որ յայսպիսի իմաս_
տըս վարժէին· որպս̄ այս որդին քո
դիօկղետիանոս· որ և յետ մահուան
քո՝ մի մի տիրեսցեն աթոռոյ թա_
գաւորութե̄ քո:

Հաւանեցաւ կայսրն և ասէ·

եկե՛ք ՚ի խնդիր և գտանէք գեղե-
ցիկ աղջիկ մի · և ես առից զնա ինձ
՚ի կնութիւն ։ Ապա գնացեալ հրաւի-
րակքն՝ շուրջ եկին ՚ի բազում տե-
ղիս · և գտին զդուստրն մոգղոսի
արքային՝ գեղեցիկ յոյժ · և բերին
առ կայսրն ։ Որ և հաճոյ թուեցաւ
աչաց կայսերն · և արարին հարսա-
նիք · և եղև ուրախութիւն մեծ ։
Ապա եդ կայսրն ՚ի գլուխ նր թագ ·
և անուանեաց զնա թագուհի · և սի-
րեաց զնա յոյժ վս գեղեցկուե նր
և պճնեց զնա զարմանալի կերպի
և կացին բազում ժամանակս և ոչ
եղև նոցա զաւակ ։ Ապա կինն խիստ
տարակուսեալ էր վս անզաւակուե
իւրոյ · կարծէր թէ յորքայէն է ։
Ապա ետուր գտանել գաղտ ՚ի յար-
քայէն գեղեցիկ երխտասարդ մի · և
բերեալ առ ինքն՝ պճնեաց զնա կա-
նացի զգեստիւ · և հանապազ շնայր
ընդ նմա · մի թէ զաւակ ծնանիմ ա-
սելով ։ և այսպէս պոռնկէր և պահէր


զնա

զնա 'ի սենեկի իւրում առ կոյս աղ
ջիկ: Յետոյ լուաւ Թագուհին թէ
ունի Թագաւորն որդի մի միամօր.
և տուեալ է զնա 'ի ձեռս իմաստա
սիրաց՝ ուսանիլ զիմաստութի՟ և ըղ
հանճար: Եւ փաղփաղակի չար խոր
հեցաւ 'ի միտս իւր և ասէ. լինէր
որ մեռանէր որդի կայսերն. և ես
ծնանէի որդի՝ որ ժառանգ լինէր:
Եւ այսպիսի խորամանկութ՟բ խոր
հէր օրըստօրէ թէ որպիսի հնարիւք
կարօղ լինիցի սպանանել զմանուկն
և գտեալ ժամ զի աղաչեսցէ ար-
քային բերել զմանուկն:

* Խնդիր Թագուհոյն 'ի Կայսերէն՝ զի
բերցէ զմանուկն:

Եւ 'ի գիշերի միում մինչդեռ
ընկողմնեալ էր կայսրն ի վ՟ր
մահճին իւրոյ, խօսեցաւ
ընդ Թագուհոյն և ասէ: Սիրելի
տիկին իմ. արդ զծածուկ խորհրդ


սրտի

սրտի իմում ծանուցից քեզ · գի-
տեա՛՝ զի ո՛չ գոյ այլ ստեղծուած 'ի
ներքոյ երկնից որ սիրէ զքեզ առա-
ւել քան զիս: Ասէ Թագուհին ·
եթէ այնպէս իցէ որ սիրես զիս ,
փոքրիկ խնդիրք մի ունիմ՝ արդ
խնդրեցից 'ի քէն · եթէ կատարես,
երևի ապա սիրոյ նշոյլն : Ասէ
կայսրն · զոր ինչ խնդրես՝ արարից
վաղվաղակի: Ասէ Թագուհին · տե-
սանես՝ զի դեռ զաւակ ո՛չ ունիմք
որ մխիթարէ զմեզ · արդ յղեա՛ և
կոչեա՛ զորդին քո առ քե՛զ՝ զոր տու-
եալ ես 'ի ձեռն իմաստասիրաց · և
ես տեսուք̃ նորին ուրախասցայց ·
մինչև տր̃ ա̃ծն իմ պարգևեսցէ մեզ
զաւակ : Պատասխանի ետ կայսրն
և ասէ · ո՛վ սիրելի Թագուհի իմ ·
է̃ ամ է որ և ես չեմ տեսեալ զոր-
դին իմ · վս̃ աղերսանաց քոց՝ կա-
տարեցից զխնդրուածս քո:
Ի՛ նոյն ժամայն հրաման արար
արքայն գրել հրովարտակ առ է̃

իմաստասէրան․ և կայսերական կըն
քուշն կնքեալ աւագերաց․ զի 'ի տօնի
պենտակոստէին բերցեն զորդին Նր։
Ա՞յ թէ յապաղեսցին՝ մահու մե_
ռանիցին։

Ա՞յ յորժամ հասին Թղթատարքն
առ իմաստասէրան, ետուն զհրո_
վարտակն 'ի ձեռս նց․ և նոքա ա_
ռեալ բացին և ընթերցան․ և վե_
րահասու եղեն կամաց արքային։

Ա՞յ 'ի գիշերին՝ եղեալ դպրպետքն
հայեցան յաստղն․ եթէ արքայի հ°
րամայեալ օրն տարցուք զորդին,
զինչ լինիցի նմա։ Տեսին և ծա_
նեան՝ զոր թէ հրամայեալ օրն տա
նիցեն, վնաս լինի մանկանն․ և թէ
ոչ տանիցեն՝ իւրեանց վնաս լինի։

Ա՞յ այսպէս տրտմեալ և տարակու_
սեալ կային յոյժ․ զի ոչ գիտէին
թէ յոր կողմն դառնէին․ այլ լա՞ւ հա
մարէին իւրեանց մեռանիլն քան
զորդւոյ արքային։

Ա՞յ մանուկն տեսեալ զվարժպետսն



3/3/3-64
ZUUՌ-

այնպէս տրտում և տխուր՝ սկսաւ
և ինքն տրտմիլ • և ասել ընդ միտս
իւր թէ՝ զինչ պատահեցաւ վար-
ժապետաց իմոց որ այսպէս տրտում
են • և երկնչէր հարցանել։ Ապա յե-
տոյ վստահացեալ՝ սկսաւ հարցա-
նել զվարժապետսն իւր և ասէ • ա-
սացէ՛ք ինձ զպատճառն յաղագս ո-
րոյ իրաց տրտմեալ էք։

Ասեն դպրապետքն • հայր քո ըզ-
քեզ խնդրեալ է • և հրամայեալ է թէ
՚ի տօնի պենտակոստէին բերէք զոր-
դին իմ։ Ապա յորժամ ընթերցայք ըզ
հրովարտակ հօր քո՝ ՚ի նոյն գիշերին
գնացեալ հայեցայք յաստղն • և տե-
սաք՝ որ թէ հրամայեալ օրն տար-
ցուք զքեզ առ հայրն քո՝ նոյն ժա-
մայն սրով մեռանիս դու • վասն այն
տրտում եմք և ոչ գիտեմք թէ
զինչ արասցուք։

Ասէ մանուկն • ցուցէ՛ք ինձ զաստղն
զայն՝ զի ես այլ տեսից զնա ։
Ապա յորժամ ցուցին նմա զաստղն՝


հայե

հայեցաւ և ետես զայն յայտնի զոր
ինչ ասացին վարժապետքն իւր։
Եւ մինչդեռ ապուշ մնացեալ էր
և հայէր յաստղն, ետես այլ փոք-
րիկ աստեղունք շուրջ զնովաւ ոսկ-
դիր գրեալ. և ցուցանէր թէ՝ մին-
չև յեօթն օր եթէ ոչ խօսեսցի,
մնայ կենդանի. բայց յեօթն օրն՝
է անգամ տարցեն զնա ՚ի պահանումն.
և բազում նեղութեամբ ազատի։
Իբրև ետես մանուկն զաստղն զայն
կոչեաց զվարժապետքն իւր և ասէ.
կարօղ էք դուք յայն եօթն օրն
որ փրկէք զիս ՚ի ձեռաց հօր իմոյ։
և եցոյց նոցա զաստղն զայն։
Եւ նայեցեալ վարժապետքն զաստղն
որ ըստոյգ է խօսք մանկանն զոր
ինչ և ասաց։ Եւ ասեն. օրհնեալ է
Աստուած որ այսպիսի շնորհս ետուր ա-
շակերտին մերոյ. որ կատարեալ բուն
իմաստնանայր եղեալ՝ իմաստութեան
իւրով և ողորմութեամբն Աստուծոյ՝ կարողացաւ
իմանալ զմահն իւր և որպէս ապրիլն



Եւ

Նոքա պատասխանեալ ասեն ցմանուկն·
ոչ կարող զօրութեամբ՝ ամենքս մէկ մէկ
որ փրկեսցուք զքեզ ՚ի չար պատուհաս
մանէն որ գալոց է ՚ի վերայ քո :
Նոքա սկսան պատրաստել և գնալ
առ կայսրն :

Իսկ մանուկն մինչդեռ ննջէր ՚ի
միջօրէի ՚ի վերայ մահճին իւրոյ, ե_
տես յերազին՝ զի չորս արմատ ծա
ռոց բուսեալ էր ՚ի մահճի իւրում·
և ՚ի նոյանէ ելեալ եօթն ճիւղ · և
՚ի միջի նոցա կին մի նման վիշապի՝
զոր կամէր ՚ի ճիւղիցն մահադեղ
այնորիկ որ ննջէր ՚ի մահիճն :
Զարթեաւ որդին արքային ՚ի քնոյն
և պատմեաց զտեսիլն վարժապետաց
իւրոց : Նոքա վարժապետքն գնացեալ
հայեցան յաստղն · և իմացան թէ
զինչ էր երազն · և եկեալ պատմե_
ցին որդւոյ արքային : Նոքա ասեն ·
չորս արմատքն ծառոյն՝ դ տարերքն
են · և կինն վիշապ՝ յետնամայրն է ·
և է ճիւղքն՝ եօթն օրն է : եթէ



խօ

խօսեսցիս յայն եօթն օրն՝ մինչու
մեռանիցիս։ Յետ այսորիկ՝ ելան
'ի ճանապարհ · և եկին առ հայրն
առ արքայն։

Եւ իբրև լուաւ զգալն որդւոյն
իւրոյ կայսրն փոնցիանոս, ել ընդ
առաջ նր̅ թմբկօք և փողօք և զանա
զան արուեստականօք և բազում
զօրօք։ Եւ տեսեալ մանուկն ըզ
հայրն իւր՝ ասէ վարժապետացն ·
ահա գայ հայրն իմ · և դուք պատ_
րաստ կացէք մի թէ փրկէք զիս ա̃ւ
յայնմ պատահմանէն որ գալոցն է
իվ̅ր իմ։ Ասեն դպր̃պետքն · որդեակ
մի՛ վախեր · ողորմութ̅ն այ̅ մեզ պատ
րաստ եմք և ոչ մոռանամք զքեզ ·
այլ դու այսուհետև ոչ ես խօսես_
ցիս, զի հասեալ է ժամ քո։ զայս ե_
տուն պատուէր որդւոյ արքային։

Եւ ահա գայր թգ̃աւորն ծանր փա_
ռօք և բազմութ̅ հեծելոցն · և խո
նարհեալ՝ ետ ողջոյն վարժպ̃տացն ·
և կալեալ զձեռանէ որդւոյն իւրոյ՝



գիրկս

գիրկս արկեալ համբուրեաց զնա և ասէ. որդեակ իմ սիրելի զիմ որդկեաս. քանզի բազում ժամանակ է որ չեմ տեսեալ զքեզ։ Ապա՛ որդին խոնարհեալ երկիրպագ հօրն. և ոչ ինչ խօսեցաւ։ Ապա՛ կայսրն տեսեալ՝ զարմացաւ ընդ միտս իւր և ասէ. գուցէ ուսեալ է ՚ի վարժապետացն իւրոց ո՛չ խօսիլ առաջի զօրացն։ Ապա՛ յորժամ եկին ՚ի դարպասն, առեալ թագաւորն զձեռանէ որդւոյն իւրոյ և տարեալ նստոյց մերձ առ իւր և ասէ. որդեակ իմ ո՞րպէս հրահանգեցին զքեզ վարժապետքն քո. և զի՞նչ ուսար ՚ի նոցանէ։ Ապա՛ մանուկն խոնարհեալ երկիրպագ հօրն իւրոյ և ո՛չ խօսեցաւ։ Զարմացաւ կայսրն և ասէ. որդեակ ընդէ՞ր ոչ խօսիս ընդ իս։

Ապա՛ Թագուհին լուեալ զձայն որդւոյ արքային՝ ուրախացաւ յոյժ և ասէ. երթայց և տեսից զնա։ և ընտրեաց ՚ի կուսիցն զգեղեցկատեսիլսն



և

և առեալ ընդ իւր՝ գնաց առ նա։ Եւ կայսրն տեսեալ զԹագուհին՝ նստոյց մերձ առ որդին իւր։ Եւ հարցեալ Թագուհին ցկայսրն և ասէ՝ ո՞ւմ է որդին քո։ Ասէ կայսրն այս իմ է. և ոչ գիտեմ զինչ եղև սմա որ ոչ խօսի ընդ իս։ Ասէ Թագուհին. տուր ինձ հրաման և ես տարայց զնա 'ի սենեակն իմ և խօսեցայց ընդ նմա և նա խօսեսցի ընդ իս։ Ասէ կայսրն. արի՛ կա՛ց յոտին որդեակ իմ և գնա՛ ընդ մօր քո։ Եւ մանուկն ելեալ երկրպագեաց հօրն և գնաց ընդ յետնամօրն։

Եւ յետ տանելոյն զնա Թագուհին 'ի սենեակն իւր՝ հրամայեաց ամենայն 'ի բաց գնալ յիւրմէն. և առեալ զձեռանէ մանկանն՝ նստոյց մերձ առ իւր։ Խօսի և ասէ. ո՛վ սիրելի իմ դիւկղետիանոս՝ լուեալ էի զհամբաւ գեղեցկութեան քո. և այժմ տեսանելով տեսի և ծանեայ դէմ յանդիման զգեղեցկութիւն քո.



և

և անձն իմ սիրեաց զքեզ յոյժ:
Արդ ով սիրելի իմ դիոկղետիանոս ուրախ լեր ընդ իս. զի վն սիրոյ քոյ պահեցի զկուսութին իմ. զի դու շատայեալ հանգիցես 'ի կուսութենս իմ: աղաչեմ զքեզ խօսեաց ընդ իս. և ասա ինձ զոր ինչ և կամիս. և ես կատարել պատրաստեմ զամն զկամս քո:
Զայս ասացեալ և գիրկս արկեալ զմանկամբն՝ կամէր համբուրել ըզնա. և մանուկն դարձուցել զերեսն իւր՝ ոչ ետուր նմա համբուրել:
Ասէ թագուհին. ահա խռովեցեր զիս ով սիրելի իմ դիոկղետիանոս. Էկ զի նստեսցուք միասին և ուրախ լինիցուք: Իսկ մանուկն հայէր խոժոռ յերեսս թագուհւոյն:
Ասէ թագուհին. ով սիրելի իմ դիոկղետիանոս՝ եթէ պատկառես եւ ոչ համարձակիս խօսելոյ ընդ իս, ահա կոյս թուղթ և թանաք. առ և գրեա և ծանո ինձ զկամս քո՝ եթէ լինի ինձ յոյս առ 'ի վայելել զսէր քո


Իսկ

Եւ մանուկն առեալ զԹուղթն՝
գրեաց այսպէս. ո՛վ Թագուհի՝
ո՛չ կամիմ ես պղծել զտունն եւ զան
կողին հօր իմոյ. քանզի ոչ ինչ լինի
ինձ շահ. այլ չարաչար մեղք է ա-
ռաջի այ. աղաչեմ զքեզ մի՛ բռնա-
դատեր զիս. զի այդ գործդ որ դու-
կամես՝ ինձ զէ՛ն է եւ վնասակար.
եւ ամօթ ՚ի մարդկանէ. ո՛չ կարեմ
գործել ես այդ գործդ: Եւ ետ ըզ
Թուղթն առ Թագուհին:

Յորժամ էառ Թագուհին ըզ
Թուղթն ՚ի ձեռանէ մանկանն եւ
ընթերցաւ, իսկոյն ձգեց մեծաձայն
եւ պատառեաց զհանդերձսն եւ զբաճ
կոնն. եւ ըղընգամբն ճանկեաց զե
րեսն եւ եհան արիւն. եւ բացեալ
զգլուխն՝ փետեաց զհերսն. եւ սկը
սաւ աղաղակել եւ ասել՝ աղաչեմ
զձեզ վս այ օգնեցէք ինձ. զի կամի
այս որդի արքային լլկել զիս չա-
րեզք. ծանուցէք տեառն իմոյ գա-
ռուխս եւ տեսանել զեղկելիս: Եւ


ծա

Ծանուցին ծառայքն՝ արքային։

Եւ կայսրն եմուտ առ Թագուհին և ասէ. ո՛վ սիրելի անձն իմ զինչ գործես. ընդէ՞ր այդպէս տրտմես և լաս. ինչ պատահեցաւ քեզ։

Ասէ Թագուհին. տէր իմ արքայ ողորմեա ինձ. զի սա չէ որդի տ̃նս իմոյ արքայի. այլ սա չար է և անզգամ. և բարուք չնացօղ։ Յորժամ բերի զդա 'ի ներքս և ջանայի խօսեցուցանել, յանկարծակի սկսաւ ձեռն արկանել 'ի յիս. և կամէր ընդ իս մեղանչել։ Եւ երբև ես ոչ կամէի՝ պատառեաց զհանդերձս իմ. և արիւնեաց զերեսս իմ. և այսպէս խայտառակեաց զիս. զոր տեսանէ տէրն իմ արքայ։

Եւ տեսեալ կայսրն զերեսս Թագուհոյն արիւնաթաթախ և ըզ հանդերձն պատառեալ՝ հաւատաց։ Եւ բարկացեալ ասէ՝ տարէ՛ք կախեցէ՛ք որ ո՛չ տեսանէ աչս իմ զայդպիսի անառակ որդին։



Եւ

Ա՜ լուեալ Նախարարացն՝ գան
առ կայսրն և ասեն. արքայ յաւ-
իտեան կաց։ Որդին քո միամօ՛ր է
քեզ. և ո՛չ ունիս այլ որդի որ ժա-
ռանգ լինիցի քեզ. չէ՛ արժան որ ա-
ռանց քննութ̅ե սպանցես զորդին քո
վ̅ս փոքր ինչ բանի։ զի որդին քո
ո՛չ խօսի. ոչ գիտես ասել տէր մեր
արքայ թէ արժա՛ն է մահու թէ ոչ։
Այլ պարտ է արգելուլ զնա 'ի բանտ
մինչև 'ի վաղեան օրն. և արասցես
դատաստան իրաւամբք. և եթէ գը-
տանիցի մահու ինչ արժանի՝ մեռցի։
Զի մի՛ ասիցեն ժողովուրդքն՝ թէ
կայսրն սպանանեալ՝ առանց իրաւանց
և դատաստանի՝ հրամայեաց սպանա-
նել զմիամօր որդին իւր։
Իբրև լուաւ կայսրն զայս 'ի Նախա-
րարացն իւրոց՝ շիջաւ ասկաւ ինչ մի
բարկութ̅ի ն̅ր և ասէ. տարէք ար-
գելէք զնա 'ի բանտն մինչև 'ի վա-
ղեան օրն. զի լինիցի դատաստան
և իրաւամբք մեռցի։

Իսկ Թագուհին իբրև լուաւ թէ
ոչ սպանանեցին զորդի արքային,
սկսաւ ճչել և լալ և փոյթ տալ ան-
ձինն: Իսկ այնպէս աղաղակէր ճչէր՝
որ լսելի եղև ամենեցուն. և ծանուցին
կայսերն: Յայնժամ եկեալ կայսրն
'ի գահոյիցն իւր՝ եմուտ առ Թա-
գուհին. և տեսանէր զի յոյժ անմ-
խիթար լայր: Ասէ կայսրն. ո՛վ սի-
րելի տիկին իմ զինչ եղև քեզ՝ որ
այդպէս անմխիթար լաս: Իսկ Թա-
գուհին անկեալ առ ոտս արքային
և ասէ. մի թէ ոչ գիտես զինչ արար
նզովեալ որդին քո. որպէս կամէր բռ-
նադատել և լլկել զիս. որպէս դու իսկ
տէրդ իմ տեսեր. և ասացեր թէ՝
կորուսից զնա դառն մահուամբ.
և նա դեռևս կենդանի է:
Ասէ կայսրն. վասն այն արգելի զնա
և ձգեցի 'ի վտանգին՝ զի կամիմ քն-
նութի առնել առաջի նախարարացն
իմոց. և թէ գտանիցեմ 'ի նմա վնաս
ինչ մահու՝ յայնժամ հրամայեմ չա-
րաչար սպանանել զնա:

Ասէ Թագուհին · եթէ որդին քո մնասցէ կենդանի՝ յայնժամ եղիցի քեզ որպէս եղև ծառի միոյ պտղատուի ՚ի մոլեալ արմատոյ նորին: Ասէ կայսրն · պատմեա ինձ զառակդ զայդ: Ասէ Թագուհին · պատմեմ քեզ զառակս զայս · բայց լուր ՚ի միտ առ: Արդ սկսաւ ասել:

* Առաջին առակ Թագուհւոյն · որ հաւանեցոյց զԿայսրն սպանանել զորդին:

Կայր ՚ի քաղաքի միում այր մի · և ունէր գեղեցիկ դրախտ մի և էր ՚ի մէջ դրախտին՝ ծառ մի երևելի · որ ամ յամէ տայր զպտուղս յոլով: և պտուղ նորա այնպիսի զօրութիւն ունէր՝ որ ամ՟ ցաւոց դեղ լինէր՝ բայց ՚ի հոգւոց: Արդ եղև յաւուր միում եկն տէր այգւոյն ՚ի պարտէզ իւր · և նայեցեալ ի վեր ծառոյն՝ ետես որ ահա փոքր ձիւղ մի ելեալ էր ընդ արմատն:



և

եւ կոչեալ զայգեգործն եւ ասէ ·
դարմանն տար ձիոյս այսորիկ · զի յու-
սամ՝ ՚ի սմանէ առաւել առնուլ
օգուտ՝ քան ՚ի ծառայն մեծէ ։
Ապա յետ աւուրց դարձեալ եկն
տէր այգւոյն ՚ի պարտէզ իւր · եւ նայե-
ցեալ ետես զծառայն ձիւղն որ ոչ
էր աճեալ ։ կոչեաց զայգեգործն
եւ ասէ · վ՟ էր ոչ աճէ ձիւղս այս
ո՛վ այգեգործ ։ Պատասխանի ետ
այգեգործն եւ ասէ · ծառս մեծ եւ
բարձր է յոյժ · ոչ թողու ծագել
արեւ ՚ի վ՟ր սորա · վ՟ն այն ոչ աճէ ։
Ասէ տ՟ր այգւոյն · հարթեա՛ զձիւղն
ծառոյն՝ զի ծագեսցէ արեւն ՚ի վ՟ր
սորա ։ զայս ասացեալ գնաց ։ Եւ ա-
րար այգեգործն այնպէս ։
Ապա դարձեալ եկն տէր այգւոյն ·
եւ նայեցեալ ետես՝ զի այժմ եւս
ոչ էր աճեալ ձիւղն ։ կոչեաց զայ-
գեգործն եւ ասէ · ընդէ՞ր եւ այժմ
ոչ աճէ ըստ կամաց իմոց ։ Ասէ այ-
գեգործն · ոչ է զարմանք որ ոչ աճէ


զի

զի բարձրութիւն ծառիս ոչ թողու-
գալ անձրև ՚ի վե՛ր սորա․ վասն այն
ոչ աճի։ Ասէ տէր այգւոյն․ հատ
զծառն մեծ․ զի լա՛ւ է ճիւղն քան
զծառն մեծ։ զայս ասաց և գնաց։
և այգէգործն եհատ զծառն․ և
նոյնժամայն չորացաւ և ճիւղն։
Այս յետ աւուրց ինչ դարձեալ եկն
տէր այգւոյն ՚ի պարտէզ իւր․ և տե-
սեալ չորացեալ զծառն ճիւղովն՝
ապուշ մնաց։ քանզի զօրութ նորա
՚ի ծառոյն էր․ յորժամ հատին ըզ
ծառն՝ չորացաւ և ճիւղն։
Ասէ թագուհին․ լուա՛ր տէր իմ
արքայ զբան ծառոյն՝ որ անխմաստ
խորհրդով խզուր չորացաւ ծառն․
որ և աղքատք և ցաւագարք նզովե-
ցին զչորացնօղն ծառոյն։
Ասէ արքայն․ ում նմանեցուցեր
զծառն զայն։ Ասէ թագուհին․
ծառն մեծ և երևելի՝ դու ես․ թէ
աղքատք թէ ցաւագարք՝ ապրեան
՚ի տէրութենէ քո խնդան․ և այն տկարք


և

և տնանկք՝ խրատով քո այրին։
Աչս որդւոյն քո ջանայ հարթել ըզ
ճիւղդ քո. այսինքն զզօրութիւն քո.
և յետոյ խափանէ զքեզ՝ որպէս այգէ
գործն զծառն. և թագաւորեսցէ
՚ի տեղի քո։ և ոչ կարէ թագաւորել.
որպէս ճիւղն որ չորացեալ է ծառոյն։
Բայց խափանի թագաւորութիւն քո.
և դու ընդունիս անէծս յաղքա-
տաց և տնանկաց. զի խոստացար
սպանանել զնա և ոչ սպաներ։
Ասէ կայսրն. լաւ առակ ասացեր.
զի ոչ կարէ որդին իմ այնպէս առ-
նել՝ որպէս այգէգործն զծառն զայն.
զի ընդ լուսանալ առաւօտուն՝ ա-
ւանց քննութեան և առանց դա-
տաստանի տամ սպանանել։
Ասէ թագուհին. թէ սպանանես՝
՚ի հանդիստ լինիցիս. և խաղա-
ղութեամբ վայելեսցես
զթագաւորութիւն
քո։

Սաղերն անգամ ատենն գեղեցկաբանական ՚ի նաւ. և պանծելեաց դպրապետն առաջնորդելն մին։

Ավաղի՛ անդր հասեալ կայսրն ՚ի գահոյան իւր. և հրամայեաց դահճապետին՝ իսկոյն առժամայն տանել զորդին իւր ՚ի տեղի սպանման՝ փողով ազդեցութեան։

Ապա հանեալ դահճապետն զորդի արքային ՚ի բանտէն՝ կապեաց ըզձեռսն ՚ի յետս. որպէս օրէն է մահապարտաց։ Ապա եւ ձայնել առաջի նորա մունետիկս ասելով. Թէ ո՛վ ոք կամի մեղանչել ընդ կենսամօրն, այսպիսի մահուամբ մեռցի։

Ապա լուեալ ժողովրդոցն՝ ողբալով մեծաձայն աղաղակէին եւ ասէին. աւա՛ղ աւա՛ղ եւ հազար վախ միամօր որդւոյ կայսերն. որ տանին ՚ի զուր սպանումն։

Յայնժամ պանծլիսա դպրապետն՝ արընթաց երիվարօք եհաս նոցա

և ասէ. մի' շտապիք սպանանել զդա.
զի յոյս ունիմ առ ած որ երթամ
առ կայսրն և աղաչեմ զդա:
Ապա ժողովուրդքն փութացուցա_
նէին զդպրապետն և ասէին. մեք
արգելցուք զդահիճսն. այլ դու
փութա փրկել զմանուկն զի մի' 'ի
զուր մեռանիցի: Ապա մանուկն այլ
խոնարհեցոյց զգլուխն վարժպտին
իւրոյ. իբր թէ կամէր ասել՝ յիշեա
զիս առաջի հօր իմոյ: Ապա դպրպտն
գնաց 'ի պալատն և եմուտ առ ար
քայն. և ողջունեաց մեծաւ պատւով:
Ապա կայսրն բարկութբ ասէ. ով չար
ծեր՝ ոչ լինիցիս դու ողջ: Ասէ
դպրպտն. տէր՝ ողջութե ծառայեցի
և ոչ մահու: Ասէ կայսրն. սուտ է
ամ խօսք քո: Եւ տուր զորդին իմ 'ի
ձեզ լեզուաւ և խօսուն. ուսուցա
նել և դաստիարակել. արդ փոխա_
նակ իմաստութե և հանճարոյ՝ պա
պանձեալ եղև: և յաւել չարիս ևս
զոյս՝ զի կամեցաւ բռնադատել
և

և լքեալ զորդիկինն իմ․ վա՜յ այնր գոր
ծոյ աչաց մեռանելի այսօր․ և զձեզ
իսկ կորուսից դառն մահուամբ։
Նաև դարձեալ․ պապանձումն որդւոյ
քո ՚ի մէնջ ո՛չ է․ զի ընդ մեզ խօսէր
ուղիղ․ ո՞վ է գիտօղ թէ վասն էր
լռեալ կայ։ Այդ որ ասացեր թէ կա
մեցաւ բռնադատել զկինն իմ, ճըշ
մարիտ ասեմ քեզ ա՛րքայ զի սուտ
է բանդ այդ․ զի գիտեմ զնա որ
զայդպիսի իրս ո՛չ գործէ նա։
Այդ թէ վա՜ բանի կնոջ քո սպանցես
զմիամօր որդին քո՝ դառնագոյն լի
ցի քեզ քան զայն որ եղև զինուո
րի միոյ․ որ վասն բանի կնոջ իւրոյ
սպան զշուն իւր․ որ ապրեցոյց էր
զորդին իւր ՚ի մահուանէ։
Նաև կոյսն․ ասա զառակդ զայդ
զի լուեցից։ Նաև դարձեալ․
ո՛չ ասեմ և ո՛չ աշխատիմ․ զի մինչ
ես պատմեցից՝ գուցէ ըսպանցեն
զորդին քո անդ․ և զինչ շահ լինի
ցի ՚ի պատմութենէս։ Այլ թէ կամիս



զի

զի պատմեսցին զառակս, նախ դարձո՛ զորդին քո 'ի մանկութենէ և ած 'ի բանտ. և յորժամ լուիցես յինէն զառակն իմ՝ եթէ հաճոյ լինիցի առակս տեառնդ իմում, ապրեցո՛ զորդին քո. և թէ ոչ՝ սպան զնա:
Եւ հրամայեաց կայսրն դարձուցանել զմանուկն 'ի բանտ՝ մինչև պատմեսցէ դպրապետն զառակն:
Եւ սկսաւ ասել այսպէս:

## ❊ Առակ առաջին դպրապետին պատմելեալ. զոր ասաց հայրերն և փրկեաց զմանուկն 'ի պատուհասէն:

Զինուոր մի կայր զօրաւոր և անուանի յոյժ. և ունէր որդեակ մի փոքր տղայ. և միամօ՛ր էր որ͞պ որդին քո. և յոյժ սիրէր զնա. և երեք նաժիշտք ծառայէին նմա: Առաջինն՝ դիեցուցանէր և կերակրէր: Երկրորդն՝ լուանայր և զգեցուցանէր: Երրորդն՝ օրօրէր և

և քննեցուցանէր։ Արդ՝ զինուորն
այն՝ ունէր այլ ևս շահին մի և
շուն մի. և սիրէր զնս։ Նաև շուննն
այն այնպիսի լաւութի ունէր՝ որ
զինչ տեսանէր 'ի վայրի՝ ընթանայր
զկնի նր. և ոչ դառնայր դատարկ՝
մինչև ըմբռնէր։ Նաև յորժամ ըմ
բռնէր՝ կանգնէր ի վր որսանն և
հայէր. մինչև եկեալ տէրն առնոյր
զորսն 'ի նմանէ։ Այլև՝ շուննն այն
ունէր բնութի զայս ինչ. զի իմանայր
զլինելոցն. և յորժամ կամենայր տրն
ուրեք երթալ՝ եթէ բարի էր ճա
նապարհն այն՝ գայր շուննն և երիցս
խաղայր առաջի նր. և եթէ չար լի
նէր ճանապարհն՝ ոչ գայր և ոչ խա
ղայր. այլ տրտում և տխուր հայէր։
և տէրն՝ այնու ճանաչէր զչարն
և զբարին։
Նաև շահինն այն՝ ունէր սովորութի
այսպէս. զի յորժամ յորս ելանէր
տէրն իւր, ամենևին դատարկ ոչ
դառնայր. այլ հանապազ թռուցեալ
 ըմ

ըմբռնէր զթռչունս եւ բերէր առ
տէրն իւր։

Եւ յաւուր միում կոչեցեալ եղեւ
'ի խաղս առ զինուորականս իւր
եւ ճգունք ժողովեցան 'ի խաղն այն։
եւ գնաց զինուորն եւ տիկինն ընդ նմա.
եւ աղախնայքն եւս. եւ մնաց տղայն
միայն 'ի յօրօրոցին։ Եւ շունն պա
հէր զտղայն. եւ ննջէր շունն ընդ
որմով օրօցային. եւ բազէն նստէր 'ի
վերայ ձողին։ Եւ տանն որմն պատա
ռեալ էր. եւ կայր օձ մի 'ի ներքոյ
որմին. եւ տեսեալ օձն որ ձայն մար
դոյ ոչ ելանէր. այլ միայն գայր
ձայն շնչոյ ելանելոյ տղային 'ի յօ
րօցացն։ եւ հանեալ զգլուխն 'ի ծա
կէն դուրս՝ ետես եւ ահա ոչ ոք էր
'ի տանն. բայց միայն տղէն շնչոյ
ձայնն որ ննջէր 'ի մէջ օրօցին. եւ ե
լեալ օձն գայր ընդ օրօցք տղային
զի սպանիցէ զնա։ Տեսեալ բազայն
որ ելաւ օձն 'ի ծակէն դուրս. եւ
նայէր շանն. եւ ետես զի շունն խոր



'ի

'ի քուն էր · և թուեաւ բազում շա
ռաչմամբ թևոցն։ Որև խնկոյն զար
թեաւ շունն 'ի ձայնէ թևոցն · և
իբրև եբաց զաչսն՝ ետես զօձն 'ի
վերայ օրորոցին · և բարկացեալ շունն՝
անկաւ ի վերայ օձուն · և օձն պատատե
ցաւ ընդ շանն ։ Օձն ջանայր սպա
նանել զտղայն · և շունն ջանայր սա
տակել զօձն ։ Եւ այնչափ կռուե
ցան ընդ իրեարս եւ վէրս ետուն
միմեանց՝ որք արիւնաթաւալք ե
ղեն շուրջ զօրանոցքն ։ Եւ սրտմ
տեալ շունն՝ յարեաւ ի վերայ օձուն։
և 'ի պատերազմելն ընդ միմեանս ,
կործանեցաւ օրոցքն տղայոյն · և վ
նաս ոչ եղև տղայոյն ։ Եւ շունն
այնչափ ջանաց՝ մինչև սատակեաց
զօձն · և նստէր ընդ պալարօք օրա
նին · և լիզէր զվէրս իւր ։
Յետ այնորիկ վաղվաղակի մծարե
ցաւ խաղն · և եկին նաժիշտքն 'ի
տուն յառաջ քան զտիկինն · և տե
սին զօրոցքն կործանեալ · և շուրջ

զօրոցօքն լի՛ արիւն։ կարծեցին թէ
շունն զողոյն կերեալ է։ և անմիտ
կանայքն ոչ կանգնեցուցին զօրանն
զի տեսցեն թէ ողջոյն կայ թէ ոչ։
Այ՛ ասեն ընդ միմեանս՝ եկայք փա
խիցուք. ապա թէ ոչ՝ սպանանէ ըզ
մեզ տէրն մեր փոխանակ ողջոյնն։
Այ՛ իբրև փախչէին՝ պատահեցան
տիկնոջն իւրեանց։ Ասէ ցնոսա տի
կինն. զի՞ է ձեզ զի՞նչ եղև ձեզ։
Ասեն նաժիշտքն. զախրելի որդին
տեառն մերոյ՝ կերեալ է շունն. արդ
վայ է մեզ թէ զի՞նչ լինիցիմք։
Այ՛ լուեալ տիկնոջն՝ անկաւ յեր
կիր ի վր̄ երեսաց իւրոց առ դրան
սենեկին. լայր և կոծէր զանձն ա
սելով. ո՜հ թէ զի՞նչ արարից ընդ
որդեակս իմ։
Այ՛ նոյնժամայն եկեալ զինւորն՝
ետես զկինն իւր զի լայր աղխո
ղորմ և նաժիշտքն ընդ նմա. և հար
ցեալ՝ զի՞ է ձեզ ընդէ՞ր լայք։
Ասէ տիկինն. վայ է մեզ. զի շունն


որ

որ սիրէիր՝ կերեւալ է զմիամօր որ-
դեակն քո։ Յորժամ լուաւ զխօսս
զայս ՚ի տիկնոջէն իւրմէ՝ եմուտ ՚ի
սենեակն ուր էր տղայն. և շունն
իբրև ետես զտէր իւր՝ յարեաւ ը̅ն̅
առաջ նորա և փաթաթէր զերեսն
ընդ ոտս նր̅ և ուրախանայր առաջի
նր̅։ Իբր թէ ըսպանի զօձն և ապրե-
ցուցի զտղայն քո. արդ արժան իցէ
պարգևաց։ Այլ տէր նր̅ հանեալ
զսուրն՝ էզարկ և կտրեաց ընդ մէջ.
և սատակեցաւ շունն։ Այլ գնացեալ
՚ի յօրրոցք տղայոյն՝ ետես զտղայն
զի կենդանի էր և անվնաս։ Այլ ե-
տես մերձ ՚ի յօրրոցքն օձ մի սատա-
կեալ. և եկեալ առ շունն՝ նայեցեալ
ետես զի էր վիրաւորեալ յոյժ. և
ծանեաւ զի շունն ըսպանեալ էր
զօձն և զտղայն ապրեցուցեալ։
Այլ տեսեալ բազայլն որ այնպիսի
անիրաւութիւն գործեաց տ̅ր̅ն իւր,
նոյնժամայն ձչեաց և կտրեաց ըզ-
պարանն ՚ի յոտիյն. և թռեաւ գնաց


և

և այլ ո՛չ եկն առ տէրն իւր։

Ապա ասէ զինուորն. ասաց թէ զինչ գործեցի լսելով կնոջ իմում. և անկայ ՚ի մեղս մեծամեծս։ Ապա ելեալ բոկ ոտամբ գնաց յանապատ. և անդ ապաշխարեաց զամ աւուրս կենաց իւրոց։

Ապա յաւարտիլ առակին՝ ասէ դպրապետն ցկայսրն. լուա՛ր արքայ զոր ինչ ասացի քեզ։ Ասէ կայսրն. լուայ և ՚ի միտ առի. և յոյժ հաճոյ եղև ինձ բան քո։ Ասէ դպրապետն. Ճշմարիտ ասեմ քեզ արքայ՝ եթէ վասն բանի կնոջ քո սպանցես զորդին քո, դառնագոյն լիցի քեզ բանն՝ քան որ եղև նմա։ Ասէ կայսրն. լաւ առակ ասացեր. և վասն քո բանիդ՝ ո՛չ սպանից զորդին իմ այսօր։ Ասէ դպրապետն. եթէ ոչ սպանանես, շնորհակալ եմ քեզ. որ վասն բանից իմոց՝ կեանս շնորհեցեր այսօր որդւոյ քում։ և երկրպագեալ արքային և գնաց։

 Իբրև

Իբրեւ լուաւ թագուհին թէ մա-
նուկն դեռեւս կենդանի է, նստաւ
ի վերայ մախրոյ · լայր լալիւն մեծ եւ ոչ
կամէր ՚ի վեր նայել ։ եւ ծառայքն
ծանուցին կայսերն ։ Եւ լուեալ
կայսրն՝ գնաց առ թագուհին եւ ա-
սէ · զմէ՞ այդպէս տրտումես եւ ան
մխիթար լաս ։ Ասէ թագուհին ·
մի թէ ոչ գիտես դու թէ ծրպխալի
ամօթ եւ նախատինք արար ինձ նզո
վեալ որդին քո · եւ դու խոստացար
սպանանել զնա · եւ այժմ դեռեւս կեն
դանի է ։ Ճշմարիտ ասեմ քեզ · զի
լինելոց է քեզ ՚ի յորդւոյ քումմէ
որպէս եղեւ հովուի միում ընդ վարա
զի խոզոյ ։ Ասէ կայսրն · աղաչեմ
զքեզ ով սիրելի տիկին իմ, պատմեա
ինձ զառակդ զայդ ։ Ասէ թագու
հին · զի՞նչ շահ ինձ պատմելն իմ ·
յերեկեան օրն այլ պատմեցի քեզ
առակ մի՝ եւ ոչ ինչ շահեցայ ։
Արդ պատմեցից քեզ առակ մի · ե-
թէ ՚ի միտ առցես՝ բազում շահս օգ
տիս ։ Եւ ասաց այսպէս ։

❋ Առակ երկրորդ · որ տայ Թագաւորին վասն հովուին եւ վասն վարազ խոզին · որ հատանեալ չայտերն՝ յօժարէ ստանանել որդին ։

Թագաւոր մի էր յերկրի մի-ում · եւ ունէր անտառ մի մեծ մայրեաց · եւ կայր 'ի նմա ծառ բազում լի՛ պտղօք։

Այլ կայր 'ի մէջ անտառին վարազի խոզ մի զօրեղ յոյժ · եւ շրջէր 'ի մէջ անտառին · ուտէր զպտուղն ծառոց։

Այլ ոչ ոք կարէր գնալ 'ի յանտառն այն կտրել փայտ · այլ եւ զգնացեալսն իվ̃ր իւր՝ խողխողէր խոզն եւ կորու-սանէր։ Մինչեւ Թգ̃րն ձանձրացեալ 'ի նմանէ՝ հրամայեաց քարոզ կար-դալ ընդ ա̃մ Թագաւորութիւն իւր եւ ասել · եթէ ոք սպանցէ զխոզն զայն՝ տաց նմա զդուստրն իմ 'ի կնութիւն · եւ յետ մահուան իմոյ՝ ժառանգես-ցէ զաթոռ Թագաւորութեան իմոյ։

Այլ ոչ ոք էառ յանձն · զի երկնչէին 'ի

'ի զօրեղու͞է խոզին։ Այլ էր 'ի ժա
մանակին այնմիկ հովիւ մի ոչխարց ·
խորհեցաւ ընդ միտս իւր և ասէ ·
եթէ սպաննիցեմ ես զխոզն զայն՝
ոչ միայն ինձ լինի բարի, այլև ա͞մ
սիրելեաց և բարեկամաց իմոց։

Եւ նախ և յառաջ գնացից առ
թագաւորն և տեսից թէ՝ եթէ ըս
պաննիցեմ ես զխոզն՝ տայ ինձ ըզ
դուստրն իւր։ Այլ գնացեալ հո
վիւն՝ եմուտ առ թգ͞րն և ասաց։
Հզօր և մեծ թգ͞ր · եթէ սպանա
նեմ զխոզն զայն, տաս ինձ զխոստա
ցեալդ։ Այլ թգ͞որն երդուաւ և
ասէ · ով հովիւ՝ եթէ կորուսանես
զխոզն զայն, ոչ թէ միայն տամ ըզ
դուստրս իմ, այլ և զթգ͞րութիւնս իմ
տամ քեզ · որ յետ մահուան իմում
դու թագաւորես 'ի տեղի իմ։

Յայնժամ ելեալ հովիւն յերեսաց
արքային · և էառ զգաւազանն 'ի
ձեռն իւր · և ելեալ գնաց յանտառն
այն ուր էր խոզն ։ Այլ տեսեալ


զնա

զնա խոզն՝ վազեաց ՚ի վր նր. և հօ
վիւն փախեաւ և ել ՚ի ծառ մի. և
եկեալ խոզն՝ սկսաւ ատամամբն փո
րել զտակ ծառոյն և կամէր կործա
նել զծառն։ Այլ եւս հովիւն զի
անկանի ծառն ՚ի գետին, հատանէր
ձեռօքն զքաղցրահամ պտուղն որ
կայր ՚ի ծառն և արկանէր նմա։ և
խոզն տեսեալ զպտուղն՝ եթող ըզ
ծառն և ուտէր զպտուղն. մինչև
հանգեաւ և ընկողմնեցաւ առ ծա
ռովն։ Այլ տեսեալ հովիւն զի ըն
կողմնեցաւ խոզն՝ մեղմաբար էջ առ
նա. և մին ձեռամբն զբռուն հա
րեալ էր ՚ի ծառոյն՝ և միւսովն քե
րէր զթիկունս խոզին։ զի թէ կա
մեսցի խոզն հարկանել զնա՝ փախի
ցէ դարձեալ ՚ի ծառն։ Այլ այնչափ
քերեաց՝ մինչև ննջեաց խոզն և
եղև խոր ՚ի քուն։ Յայնժամ եհան
հովիւն զսուրն իւր և սպան զխոզն։
Այլ այնու գործովն էառ զդուստր
թգւրին. և յետ մահուան նր ժա
ռանգեաց զաթոռ նր։

Այո՛ ասէ թագուհին ցըկայսրն ·
լըւա՞ր ձըրքոյ և՚ի միտ առեր։
Ասէ կայսրն · այո՛ 'ի միտ առի զոր
ինչ ասացեր ։ Ասէ թագուհին ·
մեկնեցից քեզ զառակս ։ Վարա‿
գոյն փայրենացնել զօրեղութին կայժ՝
ցուցանէ զզօրութի քո · որ ոչ ոք կա
րէ կալ հակառակ հրամանաց քոց։
Այո՛ հովի՞ն՝ ցուցանէ զնզովեալ
որդին քո · որ զանազանութ իմա‿
տութ իւրոյ՝ դիմեալ է իվերոյ քո ·
ոպ հովի՞ն այն քերելով զթիկունս
խոզին՝ ննջեցոյց և անչան զնա։
Նմանապէս և վարժպետքն նզովեալ
որդոյ քո՝ քերեն զքեզ քաղցրաբան
առակօք և սուտօք իւրեանց մինչև
սպանցեն զքեզ · և զորդին քո թա‿
գաւորեցուցանել կամին 'ի տեղի քո։
Ասէ կայսրն · ոչ տացէ ած զայն օրն
որ ըսպանանէ զիս որդին իմ · որպ հո
վի՞ն զխոզն։ արդ ահաւասիկ ոչ մր
նոյ նա կենդանի · և վն սորին քո՝
տամ հարաչար սպանանել զնա։



Ասէ

Սա է Թագուհին. եթէ ապաւինես մեծ լուսոյն հանդիպի քեզ. զի նա չէ արժանի որ միոյ կենդանի. այլ պատժոյ և պատուհասի արժանի է։

Երկրորդ անգամ տանէն զօրէ արտաքին 'ի ծով. և Զենդաւոր դղրդալեօքն գալհա տանէն և առաջօք ծքիէն զնա։

Յերկրորդում աւուրն Նըս-տեալ կայսրն 'ի գահոյան իւր և կոչեաց բարկութ̄ զդահճապետն և ասէ. երթ հան զորդին իմ 'ի բանտէն. և տար առ ժամայն հատ զգլուխ նր̄. և հեռացո զգլուխն 'ի մարմնոյ նր̄ ծ կանգուն։

Սա̂ եկեալ դահճապետն՝ եհան զորդի արքային 'ի բանտէն. և կապեաց զձեռս 'ի յետս նր̄ իբրև մահապարտի. և անցոյց ընդ մէջ քաղաքին. և մունետիկն առաջի նր̄ ձայնէր և ասէր։ Ո՛վ ոք որ կամի մեղանչել ընդ յետնամօրն իւրոյ՝ այսպիսի

մահուամբ մեռցի ։ Այս լուեալ ժո
ղովրդոցն՝ ափսոսալով ասէին . ո՜հ ո՜հ
ահա 'ի զո՜ւր տամնին զմիամօր որդի
արքային 'ի մահ և ըսպանումն ։

Յայնժամ չէնթուլոս դպրապետն
որընթաց երիվարաւ եհաս նց և
ասէ . մի' շտապիք սպանանել զդա .
քանզի յոյս ունիմ առ ած որ փր
կեցից զդա այսօր 'ի մահուանէ ։
Այս ասացեալ դահճապետին և ասէ .
ընդէ՞ր կապեցեր ըզ ձեռս դորա .
մի թէ մահապարտ է որդի արքային .
և ետ արձակել զձեռսն ։ Ասէ դահ
ճապետն . ո՜վ դպրապետ՝ հրաման
ստացիկ է թագաւորին թէ չարաչար
ըսպան զնա . արդ եթէ կարող ես
փրկել զդա՝ երթ առ կայսրն և ա
զատեա 'ի մահուանէ . և ես աստ
արգելից զսա ։ Այս մանուկն որդ
առաջնոյն աղաչէր զվարժպետն իւր
փրկել զինքն 'ի մահուանէ ։ Այս ժո
ղովուրդքն առաւել փութացուցա
նէին զդպրապետն և ասէին ։ Ո՛վ բարի

դայրապետ· յերեկեան օրն՝ ընկերն
քո ազատեաց՝ այսօր դու երթ առ
կոյսըն և ազատեա։ Ասէ դայրապետն
ընթացեալ եմուտ ՚ի պալատն· և ե-
կաց առաջի կոյսերն· երկրպագեաց
և ողջունեաց զնա մեծաւ պատուով։
Ասէ կոյսըն· ով չար ծեր մի՛ մնաս
ցես կենդանի։ Ասէ դայրապետն·
տէր՝ պարգևս առնուլ ՚ի քէն ակն
ունէի և ոչ անարգանս։ Ասէ կոյ-
սըն· սուտ է անուն քո· ետու զոր
դրին իմ ՚ի ձեռ լեզուաւ և խօսուն՝
ուսուցանել և դատախարակել զնա·
և արդ եղև պապանձեալ փոխանակ
իմաստուն և հանճարոյ։ յաւել ևս
զչարիս զայս· զի կամեցաւ բռնա-
դատել և ակել զկինն իմ· վասն այն
պատճառի մեռանի՛ նա այսօր։ և
զձեզ իսկ զամենեսեան կորուսից
դառն մահուամբ։ Ասէ դայրապետն·
տէր արքայ՝ ասացեր թէ որդին իմ
պապանձեալ եղև· և թէ վասն էր
եղև՝ Աստուած է որ գիտէ· բայց խօսե-



լոյ

լոյց է 'ի ժամանակի իւրում: Եւ որ
տացեր թէ կամեցաւ բանադրանել
զկին իմ, այդ ամի՛ն սուտ է:
Քանզի կին քո եթէ կրեալ լինէր
զնա յինն ամսին յորովայնի իւրում,
այդպիսի վնաս ոչ գտնէր յիւր նր:
Արդ զայս ասեմ քեզ արքայ․ եթէ
վս բանի կնոջ քո սպանանես զմիա
մօր որդին քո, դառնագոյն պատա
հեսցէ քեզ քան զայն՝ որ պատահե
ցաւ զկնուորի միոյ․ որ վասն կնոջն
իւրոյ՝ անմեղ դատապարտեցին 'ի
մէջ հրապարակին: Ասէ կայսրն․
ասա զառակդ զայդ թէ վասն էր
եղև այդպէս: Ասէ դպրապետն․
ոչ ասեմ և ոչ աշխատիմ իզուր և
դատարկ․ գուցէ եղիցի զի մինչ ես
պատմեցից զառակս՝ սպանցի որդին
քո անդր․ և զինչ շահ լինիցի 'ի պատ
մութենէս: Արդ եթէ կամիս լսել
զառակն իմ, նախ դարձո զորդին քո
'ի մահուանէ 'ի բանտ․ և ես պատ
մեմ զառակս: Եթէ հաճոյ լինիցի


քեզ

քեզ ասակս՝ ապրեցո զորդին քո․ և թէ ոչ՝ սպանն զնա։ Այն հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին իւր ՚ի բանտ՝ մինչև պատմեսցէ դպրապետն զառակն։ Այն սկսաւ ասել այսպէս։

## Առակ երկրորդ Դպրապետին․ զոր ասաց վն կնոջ միոյ որ ետ զայրն անձեղ ՚ի պատապարտութի

Ի քաղաքի միում էր զինուոր մի ծեր․ զոր ունեալ էր մատաղահասակ աղջիկ մի ՚ի կնութիւն իւր․ (որպէս տէր իմ. արքայ ունեալ է կին մատաղ։) և յոյժ սիրէր զնա։ և զբանալեօքն ոչ ումեք հաւատայր։ Սակ և ամ գիշեր փակէր զդուռն․ և զբանալիսն պահէր ՚ի ներքոյ բարձի իւրում։ Այն զինուորն այն ծեր էր․ և ոչ ունէր կարողութի ամուսնութե՝ կատարել զկամս կնոջ իւրոյ։ վն այն անզգամ կինն սիրէր զայլս։ Այն ամ գիշեր յորժամ



նըն

ննջէր այրն իւր՝ առնոյր զբանա-
լին գաղտ և բանայր զդուռն և
երթայր առ սիրաւն իւր՝ որ կատա
րէր զկամս նր̃. և լցեալ զհեշտութ̃
և զցանկութ̃ մարմնոյն իւրոյ՝ դառ
նայր առ այրն իւր։ Այլ ’ի գիշերի
միում յորժամ ննջեաց այրն, ել
կինն և գնաց ըստ սովորութ̃ իւրոյ
առ սիրաւն իւր։ Այլ զարթուցեալ
այր նր̃ ’ի քնոյն՝ ոչ եգիտ զկինն իւր
մերձ ինքեան։ Այլ ելեալ ետես ըզ
դրունսն ի բաց. և փակեալ պնդեաց.
և ելեալ ’ի վերի դարպասն՝ հայէր
’ի պատուհանէն. զի տեսցէ զգալն
նորա։ Այլ յետ խօսելոյ հաւուն՝
դարձաւ կինն փութալով ’ի տուն.
զի մի՛ եկեալ պահապանքն գտցեն
զնա արտաքս։ Այլ կայր ’ի քաղաքին
այն սահման այսպիսի. զի յորժամ
երեկոյ լինէր՝ յետ երիցս անգամ հա
ւուն խօսելոյ՝ հնչեցուցանէին զան
կակս։ Այլ յետ հնչեցուցանելոյ
զանկակին՝ եթէ զոք գտանէին ար

 տա

տաքոյ՝ ըմբռնէին եւ տանէին 'ի բանտ
եւ վաղիւն դատապարտէին զնա 'ի
մէջ հրապարակին առաջի ամենեցուն
'ի նախատինս։ Այլ եկեալ կինն՝ ե-
գիտ զդրունսն փակեալ. զահի հա-
րաւ եւ խորհէր թէ զինչ արասցէ.
եւ յետոյ վստահացեալ՝ բախէր զդ-
րունսն։ Ասէ այրն. ո՛վ չարեաց մա-
կարդ չար կին. այս քանիցս անգամ
փորձեցիր զքեզ. որ եղեալ յանկող-
նոյ իմոյ՝ երթեալ պոռնկիս ընդ-
այլում։ Ասեմ քեզ բատոյգն. կաց-
ցես դու այդր՝ մինչեւ պահապանքն
եկեալ գտցեն զքեզ եւ տարցեն 'ի
բանտ. եւ 'ի վաղիւն դատապարտես-
ցեն զքեզ 'ի մէջ հրապարակին։
Ասէ կինն. ո՛վ տէր իմ վասն էր ա-
սես զայդ. ասեմ քեզ զճշմարիտն։
Յորժամ ննջէի ես ընդ քեզ 'ի յան-
կողնին, եկն աղախին մօր իմոյ՝ կո-
չեաց զիս եւ ասէ. փութա՛ եկ առ
մայրն քո՝ զի յետին շունչն է։ Այլ
ես ո՛չ կամեցայ զարթուցանել զքեզ
'ի

'ի քաղցր քնոյդ. և գնացի առ մայրն
իմ. տեսայ՝ և փութով դարձայ առ
քեզ. և այնչափ փութով ընթացեալ
եկի՝ որ վաստակեալ 'ի ճանապարհին
տկարացայ յոտիցս։ Արդ աղաչեմ
զքեզ՝ բա՛ց ինձ զդրունան զի մտից
'ի ներքս. զի մի՛ եկեալ պահապանքն
գտցեն զիս։ Ասէ այրն. ճշմարիտ
որ ո՛չ բացից՝ մինչև եկեալ պահա
պանքն առցեն զքեզ։ Ասէ կինն.
վ̄ս ա̄յ աղաչեմ զքեզ՝ բա՛ց զդուռն
և ա՛ռ զիս 'ի ներքս. զի ամօթ և նա
խատինք առնես զիս. քեզի՝ և ծնո
ղաց իմոց՝ և ազգականացս։ Ասէ
այրն. 'ի միտ ած թէ քանի՛ցս անգամ
պղծեցեր զանկողին իմ պոռնկութ̄
քով. ըմա՛ն է քեզ աստ չարչարիլ մար
մնով վ̄ս մեղաց քոց՝ և մի՛ 'ի դժոխս։
Ասէ կինն. ո՛վ սիրելի տէր իմ վ̄ս
սիրոյ այնորիկ որ խաչեցաւ վ̄ս մեր՝
ողորմեա՛ ինձ և ա՛ռ զիս 'ի ներս։
Ասէ այրն. զուր կաղաչես. զի այդ
պէս մրնաւո՛ց ես առաջի՛ն դատանոդ՝
մին

մինչև եկեալ պատասխանքն տացեն զքեզ։ Նաէ կինն. ո՛վ տէր իմ, գիտես զի ո՛չ է հեռի Ջրհորն 'ի դրանէս. եթէ ոչ բացցես զդուռն և տացես զիս 'ի ներքս, ընկեցից զիս 'ի Ջրհորն և խեղդեցայց։ Նաէ այրն վաղո՛ւց պարտէր քեզ խեղդիլն։ Նաէ կինն. եթէ կամիս զխեղդիլն իմ, խեղդեցայց։ Նորա մինչ խեղդեալ չեմ՝ արարից կտակ։ Նախ և առաջին յանձն առնեմ զիս այ̃ զհոգի իմ. և 'ի սբ̃ կոյսն մարիամ. և յամ̃ սբ̃ս։ և զմարմին իմ յորժամ հանցեն 'ի հորոյն՝ թաղեսցեն յեկեղեցւոյ սրբուհւոյն փառաւորելոյ։ և զամ̃ ինչս զոր ունիմ, դո՛ւ գիտես տէր իմ. ոպ̃ և կամիս այնպ̃ արասցես։ Նա՛ զայս ասացեալ՝ գնաց մերձ 'ի Ջրհորն. և էր առ Ջրհորովն վէմ մի մեծ. զոր առեալ երկոքին ձեռամբն

եարկ 'ի Ջրհորն։

Նա՛ լուեալ այրն զձայնն քարին յատակ Ջրհորին՝ կարծեաց թէ

 կինն

կինն ընկէց զինքն 'ի հուր. և ասէ՝
աւաղ թէ զինչ գործեցից. զի կինն
իմ խեղդեցաւ: Այն փաղփաղակի
իջեալ ընթացաւ 'ի ջրհորն. և կինն
թաքեաւ յետոյ կողմանէ դրանն.
և իբրև եկն այրն՝ եմուտ կինն 'ի
ներքս և փակեաց զդուռն 'ի ներ-
քուստ և եկն 'ի դարպասն: Այն զին
ուորն կանգնեալ 'ի մջ ջրհորին՝ ա-
ղաղէր զկինն և ասէր լալով. վայ
ինձ որ կորուսի զկինն իմ: չար էր
ժամն որ ոչ բացի զդուռն:
Այն կինն ծիծաղելով ասէ. ով նը-
զովեալ ալևոր՝ զինչ գործես մին-
չև ցայս վայր 'ի դուրսդ. մի թէ սա-
կաւ էր քեզ չըլ շատանալ մարմնով
իմով. որ զամ գիշեր գնաս 'ի բոզ
տունն պոռնկիլ ընդ նոսա: Այն այրն
լուեալ զձայն կնոջն՝ ասէ. օրհնեալ է
Ած. և գոհութիւն այ որ ողջ ես:
Արդ բաց զդուռն զի մտից 'ի ներս
ընդ էր փակեցեր զդուռն. զի ես
կամէի սակաւ մի խրատել զքեզ և


էր

երկեցուցանել . և ապա բանալ ըզ
դուռն : Ասէ ցնա կինն . եթէ դք
փորեացէ խորխորատ ընկերի խորոյ՝
ինքն իսկ ընկեցցի 'ի մէջ նր̅ : Դու
ոչ կամեցիր բանալ զդուռն ինձ , և
ոչ ես բացից քեզ . մինչև տացեն ըզ
քեզ պատճառանքն : Քանզի ես ոչ
էի 'ի մէջ չարեաց՝ զոր ասացեր 'ի
վր̅ իմ : ոչ̅ ամեն առակաց թէ՝ սև
ացեալն մրոյն՝ մրճոտէ և զայլս :
Այժմ ինքն՝ չար դք՝ զոմ դք չար կար
ծէ . այնպէս և դու հնացող գոլով՝
զիմաստն քո 'ի վր̅ իմ բառնաս :
Ճշմարիտ ասեմ քեզ՝ զի այդր մը
նալոց ես դու մինչև տացեն զքեզ
պատճառանքն :
Ասէ այրն . ոչ երկնչիս դու յո̅յ .
ընդէր ճշմարտես զայդպիսի բան
'ի վր̅ իմ : Ծերացայ 'ի քաղաքիս այս
'ի մանկութէ̅ հետէ . և մինչև ցայժմ
ոչ եղև անուանդ այդ 'ի վր̅ իմ զոր
դու ասես : Իսկ թէ վաղուցն նախա
տեն զիս 'ի մէջ հրապարակին՝ մի թէ



ոչ

ո՛չ լինի ամօթ ինձ և քեզ. և նախ-
նեաց մերոց մինչև յաւիտեան: վ՟ոյ
աղաչեմ զքեզ բա՛ց զդուռն:

Ասէ կինն. ո՛չ բացից մի՛ աշխատ առ-
ներ զիս. և մի՛ աղաչեր ինձ իզուր:
լա՛ւ է քեզ ա՛ստ չարչարիլ վ՟ս մեղաց
քոց՝ քան թէ ՚ի դժոխս: Տես զինչ
ասէ իմաստունն. երեք բան ատե-
լի է անձին իմոյ: Աղքատ հպարտն:
Ստախօս մեծատունն. և Ծեր պոռ-
նիկն: ո՟պ և դու խակ ես ծեր և չնա-
ցող: Այլև այս մեծ ողորմութի՟ է ա՟յ
որ տանջիս աստ մարմնով և մի՛ տես-
ցես զտանջանսն յաւիտենականն:

Ասէ այրն. ո՛վ սիրելի տիկին իմ.
ա՟ծ ողորմած է և գթած. և ո՛չ խնդ-
րէ այլ ինչ՝ բայց միայն զղջանալ.
վ՟ս ա՟յ սիրուն աղաչեմ զքեզ բաց
զդուռն զի մտից ՚ի ներքս. և այլ
ո՛չ արարից զայդ զոր ասես ՚ի վ՟ր իմ:

Ապա կինն նշաւակելով ասէ. ո՛վ ա-
րար զքեզ վարդ՟պտ և քարոզող.
եթէ զայդ գիտէիր որ ա՟ծ ողոր-
մած

մած է, ընդէ՞ր ոչ բացեր զդուռն
իմ։ Ճշմարիտ ասեմ քեզ՝ ո՛չ առից
զքեզ 'ի ներքս։ Եւ մինչդեռ նա
զայս խօսէր, հնչեցուցին զզանկակն։
Ասէ այրն․ ահա՛ հնչեցուցին զզան
կակն․ բա՛ց զդուռն՝ զի մի՛ եկեալ
պահապանացն գտցեն զիս։

Եւ մինչդեռ խօսէր՝ եկին պահա-
պանքն և գտին զնա արտաքս։

Եւ ասեն ցնա․ զի՞նչ գործես աստ
'ի ժամ գիշերիս։ Եւ լուեալ կինն
զձայն պահապանացն՝ ասէ ցնոսա․
ո՛վ եղբարք իմ աղաչեմ զձեզ՝ առէ՛ք
զդա այտի և տարարէ՛ք դմա ըստ մե-
ղաց իւրոց․ զի ա̃մ գիշեր թողեալ
զիս՝ երթայ ընդ բոզս։ Եւ այսչափ
ժամանակ համբերեցի և ո՛չ յայտ-
նեցի՝ թերևս դարձցի 'ի գործոյն
այնմիկ և ո՛չ դարձաւ․ մինչև ինքն
զինքն մատնեաց։ Եւ պահապանքն
առեալ տարան զնա 'ի բանտ․ և 'ի
վաղիւ՛ անդր՝ դատապարտեցին զնա
ըստ օրինաց իւրեանց։

Յայնժամ ասէ դպրապետն ցկոյսըն ·
'ի միտ առե՞ր մըքոյ զառակս զայս
զոր ասացի քեզ։ Ասէ կոյսըն · այո՛
'ի միտ առի · զի նզովեալ և չար կինն
այն՝ մատնեաց զայրն իւր դառըն
տանջանաց 'ի զուր։ Ասէ դպրապետն ·
Ճշմարտի՛ ասեմ քեզ մըքոյ՝ եթէ
վասն բանի կնոջ քո սպանցես զորդին
քո, դառնագոյն լիցի քեզ քան զինն
ուրուրին այն։ Ասէ կոյսըն · ամէն ա-
սեմ քեզ դպրապետ · ո՛չ սպանից զոր-
դին իմ այսօր վասն բանի քոյ։ Ասէ
դպրապետն · եթէ լուիցես խրատոյ
իմոյ և ոչ ըսպանցես զորդին քո,
մեծ բարութի՛ հանդիպելոց է քեզ։
զայս ասաց դպրապետն և երկիր ե-
պագ արքային և գնաց։

Իբրև լուաւ թագուհին թէ այ-
սօր ևս ոչ մեռաւ որդի արքային,
եմուտ 'ի սենեակ իւր և լայր ան-
մխիթար · կոծէր զանձն ասելով ·
վա՜յ ինձ՝ զի ո՛չ կարացի խնդրուածք-
մի կատարել տալ արքային իմոյ։

այսպիսի աղիողորմ և բարձր ճչի-
լայր և հառաչէր · մինչև ծառայքն
ծանուցին արքային ։ Նա՛ ելեալ
կայսրն՝ գնաց առնա և ասէ · ո՛վ սի
րելի տիկին իմ վ̃ էր այդպէս ան-
ողորմ լաս։ Ասէ Թագուհին · եթէ
սիրելի լինէի քեզ՝ զխնդրուածս իմ
կատարէիր · և դարձեալ՝ թէ ոչ էի
սիրեցեալ զքեզ ՚ի բոլոր սրտէ՝ ո՛չ
էր ինձ կսկիծ · բայց իմ վէրս խիստ
մեծ է · զի ՚ի մէջ նախատանաց թողեր
զիս · և ո՛չ սպաներ զնզովեալ որդին
քո · որ այսպիսի խայտառակեաց զիս
զոր աչօքդ իսկ տեսեր տ̃ր իմ արքայ։
Այլ դու անխնդիր ես եղել վար-
ժապետաց որդւոյ քո · և ո՛չ գիտես
թէ նոքա ինչ կու խորհին քեզ։
Բայց ես առաւել կու սիրեմ զքեզ
և կամիմ զառողջութ̃ի քո և դու ո՛չ
գիտես։ Ապա լինելոց է քեզ այնպ̃՝
որպ̃ եղև զինուորի միոյ · որ որդի իւր
գլխատեաց զինքն ։ Ասէ կայսրն ·
ասա ինձ ո՛վ սիրելի թագուհի իմ ·



թէ

Թէ ինչ պատճառի համար արար այն-
պիսի անողորմ բանն հօրն իւրոյ։
Ասէ Թագուհին. առեմ քեզ առա-
կս ազնուագոյնս, և դու տէր իմ
լուր 'ի միտ առ։ Եւ սկսաւ ասել։

※ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱԿ ԹԱԳՈՒՀՒՈՅՆ. ՈՐ ՀԱՒԱ-
ՆԵՑՈՅՑ ԶՀԱՅՐՆ ՍՊԱՆԱՆԵԼ ԶՈՐԴԻՆ։

Ի քաղաքի միում կայր անուանի
զինուոր մի. և ունէր որդի մի
և դուստր երկու։ Եւ զինուորն
այն՝ սիրէր զխաղս. մինչև զա̄մ
ինչս իւր և զստացուածս՝ մսխեաց
'ի խաղս. և աղքատացաւ յոյժ։
Եւ 'ի յայնմ ժամանակին՝ նստէր 'ի
նոյն քաղաքին կայսր՝ օգդաւիանոս
անուն. որ մեծացաւ ընչիւք քան
զա̄մնեան որ յառաջ քան զնա էին։
Եւ ժողովեաց բազում ոսկի և ար
ծաթ. և շինեաց է̄ աշտարակ. զմինն
էլից ոսկւով, և զմիւսն արծաթով.
և յանձնեաց զն̄ս պահապանացն։


Իսկ

Իսկ զինուորն այն որ աղքատացաւ՝ կոչեաց զորդին իւր և ասէ • արդ ահաւասիկ աղքատացայ ես • և կամիմ վաճառել զժառանգութիւն իմ զոր ունիմ • և թէ վաճառեցից՝ կորիցես դու և քո որդքդ ընդ քեզ յետ մահուան իմոյ։ Ասէ որդին ցհայրն • արդ խորհեաց թէ զինչ արասցուք՝ զի լինիցիմք ՚ի բարի կեանս • և ժառանգութիւն մեր ոչ վաճառեսցի։ Ասէ հայրն • որդեակ գիտեմ զի կայսրն ունի Ը աշտարակս • մինն լի՛ ոսկով, և միւսն լի՛ արծաթով • երթիցուք և գողասցուք զնոսա և ոչ վաճառեսցուք զմերս։ Ապա ՚ի գիշերին այնմիկ ելեալ գնացին յաշտարակն հանել ոսկի • և մտեալ ՚ի ներքս՝ որչափ որ կարացին բառնալ՝ առին և դարձան։ Ապա ՚ի վաղիւն՝ տեսին պահապանքն աշտարակին՝ զի բացեալ էին զաշտարակն և գողացեալ էին ՚ի յոսկոյն • և վաղվաղակի գնացին առ կայսրն և պատմեցին նմա • թէ պատառեալ են զաշ-

տարակն և գողացեալ են յասկոյն։
Ասէ կայսրն. չէ՛ ինձ փոյթ. 'ի ձեզա
նէ՛ գիտեմ ես զոսկին։ Եւ պաշտա
պանքն ելեալ յերեսացն արքայի՝
խորհէին թէ զինչ արասցեն։
Եւ ասէ մինն 'ի նոցանէ. եկայք
արասցուք այսպէս. առցուք պղ
ինձ մի մեծ՝ և թաղեսցուք 'ի ներ
քուստ կողմանէ աշտարակին. և
լցցուք 'ի մէջ նորա սոսինձ։ եթէ դար
ձեալ գայցէ գողն՝ անկցի 'ի պղինձն
և սոսինձն ոչ թողուցու զնա ելա
նել անտի։ և արարին այնպէս։
Եւ յետ սակաւ ինչ աւուրց՝ դար
ձեալ աղքատացաւ զինուորն այն.
և կրկին եկն հանդերձ որդւովն
առնուլ ոսկի յաշտարակէ անտի. և
երթայր հայրն ընդ առաջ, և որդին
զկնի։ Եւ իբրև եմուտ 'ի ներքս և
խոր թաղեցաւ մինչև ցպարանոցն,
աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ.
որդեակ իմ մի՛ գայցես այսր. քանզի
այլ ո՛չ կարես ելանել։ Ասէ որդին՝

ելից և փրկեցից զքեզ. և եթէ ես
ոչ կարեմ օգնել՝ բերից և զայլս զի
օգնեսցեն. և հանից զքեզ այտի.
քանզի եթէ գտցեն զքեզ այդր,
զնմանեանս զմեզ կու սպանանեն:
Ասէ հայրն. մի՛ տացէ Ած զայն օրն՝
զի գիտասցէ ոք թէ ո՛վ եմ ես. արդ
լաւ է ինձ միայնոյ մեռանիլ՝ և ո՛չ
ձեզ ամենեցուն: Դու զսուրդ և
հատ զգլուխ իմ. զի յորժամ գըտ-
ցեն զիս աւանդ գլխոյ՝ ոչ ո՛ք կարէ
ճանաչել թէ ո՛վ իցեմ: Ասէ որդին
բարւոք ասեցեր հայր. և հանեալ
զսուրն՝ էհատ զգլուխ հօրն և էարկ
'ի հոր մի: Այլ երթեալ 'ի տունն՝
պատմեաց քուերցն զեղեալ գործն
և նոքա լուեալ զմահ հօրն իւր-
եանց՝ սկսան ողբալ լալ և կոծալ:
Այլ 'ի վաղիւն անդր ելեալ պահա-
պանացն՝ տեսին մարդ մի մեռեալ
'ի մէջ պղնձին. և գլուխն չկայր.
և գնացեալ պատմեցին արքային:
Այլ հրամայեաց կայսրն՝ զի զմար-



մինն

մինն զոյն կապեսցեն 'ի յարգի ձիոյ
միոյ և շղթեցուսցեն փողոցէ 'ի փո-
ղոց . և յոր տանէ լուիցեն ձայն լա-
լոյ՝ 'ի նոցանէ է մարդն այն: Այլ ա-
րարէին այնպէս՝ որպէս հրամայեաց
կոյսն . և շղթեցուցանէին զնա փո
ղոց փողոց: որև եկեալ հասին ա-
ռաջի դրան նր: Այլ դստերացն տե-
սեալ զհայրն իւրեանց՝ լային դառ-
նապէս: Այլ իբրև իմացան պահա-
պանքն շղթեցուցանօղք դիոյն նց ,
իսկոյն որդի մեռելոյն առեալ դա-
նակ՝ ծակեաց զերակ ձեռին իւրոյ
որ եղ արիւն յոյժ սաստիկ: և 'ի քն-
նելն նց՝ ասաց որդին թէ վն ինձ
լան քուերքն իմ: Վն որոյ հաւա-
տացեալ նոցա խօսիցն նր՝ դարձան
և շղթեցուցանէին զմարմինն ընդ քա-
ղաքն ամ: Այլ իբրև ոչ գիտացին
թէ ուստի էր , տարեալ կախեցին 'ի
փայտէ: Որդ նզովեալ որդին՝ մէկ
որ սպանեաց զհայրն իւր , և երկա-
ղե ոչ հանգոյց զմարմին նր 'ի հող
տապանին:

Ասէ Թագուհին. տէր 'ի միտ առեր զայն զոր պատմեցի քեզ:
Ասէ կայսրն. այո 'ի միտ առի:
Ասէ Թագուհին. երկրպագեմ տէր իմ արքայ՝ գուցէ և քեզ պատահեսցէ դառնագոյն քան զնորայն:
Ասէ կայսրն. լուա առակ ասացեր ով սիրելի տիկին իմ. որդին այն նոր զովեալ էր որ էհատ զգլուխ հօրն իւրոյ. և զմարմին նորա ևս ոչ եդ 'ի գերեզմանի: Ճշմարիտ ասեմ քեզ ով Թագուհի իմ. զի ոչ կարասցէ որդին իմ առնել այնպիսի՝ որպէս նա արար. քանզի ըստ լուսանալ առաւօտուն՝ տամ սպանանել զնա:

※ Երրորդ անգամ տանելն զորդի արքային 'ի մահ. և գալ հասանելն Պաղոսն դպրապետին և առաջօք փրկելն զնա:

Ի յերրորդում աւուր գայ նստի կայսրն 'ի գահոյսն իւր. և կոչեաց զդահճապետն և ասէ՝ հան

հա՛ն զորդի իւր 'ի բանտէն ։ և անցո՛
ընդ մէջ քաղաքին փողով ազդեցու-
թեան . և տուր սպան զնա ոչ մահա
պարտ . և հեռացո՛ զգլուխն 'ի մարմ
նոյն է կանգուն ։ Ապա եկեալ դահ
ճապետն՝ եհան 'ի բանտէն զորդի
արքային . և կապեաց զձեռսն 'ի յետս
ոչ մահապարտի . և ետ ձայնել առա
ջի նորա մունետիկս ասելով . թէ ո՛վ ոք
մեղանչել կամի ընդ յետնամօրն իւ
րոյ՝ այսպիսի մահուամբ մեռցի ։
Ապա մինչդեռ տանէին՝ եհաս դըր
բապետն սրընթաց երիվարաւ .
որում անուն էր գաթոն ։ Ապա տե
սեալ զորդի արքային որ այնպիսի
խեղճ և ողորմելի տանէին 'ի մահ ,
բարկացեալ դահճապետին և ասէ .
ընդէր այդպիսի կապեր էք զորդի
արքային . և ետ արձակել զձեռսն ։
Ասէ դահճապետն . ո՛վ դպրապետ՝
հրամանն թագաւորին սաստիկ է . և թա
գուհւոյն ես առաւել , մեք զինչ
արասցուք ։ Ապա ժողովուրդքն որ



շուրջն

շուրջն կային՝ ողբալով աղաղակէին և ասէին. ո՛վ բարի դպրապետ՝ փութա՛ առ կայսրն և ազատեա՛ զորդի արքային և զաշակերտսն քո. որպէս ընկերքն քո ազատեցին։ Եւ մանուկն անմռունչ խոնարհեալ երկիրպագ վարժապետին իւրոյ. որպէս թէ կամէր ասել՝ ազատեա՛ զիս ՚ի մահուանէ։

Ասէ դպրապետն. դադարեցէք դուք ՚ի տեղիս այս՝ մինչ ես երթայց առ կայսրն. զի յոյս ունիմ առ ա͞ծ որ չ՚ոկեմ զդա այսօր ՚ի մահուանէ։

Եւ գնաց դպրապետն շտապով ՚ի պալատն. եմուտ առ կայսրն. և մեծաւ պատուով ողջունեաց զնա։

Ասէ կայսրն. ՚ի չարիս լինիցիս դու։

Ասէ դպրապետն. տէ՛ր՝ պարգևի ակն ունէի ՚ի քէն և ո՛չ բարկանալոյ։

Ասէ կայսրն. որպէս ծառայեցեր՝ նոյնպէս և ունիցիս։ քանզի ո՛չ պարգևի ծառայեցեր՝ այլ դատան մահու։ Ետու զորդին իմ ՚ի ձեզ լեզուաց և խօսուն. ուսուցանել և դաստիարակել.

և

և այժմ եղև պապանձեալ փոխա-
նակ իմաստութեան և հանճարոյ։
Յաւելեալ ևս զչարիս զայս՝ որ կամե-
ցաւ բռնադատել և լլկել զկեանս իմ։
Առ այնր գործոյն մեռանի՛ ահա
այսօր • և ձեզ ևս չարչարանք կազ-
մեմ, որ աչօք ձերովք տեսանէք ըզ-
մահ ձեր։ Լսէ դրապետն • տէր իմ
արքայ՝ զոր ասացեր թէ պապանձել
եղև որդին իմ, այն ոչ է դատաստան •
զի նա է միայն որ խլեաց լսել տայ և
համերձ խօսել • և գիտեմ որ ոչ է
պապանձումն լեզուի որդւոյ քո ճըշ-
մարիտ։ Թէպէտ կամի խօսել՝ ապա
զի չէ ժամանակ։ Իսկ զոր ասացեր
թէ կամեցաւ բռնադատել և լլկել
զկեանս իմ, մի՛ հաւատար տէր իմ ար-
քայ • զի այդ զրոյց է ի վերայ նորա։ Իսկ
ոչ հաւատամ • վասն զի չկայ ոչ ինչ
չարագոյն ի վերայ երկրի քան զչար կա-
նայս • և գիտեմ ցուցանել թէ որչափ
լեալ են կանայք սուտք և զրախօսք։
Իսկ դու եթէ կամիցիս վասն բանի

 կնոջ

կնոջ քո սպանանել զորդեակն քո՝
լինելոց է քեզ որպէս երկե ուժեմն.
որ վասն բանի կնոջ իւրոյ՝ ըսպան
զախրակման անծեղն իւր։
Ասէ կայսրն. ասա ինձ թէ ոք որ
տախօսք են և զրախօսք կանայք.
ասա և վ՛ս անծեղէդ։ Ասէ դպրա
պետն. ոչ ասեմ և ոչ աշխատիմ. զի
մինչ ես պատմեցից զառակս՝ զոր-
դին քո անդր սպանցեն. և զի՞նչ
շահ լինիցի ՚ի պատմութէնս։ Եթէ
կամիս լսել զառակն իմ, նախ դար
ձո զորդին քո ՚ի բանտ. և ես պատ
մեցից զառակս։ Եթէ լիցի հաճոյ
կամաց քոց առակս՝ ապրեցո զոր-
դին քո. և թէ ոչ՝ նոյնժամայն սպան
զնա։ Ապա հրամայեաց կայսրն դար
ձուցանել զորդին իւր ՚ի բանտ.
մինչև պատմեսցէ դպրապետն զա-
ռակն։ Ապա դարձուցին զորդի ար
քային ՚ի բանտ։ Ապա սկսաւ դպր
ապետն ասել
այսպէս։


Առաջ

Առակ երրորդ դպրապետին · զոր տայ
վասն անծեղին 'ի ձեռն սպանմանն՝ խորա_
մանկութեամբ կնոջն ։

Ի քաղաքի միում՝ էր այր ոմն ազնուական և անուանի յոյժ · և ունէր անծեղ մի՝ զոր ուսուցեալ էր լեզու եբրայեցերէն · որ իբրև զմարդ ուղիղ խօսէր ։ Այս անծեղն այն զոր ինչ տեսանէր կամ լսէր՝ պատմէր զա̃մ տ̃ն իւրոյ։ Այս այրն այն՝ ունէր կին մատաղաչ և գեղեցիկ յոյժ · նման Թագուհոյն քո ։ Այս կինն այն ոչ սիրէր զայրն իւր · այլ ատէր զնա և արհամարհէր և սիրէր զայլս ։ Այս յորժամ գընայր այրն 'ի վաճառականութիւն , նոյն ժամայն կոչէր կինն զսիրան իւր · և ննջէին ը̃ իրեարս և պոռնկէին ։ Այս յորժամ գայր այրն տ̃ր , պատմէր նմա անծեղն զա̃մ · թէ այսպէս պոռնկեցաւ կին քո ։ Այս այն չափ եղև՝ մինչև ա̃մ քաղաքն լուան

 զպ

զպատուականութ կնոջ նր։ Այլ վս այնո_
րիկ՝ որ ըն բազում անգամ խրատէր
զկինն և ասէր․ Ընդէր գործես զայս։
Ասէ կինն․ քա՛ւ լիցի ինձ տէր իմ
գործել զայդ․ այլ դու հաւատաս
նզովեալ անծեղիդ․ զի քանի որ նա
կենդանի է՝ մեք ՚ի խաղաղութեան
ոչ լինիմք․ քանզի դու հաւատաս
սատանա նր։ Ասէ այրն․ ո՛վ կին դու
ոչ գիտես որ նա սուտ ոչ խօսի․ այլ
զոր ինչ տեսանէ և լսէ՝ զայն խօսի։
Այլ յաւուր միում եղև, զի եւ
այրն իւր ըստ սովորութ իւրում
և գնաց ՚ի վաճառականութի։ Այլ
կինն յղեալ կոչեաց զսիրաւն իւր՝
զի եկեսցէ առնա։ Այլ իբրև երե
կոյ եղև, եկն սիրաւն իւր և բա_
խէր զդուռն։ Այլ կինն ելեալ ե_
բաց զդուռն և ասէ․ մի՛ երկնչիր
արի՛ վասաւ ՚ի ներս․ զի ոչ ոք կայ
աստ որ տեսանէ զ․քեզ։ Ասէ սիր_
ան․ ա՛յ սիրելի իմ․ անծեղն տեսա_
նէ և պատմէ ամն։ Ասէ ցնա կինն
եկ

ե՛կ և մի՛ երկնչիր՝ զի յայսմ գիշե-
րիս առից զվրէժս իմ 'ի նմանէ:

Ա՜յ լուեալ անծեղն զխօսս նց̅ և
ասէ · ո՛վ եղկելի այր դու՝ նեն-
գե՛ս տն̅ իմում · և ննջես ընդ կնոջ
նր̅ · թէպէտ 'ի խաւար գիշերիս ոչ
տեսանեմ զձեզ, այլ լսելով զձայնն
ձեր՝ գիտեմ թէ զինչ գործէք · և
յորժամ եկեսցէ տէրն իմ, պատմե-
ցից նմա զամենայն:

Ասէ սիրաւն · ո՛չ ասացի քեզ թէ
անծեղդ այդ խայտառակէ՛ զմեզ ·
ահա լսե՛ս զինչ ասէ: Ասէ ցնա կինն
մի՛ երկնչիր · ե՛կ ընդ իս զի 'ի սենե-
կի գնասցուք և ննջեսցուք: և գը-
նացին ննջեցին ի միասին զգիշերն
ողջոյն 'ի սենեկի անդ: Ա՜յ 'ի հաւ-
ախօսին՝ ել կինն և կոչեաց զմինն
'ի յաղախնեացն իւրոց և ասէ · ե՛լ
'ի տանիսն և արա ծակ 'ի վր̅ գլխոյ
անծեղին · ա՛ծ առեալ 'ի վր̅ բոլորի
ծակոյն · զի հողն և աւազն տանի-
սին՝ իջցէ ի վերայ գլխոյ անծեղին ·


և

և ջրձգեամ ջուր խորը նոր ։ Ա՜հ ապա
խլինն արար այնպէս ։ մինչ զի եղև
անծեղն կլանամաս ։ Ա՜հ յաւանո
տաւ պաչուն՝ եւ սիրտան և գնաց ։
Ա՜հ յայնժամ ա՜ւուրն եկն վաճառա
կանն ՚ի տուն իւր ։ և տեսնել զան
ծեղն՝ ասէ ։ ով անծեղ՝ ած կեաս ։
Ա՜ւէ անծեղն ։ տէր իմ, զինչ որ լը
՜այ և տեսի՝ պատմեցից քեզ ։
Այն քո ՚ի գլխէրիս յայամիկ՝ եբեր
աու ինքն զսիրտան իւր ։ և ես անար
գելով անարգեցի զնա և ասացի նը
մա ։ Թէ յորժամ գայցէ տէրն իմ՝
պատմեցից նմա զամ ։ և նա ոչ ինչ
համարեալ զբանս իմ, եմուտ ՚ի սե
նեակն քո և ննջեաց ընկնոջ քում ։
Ա՜հ Թէ զկեանքս իմ հարցանես՝
հազիւ զերծեալ եմ ՚ի մահուանէ ։
զի այնչափ անձրև և կարկուտ եկն
՚ի վերայ իմ զգլխէրն ողջոյն, մինչ զի
կլանամաս արար զիս ։
Իբրև լուաւ զայս կինն, ասէ ցը
այրն ։ զարմանամ ես ընդ խելս քո ։

զի հաւատաս դու այդ ստախօս ան-
ծեղիդ. և այնմ կասէ թէ 'ի գիշե-
րիս եկին անձրև և կարկուտ. որ և
յայսմ գիշերիս պարզ էր երկինքն
քան զա̃մ գիշերս. ոչ անձրև եկին
և ոչ կարկուտ։ և թէ ինձ չես հա-
ւատար՝ երթ հարց զդրացիսն և-
զա̃մ մարդ։

Ասէ եղեալ այրն՝ գնաց եհարց ըզ-
դրացիսն։ Ասէ նոքա սուտն. ճշմա-
րիտ որ պարզ էր այս գիշերս քան
զա̃մ գիշեր։ Ասէ եկեալ այրն՝ սուտ
ցկինն. ճշմարիտ եղեր՝ որ գիշերս
այս պարզական եղած է քան զա̃մ գի-
շեր։ Ասէ ցնա կինն. ով բարի և
սիրելի այր իմ. ճշմարիտ ասեմ քեզ՝
զի անծեղդ այդ ստախօս է. և սուտ
խօսելովն՝ ձգեաց 'ի մէջ մեր աղմուկ
և այպն արար զմեզ 'ի քաղաքիս սաստ.
և անկաք 'ի լեզու ամենեցուն։

Ասէ գնաց այրն առ անծեղն և աս-
աէ. ով անծեղ՝ վա̃ էր խաբեցեր
զիս. և սուտ խօսեցար ընդ իս. և մի

 ուս

ւայար զբարերարութիւն իմ , յորժամ
ես ձեռամբ իմով կերակրէի զքեզ։
Եւ դու քո սուտ խօսելովն՝ արկեր
չարութիւն 'ի մէջ իմ և կնոջ իմոյ. և
արտաքսեր զմեզ զրուց քաղաքէս։
Ասէ անծեղն. գիտէ Աստուած որ յիս սը-
տութիւն ոչ կայ. այլ զոր ինչ տեսայ
և լուայ՝ զայն ասեմ։ Ասէ այրն.
սուտ խօսեցար ընդ իս. որ ասացեր
թէ յորժամ գիշերիս անձրև և կար-
կուտ եկաւ. և ստով քո՝ խռովեցու-
ցեր զիս ընդ կնոջ իմոյ։ Եւ բար-
կացեալ այրն՝ էառ զանծեղն և էհատ
զգլուխն նորա. և մեռաւ անծեղն։
Իբրև ետես կինն՝ ուրախացաւ և
ասէ ցայրն իւր. արդ այժմ խաղա-
ղութեամբ լինիցիմք. զի լաւ արարեր որ
սպաներ զանծեղն ։ Եւ այրն հայե-
ցեալ աստ և անդ՝ ետես ի վերայ բու-
նոյ անծեղին որ ծակ մի կայր ծա-
կեալ 'ի տանիսէն . և եդեալ սան-
դուղ, ելաւ 'ի տանիսն. և ետես անդ
ամանն ջրոյ. և յեզերն՝ ածաղ և փոշի


եւ

Եւ գիտաց այնու որ կինն արա-րեալ էր զայն . և աւաղեաց յոյժ զանծեղն . որ վ̃ս բանի կնոջ իւրոյ՝ սպան զայնպիսի լաւ և պատուական անծեղն : Եւ նոյնժամայն այրն այն վաճառեաց զա̃մ ինչս իւր . և գնաց յաշխարհս հեռի . և այլ ոչ դարձաւ առ կինն իւր :

Յետ այնորիկ ասէ դպրապետն ցը կայսրն . լուա՞ր արքայ զոր ինչ ա-սացի քեզ : Ասէ արքայն . այո լը-ւայ և՛ի միտ առի : Ասէ դպրապետն . եթէ վ̃ս բանի կնոջ քո սպանանես զորդեակն քո՝ դառնագոյն պատա-հեսցէ քեզ՝ քան զնորայն : Ասէ արքայն . լաւ առակ ասացեր ով բա-րի դպրապետ . և սակաւ մի բարկու̃թ սրտի իմոյ շիջաւ . այսօր վ̃ս բանիդ քո ոչ մեռանի որդին իմ : Ասէ դպ-րապետն . և ես շնորհակալ եմ քեզ՝ որ ունկնդիր եղեր առակի իմոյ և ապրեցուցեր զորդին քո այսօր :

Եւ ողջունեաց զարքայն՝ ասելով .



օրհ

օրհնութիւն իմ՝ ի վերա՛ արքայիս իմոյ
անպատկառ եղիցի : զայս ասաց Դէպ
րապետն և գնաց:

Իբրև լուաւ Թագուհին թէ այ-
սօր ևս ապրեցաւ միանուկն 'ի մա
հուանէ, սկսաւ ճչել և լալ և բարձր
աղաղակել· որ լսելի եղև ամենեցուն :
Որ կոծէր զանձն ասելով· արդ զի՞նչ
արարից· առ ո՞ երթայց· և կամ ո՞ւմ
հարցից : Յարքայէս իմմէ ոչ գտի
մի ինչ մխիթարութիւն· արդ վա՜յ է ինձ
որ անուանեալ կոչիմ Թագուհի·
լաւ էր որ մեռեալ էի՝ քան թէ յայս
կէտս բերեալ եղէ : և ծառայքն
եկեալ ծանուցին արքային :

Նա ելեալ կայսրն՝ գնաց առ նա և
ասէ· ընդէ՞ր այդպէս ճչես և լաս :
Ասէ Թագուհին· դու ես կայսր
հռոմայ· և ես դուստր եմ մոգոլոս
արքային՝ կին քո : արդ թողեր զիս 'ի
ձեռն որդւոյ քո նզովելոյ՝ որ վերա-
ւորեաց և նախատեաց զիս· և այպն
և զրուց արար զիս բոլոր հռոմայ·

որև տէրդ իմ աղքայ իսկ գիտակ է և աչօք քովք տեսեր · և խոստացար ապահանել զնա · և այժմ դեռևս կենդանի է։ Ես ինչպէս դադարիմ 'ի լալոյ · կամ իմը երկրի կենդանի կենալոյ։ արդ լաւ է ինձ մեռանիլ, քան թէ այսպիսի վիշտս և նախատինս կրել։ Ասէ կայսրն · յօժար էի առնել զբանդ քոյդ և ապահանել, այլ յերէկեան օրն եկն դպրպտ մի որդւոյն իմոյ առիս և պատմեաց ինձ առակ մի և հաւանեցոյց զիս · վասն
որոյ ձգեցի զնա 'ի վաղիւն ։

Ասէ Թագուհին · դու այնչափ ունակնդիր լինելոց ես դպրապետաց որդւոյ քո, մինչև պատահեացէ քեզ այնպէս՝ որպ̃ պատահեաց թ̃գրի միոյ յիմաստասիրացն իւրոց · որ նց̃ էր յանձնեալ զքաղաքն։ Ասէ կայսրն աղաչեմ զքեզ ով Թագուհի իմ,
պատմեա ինձ զառակդ զայդ թէ որպ̃ եղև։ Ասէ Թագուհին · վ̃ էր իզուր աշխատիմ · եթէ գիտէի որ

լինելոց էր ինձ. սակայն մի շահ՝ պատ
մէի քեզ զառակս ։ Ասէ կայսրն ·
զինչ շահ կամիս լինել քեզ · մի թէ
ազատ արարի գիտես զորդին իմ ·
այլ միայն երկարեցի զկեանս նորա
մինչ 'ի վախճանն օրն վս բանի դը
րապետին ։ Ասէ թագաւորն · բանք
դպրապետացն՝ քեզ մահ գուշակէ ·
և բանքն իմ, փրկէ զքեզ 'ի մահուա
նէ ։ Արդ լուր բանից իմոց · և'իմիտ
առ զառակս իմ · և պահեա 'ի սրտի
քում, զի բարի լինիցի քեզ ։ Նա
սկսաւ ասել զառակս զայս ։

Չորրորդ առակ Թագուհոյն · զոր ա
սաց առ Բնակաւորն և եօթն իմաստասէ
րաց նորա · որ յանդիմանեցին զշա
տաց նորա ։

Ի ժամանակի միում, կայր Թա
գաւոր մի մեծ և անուանի յոյժ
և ունէր իմաստասէրս եօթն ։
Նա թագաւորն այն՝ յանձնեալ էր
զերկիրն իւր նց · և նոքա վարէին
 զնմ

զտմ երկիրն հրամանաւն Իւրեանց·
ող և այժմ դու։ Եւ տուանց նց՝ բան
Խնչ ոչ առնէր· ող և այժմ դու։
Արարին իմաստասէրքն կախարդաւն
թգրին այսպէս· զի քանի որ ՚ի պա-
լատն էր՝ տեսանէր զլոյս· և յորժամ
ելանէր ՚ի պալատէն՝ խաւարէր լոյս
աչաց նր։ Եւ վն այնորիկ արարին
զկախարդութիս զայս՝ զի ըստ կա-
մաց Իւրեանց իշխեսցեն երկրին ։
Եւ յաւուր միում փորձէին զին-
քեանս՝ եթէ կարասցեն բժշկել
զկայսրն որ դարձեալ տեսցէ զլոյսն
և ոչ կարացին ։ Այլև հրամանն ա-
ռեալ էին ՚ի կայսերէն· զի թէ ոք
տեսանիցէ երազ՝ տացէ նց լեառ մի
ոսկի զի մեկնեսցեն զերազն։ Եւ ե-
թէ ոչ բերցէ ոք՝ կրկնապատիկ տու-
գանս տացէ արքային ։ Եւ այսու-
բանիւք՝ ճգլամ գանձս ժողովեցին։
Եւ յաւուր միում նստէր թգրն
այն ընդ թագուհոյն Իւրոյ· և էր
տրտում յոյժ։ Ասէ թագուհին·



տէր

տէր ազգաց ընդէ՞ր տրտմեմ ես : Եւ
պատմեաց ազգայն վ՟ն կուրութե խորոյ
Ասէ Թագուհին · արա՛ ըստ խրատու
իմոյ՝ եւ առողջասցիս դու : Ունիս
եօթն իմաստասէր 'ի տան քում · զոր
իմաստութբ՟ իւրեանց վարեն զա՟մ
երկիրն որ 'ի ներքոյ տէրութե՟ քո :
Կոչեա՛ զն՟ս եւ ասա՛ սպառնալեօք ·
յորժամ որ կելանեմ 'ի պալատէս ,
վ՟ն է՞ր ոչ տեսանեմ զլոյս : Արդ
հրամանս իմ այս է՝ զի արասջիք ինձ
դեղ · որ յորժամ ելանեմ 'ի պալա֊
տէս 'ի դուրս՝ տեսանեմ զլոյս · եւ
զվնասն ձեր թողում : զի տեղեկա֊
ցայ ես որ դուք արարէք ինձ զայս :
Ապա թէ ոչ յանձն առնուք բժշ
կել զիս , հրամայեմ զձեզ զա՟մենեան
չարաչար մահ՟ամբ կորուսանել :
Յետ այնորիկ կայսրն ըստ խրատու
կնոջն՝ կոչեաց զիմաստասէրքն
առ ինքն եւ ասէ : Ո՛վ իմաստասէրք՝
հարցից ձեզ բան մի՝ եւ դուք տո՛ւք
ինձ պ՟տսխնի : Ասեն իմաստասէրքն



հրա

հրամայէ՛ ա՛րքայ․ և լուիցուք զխօսս
տ̃ն մերոյ․ և տացուք պատասխանի։
Ասէ արքայն․ յորժամ որ կելանեմ
՚ի պալատէս ՚ի դուրս , վ̃ս էր զլոյս
ոչ տեսանեմ։ Ասեն իմաստասէրքն
ո՛չ գիտեմք ։ Ասէ կայսրն ըստ խրա
տու կնոջն․ լուեա՛լ է իմ որ արարել
էք կախարդութ̃ի ինձ․ յորժամ որ
կելանեմ ՚ի դուրս՝ վ̃ս այն ոչ տե-
սանեմ զլոյս ։ Արդ զվնասաւորն ձեր
թողից՝ եթէ դարձեալ առնուցուք
ինձ հնարս զի տեսից զլոյսն յորժամ
որ կելանեմ ՚ի դուրս։ Ապա թէ ոչ՝
զձեզ զամենեսեանդ դատն և չար
մահուամբ կորուսանելոց եմ․ զօ-
գուտն ձեր դուք գիտէք ։ Ասեն
իմաստասէրքն․ ա՛րքայ յաւիտեան կաց․
զո՛ւր է այդ խնդիր մեր․ մեք ՚ի բանէդ
այդմիկ բնաւ խապար ո՛չ ունիմք։
Ասէ արքայն ․ ես ո՛չ գիտեմ այդ-
պիսի խօսք ․ այլ հրամանն իմ այս է
որ բժշկէք զիս ՚ի յախտից իմոց։
Ասեն իմաստասէրքն․ տէ՛ր մեր արքայ՝


Թու

թուլացո՛ զմեզ մինչև ՚ի տասն օր․
զի խորհեսցուք և պատասխանի բեր
ցուք արքային մերոյ։ Ասէ կայսրն․
եղիցի ըստ խնդրոյ ձերում։
Եւ նոքա ելեալ յերեսաց արքային
խորհէին թէ զինչ արասցեն․ և
ոչ կարէին գտանել հնարս մի։ Եւ
տրտմեալ ասեն ցմիմեանս․ եթէ ոչ
բժշկեսցուք զկայսրն՝ մեք ամենե
քեամս մեռանիմք։ Շրջէին ՚ի մէջ
քաղաքին այսու տրտմութբ․ և եկին
շուրջ գալով ՚ի փողոց մի․ և ահա տը
ղայք փոքրիկք խաղային ՚ի մէջ փո
ղոցին։ Եւ այր ոմն եկեալ առ իմա
տասէրսն և ասէ․ տեսեալ եմ երազ՝
մեկնեցէք զերազն իմ ո՛վ փառաւոր
իմաստասէրք․ և ես տաց ձեզ մէկ
լիտր ոսկին։ Յայնժամ փոքր ման
կունքն որ կու խաղային անդ, մինն
՚ի նոցանէ յառաջ եկեալ՝ ասէ ցայրն
այն․ մի՛ տար զոսկին դոցա՝ զի դոքա
խաբեբայք են․ այլ դու ասա՛ ինձ
զերազն քո՝ և ես պատմեցից քեզ։



և

և իմաստասէրքն ակնարկէին 'ի հե-
ռաստանէ: Ապա այրն սկսաւ պատ-
մել այսպէս: Տեսի յերազի իմում
զի եղանէր աղբիւր ջրոյ 'ի մէջ ան-
դաստանի իմում. և յորդեալ յոյժ.
մինչև էլից զամ̃ անդաստանն ջրով:
Ասէ մանուկն. գնա 'ի տուն քո. և
ա՛ռ փետատ մի. և փորեա՛ զտեղին
զայն յորում եղանէր ջուրն. և գը-
տանիցես բազում գանձս. փարթա-
մանաս դու՝ և ազգատոհմն քո ամ̃:
Ապա նոյնժամայն փութացաւ այրն.
և եկեալ փորեաց զտեղին զայն. և
եգիտ բազում գանձս յոյժ. և փար-
թամացաւ ինքն և ամ̃ ազգատոհմն իւր
Ապա դարձաւ այրն առ տղայն. եւ
տայր նմա ճ̄ լիտր ոսկի վ̃ս իրաւ̂
մեկնելոյ զերազն իւր: Ապա տղայն
ոչ էառ զոսկին 'ի ձեռն. այլ ասէ՝
քաւ լիցի ինձ առնուլ ոսկի 'ի քէն.
այլ միայն աղօթեա՛ վ̃ս իմ:
Տեսեալ զայս իմաստասիրացն՝ որ
իմաստութ̃բ մեկնեց զերազն զայն,



ասեն

ասէն ցնա. ով սիրելի մանուկ դու՝
զինչ է անուն քո։ Ասէ մանուկն
անուն իմ կոչի երբիննոս։ Ասեն
իմաստասէրքն. տեսանեմք որ իմաս_
տուԹի քո մեծ է յոյժ. և արդ հարցա
նեմք քեզ բան մի։ Ասէ երբիննոս.
ասացէք ինձ զպատճառն, և ես տամ
ձեզ պատասխանի։ Ասեն իմաստա
սէրքն. Թագաւորին մերում աչքն
կուրացեալ է. եԹէ բժշկես զնա,
մեծամեծ պարգևս առնուս 'ի մե_
զանէ։ Ասէ երբիննոս. բնաւին
չի տեսանէր՝ Թէ աչաց ցաւ ունի։
Ասեն իմաստասէրքն. ոչ այդպէս
այլ քանի որ 'ի պալատն է կու տեսա
նէ. և յորժամ 'ի պալատէն իդուրս
կելանէ՝ նոյն ժամայն այլ ոչ կարէ
տեսանել։ Ասէ ցնա երբիննոս. եր
Թայց և տեսից. և ապա հրամանաւն
այ բժշկեցից։ Ասեն իմաստասէրքն.
եկ ընդ մեզ՝ որ տարցուք զքեզ առ
Թգրն. և ելեալ գնացին իմխասին
առ կայսրն։



Ասէ

Ասէ ցնա կայսրն · զինչ արարից ·
և զինչ պատասխանեցի ես նմա։
Ասեն իմաստասէրքն · առնս բերայք
բժիշկ մանուկ մի՝ որ կատարէ ըզ
կամս քո։ Ասէ կայսրն ցիմաստա-
սէրսն · գտէ՞ք ստուգիւ որ կատա-
րէ այդ մանուկդ զկամս իմ։
Ասեն իմաստասէրքն · այո՛ գտեալ եմք
զի կարող է · և փորձեալ եմք ճշմա-
րիտ զիմաստութիւն դորա։ Ասէ կայսրն ·
բարի է զոր ասէքդ ։ Իսկ դարձաւ
կայսրն առ մանուկն և ասէ · զինչ է
անուն քո մանուկ դու։ Իսկ նա ա-
սէ · անուն իմ կոչի Եէրիւնոս · որ և
ծառայ քո է։ Ասէ կայսրն · կարօղ
ես զիս բժշկել յախտից իմոց։
Ասէ Եէրիւնոս · ծառայ քո ո՛չ գի-
տէ զցաւս քո · այլ հրամայեսցէ ար-
քայ իմ, և ես կարողանամ զօրութեամբն
ա̃յ բժշկել զքեզ ։ Ասէ կայսրն ·
իմ նեղութիւն և ցաւն այն է, որ
յորժամ ելանեմ՝ի պալատէս դուրս
ո՛չ կարեմ տեսանել զլոյս ։ Ասէ
եէ

Եւերիլնոս · հրամայէ՛ ա̃մցուն 'ի բա՛ց
գնալ: Ապ̂ հրամայեաց կայսրն ա-
մենեցուն արտաքս ելանել և փա-
կել զդրունսն: Ասէ Եւերիլնոս ·
մո՛յծ զիս 'ի սենեակըն քո յորում
ննջես դու 'ի գիշերի · և անդ պատ
մեցից քեզ թէ զինչ առնելոց եմ:
Ապ̂ իբրև մտին 'ի ներքս՝ տեսանել
մանուկն զմահիճս արքային · և հրա
մայեաց ծառայիցն նր̅ փութով հա
նել 'ի դուրս զմահիճս արքային:
և ասէ ցկայսրն · այժմ տեսանիցես
զհրաշս որ է ի ներքոյ նր̅: Ապ̂ իբրև
հանին զմահիճսն 'ի դուրս՝ տեսին
'ի ներքոյ նր̅ ակն աղբերոյ · եօթն ա-
ւաջս բղխեալ և բաժան̃ել եւայր:
Ասէ մանուկն ցկայսրն · տէ՛ր իմ ար
քայ · ահա՛ որչափ աղբիւրս ի ներքոյ
մահճի քո է եօթն գնացիւք իւր-
ովք՝ ո՛չ կարես տեսանել զլոյս:
Ասէ կայսրն · որպիսի հնարիւք կո-
րուսանել մարթ է զաղբիւրդ գնա
ցիւքն իւրովք համդերձ: Ասէ
մա

մանուկն · եթէ ըստուգիւ կամիս
տեսանել զլոյս՝ մինչև ոչ գլխատես
զեօթն իմաստասէրսն . քո՝ ո՛չ կարես
տեսանել զլոյս: Վասնզի նոքա ա-
րարին զկախարդութիս զայս տեսաւն
իմոյ արքայի · զի համարձակ իշխես
ցեն իմո̅ երկրի:

Ապա նոյնժամայն հրամայեաց կայսրն
սպանանել զնսա · որ և'ի գլխատելն՝
իսկոյն կորեաւ աղբիւրն գնացիւքն
իւրովք: Ասէ մանուկն ցկայսրն ·
այժմ ելանեմք դուրս 'ի պալատէս ·
և տեսանեմք որ կու տեսանես՝ թէ
ոչ: Ապա նոյնժամայն կայսրն ետուր
զարդարել երկու ձիս · և նստաւ 'ի
միոյն արքայն, և'ի միւսն մանուկն ·
և ելան 'ի դուրս · և տեսանէր ար-
քայն զլոյս համարձակ · և ուրախա-
ցաւ յոյժ · և դարձաւ խնդութ̅բ 'ի
պալատն իւր · և մեծութի̅ շնորհեաց
մանկանն ոպ̅ իշխանի միոյ:

Ապա ասէ թագուհին ցկայսրն · Տէ՛ր
արքայ և'ի միտ առեր զառակս իմ:


Ասէ

Ասէ կայսրն · ճշմարիտ ասեմ քեզ
ո՛վ թագուհի իմ · լա՛ւ առակ ա՟ցեր
Ասէ թագուհին · ծանի՛ր ա՛րքայ՝
զի և դպրապետքն որդւոյ քո՝ նոյնպ՟
կամին առնել քեզ սուտ առակօքն
իւրեանց։ Ապ՟ այնչափ խաբեն ընդ
քեզ՝ մինչև ժամ պարապոյ գտեալ՝
սպանանեն զքեզ · և թագաւորեցու-
ցանեն զորդի քո նշանեալն ՚ի տեղի
քո։ Ապ՟ նա ոչ կարասցէ թ՟գրել·
յայնժամ կործանի թ՟գրութ՟ին քո ·
և ընդունելիս դու զանէծս ։ Ասէ
կայսրն · ոչ թողից զնոսա զի առնիցեն
ինձ այնպ՟ · այլ ը՟ լուսանալ առաւօ-
տուն՝ տամ զնոսա անպատճառ սպանանել։

## Զորրորդ անգամ տանէին զորդի արքային ՚ի հաց · և գալ հասանէին յաւխիօրան դպրա- պետին և առաջօք ծրնէին զնա։

Ի չորրորդում աւուրն նստեալ կայսրն ՚ի գահոյսն իւր, և հրա- մայեաց կոչել ըզ դահճապետն



առ

տու լինքն ։ Ո՜ յորժամ եկին՝ տաճ
ցնա կոյսըն ․ հան զորդին իւր 'ի բան
տէն և տար սպան զնա ։ և հեռացա
զգլուխն 'ի մարմնոյն խ̄ կանգուն ։
Նոյնպէս և Թադուհին յառաջնմէ
ազդեալ էր դահճապետին ․ թէ յոր
ժամ տանիցես զորդի արքային յըս
պանումն, տմ մահապարտի ոպ տա
նես՝ նմա այլ նոյնպէս արասցես ։
Ո՜ եկեալ դահճապետն՝ եհան
զորդի արքային 'ի բանտէն ․ և ետ
զձեռան 'ի յետան կապել ոպ մահա
պարտի ․ և մունետիկն յառաջուցն
ձայնէր և գընայր ասելով ․ ո՛վ ոք
որ կամենայ մեղանչել ընդ յետնա
մօրն իւրոյ՝ այսպիսի մահուամբ մե
ռանի ։ Ո՜ այսպիսի նախատանօք
տանեալ տանէին 'ի տեղի սպանմանն ։
Ո՜ յորժամ տանէին զնա՝ տեսեալ
ժողովրդեանն աղաղակէին մեծա
ձայն և ասէին ․ ա՜ւաղ ա՜ւաղ և հա
զար ա՜ւաղ զխամօր որդի կայսերն
որ 'ի զուր տանին 'ի սպանումն ։



Ո՜

Եւ մինչդեռ տանէին՝ էհաս նոցա չորրորդ դպրապետն (որում ա- նուանն էր մալխիօրսոն) որընթաց ե- րիվարաւ՜ն իւրով։ Եւ տեսեալ զոր դի արքային այնպիսի խեղճ և ողոր մելի որ տանէին 'ի մահ։ Յայնժամ բարկացեալ դպրապետն դահճապե տին և ասէ․ ընդէ՞ր այդպիսի կա- պեր ես զորդի արքային։ և ետուր արձակել զձեռս նորա։ Ասէ դահ ճապետն․ ով դպրապետ՝ հրաման սաստիկ է թագաւորին․ և մեք զի՞նչ արասցուք։ Եւ ժողովուրդքն որ շուրջն կային՝ ողբալով աղաղակէին և ասէին․ ով բարի դպրապետ՝ փու թա՛ առ կայսրն և ազատեա՛ զորդի արքային՝ զաշակերտն քո․ ո՞չ և ըն կերքն քո ազատեցին։ Եւ մանուկն իբր աղերսալով երկիր եպագ վար ժապետին իւրոյ․ ո՞չ թէ կամէր ա- սել՝ ազատեա՛ զիս 'ի մահուանէ։
Ասէ դպրապետն․ դադարեցէք դուք 'ի տեղիս այս՝ մինչ ես առ կայսրն եր

երթայց · զի յոյս ունիմ առ ած որ
փրկեմ զդս այսօր ՚ի մահուանէ ։
Ապա ընթացեալ եմուտ ՚ի պալատն ·
և մեծաւ պատուով ողջունեաց ըզ-
կայսրն ։ Ապա կայսրն խօսէր բարկութբ
և ասէ · Նզովեալ ծեր՝ գտցէ զքեզ
չարն վս խաբէութն քո զոր խաբե-
ցեր զիս ։ Ասէ դպրապետն · տէր իմ
արքայ՝ պարգևել ակն ունէի ՚ի քէն
և ոչ այդպէս բարկանալդ · և կամ
վս էր խաբեցի զտէրն իմ արքայ ։
Ասէ արքայն · քանզի ետու զորդին
իմ ՚ի ձեզ յատակ զրուց և խօսող ·
արդ անհամասիկ համրացեալ է ։
Ապա և չարագոյն այն է՝ որ փոխա-
նակ իմաստութն և հանճարոյ՝ կամե-
ցաւ բռնադատել և լլկել զկինն իմ ·
վս այնր գործոյ մեռանի ահա նա
այսօր · և դուք ամենեքեան կորի-
ցէք ընդ նմա ։ Ասէ դպրապետն ·
գիտէ ած որ ոչ լինի խաբէութի
առաջի արքայիս · յայտ է թէ վս էր
ոչ խօսի որդին քո · սակայն խօսեսցէ



վաղ

վաղվաղակի · այլ զի չէ՛ հաւանել ժամ
նո̃ր։ ապա թէ համբերես և ոչ արա_
նանես՝ լսելոց ես զխօսս նո̃ր։ Այ̂ որ
ա̃սցեր թէ զկինն իմ կամեցաւ̂ բռ_
նադատել՝ յայդմիկ ո՛չ է պատշաճ
հաւ̂ատալ կնոջ։ Այ̂ թէ վ̃ս բանի
կնոջ քո սպանանես զորդիդ՝ երկն_
չիմ թէ պատահեսցէ քեզ այնպէս՝
ո̃պ պատահեաց ծեր զինւ̂որի միոյ
'ի կնոջէն իւրմէ։ Ասէ կայսրն · ո՛վ
դու չար ծեր · կամիս առնուլ զի̃ս
այնպէս , ո̃պ երբեմն եօթն իմաստա
սէրքն արարին ումեմն կայսեր։
Ասէ դպրո̃պտն · տէ՛ր՝ ո՛չ կամիմ ես
առնել քեզ բան չար · զի թէ մի ոմն
կամ յոգունք չար առնեն՝ սակայն
ո՛չ ամենեքեան այնու չարանան ·
զի միոյն չարագործու_թե̃ն՝ զմիւսոյն
բարեգործու_թե̃ն ո՛չ ապականէ · այլ
իւրաքանչիւր գործ՝ իւրերոյ գլխոյ
գործողէ̃ն է · եթէ բարի և թէ չար։
քանզի 'ի մէջ ամէն ազգի գտանի բա
րի և չար։ Այլ ես զայս ասեմ քեզ·

եթէ վս̅ բանի կնոջ քո տայցես այ_
սօր սպանանել զորդին քո, յայնժամ
պատահեսցէ քեզ չար։ Այլ եթէ
ոչ ունկնդիր լինիցիս ինձ, յետոյ
ապաշաւես՝ այլ ոչ հասանես։ Եւ ես
առակաւոր խօսիւք հաստատեցից
զբանս իմ։ Ասէ կայսրն. տամ զա_
ռակդ թէ մինչ եղեւ։ Ասէ դպրա
պետն. ոչ ասեմ եւ ոչ աշխատիմ. զի
մինչ ես պատմեցից զառակս՝ գուցէ
զորդին քո անդ սպանցեն. եւ զինչ
շահ լինիցի ինձ 'ի պատմութենէս։
Այլ եթէ կամիս լսել զառակս՝ նախ
դարձո զորդին քո 'ի մահուանէ 'ի
բանտ. եւ ես պատմեմ քեզ զառակս։
եթէ հաճոյ լիցի քեզ առակս՝ ապ
րեցո զորդին քո. եւ թէ ոչ՝ ըսպան
զնա։ զի 'ի ձեռս քո է թէ սպանա
նես եւ թէ կեցուցանես։ Յայնմ
ժամու հրամայեաց կայսրն դարձու
ցանել զորդին իւր 'ի բանտ՝ մինչեւ
պատմեսցէ դպրապետն զառակն։
Այլ սկսաւ ասել։

Առակ [illegible] · [illegible]
մի կնոջ [illegible] որ [illegible] [illegible]։

Ի քաղաքի միում՝ կայր զինուոր մի ծեր · արդար և երկիւղած յոյժ · և մեռաւ կին նորա · և մնաց բազում ժամանակս այրի · և ոչ կամէր առնուլ կին ։ Յետոյ եկեալ սիրելիքն իւր և բարեկամքն՝ ձեռպեցին զնա որ էառ աղջիկ մի 'ի կնութի իւր ։ որպէս նախարարքն քո քեզ արարին ։ և էր գեղեցիկ յոյժ · զի 'ի դստերաց հռովմայեցւոց էր ։ և այրն սիրէր զնա ։ և կացեալ ընդ իւրեարս ամս երեք՝ և ոչ եղև զաւակ նոցա ։

Ի յաւուր միում՝ ել կինն եւ գնաց 'ի ժամ առաւօտուն · և պատահեաց նմա մայրն իւր՝ ողջունեաց զնա և ասէ · դուստր իմ զի՞ տրտմեալ ես · և զխորդ է այդ քո ընդ քեզ ։ Ասէ դուստրն ցմայրն · ոչ է բարի այրն իմ · զի յորժամ ննջեմք՝ որպէս



կոճղ

կոճղ անկանի իւր մաշկին · և բը-
նաւ ոչ առնում ՚ի նմանէ մխիթա-
րութիւն մարմնական զուգակցութե̄։
վ̄ս այնորիկ կամիմ սիրել զայլս՝ զի
կատարեսցի զխափադ ցանկութե̄ն
իմոյ։ Ասէ մայրն · դուստր իմ մի՛ա-
րատասցես զքանդ զայդ · զի մեղք մեծ է
Ահա՛ ես և հայր քո բազում ժամա-
նակս բնակիմք՝ և զայդ ոչ գործեմք
Ասէ դուստրն · մայր իմ՝ ձեզ չէ՛
զարմանք եթէ ոչ գործէք զայդ ·
վ̄ս զի երկոքեանդ տղայ հասակաւ՝
լցեալ էք զպարտս միմեանց · և ոչ
էիք ո՞չ զայրն իմ զրկեալ կամէ · որ
կարողութիւն ևս ոչ ունի շարժելոյ ·
այլ նման փայտի ընկնի ՚ի մահիճն
և ննջէ մինչև ՚ի լոյսն։ վ̄ս այնորիկ
խորհեցայ ես սիրել զայլս։ Ասէ
մայրն · ասա՛ ինձ զո՛վ կամիս սիրել։
Ասէ դուստրն · զքահանայն եկեղե-
ցւոյս այսորիկ։ Ասէ մայրն · վ̄ս էր
զքահանայն սիրես և ոչ զզինուորս ·
կամ զայլ ոք · զի փոքր լինէր մեղքն։
Ասէ

Ասէ դուստրն․ եթէ զինուորս սիրեմ կամ զա՛յլ ոք՝ փողփողակի թողեալ զիս՝ խայտառակէ առաջի ամենեցուն․ և լինիմ ամօթ և՚ի նախատինս ։ բայց քահանայն թագուցանէ․ վասն զի յայտնել ո՛չ կարէ․ այլ և համապազ ընդ-իս լինի․ և զինչ որ խնդրեմ՝ տայ ինձ։ Ասէ մայրն․ լուր դուստր իմ խրատու իմոյ եւ՛ բարի լինիցի քեզ․ զի ծերք բարկացօղք և խստասիրտք լինին․ փորձեա՛ զնա մէկ երկու անգամ և արա՛ վընաս առաջի նր՟․ եթէ թողցէ քեզ զվնասն քո զոր առնես, յայնժամ սիրեսցես զո՛վ ոք և կամիս ։ Ասէ դուստրն․ ո՛չ կամիմ այդչափ երկար համբերել։ Ասէ մայրն․ համբերեա՛ դուստր իմ եթէ կամիս զօրհնութ՟իս առնել։ Ասէ դուստրն․ վս՟ օրհնութեան քո՝ տանջեցայց և համբերից այլ ևս ժամանակ մի․ բայց ասա՛ ինձ թէ որպ՟ փորձեցից զնա։ Ասէ մայրն․ եթէ կայ ոստայնի ծառ ՚ի մէջ դը-



րախ

րախտին որ առաւել սիրէ այր քո
քան զա̃մ ծառ , կորեա զնա · և յոր
ժամ գալու լինի այր քո 'ի դրան ,
ձգեա զայն 'ի փուռն 'ի մէջ կրակին ·
և դի՛ր աթոռ յանդիման նորա · որ
այր քո նստի և տեսանէ զնա 'ի մէջ
կրակին ; և թէ թողու քեզ զվ-
նասն զայն՝ յայնժամ սիրեսցես ըզ-
քահանայն : Ասէ դուստրն · որպէս
զայդ ա̃մ · և գնաց 'ի տուն իւր :
Ասէ այրն · վ̃ս էր յուշացար այդ-
չափ · և ու̃ր էիր մինչև ցայժմ :
Ասէ կինն · յեկեղեցին էի՝ և ա-
ղօթս առնէի 'ի դէմ ա̃ծ պատ̃րգին ·
և յետոյ խօսէի ընդ մօրն իմում :
Ասէ այրն · և ինձ հաճելի է բանդ
այդ՝ որ ամէն առաւօտու երթիցես
յեկեղեցին և խնդրեսցես զար-
քայութիւնն ա̃յ :
Յետ այնորիկ ելեալ այրն՝ գընաց
ըստ սովորութեան իւրոյ յորս :
Ա̂ն ելեալ կինն ասէ ցայգէգործն
ով եղբայր՝ գնա յայգին և կորեա



ծառ

ծառ մի և բեր· զի վառեցից զխուռս զի օրս ցուրտ է · և այրս ցրտացեալ գոյ 'ի յորսոյն· վա[սն] այն վառեցից աճելի` զի ջերմասցի : Եւ եկեալ այգեգործն` էառ զկացինն և գնաց յայգին· և տիկինն զկնի նորա: և մտեալ 'ի այգին` ժողովէր զխռիճս յայսկոյս և յայնկոյս · մինչև եկն 'ի ծառն այն որ յոյժ սիրէր այրն իւր: և ասէ ցայգեգործն` կտրեա զծառս զայս : Ասէ այգեգործն · ոչ կարեմ կտրել զդա · զի տէր իմ յոյժ սիրէ զծառդ զայդ : Եւ առեալ զկացինն կինն 'ի ձեռանէ այգեգործին` ինքն իւր ձեռօքն կտրեաց զծառն զայն · և եբեր 'ի տունն վառելոյ : Եւ իբրև երեկոյ եղև` յորժամ մերձ եղև գալ առն իւրոյ` նոյնժամայն վառեաց զծառն:

Եւ եկեալ այրն նորա 'ի տունն · և կինն ընթացեալ եդիր աթոռ յանդիման հրոյն զի ջեռասցի: Եւ նստեալ այրն` ջեռնոյր · և նայեցեալ



ետես

եւես զծառն սիրեցեալ՝ որ այրէր 'ի մէջ հրոյն։ Աղաչեաց զայգեգործն և ասէ․ ընդէ՞ր կտրեցեր զծառդ զայդ ։ Ասէ այգեգործն․ տիկնանն հրամայեաց ։ Ասէ կինն․ ես արարի և պատրաստեցի զհուրս՝ զի դու եկեալ ջեռուսցիս։ Այն այրն խոժոռեալ աչօք հայէր 'ի կինն և ասէ․ ով անզգամ և չար կին՝ վասն էր արարեր զայդ․ զի գիտէիր որ ես սիրէի զծառս զայս՝ և դու կտրեցեր զնա։ Այն կինն սկսաւ լալ և ասել․ ես վս̅ բարութե̅ քո արարի զի ջեռուսցիս դու․ արդ վս̅ փոխարինի բարուե̅ անարգես զիս։ զայս ասէր և լայր դառնապէս։ Ասէ այրն․ դադարեա՛ 'ի լալոյդ․ այժմ թողցի քեզ վնասդ այդ զոր գործեցեր․ բայց պատուիրեմ քեզ մի՛ եւս իշխեսցես առնել միւսանգամ այդպիսի ինչ։

Այն 'ի վաղիւն անդր եւ կինն և գնաց յեկեղեցին․ և պատահեաց նմա մայրն իւր․ և ողջունեցին



զմի

զմխիթարանս ։ Ասէ դուստրն ցմայրն
իւր ․ փորձեցի զայրն իմ և արարի
զոր ինչ պատուիրեցեր ինձ ․ կտրեցի
զծառն զայն և այրեցի զամենայն ․
և այրն իմ ետես զվնասն իմ և բար
կացաւ ։ Իբրև ես սկսայ լալ՝ ե
թող ինձ զվնասն իմ զոր արարի ․ և
արդ կամիմ սիրել զքահանայն եկե
ղեցւոյ ։ Ասէ մայրն ․ դուստր իմ
միւսանգամ ևս փորձեա ․ զի ծերք
մի անգամ թողուն , և՛ի միւսումն
կրկնապատիկ հատուցանեն ։ Ասէ
դուստրն ․ ո՛չ կարեմ համբերել
մայր իմ ։ Ասէ մայրն ․ ո՛վ սիրելի
դուստր իմ ․ առաջի անգամն համբե
րեցեր վ̅ն օրհնութ̅ե իմոյ , և այժմ
համբերեա վ̅ն օրհնութ̅ե հօր քո ․
և միւսանգամ փորձեա զայր քո ․
եթէ այժմ ևս թողցէ և ոչ անար
գեսցէ զքեզ՝ ապա սիրեա զքահա
նայն ։ Ասէ դուստրն ․ տանջանք
մեծ է ինձ այդչափ երկար համբե
րել ․ այլ վ̅ն օրհնութեան հօր իմոյ


համ

համբերեցից և փորձեցից միւսան֊
գամ բայց ասա՛ ինձ թէ որ՟պ փորձե
ցից։ Ասէ մայրն • գիտես զի այրն քո
սիրէ զփոքրիկ շունն • բայց զնա
առաջի աչաց ն՟ր • և թէ թողցէ ըզ
ձեռան քո՝ ապա կարող ես սիրել
զքաղցանոյն ։ և զայս ասացեալ գը
նացին ՚ի տունս իւրեանց ։
Այս իբրև երեկոյ եղև՝ զարդարեց
կինն զմահիճ տան իւրոյ • և այր
ն՟ր նստէր առ հրոյն • և շունն ո՟պ սո
վորեալ էր՝ խաղայր ի՟ւր անկողնոյն։
Այս յանկարծակի առեալ կինն ըզ
շունն առաջի տեառն իւրոյ՝ եզարկ
ընդ դուռն յորմն • որ յղեղ գլխոյն
հեղաւ և սատակեցաւ։ Այս տեսեալ
այր ն՟ր ասէ • ո՛վ նզովեալդ ՚ի մէջ կա
նանց • և չարդ ՚ի մէջ կենդանեաց •
Զինչ գործեցեր առաջի աչաց իմոց։
Ասէ կինն • զինչ որ վ՟ս շահու քո
առնեմ և բարեկամութիս ցուցա֊
նեմ քեզ՝ ամենայնին ոչինչ է առաջի
քո • և հանապազ անարգես զիս


Տե

Տեառնեա՝ զի զարդարեցի ըզմահիճս քո դիպակ անկողնոք. և նմ ել 'ի վերայ նո՟ր շաղախեալ ոտիւք: Ասէ այրն. դու ոչ գիտես որ ես աւաղեալ սիրեմ զշունն քան զդիպակ անկողինն քո: Ասէ կինն. զնմ բարբառիս որ 'ի վե՟ր քո առնեմ, ոչինչ համարեալ առաջի քո. և զայս ասացեալ՝ սկսաւ լալ և եղուկ տալ անձինն: Ասէ այրն. դադարեա՛ 'ի լալոյդ. և այժմ ես թողից քեզ զվընասդ. և մի' այլ ես գործեսցես այդպիսի վնաս իմն: Ասէ կինն. յօժարութե՟ կատարէի զկամս քո՝ եթէ գիտէի թէ ոչինչէ խորհուրդ սրտի քո: Նա՛ այրն այլ ոչ խօսէ՟ր. և ելեալ ննջեաց:

Նա՛ 'ի վաղիւն ելեալ կինն գնաց յեկեղեցին. և եգիտ անդ զմայրն իւր և ասէ. բարի լոյս քեզ մայր իմ: Ահա՛ կատարեցի զխօսս քո վա՟ օրհնութե՟ քո և վա՟ օրհնութե՟ հօր իմոյ. որդ այժմ սիրեմ զքահանայն. բա



նա

Հակամ է այսչափ համբերելս. ա՛ն-
ելի այլ ոչ կարեմ համբերել։ զի է̃
անգամ փորձեցի զայրն իմ. և յոր-
ժամ բարկացաւ ինձ՝ ես սկսայ լալ.
և նա նոյնժամայն եթող զվնասն իմ։
Ասէ մայրն. գիտացի՞ր դուստր իմ
զի ծերք դժուարաբնութք լինին.
մի և երկու անգամ թողուն, բայց
յետոյ տասնապատիկ խնդրեն ըզ-
վրէժն. փորձեա զնա եւթն անգամ։
Ասէ դուստրն. զո՞ւր է ասելդ քո
մայր իմ. այլ ոչ կարեմ համբերել
և լսել քեզ։ Այսչափ ժամանակ է
որ կայրիմ ես սակս քահանային այնո-
րիկ. և բորբոքի սիրտ իմ. և կամ ես
'ի տանջանս. և դու բնաւ ոչ խըղ-
ճաս ինձ։ Ասէ մայրն. այս մի ան-
գամս այլ արա զխօսս իմ և փորձեա
զնա. և թէ թողցէ քեզ զվնասն քո,
տ̃րն վկայ լինի դուստր իմ՝ ես ձե-
ռօք իմովք ուխտեցից զքեզ քահա-
նային. և այլ ոչ նեղեցից զքեզ։
Ասէ դուստրն. շատ նեղեցեր զիս



մայր

մայր իմ. և ես ոչ կարեմ համբե-
րել այդչափ երկար 'ի սէր քահա-
նային: արդ տես թէ ոչ փորձեցից
զայրն իմ այս անգամ այլ: Լսէ
մայրն. 'ի յայս կիրակէիս առնելոց է
այր քո ընդունելութիւն մեծ. և հրա-
ւիրեալ է զգլխաւորակիցս բազումս
'ի ճաշ: Յորժամ եկեսցեն ամենե-
քեան և նստիցին 'ի ճաշ, ե՛կ և դու
նիստ. և սպնդեա՛ զդաստառակ սե-
ղանոյն ընդ մէջ քո. և ե՛լ յանկար-
ծակի և գնա՛. զի ցրուեսցի սեղանն
առաջի բազմականին: և թէ այր քո
ոչ խօսեսցի և թողցէ քեզ զինչ ասա
զայս եւս ոչ առաջնոցն, յայնժամ
կարող ես սիրել զքահանայն: Եւ
զայս ասացեալ՝ գնացին 'ի տունս
իւրեանց:

Եւ իբրև կիրակի եղև՝ եկին առ
նա 'ի ճաշ ամ զլխաւորակիցքն իւր:
Եւ իբրև դրին զսեղանն և բազմե-
ցան ամենեքեան և բերին զճաշն,
եկեալ և կինն բազմեցաւ ընդ նմ


'ի

՚ի սեղանն · և առեալ զդաստառակ
սեղանոյն գաղտ ՚ի նոցանէ՝ կապեալ
՚ի գօտի իւր։ Եթէ առէ այրն · ով մա
լորամիտ կլինի՝ մոռացար բերել զդա
նակս իմ · արդ որով կերայց հաց։
Եթէ կլինի փութով ել զի բերցէ զդ
դանակն ։ Յայնժամ վերացաւ և
դաստառակն ընդ նմա՝ և կործանե
ցաւ սեղանն · և ցրուեցաւ կերա
կուրն · և հեղաւ գինին · և կթխոյքն
արծաթէ անկան յերկիր ։ Եթէ տե
սեալ այր նորա՝ բարկացաւ յոյժ · բայց
վասն բազմականացն չասաց նմա ինչ։
Եթէ հրամայեաց աղախնեացն դար
ձեալ կերակուր պատրաստել · և ոչ
տրտմեցոյց զերեսս իւր։ և դարձեալ
դրէին սեղան · և բերէին կերակուր։
կերան և արբին և ուրախացին յոյժ։
Եթէ ՚ի վաղիւն անդր՝ ել այր նորա և
գնաց ՚ի շուկայն · և եգիտ բժիշկ մի ·
և առէ ցնա · եղբայր՝ գիտես արիւն
առնել։ Ասէ բժիշկն · այո՛ քաջ գի
տեմ։ Եթէ առեալ զնա եբեր ՚ի



տուն

տուն իւր • և ասէ ցկինն իւր՝ արի՛
կաց 'ի մէջ • զի բերի քեզ բժիշկ մի
որ ասացէ 'ի քէն արիւն • զի բազմա
ցեալ է արիւնդ՝ և խելքդ ցրուեալ է •
Թող զի ելցէ արիւնդ 'ի քէն՝ եւ
խելքդ ժողովեսցի 'ի գլուխդ քո:
Ասէ կինն • մինչև ցայժմ ոչ եմ ա-
ռեալ արիւն • և այժմ ևս ոչ կամիմ
առնուլ: Ասէ այրն • ո՞չ կամիս գի
տել թէ այս երիցս անգամ զինչ
գործեցեր դու ընդ իս: Ապա բռու
նութեամբ կալեալ կապեաց զձեռս նորա •
և ետուր ծակել զերակսն երկոսին
ձեռացն • և արիւնն հեղոյր որպէս
ջուր: և այնչափ եթող՝ որ մինչև
ուշաթափեցաւ կինն: Ապա յետ այ
նորիկ տարեալ եդ իւր մահճին և
ասէ • կաց 'ի վերայ մահճիդ մինչև
առատացիս լաւ բնութեամբ: և ելեալ գը
նաց այրն 'ի յորս:

Ապա կինն նուաղեալ 'ի զօրութէ՝
կոչեաց զմինն 'ի յաղախնեացն և
ասէ • փութա և գնա առ մայրն իմ
և

և ասա՛ ցնա որ շուտով եկեսցէ · զի
ահա մեռանիմ։ Ա՜ռ գնայ աղախինն
և պատմեաց մօրն։ Ա՜ռ իբրև լուա՜
մայրն՝ եկն խնդալով առնա։ Իբրև
ետես աղջիկն զմայրն՝ ասէ ցնա ·
ո՜վ քաղցրեկ մայր իմ · հազի՜ւ զեր-
ծեալ եմ՚ի մեռանելոյ · զի բազում
արիւն հեղա՜ւ յինէն ։ Ասէ ցնա
մայրն · չասացի՞ քեզ թէ ծերք խիստ
դժուա՜րաբնութք կու լինին ։ այժմ
կամի՞ս սիրել զքահանայն ։ Ասէ
դուստրն · աստուածայք թող սիրեն
զքահանայն այլ և զամենեսեան ·
այսուհետև ո՜չ զոք սիրեմ բայց
միայն զայրն իմ։

Յայնժամ ասէ դարբինն ցկայսրն ·
տէր իմ արքայ 'ի միտ առէր և հա
՜ճանեցար զառակս իմ։ Ասէ ցնա
կայսրն · 'ի մէջ առակա՜որ բանիցս
զոր լուայ՝ այս առա՜կդ հաճոյ թր
՜եցաւ ինձ ։ Զի նզովեալ կինն
այն՝ երիս վնաս արար առն իւրոյ ·
և առանց կարծեաց չորրորդն կա

 տա

տարելո՛ց էր զէտր խորհուրդ սրտի
իւրոյ ։ Ասէ ցնա դպրապետն ․ վ՟ն
այն ասեմ քեզ զի զգո՛յշ լինիցիս 'ի
կնոջէ քումմէ ․ զի մի՛ պատահեսցէ
քեզ խստագոյն քան զնորայն՝ եթէ
վասն բանի կնոջ քո սպանիցես զոր
դին քո ։ Ասէ կայսրն ․ ամէն ասեմ
քեզ ո՛վ դպրապետ՝ ո՛չ մեռանի որ-
դին իմ այսօր ․ Ե՛րթ 'ի խաղաղու՟թ ։
Ասէ դպրապետն ․ շնորհակա՛լ եմ
քեզ տէր իմ արքայ ․ որ վ՟ն առակի
իմոյ ապրեցուցեր զորդին քո ․ և
օրհնու՟թ իմ անպակաս եղիցի 'ի վե
րայ քումմէ ։ զայս ասացեալ դըպ

րապետն և գնաց ։

Յետ այսր ա՟մի իբրև լը՟ման թա-
գուհին թէ այսօ՛ր ես ոչ մեռա՟ն
որդի արքային , յայնժամ եմուտ 'ի
սենեակն իւր և ժողովեաց զա՟մ ըզ
գեղեցկագոյն զգեստս իւր և զա՟մ
զպլխտոյան ․ և հրամայեաց ծառայից
իւրոց համեմել զկառս և զգրաստս
զի առ հայր իւր երթիցէ ։

Ո՜վ վերակացուացն տեսեալ՝ ծա
նուցին արքային թէ վաղի՞ն թա
գուհէն գնալոց է առ հայրն իւր։
Ո՛վ կայսրն լուեալ զայս՝ եմուտ 'ի
սենեակ թագուհւոյն և ասէ. ո՛վ
սիրելի տիկին իմ ո՞ւր կամիս գնալ։
Ասէ թագուհին. առ հայրն իմ։
Ասէ կայսրն. վ̄ն էր։ Ասէ թագու-
հին. զի բարութ̄բ վայելեցից ըզ
կեանս իմ։ Ասէ ցնա կայսրն. ես
կարծէի թէ ո՛չ զոք սիրես առաւել
քան զիս. արդ՝ ո՛պ̄ զատուելոյ կամիս
և հեռանալ յինէն։ Ասէ թագու-
հին. ճշմարիտ է որ քան զամ̄ առա-
ւել կու սիրեմ զքեզ։ Այլ վասն
այնորիկ կու հեռանամ 'ի քէն, զի
մի՛ տեսից զչարչարանսն մահն քո՝
որ առնելոց է քեզ որդին քո։ զի լա՛
համարիմ զմահն քո 'ի հեռուստ լսել՝
քան թէ առաջի աչաց իմոց տեսանել
Կ̄ռ զի դու այնքան ունկնդիր լի
նելոց ես դպրապետաց որդւոյ քո,
մինչև պատահեսցէ քեզ այնպէս՝

որպէս պատուհասեաց օգգաւ̂խանոսն
կայսեր ։ որ վ̃ս ագահուե̃ իւրոյ՝
կենդանւոյն Թաղեցին զնա նախա-
րարքն նորա · լցեալ ոսկի ընդ կո-
կորդս նր̃ ։ Ասէ կայսրն · ով սիրե-
լի տիկին իմ պատմեա ինձ Թէ ի՛նչ
կերպիւ̂ եղև ։ Ասէ Թագուհին ·
ես բանից քոց այլ ոչ հաւ̂ատամ և
ոչ պատմեմ քեզ առակս · այլ ՚ի բանց
հեռացայց ՚ի քէն ։ Ասէ կայսրն ·
քաւ̂ լիցի քեզ անկանել զայդ · և դը-
նալ առ հայրն քո · և զիս առանց
Թագուհի Թողուլ ։ Ասէ Թագու-
հին · Ճշմարտիւ̂ պարտ էր որդւոյ քո
կորընչիլ և մի՛ մնալ կենդանի՝ Թէ
ես Թագուհի էի կայսեր և դուստր
տիեզերակալ արքայի · որ այսպիսի
նախատեաց զիս · որ աչօք քո տեսեր
և խոստացար սպանանել զնա և ոչ
սպաներ ։ Այ̃ այդմ իրի ոչ ես հա-
ւ̂ատամ այսուհետև խօսից քոց ·
զի սուտախօս երևեցար · և չէ՛ պարտ
Թագաւ̂որաց սուտախօս լինիլ ։

 Ասէ

Ասէ կայսրն․ ո՛վ սիրելի տիկին իմ․ ամենից որ տեսանք ենն՝ պատրաստ է ուն կնդիր լինել բանից․ և հաւաստատե֊ քննել․ զի մի՛ թիւր գուցէ բանն և ամօթ մեծ եղիցի։ Վորոյ աղաչեմ զքեզ՝ զի պատմեսցես ինձ բան ինչ շահաւէտ և օգտակար․ ո՛չ զի ՚ի մէջ բանիցս այսոցիկ՝ կարասցիս առնել իրաւունս։ Ասէ Թագուհին․ պատ մեցից քեզ առակ մի այլ․ բայց արդ՝ այսուհետև մի՛ ևս լուիցես դպրա պետաց քոց։ Եւ սկսաւ ասել այսպէս։

### Հինգերորդ առակ Թագուհւոյն․ որ ասաց վասն օգտակարութեան չարեացն ագահութեան։

Ի քաղաքի միում կայր հզօր Թա֊ գաւոր մի․ և էր անուն նորա Օգդաւիանոս կայսր․ և էր նա ինք֊ նակալ՝ որպէս և դու։ և էր քաջ առատ և ընծաւէր․ և ամենայն ու֊ մեք որ ինչ կերպիւ զոյգս առնէին



առա

առաջի իւր՝ հաւատայր: որպէս դու
որ հաւատաս վարժապետաց նզովեալ
որդւոյ քո: Յորոյ ժամանակին արա
րին քաղաքացիքն հակառակութիւն.
և բազում թագաւորս թշնամի յարու-
ցին ի վերայ քաղաքին այնմիկ:

Եւ յաւուրսն յայնոսիկ կայր ՚ի
քաղաքն այն դպրապետ մի վեր-
կիլէոս անուն. որ հռչակեալ էր ի-
մաստութեամբ և հանճարով ընդ ամ
երկիր. Եւ առաւել կախարդական
արուեստիւ: Նմանէ խնդրեցին
քաղաքացիքն զի իւրով իմաստութեն
գտցէ հնարս ինչ՝ որով կարասցեն
ընդդէմ ունել թշնամեացն: և նա
կախարդական արուեստիւն արար
հնարս այսպէս: Հրամայեաց շինել
աշտարակ մի. և ՚ի վերայ աշտարակին
քանդակել զամ ազգաց պատկերս՝
երկրօքն հանդերձ որ կայ ՚ի մէջ աշ
խարհիս. կերպիւ կերպիւ պատե-
րազմին: Եւ ՚ի միջին արար պատ
կեր մի՝ որ ՚ի ձեռին իւրում ունէր

 ու

ռակի խնծոր մի։ Եւ ազգաց պատ
կերքն որ շուրջ զաշտարակաւն էին
ունէին 'ի ձեռս իւրեանց զանկակս·
և իւրաքանչիւր պատկերքն՝ զդէմս
իւրեանց յայն երկիրն ունէին՝ յո-
րոյ անուն և դրոշեալ էին։ Եւ որ
երկիր որ կամէր ապստամբել և հա
կառակ կալ այն քաղաքին՝ յայնժամ
պատկերն այն որ յանուն նր̅ էր նը
կարեալ՝ հնչեցուցանէր զզանկակն·
և զօրքն քաղաքին՝ այնու նշանա-
դիմէին 'ի նա· և հարկանէին զեր-
կիրն այն մեծաւ յաղթութեամբ։
Եւ այսպիսի հնարիւք ամ̅ երկիր՝
ամենևին ոչ իշխէին ընդդէմ կալ
այն քաղաքին· որ զաշտարակն զայն
կանգնեալ էր փիլիսոփայն վիրգիլիոս
պատկերօքն հանդերձ։

Յետ այնորիկ այլ ևս արար հնարս
իմաստասէրն վիրգիլիոս· զի 'ի
տեղի մի բացարձակ 'ի մէջ քաղաքին
արար հուր անշէջ· որ միշտ աղքատք
ջեռանային։ Եւ առ հրոյն արար

աղբիւր Ջրոյ · զի աղքատք ըմպես_
ցեն և լուանասցին։ Այս առ ընթեր նց̃
արար պատկեր մի կանգուն · և գիր
եդ̃ր նր̃ այսպէս Թէ ո՛վ ոք հարկա_
նէ զիս՝ առից ՚ի նմանէ զվրէժ իմ
վաղվաղակի։ Այս պատկերն այն է_
կայ այնպէս ՚ի բազում ժամանակս։
Յետ այնորիկ եկն դպիր մի · և ըն_
Թերցաւ զգիրն զայն և ասէ · Զինչ
վրէժ առնելոյ ես դու յինէն ։
Ես գնամ Թէ հարից և կործանե_
ցից զքեզ՝ գտանեմ ներքոյ ոտից
քոյ գանձս բազումս ։ և վերացու_
ցեալ զձեռն՝ եհար զպատկերն։
Յորժամ եհար՝ անկաւ պատկերն ·
հուրն շիջաւ · Ջուրն ցամաքեցաւ ·
և գանձ ո՛չ գտաւ ։ Այս տեսեալ
զայն աղքատացն անիծելով ասեն ·
տացէ տ̃ր զի նա ինքն կորիցէ՝ որ կո
րոյս զպատկերս՝ եհան ՚ի մէնջ զայն
ալխալ խնդութիւն մեր։
Յետ այնորիկ ժողովեցան իմիասին
Թագաւորք երեք · որ մեծ նեղու_

 Թիւ

Թէ կրէին 'ի յայն քաղաքէն յորում
աշտարակն կայր․ և ասեն՝ ճրագխի
բանիւք կարեմք առնուլ զվրէժս
անտի։ Ասէ ոմանք 'ի նոցանէ ասէին
անշահ է մեզ փորձելն․ զի որքան
աշտարակն այն կայ պատկերօքն ,
ոչ ինչ կարասցուք առնել։ Ասէ ըն
եալ զայս զինուորքն երեք՝ և ասեն
զինչ կամիք տալ մեզ եթէ կործա_
նեսցուք զաշտարակն հանդերձ պատ
կերօքն․ և դուք կարասջիք պատե_
րազմել ընդ նոսա։ Ասեն ցնոսա թագա
ւորքն․ զինչ որ կամիցիք՝ տամք ձեզ։
Ասեն զինուորքն․ արդ տուք մեզ
յառաջմէ չորս ամանս լի ոսկի․ զի եր
թիցուք մեք 'ի քաղաքն այն․ և յոր_
ժամ կործանեսցուք զաշտարակն՝
յայնժամ կամք ձեր է՝ զոր ինչ որ_
ժամն է տուք մեզ։ Ասեն թագաւորքն․
զինչ կամիք առնել զայն չորս աման
ոսկին ։ Ասեն զինուորքն․ զայս դ
աման ոսկին՝ հնարիւք նոցա տամք և
ապա կարողանամք կործանել զաշ


տա

տարեկն զայն ։ Յայնժամ ետուն
նմ̃ չորս ամանս լի՛ ոսկի։

Յետ այնորիկ առեալ զինու̂որացն զչորս ամանս ոսկին՝ եկին ՚ի քաղաքն այն ։ և ունէր քաղաքն այն չորս դուռ ։ և թաղեցին գաղտ զամէն մէկ աման ՚ի մէկ մէկ դուռն ։ Յետոյ մտեալ ՚ի քաղաքն՝ գնացին առ կայսրն ․ և մեծաւ̂ պատու̂ով ող_ջունեցին զկայսրն։

Ասէ ցնոսա կայսրն ․ յաղագս որո՞յ իրաց եկեալ էք դուք աստ։

Ասեն զինու̂որքն ․ տէ՛ր արքայ՝ մեք յերկրէ հեռաստանէ եմք ․ և մեք եմք երազահանք ․ և երազն մեր ո՛չ այլ ինչ ցուցանէ՝ բայց միայն ոսկի և գանձ՝ թաղեալ ՚ի ներքոյ երկրի գտանեմք ։ Արդ լու̂եալ զհամբաւ̂ բարերարութե̃դ քո՝ եկեալ եմք առ քեզ ․ և եթէ հաճոյ թու̂եսցի տն̃ մերում արքայի ծառայել մեզ՝ ծա_ռայեսցուք առաջի քո ։ Ասէ կայսրն նախ փորձեմ զձեզ ․ և եթէ գտա_նի



նի

նիցեմ ուղղութիս ՚ի ձեզ՝ պարգևս մեծամեծս առնուցուք յինէն։

Ասեն զինուորքն· պարգևս ոչ խնդրեմք ՚ի քէն· այլ միայն զկէս ոսկոյն զոր գտանեմք։ Ասէ կայսրն· բարի՛ է զոր ասէքդ· և կոչեաց զնոսա յընթրիս։ Եւ յետ ընթրեացն՝ ասեն ցկայսրն· տէ՛ր՝ եթէ կամիս ՚ի գիշերիս այս՝ երիցագոյնն մեր հայեսցի երազ· և ՚ի վաղիւն պատմեսցուք քեզ։ Ասէ կայսրն· գնացէք խաղաղութ՟· տացէ՛ ա՟ծ ձեզ երազ բարի· զի կարասցուք գտանել գանձս։ Եւ նոքա գնացին ուրախութ՟ յօթեւանս իւրեանց՝ ծաղր առնելով զկայսրն։ Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն· և ասէ երիցագոյնն ՚ի նոցանէ։ Արքա՛յ յաւիտեան կաց· տեսայ երազ բարի՝ զի աման մի լի՛ ոսկով թաղեալ կայ առաջի դրան քաղաքիս· երթիցուք անդր· գտցէ և տէրութ՟ քո ընդ մեզ։ Ասէ կայսրն երթայց և տեսից թէ ճշմարիտ իցէ



զոր

զոր ասէքդ։ Իբրև եկին ՚ի դուռն
քաղաքին, ասեն զինուորքն ցկայսրն
հրամայեա՛ տէր զի բերեսցեն զտեղիս
զայս։ Եւ յորժամ բերեցին՝ հանին
զոսկին զոր ինքեանք թաղեալ էին։
զոր տեսեալ կայսրն՝ ուրախ եղև
յոյժ. և ետ նոցա զկէս ոսկւոյն։
Յայնժամ ասէ երկրորդն ցկայսրն
տէ՛ր իմ արքայ՝ քոյին աղօթիւքդ՝
վաղիւն ես հայիցեմ երազ։ Ասէ
կայսրն. տացէ՛ տէր ած ձեզ երազ
բարի։ Եւ ընդ առաւօտն՝ եկեալ
առ կայսրն և ասէն. յերկրորդում
դուռն այլ քաղաքիս՝ կայ աման ինչ
լի՛ ոսկով։ Եւ ելեալ կայսրն՝ գը
նացին իմիասին ՚ի տեղին այն. և ե
ցոյց կայսերն զտեղին ոսկւոյն։
Եւ կայսրն հրամայեաց բերել զտե
ղին այն. և յորժամ բերեցին՝ նոյն
ժամայն հանին զոսկին զոր ինքեանք
թաղեալ էին։ Եւ տեսեալ կայսրն
ուրախ եղև յոյժ. և ետ նոցա զկէս
ոսկւոյն։ Յայնժամ ասէ կրտսերագոյն


զին

զինուորսն՝ որ է երրորդն. տէր իմ
արքայ՝ 'ի գիշերիս այս ես հայեցայ
երազ։ Ասէ կայսրն. ասացէ՛ ձեզ տէր
աստուած բարի երազ. և օրհնեա՛լ է ժամն
այն որ դուք եկիք աստ։ Իսկ ընդ-
առաւօտն եկին առ կայսրն և ասեն
արքայ յաւիտեան կաց. գանձ բա-
զում կայ յերկրի քում։ Ասէ ար-
քայն՝ ո՞րպէս։ Ասեն զինուորքն.
յերրորդում և 'ի չորրորդում դը-
րունքն քաղաքիս՝ կան ամանք լի
ոսկով։ Ասէ կայսրն՝ երթիցուք
և տեսցուք թէ ճշմարիտ է։ Ասեն
զինուորքն. այո՛ գայցէ տէրութիւդ քո
ընդ մեզ։ Իսկ իբրև եկին 'ի դուռն
երրորդ՝ բերեցին և հանեցին աման
լի՛ ոսկով։ Իսկ գնացեալ 'ի չորրորդ
դուռն, անտի այլ բերեալ հանեցին
աման լի՛ ոսկով։ և ուրախացաւ թա-
գաւորն յոյժ. և ետ նոցա զկէսն։
Իսկ ասէ կայսրն ցնախարարսն իւր.
ո՞չ երբէք լուեալ է իմ կամ տեսեալ
այլ արդարախօս որպէս զդոքա։

 Իսկ

Ապա նոքա առեալ զկէս ոսկոյն՝ գը-
նացին յօթեւանս իւրեանց։

Ապա ՚ի վաղիւն կոչեաց զնոսա կայսրն ՚ի յընթրիս իւր եւ մեծարեաց զնոսա։

Ապա յետ բազում խօսիցն՝ ասեն զինուորքն ցկայսրն. մինչեւ ցայսվայր տեսաք իւրաքանչիւրոք զիւր երազ. արդ՝ այժմ կամօքն Աստուծոյ իմաստին երազ մի հայեսցուք. եւ ՚ի ձեռն երազոյն այնորիկ՝ ունիմք յոյս որ գը-
տանեմք գանձս բազումս։

Ասէ կայսրն. տացէ ձեզ Տէր Աստուած
երազ բարի եւ շնորհաւոր

Ապա նոքա ելեալ յերեսաց արքային գնացին ուրախութեամբ. ծաղր առնելով զկայսրն։ Ապա ընդ առաւօտն եկին առ կայսրն եւ ասեն ցնա. տէր քաջ յաւիտեան կաց. եւ ամենատես Տէրն արքային մերոյ։ Ասէ կայսրն. ասացէք։

Ասեն զինուորքն. տեսաք երազ կերպիւ նման միմեանց. զի ընդերքոյ հիման այն աշտարակին յորում պատկերքն է՝ այնչափ ոսկի կայ որ ՚ի գիր

եւ

և'ի համարըք մըտնուլ անկար է · և
ո՛րչափ գրաստ որ կայ 'ի քաղաքս ,
միանգամայն բառնալ ո՛չ կարեն ։
Ասէ կայսրն · քա՛ն լիցի ինձ կործա
նել զաշտ՟րկն զայն · որ պատկերօքն
զգուշացուցանէ զմեզ 'ի թշնամեաց
մերոց ։ Ասեն զինուորքն · տէ՛ր ար
քայ՝ երբ գտեր զմեզ սուտս ստա
ջի քո ։ Ասէ կայսրն · ո՛չ երբէք ու
սեմ թէ սուտ էք · այլ միշտ արդա
րախօս և ճշմարիտ ։ Ասեն զինուորքն
տէ՛ր արքայ հաստատ մեզ · և մեք հնա
րիւք փորեմք զբոլորս աշտարակին ·
և առանց կործանման և վնասու առ
նումք զոսկին անտի ։ Բայց պա՛րտ է
'ի գիշերի առնել զայն · զի մի՛ տես
ցեն քաղաքացիքն և ուժգնութ՟բ
եկեալ 'ի վ՟ր մեր՝ առցեն զոսկին 'ի
ձ՟ռց մերոց ։ Ասէ կայսրն · բարի՛ է
զոր ասէքդ · երթայք շնորհիւն ա՟յ ·
և ես ընդ առաւօտն եկից առ ձեզ ։
Ապա նոքա ուրախութ՟բ գնացին ։
Ապա 'ի մէջ գիշերին՝ սկսան փորել ·


մինչ

մինչ զի աշտարակն մերձ եղև 'ի կոր
ծանումն ։ Յետ այնորիկ՝ լուցին
հուր զաշտարակաւն . և ինքեանք
փախեան 'ի քաղաքէն . և սկսաւ այրել
աշտարակն՝ մինչև կործանեցաւ ։
Իսկ ընդ առաւօտն յորժամ տեսին
մեծամեծքն զաշտարակն կործանեալ՝
տրտմեցան յոյժ ։ և գնացեալ առ
կայսրն՝ ասեն ցնա . տէր՝ վասն էր
կործանեցաւ աշտարակս այս . յորմէ
ունէաք զգուշութի 'ի թշնամեաց ։
Ասէ կայսրն . երեք խաբեբայք արք
եկեալ ասացին ինձ . եթէ բազում
ոսկի կայ ներքոյ հիման աշտարա-
կին . որչափ որ տամ գրաստ կայ 'ի
քաղաքիս՝ միանգամայն բառնալ
ոչ կարեն զհամայնն ։ Իսկ ուխտեցին
ինձ թէ առանց կործանելոյ աշտա-
րակին՝ հանեմք զոսկին ներքուստ
իմաստութեամբ մերով ։ Ասեն ցնա
նախարարքն և քաղաքացիքն . եթէ
այդպիսի ցանկութի ունիս ոսկւոյ ,
այժմ կատարեսցուք զցանկութին քո


որ

որ կորուսեր զմս այն զզգուշացու-
ցանօղն մեր 'ի թշնամեաց մերոց։
Այս նոյն ժամայն յափշտակեցին ըզ
կայսրն. կուեցին ընդ կոկորդն նորա
ոսկի. և կենդանոյն թաղեցին զնա։
Յետ այնորիկ ո՛չ բազում աւուրց
անցելոյ 'ի մէջ, եկեալ թշնամիքն
պատերազմեցան ընդ քաղաքայինսն
և յաղթեցին նց։
Յայնժամ ասէ թագուհին ցկայսրն
տէր արքայ 'ի միտ ածեր զոր ինչ
ասացի քեզ։ Ասէ կայսրն. այո 'ի
միտ ածի. բայց պատմեա զէութիւն
աշտարակին։ Ասէ թագուհին. աշ
տարակն այն պատկերօքն՝ անձն և
զօրութի քո է. որ ո՛չ ոք կարէ 'ի թըշ
նամեաց քոց առնել քեզ վնաս։
Տեսանես զնզովեալ որդւոյ քո ըզ
դպրապետսն՝ որ խորհեին կործանել
զքեզ 'ի ձեռն սուտ առակացն իւր
եանց որ պատմեին քեզ։ Այս դու
մեծաւ ունկնդրութբ լսես նց. զոր
սկսեալ են բերել շուրջ զաշտարակաւ



մար

մարմնոյ քո։ Եւ յորժամ տեսանի-
ցեն զքեզ անզգամ՝ յայնժամ սպա-
նեալ կործանիցեն զքեզ։

Ասէ կայսրն . ով Թագուհի՝ լաւ տուեալ ասացեր ինձ . այսուհետեւ ոչ կարեն կործանել զիս որպ զաշ-տարակին զայն . վս որոյ աշխատանաց այսօր մեռանիցին նոքա։ Ասէ Թագուհին . եթէ այդպէս արասցես՝ իմաստութեամբ անուանես . և կացցես դու երկար ՚ի կեանս և հզօր եղիցիս ։

Հինգերորդ անգամ տանելն զորդն արքային ՚ի մահ . և գալ հասանել յօսէփոս դպրապետին և աստանօր փրկելն զնա ։

Ի վաղիւն եղեալ կայսրն և նըս-տաւ ՚ի գահոյսն իւր . և իսկոյն կոչեաց ըզ դահճապետն և ասէ . հան զորդին իմ ՚ի բանտէն . եւ առժամայն տար սպան զնա առանց պատճառանաց։ Եւ եկեալ դահ-ճապետն էհան զորդին արքային ՚ի

բանտէն և հրամայեաց կապել ըզ-
ձեռան 'ի յետս նորա։ Այս մանուկն էտիկն
ընդ առաջն ձայնէր և գնայր ասե-
լով. եթէ ով մեղանչել կամի ընդ
յետնամօրն՝ այսպիսի մահուամբ
մեռանի։ Այս յորժամ լուան ժո-
ղովուրդքն եթէ այսօր ես մատնե-
ցայ որդի արքային 'ի մահ, սկսան
լալ. և ողբալով ասէին՝ ահ ահ ա-
աղ և վա՜յ աւաղ որ զուր կու գնայ 'ի
մահ։ Այս մինչդեռ տանէին՝ եհաս
հինգերորդ դպրապետն. որում
անուն էր յովսեփոս՝ արընթաց ե-
րիվարաւն։ Այս տեսեալ զորդի ար-
քային այնպիսի խեղճ և ողորմելի՝
սաստեաց դահճապետին և ասէ.
ընդէ՞ր այդպէս կապեր էք զորդի
արքային. և ետուր արձակել զնա։
Այս որդի արքային տեսեալ զվար-
ժապետն իւր՝ երկիրեպագ նմա.
իբր թէ կամի ասել՝ յիշեա զիս ա-
ռաջի հօր իմոյ. զի ահա զուր կու
գնամ 'ի մահ։ Այս ժողովուրդքն

աուաւել եւ տղայքն զդպրապետն
զի շուտով երթիցէ առ կայսրն եւ
ազատեսցէ զորդի արքային:

Ասէ դպրապետն դահճապետին ·
կաց դու աստ եւ մի՛ շտապիր սպա-
նանել զդա · զի յոյս ունիմ առ ա̃ծ
որ այսօր ապրեցուցանեմ զդա:

Նա զայս ասացեալ գնաց 'ի պալատն ·
եւ եմուտ առ կայսրն · եւ հեզութ̃բ
ողջունեաց զնա: Ասէ կայսրն · տա-
ցէ՛ ա̃ծ քեզ չարիք՝ զի ունիցիս ըն-
կերօքդ համդերձ · որ կարծէք նեն-
գել զիս՝ ո̃չ այն երեք զինուորքն
նենգեցին ումեմն կայսեր · եւ կոր-
ծանեցին զաշտարակն պատկերօքն :
Ասէ դպրապետն · տէ՛ր իմ արքայ՝
նոքա ո̃չ նենգեցին՝ ես ո՛չ գիտեմ ·
այլ զայս գիտեմ որ քո Թագաւո-
րութե̃դ ես ո՛չ եմ ծառայեալ այն-
պէս զոր դու կարծես: Ասէ կայսրն
ո՛վ անխիմաստ՝ ետու զորդին իմ 'ի
ձեզ յստակ եւ լաւ զրուցանել զի-
մաստութե̃ հանճարն · փոխանակ իմաս-


տու

տուեծ՝ յանել չարիս խնկ և զայս՝ որ
կամեցայ բանադատել և լլկել զ
կինն իմ։ Ասէ դպրապետն․ խօսիլն
որդայ քո՝ ՚ի ձեռն ի՞ւր է․ թէ խօսի
և թէ լռէ։ բայց լսելոյ ես զձայնն
յետ երից աւուրց՝ եթէ մնացէ
կենդանի։ Այն որ ասացեր թէ կա
մեցայ բանադատել զկինն իմ, այդմ
ես ոչ հաւատամ․ և միտք իմ ոչ վր
կայէ․ և կին իմաստուն՝ այդպիսի
բան ոչ խօսի․ զի որդեակն քո իմաս
տուն գոլով՝ այդպիսի անպատեհ
բան գործէ՞․ քան լեալ ՚ի նմանէ։
Այլ զայս ասեմ քեզ․ եթէ տացես
սպանանել զորդեակն քո վն բանի
կնոջ քո՝ դառնագոյն պատահեսցէ
քեզ՝ քան որ պատահեաց բոքրատե
սի ընդ կալենոսի թոռին իւրոյ․ որ
՚ի պիտոյական ժամուն՝ եղև վրէժ
յոյ ՚ի վր բոքրատեսի։ Ասէ կայսրն
զայդ ես ես կամիմ լսել վն բոք
րատեսի թէ ո՞պ եղև։ Ասէ դպրա
պետն․ եթէ կամիս լսել զբոքրա

 տե

տեսի առաւլն, դարձո՛ զորդին քո 'ի բանտ. և ես պատմեցից զբանս իմ. յայնժամ խղճմտանք քո արասցէ դատ. թէ սպանանելոյ ես՝ թէ ոչ։ Սպա հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին իւր 'ի բանտ՝ մինչև պատմեսցէ դպրապետն զառաւլն։

Նա՛ սկսաւ առակել այսպէս։

❋ Առակ հինգերորդ դպրապետին. զոր առաց վասն բոժրատեալ բժշկին. և չաղէնաւ Բուտէին նորա։

Ի քաղաքի միում կայր ոմն իմաստասէր. որ էր անուանի յոյժ. որում անուանն էր Բոքրատէս և էր ճարտար բժիշկ. որև էանց զամենեքումբք արուեստիւն իւրով։ Նա ունէր թոռն մի. որում անուանն էր կալինոս. և յոյժ սիրէր զնա։ Նա կալենոսն այն յոյժ սրամիտ էր. և հանապազ կասկածէր արուեստին՝ զի կարասցէ ուսանիլ 'ի պապուն իւրմէ։ Նա բոքրատես տեսեալ

զՋանն նոր՝ թագուցանէր 'ի նմանէ
զարուեստն․ զի երկնչէր 'ի սրութե̄
մտաց նոր թէ ուսանիցի զարուեստն
բժշկութե̄ն և անցցէ զնովաւ ուս֊
մամբն իւրով։ Այլ կալենոս ծա֊
նեաւ զկամս պապոյն իւրոյ․ և առա
ւել ևս ջան եդեալ ուսաւ զամ̃․ և
եղև կատարեալ բժիշկ․ և հայեր
բուքրատեսի որ ոչ հաճոյանայր ինքն
նմա։ Այլ 'ի ժամանակին յայնմիկ
թագաւորն մաճարաց՝ առաքեաց
հրեշտակս առ բուքրատէս․ զի եկես
ցէ առնա և բժշկեսցէ զորդի իւր։
Իսկ բուքրատէս ոչ կամեցաւ գնալ՝
պատճառելով զծերութի̄ն․ այլ գ
րեաց թուղթ և առաքեաց զթոռն
իւր զկալենոս փոխանակ իւր․ զի
դիտէր զնա կատարեալ արուեստին
բժշկութե̄։ Որ բժշկեսցէ զորդի ար
քային․ կամ թէ ոչ կարասցէ բժըշ
կել՝ սպանցի անդ։ Որև ուղևորե
ցաւ կալինոս և գնաց յերկիրն մա
ճարաց․ և մտեալ առ թագաւորն՝


մե

Մեծաւ պատուով ողջունեաց զնա։ Ասէ թգ̃րն բազում հարկիս արար կալեննոսի․ բայց սքանչացաւ վ̃ս ոչ գալոյն բոքրատեսի։ Ասէ կալեննոս պատասխանի ետ և ասէ․ ծեր է՝ և բան ծա՛նր կայ ի վր̃․ վ̃ս այն ոչ կա֊րաց գալ։ այլ փոխանակ իւր՝ առա֊քեաց զիս․ և ես շնորհիւն ա̃յ բժըշ֊կեցից զորդի քո։ և հաճոյ եղև թա֊գաւորին պատասխանին կալեննոսի։ Ասէ եմուտ կալեննոս առ որդի ար֊քային․ և իբրև ետես զդող նորա, ասէ ցթագաւորն և ցթագուհին․ պիտոյ է զի տեսից զերկոցունցդ այլ զջուր․ զի ես լաւագոյն կարացից ճանաչել զպատճառ հիւանդութե̃ մանկանս։ և թագուհին խոստացաւ առնել զայն ի վաղիւն։ Ասէ իբրև ետես զջուր երկոցունցն, ասէ կա֊լեննոս ցթագուհին․ հրամայեա ա֊զախճնեացդ արտաքս ելանել․ և ու֊նիմ բան ծածուկ ասել քեզ։ և ա֊րար թագուհին վաղվաղակի։

 Ասէ

Ասէ կալեննոս․ ով Թագուհի՝ աղա
չեմ զքեզ արդ՝ տուր ինձ ըզ ճշմա_
րիտն՝ ո՞վ է հայր մանկանս այսորիկ։
Ասէ Թագուհին․ հայր դորա՝ տէր
իմ արքայն է։ Ասէ կալեննոս․ ոչ է
արքայն հայր մանկանս։ Ասէ Թա_
գուհին․ եթէ գիտեննայի զայդ ու_
ղիղ սրտէ ասացեալ՝ գլուխ քո՛ ՚ի քէն
հատեալ լինէր։ Ասէ կալեննոս․ ես
զճշմարիտն կամիմ զի ոչ է Թգ՟ւրն
հայր սորա։ բայց ես եկեալ եմ աստ
զի պարգեւօք պատուիցիմ․ եւ ոչ թէ
գլխատիցիմ։ Եթէ ես աստ ունիմ
գլխատիլ՝ յանձն առնեմ զքեզ ա՟յ
ու գնամ․ եւ դուք գտէք ձեզ այլ
բժիշկ։ Լուեալ Թագուհոյն զայս
եւ ասէ․ ով սիրելի բժիշկ մի՛ գնար․
զի ունիմ ՚ի քեզ պատմել զծածուկ
խորհուրդ իմ․ բայց զիս մի՛ խայտա
ռակեսցես։ Ասէ կալեննոս․ քաւ լի
ցի ով Թագուհի վ՟ս էր խայտառա
կեմ զքեզ։ Ասէ Թագուհին․ ՚ի ժա
մանակի միում պորտանկացաւ Թա

 գա

զաւ̂որէն դեսպանն եկն առ մեզ ·
և յազդմանէ չարէն՝ 'ի նմանէ յղա
ցոյ զմանուկս զայս ։ Ասէ կալենոս
Ճշմարիտ է զոր ասեսդ · մի՛ երկնչիր
այսուհետև · կամօքն ա̃յ բժշկեցից
զորդին քո ։ Յայնժամ ետ մանկանն
ուտել միս ցլոյ՝ և ջուր ըմպելոյ · և
ողջացաւ̂ մանուկն ։ Իսկ իբրև ե‿
տես թգ̃րն զորդի իւր ողջացեալ ,
յայնժամ խիլաթեաց զբժիշկն · եւ
առաւ̂ել թագուհին խիլաթեց զնա ։
Իսկ կալենոս գաղտ պատու̂իրեաց
թագուհւոյն · թէ կուզես որ մա
նուկն հանպ̃զ առողջ մնայ՝ միս ցլոյ
կերցուր · և ջուր ըմպելոյ տուր ։
զի այլ կերակուր չէ՛ պարտ դորա
ուտել ։ Իսկ կալենոս ողջունեալ
զթգ̃աւ̂որն և զթագուհին , ել 'ի Ճա
նպ̃րհ և եկն առ բոքրատէս պապն
իւր ։ Իսկ բոքրատէս համբուրեաց
զկալենոսն և ասէ · ողջացուցե՞ր զմա‿
նուկն ։ Ասէ կալենոս · այո՛ ողջա‿
ցուցի ։ Ասէ բոքրատէս · ինչ ցաւ̂‿


ու

ունէր ։ Ասէ կալենոս. ես զցաւն
ոչ գիտեմ. այլ ետու նմա կերակուր
միս ցլու. և ջուր 'ի յարբումն ։
Ասէ բոքրատէս. մի թէ ընդ էր
մայր նորա ։ ասէ կալենոս՝ այո ։
Յայնժամ բոքրատէս նախանձեցաւ
կալենոսի և ասէ ընդ միտս իւր.
եթէ սա մնայ կենդանի՝ իմ անուանն
կորնչի. արդ պարտ է սմա կորնչել՝
և մի՛ ինձ ։ և յայնմ օրէ խորհէր ըս-
պանանել զնա ։ Աւուրոյ և յաւուր
միում կամեցաւ գնալ 'ի պարտէզն
իւր բոքրատէս վ̄ս ծաղկանց. և
կոչեաց զկալենոս և ասէ. սի՛րելի
որդեակ իմ, եկ երթիցուք 'ի պար-
տէզն ժողովել զծաղկունս ։ ասէ
կալենոս. աշխատաւորիկ եմ հօր իմ ։
Ապա ելեալ գնացին երկոքեանն 'ի
միասին ։ Ապա իբրև մտին 'ի պարտէզն՝
ասէ բոքրատէս. եթէ հատ ծաղկի
իմանաս լաւ և զօրաւոր, խոնարհեաց
և կտրեա՛ զնա 'ի գետնոյ ։ և կալենոս
արար այնպէս ։ Ապա իբրև գնացին


եւ

և ՚ի ներքսագոյն պարտէզն՝ ասէ
բուքրատէս. կայ այս ինչ ծաղկի հատ՝
որ գոյնն ընդ ոսկւոյ է. որոնեմ և
գտի զնա՝ զի բազո՛ւմ իրաց պիտոյ է:
Ապա կաղինոս գտեալ՝ և խոնարհե-
ցաւ զի հատցէ զծաղիկն: Իսկ բուք-
րատէս հանեալ զնետն ՚ի յետուստ
կողմանէն՝ եհար կաղինոսի. որ ե-
մուտ մինչև ՚ի սիրտն. և նոյնժամայն
մեռաւ ՚ի տեղւոջն յայնմիկ:

Ապա յետ ոչ բազում աւուրց՝ հի-
ւանդացաւ բուքրատէս մինչև ՚ի
մահ. և էր փորացաւ. և որով ջուր
հեղոյր որովայն նորա. և անկեալ դը-
նէր ՚ի մահիճս. և ոչ կարէր բժշկել
զինքն: Ապա լուեալ աշակերտացն
նորա, եկին առ բուքրատէս զի օգնես-
ցեն վարժապետին իւրեանց. և ոչ
կարացին օգնել ինչ: Ապա բուքրա-
տէս աշակերտացն իւրոց. բերէ՛ք
ինձ աման լի՛ ջրով: և նոքա բերին:
և ասէ՝ ածէ՛ք իներքս յայս ինչ ծաղ-
կանց զոր ասացից ձեզ: և նոքա լցին:



և

և ասէ․ ծակեցէ՛ք զամանն և արա-
րէք մինչև հարիւր ծակս զի հեղ-
ցի ջուրն։ և արարին այնպէս՝ և ո՛չ
հեղաւ ջուրն։ Ա՜յ ասէ բոքրատէս
ահա՛ որդեակք իմ վրէժն այ եհաս
ինձ․ որ յայտնի տեսանէք զի է հա-
րիւր ծակս լայն և ընդարձակ․ և վն
զօրութեց ծաղկանցն որ ինեւըքս կայ՝
չթողուն որ կաթ մի ջուր ելանէ։
Արդ՝ ես ո՛չ եթէ միայն զայդ ծաղ-
կունսդ՝ այլ ես ՚ի բազում ծաղկանց
արբեալ եմ դեղ յաղագս փարատե-
լոյ զցաւս իմ․ և դուք ամենեքեան
ես աշխատեալ՝ ո՛չ կարացիք բժշ-
կել զիս ՚ի ցաւէս։ Սիրելի թոռն իմ
կալենոս զոր ասանենի՝ եթէ էր նա
կենդանի՝ յո՛յժ բարի լինէր ինձ․
և առողջացուցանէր զիս․ ահա՛ վր-
էժն այ է որ եկն ի վր իմ։ և զայս
ասացեալ՝ դարձոյց զերեսս իւր ՚ի
յորմն և եհան զհոգին։
Ասէ դիպրապետն ցկայսրն․ տէ՛ր՝
՚ի միտ առէ՛ր զասացեալս իմ։



Ասէ

Ասէ կայսրն. այդ լաւ ՚ի միտ առի։
Ասէ դպրապետն. ինչ լաւ էր եթէ
կաղեննոս կենդանի մնացեալ էր։
Ասէ կայսրն. ապաքէն յոյժ բարի
լինելոց էր. զի կաղեննոս թէ կենդա
նի լինէր՝ բազրատէս դեռևս ոչ մե
ռանէր։ Այլ արդար դատաստանին այ՝
բապեղանկքն ոչ եղեն օգնական. և
ոչ կարացին աշակերտքն փրկել զնա
՚ի հիւանդութենէն։ Ասէ դպրապետն.
յաղագս որոյ ասեմ քեզ արքայ՝ զի
խստագոյնս պատահեացէ քեզ եթէ
վն բանի կնոջ քո սպանցես զմիա
մօր որդին քո. որ ՚ի դէպ ժամու օգ
նելոց է քեզ։ Ասէ կայսրն. ամէն ա
սեմ քեզ՝ ոչ մեռանի այսօր որդին
իմ։ Ասէ դպրապետն. եթէ զայդ
արասցես՝ բարի լինելոց է քեզ. որ
վն առակի իմոյ ապրեցուցեր զոր
դին քո. և ես շնորհակալ եմ քեզ։
և օրհնութիւն իմ անպակաս եղիցի ՚ի
քեզանէ ։ զայս ասաց դպրապետն
և ողջունեալ զկայսրն գնաց։

 Իբրև

Իբրև լուաւ թագուհին թէ այ-
սօր եւս ոչ սպանաւ որդի արքային
խոկոյն պատրաստեաց ըզպատմուճան
իւր ճչելով․ և դժգոհելով զարքայէ
ասէ․ վա՜յ է ինձ որ եկեալ եղէ ես
՚ի սահմանս այս․ և թէ ո՞պ է թագա
ւորութ ՚ի տան հօր իմոյ․ և ես աստ
միայն կամ ՚ի տրտմութիս և ՚ի նախա-
տինս ։ Ասէ լուեալ կայսրըն զաղա-
ղակ թագուհոյն՝ եմուտ առ նա և
ասէ․ սիրելի տիկին իմ, պատճառն
ինչ է որ այդչափ տրտմեցուցեր ես
զանձն քո․ և ո՛չ դադարես ՚ի լալուդ
Ասէ թագուհին․ զի՞նչ կարացից
լուել․ զի անուանիմ դուստր թ̄գրի
և կին կայսեր ․ և կրեցի այսքան
նախատինս ՚ի ներքոյ ձեռաց քոյ․
և աղաղակեցի առ քեզ այսքան՝ և
դու ընաւ ինձ ո՛չ խղճացեր։
Ասէ կայսրն․ վ̄ն էր ասես զայդ․
և ինչ պակաս է քեզ։ Ասէ թագու-
հին․ մի թէ ո՞չ գիտես որ ինչ արար
ինձ նզովեալ որդին քո․ և դու ա-



չքդ

հօրդ քո տեսեր՝ որ և վկայ իսկ պի-
տոյ չէ · և զի խոստացար ինձ և հա-
ւատացուցեր զիս թէ կորուսանեմ
զնա · և ես ոչ կարացի ընդունիլ
զայդ առ 'ի քէն · զի առնէիր զկամս
իմ ։ Ասէ կայսրն · ո՜վ թագուհի՝
ոչ գիտեմ ես թէ զինչ արարից ·
շաբաթ մի է որ դու ջանաս սպա-
նանել զորդի իմ , և դպրապետքն
ջանան ապրեցուցանել զնա · և ես
ոչ գիտեմ թէ յո՛ր կողմն դառնիմ ·
և ո՛րն է 'ի ձէնջ ճշմարիտն · ես ոչ կա
րացի իմանալ ։ Ասէ թագուհին ·
դու առաւել հաւատաս դպրապե
տաց քոց՝ քան ինձ · բայց պատահե
լո՛ց է քեզ այնպէս՝ որպէս պատահեաց
թագաւորի ումեմն յիշխանէ իւրմէ ·
որ էր սենեկապետ նորա ։ Ասէ կայսրն
աղաչեմ զքեզ ո՛վ թագուհի՝ պատ
մեա ինձ զառակդ զայդ · զի և ես
կարացից շահիլ բան 'ի քեզանէ ։
և թէ հաւանիմ առակիդ՝ առժա-
մայն տամ սպանանել զնա ։

 Ասէ

Ո՛վ Թագուհին · զոր ինչ առնեմ
ես ըստ կամաց քոց, բայց դու զիմ
կամն ոչ երբէք հաճեցուցանես։
Բայց աղաչեմ զքեզ զի լաւ հայես-
ցիս զխօսս իմ · և այլ մի՛ ունկնդիր
լինիցիս դալլրապետացն որդւոյ քո։
Եւ սկսաւ ասել այսպէս։

❊ Վեցերորդ առակ Թագուհոյն · զոր
ասաց վասն Ջրգողէալ Թագաւորին ·
և վասն ննոջ անձնիշխանութեան
նորին ։

Ի քաղաքի միում կայր Թագաւոր մի
Ջրգողեալ և անմաքուր · և կա-
նայքն ոչ կամէին գնալ առ նա
այլ արհամարհէին զնա։
Եւ Թագաւորն այն խորհեցաւ առնուլ
բռնութ՟ 'ի հռոմայ զմարմինքն մեծ
առաքելոցն պետրոսի և պօղոսի վ՟
բժշկութե՟ իւրոյ։ Եւ յորժամ եւ
'ի ճանապարհ և եկն 'ի քաղաք մի,
կոչեաց զսենեկապետն իւր որ էր
յոյժ պատուական նմա և ասէ։


Ո՛վ

Ո՛վ սիրելի սենեկապետ․ 'ի քեզնէ
բան մի խնդրեցից․ ո՛չ գիտեմ թէ
կարօղ ես կատարել։ Ասէ սենեկա
պետն․ հրամայեա՛ տէր իմ արքայ՝ և
ես առժամայն կատարեցից։ Ասէ
արքայն․ խնդրեմ կինն մի գեղեցիկ
ընդ որում ես ննջեցից 'ի գիշերիս։
Ասէ սենեկապետն․ տէր՝ կանայք
ամ գիտեն զի ջրգողեալ և ուռու-
ցեալ ես դու․ վասն այն ո՛չ կամին
գալ առ քեզ․ եթէ ոչ տացես մե-
ծամեծ պարգևս։ Ասէ թագաւորն․
մի թէ ո՛չ իցէ իմ մեծութի․ խնդրես-
ցէ կինն այն՝ զինչ և կամեսցի․ և ես
տաց նմա մինչև ռ դահեկանս։
Ասէ սենեկապետն այն՝ էր ագահ
և արծաթասէր․ վն որոյ ելեալ
յերեսաց արքայէն՝ եկն առ կինն իւր
և ասէ․ ո՛վ կին իմ սիրելի՝ այժմ 'ի
ձեռս քո է հաճոյնքո և կամք․ եթէ
կամեսցիս 'ի գիշերիս յայսմիկ՝ առ-
նուցուս ռ դահեկանս։ զի կինն էր
գեղեցիկ յոյժ։ Ասէ կինն․ պատմեա

ինձ թէ որպիսի իրօք։ Ասէ այրն․
տէրն իմ տղոյ խնդրէ կին մի ու-
նել առ իւր ՚ի գիւղերքիս․ և զի գիտես
դու որ անմաքուրէ ․ և կանայք
ոչ կամին գնալ առ նա ․ և ինձ խոս
տացաւ տալ Ռ̄ դահեկան ․ վ̄որոյ
սիրելի իմ տարայց զքեզ ՚ի մահիձ
նը̄ ՚ի գիւղերքս ․ և ընդ առաւօտն ե-
լեալ գնայցես ․ և՚ի մի գիւղերի՝ շահիս
հազար դահեկան։ Ասէ կինն ․ և
թէպէտ չիցէր ջրգողեալ՝ այլ մա-
քուր ես իցէ՝ քան լիցի ինձ գոր-
ծել զայդ առաջի ա̄յ , և անկանիլ
՚ի մեղս մեծամեծս ։ Ասէ այրն ․
երդնում յա̄ծ՝ եթէ ոչ արասցես
զկամս իմ , ոչ ունիս յինէն բարութ̄
զա̄մ աւուրս կենաց իմոց։ Այն կինն
լուեալ զայս՝ երկեաւ յոյժ ․ և առ
ահուն՝ խոստացաւ նմա զանձն իւր
ակամայ կամօք ։

Այն եկեալ սեննեկապետն առ թա-
գաւոր և ասէ ․ տէ՛ր՝ կալայ կին մի
՚ի վարձու գեղեցիկ յոյժ ․ և կամի

զի տացես ռ՟ դահճեկանս ։ այլ և
ո՛չ կամի գալ 'ի ցերեկի ․ այլ 'ի գի
շերի կամի գալ՝ և ընդ առաւօտն կա
նուխ գնալ ․ զի մի՛ ոք գիտասցէ զնա ։
Ասէ ցնա թագաւորն ․ խիստ բարի ։
Եւ իբրև երեկոյ եղև՝ եբեր սե-
նեկապետն զկինն իւր 'ի մահիճ թա
գաւորին ․ և փակեալ զդրունսն՝
ել և գնաց ։ Եւ մտեալ թագաւորն
առ նմա 'ի մահիճն՝ զարմանս ետես
'ի նմանէ ։ Եւ 'ի հաւախօսին՝ ե-
կեալ սենեկապետն առ թագաւորն
և ասէ ․ տէր արքայ՝ լոյսն մերձ է ․
թէ արձակէիր զկինն և տայիր զհա
զար դահճեկանն որ ելանէր՝ լաւ է ․
զի մի՛ ոք 'ի մարդկանէ տեսանիցէ
զնա ։ Ասէ թագաւորն ․ ամէն ասեմ քեզ՝
զի դեռևս ո՛չ ելանիցէ կինս աստի ․
վասն զի յո՛յժ հաճոյ եղև ինձ ։
Եւ լուեալ զայս սենեկապետն՝ տրտ-
մեցաւ յոյժ ․ էանց պահ մի՝ և դար
ձեալ եկն առ թագաւորն և ասէ ․ տէր ար
քայ սկսեալ է լոյսն՝ արձակեա՛ զդա ։

Ասէ Թ̃գրն՝ ոչ արձակեմ. եւ դու-
արտաքս եւ փակեմ զդուռդ: Այս
սենեկապետն եւ գնաց տրտում
յոյժ. Թուէր Թէ շունք են խածա-
նեցին զինքն. եւ կսկծեալ շրջէր
աստ եւ անդ՝ մինչեւ ծագեաց լոյսն
արեգական: Այս դարձեալ երրորդ
անգամ եմուտ առ Թ̃գրն եւ ասէ.
տէր արքայ՝ լոյս է. եւ կինն ամօթի
հարկցի եթէ ոք տեսցէ զնա. փու-
Թով արձակեա զդա: Ասէ Թ̃գրն՝
ոչ արձակեմ փութով: Այս լուեալ
սենեկապետն զխօսս արքային՝ այլ
ոչ եւս կարաց ժուժել եւ ասէ. տէր
արձակեա զդա զի կին իմ է:

Յորժամ լուաւ Թագաւորն՝ ասէ.
բաց զպատուհանն զի տեսից զոր ա-
սեսդ. եւ նա եբաց զպատուհանն.
եւ տեսեալ Թ̃գրն զի կին նորա էր:
Այս ասէ. ով նզովեալ այր՝ վ̃ս ա-
կան ինչ փողու խայտառակեցեր ըզ-
կին քո. եւ բերիր առ իս աւանց գի-
տութ̃ե. փութա եւ ել յերկրէ իմմէ

 որ

որ ի ներքոյ տէրութե̅ իմոյ է։ և թէ
այսօր ոչ ելանիցես՝ չարաչար մահ
ուամբ մեռանիցիս։ Ապա փախեաւ
սենեկապետն յերեսաց արքային.
և այլ ոչ երևեցաւ առաջի նր̅։
Յետ այնորիկ թգ̅րն չու արարեալ
գնաց 'ի հռոմ. և պաշարեալ պա
հէր զնա 'ի բազում աւուրս. մինչև
հռոմայեցիքն կամեցան տալ նըմա
զոսկերաց ս̅րբց առաքելոցն պետրո-
սի և պօղոսի։ Ապա էին յայնմ ժամա
նակի 'ի հռոմ իմաստասէրք եօթն.
ո̅պ և քոյդ. որ իմաստու̅ե իւրեանց
զա̅մ քաղաքն 'ի ձեռուին ունէին։
Յայնժամ եկին հռոմայեցիքն առ
իմաստասէրսն և ասեն. զինչ արաս-
ցուք՝ զի քաղաքս 'ի մեծ նեղու-
թե̅ է. և ցուցանէ թէ՝ կամ տացուք
զ.քաղաքս, կամ զմարմին ս̅ր առաքե-
լոցն։ Ասէ առաջին դպրապետն.
ես պահեմ զ.քաղաքս և ըզ մարմին
ս̅րբցն օր մի որ ոչ մատնի 'ի ձեռս ն̅ց։
Ապա ամենայն դպրապետքն կարգաւ

 զայս

զայս ասացին: Ոպ և քո որդւոյ դպ
րապետոքն խոստացեալ են որդւոյ քո
այսպէս: Նա՛ իբրև Թգրն ըսկսաւ
արտաքուստ ճակատել ընդ քաղա-
քին՝ յայնմ ժամու ել առաջին դըպ
րապետն ՚ի քաղաքէն ՚ի դուրս. և
սկսաւ իմաստութբ խօսել ընդ Թա
գաւորին. մինչև դադարեցոյց ըզ
Թգրն ՚ի պատերազմելոյ ընդ քաղա
քին: Նա՛ այսպ ամ իմաստասէրքն
կարգաւ զնոյն արարին. մինչև եկն
կարգն ՚ի յետին դպրապետն:

Իսկ յեօթներորդում աւուրն ամ
քաղաքացիքն եկեալ առ եօթնում
դպրապետն և ասեն. ո՛վ սիրելի դպ
րապետ՝ արդ Թագաւորն երդուաւ
զի ՚ի վաղիւն ունիցի զքաղաքս. և
եթէ ունիցի՝ մեք ամենեքեանս մե
ռանիմք: արդ՝ ապրեցո զմեզ ով և
ընկերակիցքն քո արարին:

Նա՛ ասէ դպրապետն. մի՛ վախէք. զի
վաղիւն գործ մի գործեմ ես՝ որ
փախիցէ Թգրն ամ զօրօքն իւրովք:

 Նա՛

Եւ ՚ի փայլուն երբեւ սկսաւ թղթերն տալ զպատերազմ ընդ քաղաքին , զգեցաւ դպրպտն ազգ մի հանդերձ · որ պէս պէս թռչնոց փետրով յօրինեալ էր · սիրամարգի , արծուոյ , ջայլամու , և այլ թռչնոց · և էառ երկու սուսերս փայլունս՝ յերկու ձեռս իւր · և ել ՚ի բարձր աշտարակ մի միայն յանդիման թագաւորին · և այսր և անդր շրջեալ՝ փայլեցուցանէր զինքն ընդ փայլակն · վ̃ն զի զարմանալի ունէին սուսերքն զփայլ ուսածն · եւս առաւել լինքն:

Եւ զօրք թղթերին տեսեալ զայն ՚ի բանակէ իւրեանց՝ ասեն ցթղթերն · տէր՝ տեսեր զքանչելիսն որ է ՚ի վ̃ր աշտարակին : Եւ թագաւորն շատ զարմանք է այդ զոր տեսանեմ ես · այլ թէ զինչ կամի լինել ոչ գիտեմ: Եւ նոքա ասեն · մ̃ծն է քրիստոնէից որ ՚ի յերկնից է իջեալ · և կամի սուսերօքն այնմիկ զմեզ զամենն կոտորել եթէ յամեսցուք աստ:

Ապ̃ թգ̃րն տեսեալ՝ երկեաւ և ասէ
զի՞նչ արասցուք։ Ասեն զօրքն. և
կոյք փութով փախիցուք ՚ի տեղո
ջէս՝ զի մի՛ ած̃ն նց̃ կոտորեսցէ զմեզ
սրով. և սկսան փախչել թգ̃րն և ամ̃
զօրքն ընդ նմա։ Ապ̃ տեսեալ հաւա
մայեցին զփախուստ նց̃՝ առեալ
զզօրականսն իւրեանց՝ ընթացան
զկնի նց̃. և զբազումս ՚ի նոցանէ կո
տորեցին. և զթգ̃աւորն նց̃ սպանին.
և սակաւք ՚ի նոցանէ մազապուրծ
փախեալ զերծան։ և այսպիսի պատ
ճառաւ յաղթեցաւ ամ̃ զօրքն ՚ի
յալևորէ միոջէ։

Յայնժամ ասէ թագուհին ցկոյսն
՚ի միտ առե՞ր զասացեալս իմ։
Ասէ կոյսն. այո՛ ՚ի միտ առի։
Ասէ թագուհին. ո՞չ ապաքէն ըստ
վս̃ իշխանին՝ թէ ո՛չ սիրեցեալ էր
՚ի թգ̃րէն. և վս̃ ցանկութե̃ սակաւ
ուսոյ՝ ամօթի հարեալ կորոյս զկին
իւր. և ինքն վտարեցաւ յերկրէն։
Այնպէս և որդին քո վս̃ ցանկալոյ


տե

տէրութե՛ և իշխանութե՛ քո՝ կամի
խայտառակել զքեզ և կորուսանել։
զի ինքն թագաւորեսցէ ՚ի տեղի քո։
Այլ դու նմանապէս արա՝ որպէս արար
թագաւորն այն իշխանին իւրոյ։
Ապա թէ ոչ կամիս ըսպանանել՝ աք
սորեմ զնա և արտաքսեմ յերկրէ
քումմէ. զի այլ մի՛ երևեսցի առա
ջի քո. և դու եղիցիս ՚ի խաղաղութե՛։
Լուար և զայն թէ ո՞րպէս թագաւորն այն
պաշարեաց զքաղաքն. և ո՞րպէս նենգե
ցաւ ՚ի դպրապետայն որ եթող ըզ
քաղաքն ՚ի ձեռանէ. և ինքն ըսպա
նեալ եղև պատճառանօք միոյ ալևո
րի. և զօրքն յաղթահարեալ են։
Այսպէս և դպրպետքն որդւոյ քո՝
կամին քեզ այնպէս առնել խորա
մանկութե՛ն իւրեանց. և խաբեալ
զքեզ՝ յետոյ սպանանեն և թագա
ւորեցուցանեն զորդին քո ՚ի տեղի
քո։ Ասէ կայսրն. ամէն ասեմ քեզ՝
ոչ լինի այդպէս. քանզի ընդ լուսանալ
առաւօտուն՝ տամ զնա սպանանել։

 Աէջ

## Վեցերորդ անգամ տանէին զորդին ար_քային 'ի մահ. և կղէոպաս դպրապետն առակօք փրկեցին զնա:

Ի վաղիւ՞ն եկեալ կայսրն՝ նստէր 'ի գահոյսն իւր. և իսկոյն կո_չեաց զդահճապետն և ասէ. հա՛ն զորդին իմ 'ի բանտէն. և առ ժա_մայն տար սպան զնա առանց պատ_ճառանաց. և հեռացո՛ զգլուխ նր̄ 'ի մարմնոյն վաթսուն կանգուն: Նոյնպէս և թագուհին ստիպէր ըզ դահճապետն և պարգևս տայր և ասէր. մի՛ յապաղեր սպանանել զնա: այլ պատուէրս իմ քեզ այս լիցի՝ զի չարաչար մահուամբ կորուսցես զնա. և եթէ արասցես այնպէս, բա զում մեծուե̄ հատուցանեմ զքեզ: Իսկ եկեալ դահճապետն՝ եհան զոր դի արքային 'ի բանտէն. և հրամայ եաց կապել զձեռսն 'ի յետս նր̄. և քարոզն առաջի նր̄ կարդայր և եր թայր ասելով. եթէ որք մեղանչել



կա

կամի յեռնամօրն հետ՝ այսպիսի մա
հուամբ մեռանի ։ Եւ յորժամ ըլ
ւին ժողովուրդքն եթէ այսօր եւս
մատնեցաւ որդի արքային ՚ի մահ ,
սկսան լալ և ողբալ ․ և ասէին՝ ո՛հ ո՛հ
աւաղ և ո՜ աւաղ որ ՚ի զուր կու դը
նայ որդի արքային ՚ի մահ ։

Եւ մինչդեռ ասէին , եհաս վեց
երորդ դպրապետն ․ որում անունն
էր կղէոպաս՝ սրընթաց երիվարաւն
իւրով ։ Եւ տեսեալ զորդի արքային
խեղճ և ողորմելի՝ առժամայն սաս
տեաց դահճապետին և ասէ ․ Ընդէ՛ր
այդպէս կապեր էք զորդի արքային
մի թէ մահապարտ իցէ ։ և ետուր
արձակել զնա ։ Ասէ դահճապետն ․
ո՛վ դպրապետ՝ հրաման առատիկ է
թագաւորին ․ արդ ես զի՞նչ արարից ։
և դպրապետն ո՛չ տայր թոյլ խօսել
դահճապետին ։ Եւ որդի արքային
տեսեալ զվարժապետն իւր՝ երկիր
եպագ նմա ․ իբր կամէր ասել թէ
յիշեա՛ զիս առաջի հօր իմոյ ․ զի ահա

 զուր

զուր կու գնամ ՚ի մահ։ Ապա ժողո
վուրդքն եւս առաւել աղաչէին ըզ
դպրապետն զի շուտով երթիցէ առ
կայսրն և ազատեսցէ զորդի արքային
Ասէ դպրապետն դահճապետին .
կաց դու աստ և մի՛ շտապիր սպա
նանել զդա . զի յոյս ունիմ առ Ած
որ այսօր ապրեցուցանեմ զդա։
Ապա զայս ասացեալ՝ գնաց և եմուտ
՚ի պալատն . և մտեալ առ կայսրն՝
երկիրպագ նմա . և հեզութբ ող
ջունեաց զնա։ Ասէ կայսրն . պատա
հեսցէ քեզ ամուրք չարեաց։
Ասէ դպրապետն . գիտէ Ած որ ոչ
այդմ բանի արժանի ծնոյեցի քեզ.
այլ յուսայի առաւելաբար պար
գեւս առնուլ ՚ի տեառնէս իմմէ . և
մի՛ լսել այդպիսի բանի։ Ասէ կայսրն
ալատեցիք ինձ . զի ետու զորդին իմ
՚ի ձեզ լեզուաւ և խօսուն . և արդ
եղև համր։ այլ ևս չարագոյն այն է՝
որ կամեցաւ բռնաբարել և լլկել
զկինն իմ . վյ ահա մեռանի այսօր .



և

և ձեզի չարչարանքներ կազմեմ, որ
այսօր ձերոց տեսանէք զմահ ձեր:
Ասէ դպրապետն. այն զոր ասացեր
թէ պատասխանեալ է՝ ես գիտեմ որ
ոչ է ըստոյգ պատասխանումն 'ի նմա.
զի կարէ խօսիլ՝ բայց չէ ժամանակ.
զի ժամանակս լռելոյ է նմա. և յետ
երկուց ամսուրց լռելիցես զխօսս նորա
եթէ մնասցէ կենդանի: Այլ որ ա-
սացեր թէ՝ զթագաւորին իմ կամե-
ցան բանադատել, ընդ այդմ յոյժ
զարմացեալ եմ. զի այր իմաստուն
ես դու. և վասն բանի կնոջ քո հա-
ճեալ լինիս և հաւատաս նմա:
Այլ թէ վասն բանի կնոջ քո սպան-
ցես զորդին քո՝ պատահեսցէ քեզ
որպէս պատահեաց զինուորի միոյ. որ
հաւատաց բանի և խրատու կնոջ
իւրոյ. և յետոյ կապեալ եղև ամեհի
ձիոյ ագի. և կախեցաւ 'ի փայտէ:
Ասէ կայսրն. վասն սիրոյն քո ասա՛
զառակդ զայդ. զի կարացից ելանել
յընկղմանէս յայսմանէ:

 Ասէ

Ասէ դպրապետն · ոչ ատեմ և ոչ աշխատիմ ի զուր · եթէ կամիս լսել զասացն իմ, նախ դարձո զորդին քո ՚ի մահուանէ · և ած զնա ՚ի բանտն · և ես պատմեցից քեզ զառակս · ապա եթէ հաճոյ թուիցի քեզ՝ ապրեցո զորդին քո · և եթէ ոչ՝ սպան զնա:
Յայնժամ հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին իւր ՚ի բանտ:
Ապա դպրապետն սկսաւ առաջի ամենեցուն ասել զառակս՝ այսպէս:

※ Առակ վեցերորդ դպրապետին · զոր ասաց վ֊ն կնոջ ումեմն ծերոյ՝ որ սպան զերիս զինուորսն · և յետոյ զկինն և զայրն այլ սպանին չարաչար մահուամբ:

Ի քաղաքի միում էր կայսր ոմն · և ունէր երիս զինուորս քաջամարտիկս · և յոյժ սիրէր զնոսա:
Ապա ՚ի նոյն քաղաքին՝ էր ոմն ծեր զինուոր մի · և ունէր կին մատղաշ և գեղեցիկ յոյժ · որպէս զթագուհին քո · և յոյժ սիրէր զնա:


Ապա

Եւ կոյսն այն էր երգեցող․ մինչ զի
զբազումս առ ինքն ձգէր ՚ի տուն
իւր քաղցր ձայնիւն իւրով․ որք կո
գունց եղև ցանկացեալ ։

Յաւուր միում նստեալ երգէր ՚ի
տանն իւրում մերձ առ ճանապար
հաւն․ և հայէր զանցորդան ճանա-
պարհին․ և սկսաւ քաղցրաձայն ե-
ղանակել յոյժ․ և զամենեան զմայլե-
ցուցանէր։ Եւ ՚ի պատահմանէ ե-
կեալ անցանէր զինուոր մի յարքու-
նական պալատէն ՚ի դրանէ նորա․
և լուաւ զքաղցր եղանակ նորա․ և
ամբարձեալ զաչս իւր՝ պշուցմամբ
հայէր ընդ նա․ և բորբոքեցաւ ՚ի
սէր նորա․ և եմուտ առ նա ՚ի տունն․
և սկսաւ խօսիլ ընդ նմա և ասել
զանկարգս․ և ասէ՝ զինչ տաց քեզ
սիրելի իմ զի ննջեսցես ընդ իս գի-
շեր մի ։ Նա ասէ կոյսն․ տուր ինձ հա-
րիւր դահեկան և ննջեցից ընդ քեզ
գիշեր մի ։ Նա ասէ զինուորն․ յօժար
եմ տալու․ բայց միայն ասա թէ



յոր

յորում ժամու եկից առ քեզ։

Ասէ կինն • յորժամ ժամ ունիցիմ, ծանուցից քեզ։ Այն զկինն ող-
ջունեալ զկինն՝ գնաց 'ի պալատն •
'ի միտ ունելով զխոստումն նր։

Յերկրորդում աւուրն նոյնպ՟ նս-
տեալ առ պատուհանին՝ և քաղցր
ձայնիւ երգանակէր • և'ի պատուհանէն
եկեալ անցանէր երկրորդ զինուորն՝
ընկեր առաջին զինուորին • և լուեալ
զձայն նր՝ բորբոքեցաւ 'ի սէր նր •
և սկսաւ խօսել ընդ նմա զանպա-
տեհս • և ասէ՝ սիրելի 'զինչ տաց
քեզ զի կարացից խաղալ ընդ քեզ։
Ասէ կինն • հարիւր դահեկան։
Ասէ զինուորն • յօժար եմ տալ քեզ
զհարիւր դահեկանն • կամ այլ աւ-
ելի պարգևս • բայց ասա ինձ թէ
յորում ժամու եկից առ քեզ և
կատարեցից զսէրն իմ։ Ասէ կինն •
յորժամ ժամ ունիցիմ, ծանուցից
քեզ • Երթ այժմ 'ի սենեակն քո՝ զի
չէ ժամանակ։ Այն զինուորն գիրկ-



ար

արկեալ ողջունեաց զնա • և գնաց
՚ի պալատն իւր ։

Յերրորդում աւուրն նոյնպէս նրա տեալ առ դրանն և քաղցր ձայնիւ եղանակէր • և երրորդ զինուորն որ էր ընկեր առաջին զինուորացն՝ եկն և էանց ընդ նոյն ճանապարհաւն • և լուեալ զձայն նր՝ նոյնպէս զմոլեցաւ ՚ի սիրուն՝ համարելով թէ մեռանելոց իցէր եթէ ոչ խօսեսցի ը նմա ։ Ապա մտեալ ՚ի տունն՝ խօսի ընդ կնոջն և ասէ • զինչ տաց քեզ որ կատարես զկամս իմ ։ Ասէ կինն հարիւր դահեկան ։ Ասէ զինուորն յօժար եմ տալ քեզ զհարիւր դահեկանն • բայց ասա ինձ թէ յորում ժամու եկից առ քեզ ։ Ասէ կինն • ես զգուշացուցանեմ քեզ զժամն որ առանց վրդովմանց լինիցի • դու երթ այժմ ՚ի սենեակն քո ։ Ապա զինուորն հաւանեալ խօսից նր • ողջունեալ զնա գնաց ՚ի պալատն ։

Ապա նոքա երեքեանն այսպէսի գաղտ

բանիւք 'ի միմեանց՝ ուխտ եդին ը̅
կնոջն ։ Նա՛ կինն այն խորամանկ և
լի՛ ամ̅ չարեօք՝ յորժամ երեկոյեաց
և եկն այր իւր 'ի տուն, ընդ առաջ
ել առն իւրում և ասէ. բարի եկիր
սիրելի տէր իմ. ունիմ բան ինչ ծա
ծուկ խօսել ընդ քեզ։ Եթէ արտա
ցես բան բանից իմոց՝ մեծութեան
կու համդիպիմք. զի ահա՛ աղքատք
եմք։ Ասէ այրն. Որպիսի իրք։
Ասէ կինն. երեք զինուորք յարքու
նական պալատէն եկին առ իս՝ մի ըզ
կնի միոյ գաղտ 'ի միմեանց։ Նա՛ իւ
րաքանչիւրոք 'ի նոցանէ՝ խոստաց̅լ
եղեն ինձ տալ հարիւր դահեկանս.
զի կատարեցից զկամս նոցա ։
Մարդ լինէր այնպէս որ առնէաք
զամկին 'ի նոցանէ և չի նմջէի ը̅ նմ̅,
մեծ իմաստութ̅ի էր։ Ասէ այրն.
զինչ որ քեզ հաճոյ է՝ այն և ինձ է
հաճոյ։ Ասէ կինն. տամ քեզ լա՛
խրատ մի. զառաջին զինուորն կոչե
ցից յերեկոյին՝ դահեկանօքն. և

զերկրորդն՝ յերկրորդ պաշտօն գի
շերոյ. և զերրորդն՝ ՚ի հաճախօսին։
Եւ յորժամ նոքա եկեսցեն առիս՝
յայնժամ դու կացցես յետոյ դռանն
և սուր մերկ ՚ի ձեռին քում. և որ
ոք ՚ի նոցանէ որ մտանէ մի հետ ընդ
միոյ՝ հարցես և սպանցես. և այնպէս
առնումք զօսկին։ Ասէ այրն. եր
կրնչիմ եթէ ոք ՚ի մարդկանէ զայս
գիտասցէ՝ և չարաչար մահուամբ
սպանցեն զմեզ։ Ասէ կինն. մի՛ եր
կնչիր. ես ինքնին խորհեցայ զգործդ
զայդ, և ես կատարեցից զդա։

Զայս լուեալ այրն և ասէ. զամ
ինչ զոր դու ասիցես ինձ՝ ես առ
նեմ զայն։

Յայնժամ յղեալ կինն և կոչեաց
զաղախին զինուորն զի փութով
եկեսցէ առնա. և նա իբրև լուաւ
եկն վաղվաղակի։ Ասէ կինն. սի՛րե
լի իմ եթէ կամիս փայելել զսէր իմ,
եկեսցես յերեկոյին. և բերցես զոս
կին ընդ քեզ. և կատարեսցես զկամս քո

 Ասէ

Ասէ զինուորն · պատրաստ եմ տա_
նել զայդ · և գրկեալ զկինն՝ համ_
բուրեաց և գնաց ։ Յետ այնորիկ
առաքեաց առ երկրորդ զինուորն
զի եկեսցէ · և նա եկն վաղվաղակի։
և նր̃ ևս զնոյն բանն ասաց · և ժա_
մադիր եղև զի եկեսցէ յերկրորդ
պահու գիշերոյն։ և նա ուրախուբ̃
գրկեալ համբուրեաց զկինն և գնաց
Դարձեալ առաքեաց առ երրորդ
զինուորն զի եկեսցէ առ նա · և նա
վաղվաղակի եկն · և նորա ևս զնոյն
բանս ասաց · և ժամադիր եղև նմա
զի եկեսցէ ՚ի հաւախօսին։ և նա ու_
րախութբ̃ գրկեալ համբուրեաց
զնա և գնաց։

Իսկ իբրև երեկոյ եղև, եկն առա_
ջին զինուորն և բախէր զդուռն։
և այր կնոջն որպ̃ պատուիրեալ էր՝
կայր յետոյ դրանն · և եբաց զդուռն
և իբրև եմուտ՝ եհար և սպան զնա։
և զմարմինն նր̃ քարշեցին ՚ի ներքս ՚ի
նսեմ սենեկին։ Իսկ յերկր̃դ պահու



գի

գիշերուն՝ եկն երկրորդ զինուորն ·
և զնա այլ այնպէս սպանին · և զմար-
մին նոր քարշեցին առ միւսն մօտ ՚ի
նաւեմ սենեկին։ Եւ ՚ի հաւախօսին՝
եկն երրորդ զինուորն · և զնա այլ
այնպէս սպանին · և զնոր մարմինն ևս
քարշեցին մօտ առաջնոցն ՚ի նաւեմ
սենեկին։ և այսպէս արարեալ՝ ա-
ռին զոսկիքն ՚ի նոցանէ ։

Եւ իբրև այս այսպէս եղև , ասէ
ցնա այրն · ով սիրելի կին իմ, ե-
թէ գտցեն զմարմին դոցա աստ առ
մեզ , յայնժամ չարաչար մահուամբ
սպանցեն զմեզ · զի ոչ է հնար եթէ
ոչ խնդրեսցի այս ՚ի պալատէն ար-
քունի թէ զինչ եղև նոցա։

Ասէ ցնա կինն · ես սկսայ զգործս՝
և ես կատարեցից զդա · դու մի՛ ինչ
հոգար · դեռևս ոչ գիտես զհնարս
գիտութիս կանանց ։ Եւ կնոջն կայր
եղբայր մի հարազատ · և էր գիշեր-
ապահ քաղաքին այնմիկ։ Եւ իբրև
ելին պահապանքն շրջել զքաղաքաւն ,


Եւ

ել կլինին և կանգնեցաւ առ դրամբ
տանն իւրոյ. և ետես զեղբայր իւր
որ անցանէր ընդ այն: կոչեաց զնա
և ասէ. ունիմ խորհուրդ ինչ ծա_
ծուկ ասել քեզ. մօտ լինէրքս և
պատմեցից քեզ: և իբրև եմուտ,
ընկալաւ զնա սիրով այր նր. և նս
տաւ առ հրամն: Յայնժամ ասէ ցը
նա կլինին. ո՛վ սիրելի եղբայր իմ. այս է
պատճառ կոչելոյն զքեզ իմ. զի զծա
ծուկ խորհուրդ սրտի իմոյ յայտ_
նեցից քեզ: Յանցեալ գիշերիս
զինուոր ումն եմուտ աստ. և վիճեալ
ընդ տեառն իմում՝ սկսաւ անար
գել զտէրն իմ. և տէրն իմ բարկա_
ցեալ սպան զնա. և ահա մարմին նր
անկեալ կայ ՚ի ներքին սենեկի:
Սիրելի եղբայր իմ հարազատ. ՚ի
քեզնէ զատ չունիմ զոք յոյս. զի ե_
թէ մարմին նր գտանիցի աստ՝ չա
րաչար մահուամբ սպանցեն զմեզ:
Վ՟ս որոյ աղաչեմ զքեզ՝ զի առեալ
զմարմին նր աստի և տարցես զնա



՚ի

'ի տեղի ուրեք զի մի՛ գտանիցի աստ։
և վ̅ն այլ երկուցն ոչ ինչ ասաց նմա։
Ասէ եղբայրն · Ծանր բան ասացեր
ինձ քոյր իմ · բայց աւակոյն օգնեցից
քեզ։ Դի՛ր զնա 'ի պարկ մի · և ես
առեալ տարայց զնա և ընկեցից 'ի
ծով · զի մի՛ երբէք երևեսցի մար֊
մին նր̅։ Եւ լուեալ զայս կինն՝ ու֊
րախացաւ · և առեալ զմարմինն ա֊
ռաջին զինուորին՝ ետ 'ի պարկ մի
և ետ ցեղբայրն · և նա վաղվաղակի
ընթացաւ և ընկէց 'ի ծովն · և դար֊
ձաւ առ քոյրն և ասէ · բե՛ր ինձ բա֊
րեհամ գինի վ̅ն փրկելոյս զքեզ։
Ասէ քոյրն · տ̅ր ա̅ծ հատուսցէ քեզ
զբարին եղբայր իմ · և առեալ աման
զի բերցէ գինի, իսկոյն 'ի մտանելն
'ի սենեակն ուր գէշքն էին՝ աղա֊
ղակեաց մեծաձայն և ասէ · փա՛ռք
մարդասիրին ա̅յ · տեսէք զմեծ զար֊
մանքս · որ զինուորն ընկեցեալ 'ի
ծով՝ դարձեալ եկեալ է աստ։
Եւ եղբայրն լուեալ զայս զարմա֊


ցաւ

ցաւ՛ կոյժ ․ և ասէ՝ տո՛ւր ինձ տանիմ ․
և տեսից եթէ միւսանգամ գտցէ ։
Ապա առեալ զմարմին երկրորդ զին
ուո՛րին՝ կարծելով թէ առաջինն է ․
և տարեալ զնա առ ափն ծովուն՝
կապեաց վէմ մի մեծ 'ի պարանոցն
և ընկէց զնա 'ի ծով ․ որ ձայնն հա_
սանէր 'ի քաղաքն ։ Ապա դարձա՛ւ առ
քոյրն իւր և ասէ ․ արդ՝ տո՛ւր ինձ
անուշ գինի ․ զի այժմ առանց կար
ծեաց փրկեցայ ։ Ասէ քոյրն ․ օրհ
նեալ լիջիր դու յոյժ ․ և եմուտ 'ի
սենեակն ոչ զի բերցէ գինի ․ և ճը
չեաց բարձր ձայնի՛ւ և գոչելով ա_
ղաղակեաց և ասէ ․ ո՛հ ո՛հ ո՛հ թէ ոչ
վայ եկն ինձ ․ ահա՛ դարձեալ եկեալ է
զինո՛ւորն աստ ։ Ապա լո՛ւեալ զայս
եղբայրն և ասէ ․ մի թէ սատանայ
իցէ զինո՛ւորդ այդ ․ որ անգամ մի
ընկեցի 'ի ծով և ել ․ և յերկրորդումն
վէմ կապեցի 'ի պարանոցն և ընկե
ցի 'ի ծով, և դարձեալ ել ։ արդ տո՛ւր
ինձ զդա՛՝ և երրորդումն տարայց ։


Ապա

Եւ առեալ զերրորդ զինուորն՝ կար
ծելով թէ առաջինն է · և ելեալ
համդէպ քաղաքին՝ եդ ՚ի մէջ փոսի
միոյ · և կուտեալ փայտ վ̅ր նորա՝
փառեաց հուր մեծ · և այրեաց ըզ
զինուորն · և ինքն հեռա̅ցլ ՚ի հրոյն՝
դիտէր զնա ։ Եւ ահա տարակուսան
զինուոր հեծեալ ՚ի ձի՝ անցանէր ը̅ն
այն · որ սաստուցեալ ՚ի ցրտոյն՝ եկն
և ջեռնոյր · կանգնելով յեզեր հր
րոյն ։ Եւ տեսեալ սորա զզինուորն
կանգնեալ՝ եկեալ եհարց զնա և
ասէ · ո՞վ ես դու որ կանգնեալ կաս ։
և նա ասէ՝ զինուոր եմ մեծ ազգէ ։
Եւ սա ասէ ցնա · ո՛չ ես դու զին
ուոր՝ այլ սատանայ ես դու · զի ա
ռաջին անգամն ընկեցի զքեզ ՚ի ծով
և ելեր · և յերկրորդ անգամն վէմ
մի մեծ կապեալ ՚ի պարանոցդ ընկե
ցի ՚ի ծով, և դարձեալ ելեր · և յե̅րդ
անգամն ՚ի հուրս ընկեցի զքեզ՝ և
ահա ոչ այրեալ՝ կանգնեալ կաս ։
Եւ զայս ասացեալ՝ յափշտակեաց


զնա

զնա և ընկէց 'ի հուրն հանդերձ ե-
րեխայրաւն և այրեաց զնա ։ և ինքն
դարձաւ առ քոյրն իւր ․ և պատմեաց
նմա զամ թէ որպ այրեաց զնա 'ի
հուրն երեխայրաւն ․ և աս՝ բեր այժմ
զանուշահամ գինի զի արբից ։
Եւ լուեալ քոյրն նորա ասէ ․ զին-
ւորն այն որ իւր ձիոյն էր՝ օտար
ամն էր ։ և վաղվաղակի ելեալ ետ
նմա գինի ․ և նր ըմպեալ զգինին ․
և զօհացեալ զնմանէ՝ ել և գնաց ։
Եւ յետ ոչ բազում աւուրց՝ զին
ւորն ծեր բարկացեալ կնոջ իւր
ում՝ եհար ապտակ ընդ երեսն ․ և
կինն արտմտեալ ասէ առաջի ամե-
նեցուն ։ Ո՛վ Թշուառական այր ․
մի թէ և զիս կամիս սպանանել՝ որպ
սպաներ զերիս զինուորսն ։
Լուան զայս մարդիկն և պատմեցին
արքային ․ և արքայն բերեալ առաջի
իւր զնա՝ զրուցել ետուր թէ որպ
սպանեալն զերիս զինուորսն և առին
զ̃ձ̃ դահեկանն ։ Եւ իբրև ըատու-


գե

գնացաւ առաջի բազմութեան ճշմա_
րիտն, հրամայեաց կայսրն որ կապե
ցին զերկոքեանն իմաստային զայրն և
զկինն ամեհի ձիոյ ագի. և տարեալ
՚ի տեղի սպանմանն՝ կախեցին զփայտէ:
*Յետ այնորիկ ասէ դպրապետն ցը
կայսրն. տէր՝ ՚ի միտ առե՞ր զառակս
զայս: Ասէ կայսրն. այո՛ ՚ի միտ առի՝
զի նզովեալ էր կինն այն քան զամե
նեսեան. որ ինքն սատակելո՛ց էր
չար մահուամբ՝ և սատակեցաւ.
բայց զայրն իւր՝ անմեղ մատնեաց ՚ի
սպանումն: Ասէ դպրապետն. ըստոյգ
ասեմ քեզ ո՛րդեակ՝ դառնագոյն քան
զնա լինելոցի քեզ՝ եթէ վասն բանի
կնոջ քո սպանանցես զորդին քո:
Ասէ ցնա կայսրն. ճշմարիտ ասեմ
քեզ ո՛վ դպրապետ՝ զի որդին իմ
այսօր ո՛չ մեռանի: Ասէ դպրապետն.
շնորհակալ եմ ՚ի քեզանէ՝ որ վասն
առակի իմոյ ազատեցեր զորդիդ քո
այսօր ՚ի մահուանէ:
Աւ երբեմն լուաւ թագուհին՝ թէ


որ

որդի արքային այժմ ես ոչ բարա_
նամ, արտմտեալ նման դիւահարի՝
ընթացաւ առ կայսրն և ասէ. վա՛յ է
ինձ այսօր. որդ լաւ էր ինձ մեռա_
նել՝ քան զայսպիսի կեանս կրել։
Ե՜ս կամիմ այժմ զիւրովին մեռա_
նել՝ քան թէ կենդանի մնալ և զայս
պիսի վիշտս կրել. զի նախատինք
եղայ ՚ի մէջ ազգին իմոյ՝ և դու ո՛չ
կատարեցեր զկամս իմ։ Ասէ ցնա
կայսրն. ա̃ծ պահէ զքեզ այդպիսի
չարէ. կնքեմ զքեզ նշանաւ ս̃բ խա
չին. և համբերեմ սակաւ մի։ Ու_
նիմ յոյս առ ա̃ծ՝ զի գործքդ այդ
՚ի ծայր ելանէ։ Ասէ թագուհին.
գիտեմ զի ծայրն ՚ի չար կատարե_
լոց է. զի ամօթ ինձ և քեզ լինիցի։
այլ զայս ասեմ քեզ՝ զի պատահե_
լոց է քեզ այնպէս՝ ո̃պ պատահեաց
թ̃գրի ումեմն ՚ի զինուորէն իւրմէ։
Ասէ կայսրն. աղաչեմ զքեզ ո՛վ սի
րուն սիրելի թագուհի իմ. ասա՛ ինձ
թէ ո̃պ եղև նց̃։ Ասէ թագուհին.
ասեմ

տանել քեզ և զնաւակս զայս յոր-
դոր սրտիւ․ և դու բազում օգուտս
ունիցիս եթէ լուիցես ինձ։ Եւ
սկսաւ տալ այսպէս։

Եօթներորդ առակ Թագաւորորդւոյն․ զոր ա-
ռաջ ձգան Թագաւորին որդին որ ունէր շէն-
ւոր ի յոյժ սիրելէ․ որ էառ շնագաւորէն
և փախեաւ։

Ի քաղաքի միում կայր Թագա-
ւոր մի և սիրէր զԹագուհին իւր
յոյժ․ և պահէր զնա 'ի մէջ ամուր
աշտարակի միում․ և զփականս դը-
ռանն առ ինքն պահէր․ և վ̃ա այնո-
րիկ յոյժ վշտանայր կինն։ Եւ էր
զինուոր մի քաջամարտիկ և ուժեղ
յօտար երկիր․ և եստես նա երազ 'ի
միում գիշերի․ որ էր տեսիլ նորա
այսպէս։ Որպէս թէ Թագուհի մի
յոյժ գեղեցիկ և ցանկալի քան զա-
մենեսեան․ զոր տեսեալ՝ տպաւորե-
ցաւ գեղեցկու̃թն երեսացն 'ի սիրտ
ն̃ր։ Եւ Թագուհին այլ եստես երազ



'ի

'ի նոյն գիշերին · զի տեսանէր ըզ զինուորն զայն · իբր թէ խօսէին ընդ միմեանս։ Այլ զարթեաւ 'ի քնոյ թագաւորին · և ցանկայր տեսանել ըզ զինուորն։ և զինուորն այլ ցանկայր տեսանել զթագաւորին զայն · վասն փորձելոյ զերազն։ Այլ յետ տեսանելոյ երազին՝ ոչ կամեցաւ դադարել յերկրի իւրում և ոչ օր մի զինուորն այն · այլ ելեալ 'ի խնդիր թագաւորն զի գտցէ զնա զոր ետես յերազին։ Այլ հեծեալ 'ի ձի՝ շըրջէր զբազում թագաւորութիւնս · մինչև եկն 'ի քաղաքն այն յորում կայր թագաւորին բնակեալ 'ի մէջ աշտարակին · և զկայ առեալ բնակեցաւ 'ի քաղաքն այն։

Այլ յաւուր միում շրջէր զինուորն այն շուրջ զաշտարակաւն · ոչ գիտելով թէ անդ իցէ թագաւորին զոր յերազին տեսեալ էր։ Այլ թագաւորին ըստ սովորութեան իւրում ընկողմնեալ էր 'ի պատուհանի աշտա

րանկլին և հայէր յանցորդս ճանա-
պարհէն։ Այս զինուորն ամբարձել
զաչս իւր՝ ետես զնա. և իսկոյն ճա
նաչեաց թէ նա էր զոր ՚ի յերազին
ետես. և սկսաւ սակաւ սակաւ ար
ձակել ձայնս և երգել եղանակաւ։
Այս իբրև լուաւ Թագուհին ըղ
ձայն նր, և հայեցեալ՝ նա ևս ծա-
նեաւ զնա որ յերազին տեսեալն էր
Այս զինուորն այն յետ այնորիկ հա
նապազօր անցանէր շուրջ զպարսպաւ
աշտարակին և եղանակէր քաղցրա-
ձայն. և դիտէր թէ ընդ մր մտանի
ցէ և խօսիցի ընդ Թագուհոյն։
Այս Թագուհին իմացեալ զկամս նր
թէ խօսակցիլ խնդրէ ընդ ինքեան՝
գրեաց թուղթ և ընկէց ՚ի վերուստ
աշտարակէն առ նա։ Այս զինուորն
բացեալ զթուղթն ընթերցաւ. և
ծանեաւ զկամս նր. և ուրախ եղև
յոյժ։ Այս սկսաւ արշաւել և խա
ղալ ՚ի խաղս. մինչև համբաւ նորա
եհաս յականջս Թագաւորին։

 Այս

Այս Թագաւորն կոչեաց զնա և ասէ ·
ով զինուոր՝ բարութիւն լուեալ եմ
վասն քո · եթէ կամիս՝ բնակեա՛ 'ի յիս ։
Պատասխանի ետ զինուորն և ասէ ·
տէր իմ արքայ՝ բնակիմ առ քեզ ամենայն
սիրով և յօժար կամօք եթէ տացես
ինձ տեղի առ պարապոյ քով զի շի
նեցից ինձ տուն բնակութեան · և եթէ
լինի տեսանող իմոյ կոչել զիս՝ 'ի գի
շերի կամ 'ի ցերեկի, փութով ժամա
նեցից առ քեզ ։ Ասէ ցնա Թագաւորն
կատարեցից զխնդրուածս քո և տաց
քեզ զպարապոյ իմով տեղիք զի շի
նեսցես քեզ տուն բնակութեան
ուր և կամիս դու ։

Յետ այնորիկ յորժամ կատարեաց
զինուորն այն զտունն ընդ պար
պաւ աշտարակին յորում կայր Թա
գուհին , խօսեցաւ ընդ մի ճարտա
րացն և ասաց ։ արա՛ դու ինձ գաղտ
դուռ մի յոյժ իմաստութեամբ · որ չկա
րասցէ ոք տեսանել 'ի մարդկանէ ·
և ես տաց քեզ զոր ինչ և կամիս ։

 Այս

Իսկ իբրեւ արար ճարտարն այն ըղ-
դուռն գաղտ, անդէն եհար զին-
ւորն զճարտարապետն եւ սպան զնա·
եւ զմարմին նորա Թաղեաց ՚ի տուն իւր-
ում զի ոչ ոք իմասցի · եւ կամ Թագաւորն
իմասցի: Յետ այնորիկ եմուտ զին-
ուորն ընդ դուռն առ Թագաւորին
եւ սիրով ողջունեաց զնա: Իսկ Թա-
գաւորին տեսեալ զնա՝ զարմացաւ
եւ ասէ · ընդ ո՞ր մտեր այսր: Ասէ
զինուորն · տէր քո եբեր զիս աստ ·
եւ մտայ ընդ գաղտագողի դուռն
զոր արարի ՚ի ներքոյ պարսպի աստ ·
վասն զի կամիմ լինիլ ընդ քեզ · եւ քանզի
դու այն ես որ յերկրի իմում տե-
սի յերազի · եւ ահա որոնեալ գտի
զքեզ: Ասէ ցնա Թագաւորին · մի՛
տայցէ զայդ որն որ անկայց ՚ի մեղս
առաջի տեառն իմոյ արքայի եւ կա-
տարեցից զկամս քո · քանզի լիցի ինձ
առնել զբանդ զայդ: Ասէ զին-
ուորն · եթէ կամաւ քով եւ սիրով
ոչ տեսցեմ զանձն քո՝ ՚ի սուր իմ

մաշեցից զքեզ։ Ապա նա երկուցեալ
՚ի մահուանէ՝ ննջեաց ընդ նմա. և
զինուորն կատարեալ զկամս իւր՝
ել և գնաց։ Յետ այնորիկ խորհէր
Թագուհին ընդ միտս իւր և ասէր.
եթէ ծանուցից զայս արքային իմոյ՝
յայնժամ պատահեսցէ ինձ մեծա-
մեծ չարիս. զի ես ինքնին խայտա-
ռակիմ. և տէրն իմ արքայ բարկաս
ցի յոյժ. և զինուորն խայտառակես
ցէ զիս։ Եւ վ̅ա այն ոչ ա̅ց ինչ ումեք։
Ապա յորժամ կամէր զինուորն՝ մտա
նէր առ նա և կատարէր զկամս իւր
և ելանէր։ և սիրեցին զմիմեանս
յոյժ անասելի։

Յետ այնորիկ ՚ի բազում սիրոյն.
ետ նմա Թագուհին մատանի մի
ազնիւ. որ տուեալ էր նմա Թ̅գրն
՚ի նշան սիրոյ։ Ապա զինուորն այն ՚ի
խաղս ասպարիսին առնոյր յաղթու-
թիւս յոյժ. վ̅ա որոյ յոյժ սիրեցեալ
եղև յաչս արքային. և արար զնա
սենեկապետ. և կարգեաց զնա ՚ի վ̅ր

ամ երկրին որ էր ընդ տէրութ̅ե
իւրով։ Եւ յաւուր միում կամե-
ցաւ արքայն ելանել ՚ի յորս. առա-
քեաց հրաւիրակս առ սենեկապետն
եւ ասէ. պատրաստ լինիցիս ընդ իս ե-
լանել ՚ի յորս։ Եւ նա նոյնժամայն
պատրաստեցաւ եւ ել ընդ արքային
՚ի յորս. եւ շրջեալ զօրն ողջոյն եւ
եկեալ իջեւանեցան ՚ի ձոր մի. եւ զին-
ուորն այն յանդիման արքային նըն-
ջէր. եւ մատանին ՚ի մատն նր̅ կայր
զոր առեալ էր ՚ի թագուհւոյն. եւ
զձեռն իւր ձգեալ դնէր հանդէպ
արքային։ Իբրեւ ետես արքայն ըզ-
մատանին՝ իսկոյն ծանեաւ զնա. եւ
ասէ ընդ միտս իւր՝ մատանիս այս՝
նման է մատանւոյն իմոյ զոր տուեալ
եմ՝ թագուհւոյն իմոյ ՚ի նշան սիրոյ։
Եւ նոյնժամայն զարթեաւ զին-
ուորն ՚ի քնոյ անտի. եւ գիտաց որ
արքայն տեսեալ էր զմատանին. եւ
իսկոյն արար զինքն ոպ̅ հիւանդի.
եւ ասէ ցարքայն՝ տէր իմ արքայ

 հի

հիւանդութիւն անկաւ ի վերայ իմ. արդ-
ձեպեմ երթալ 'ի տուն: Ասէ ցնա
արքայն՝ երթ. և նա հեծեալ 'ի ձի՝
եկն 'ի տուն իւր. և եմուտ առ Թա-
գուհին ընդ գաղտ դռնակն և ասէ:
Ա՛ռ զմատանին զոր ետուր ինձ. զի
ետես արքայն զմատանին 'ի ձեռս իմ:
և քանզի գիտեմ զի յորժամ եկես-
ցէ խնկոյն հարցանելոցէ զմատանին.
վասն այն յառաջեցի ես քան զարքայն
գալ առ քեզ զի մի՛ յամօթ կրեսցուք
և ետ զմատանին և գնաց:

Յետոյ եկեալ արքայն 'ի պալատն
իւր՝ եմուտ առ Թագուհին և
ասէ. ո՛վ սիրելի տիկին իմ, ո՞ւր է
մատանին այն զոր ետու ես քեզ 'ի
նշան սիրոյ քո. ցո՛յց ինձ զնա:
Ասէ Թագուհին. ահա կայ 'ի տփին.
և ես այլ բազում ժամանակէ որ չեմ
'ի մատն դրեալ: Ասէ ցնա արքայն.
բե՛ր զի տեսից զնա: Ասէ Թագու-
հին. զինչ եղև քեզ որ այսչափ ժա-
մանակ է ոչ հարցանէիր՝ և այժմ կա-

միս տեսանել։ Ասէ արքայն. եթէ ոչ տեսից զմատանին՝ ճշմարիտ ասեմ քեզ որ դու այսօր մեռանիս։ Ապա Թագուհին եղեալ նոյնժամայն եբաց զտուփն. և հանեալ զմատանին՝ ետ ցարքայն և ասէ. ահա մատանին սա և տես։ Ապա տեսեալ արքայն զմատանին և ասէ. ո՛պ նման է մատանիս մատանւոյն որ տեսայ ՚ի ձեռն սենեկապետին իմոյ. և բարկացայ ի վ՟ր քո. և կարծեցի զքէն չար։ զի գիտէի ես թէ այլ ուրեք ոչ գըտանի այնպիսի մատանի։ Ասէ Թագուհին. ո՛վ տէր՝ ոչ է զարմանք եթէ նմանեսցի մատանի մատանւոյ. և մատանին քո՝ նմանեսցի մատանւոյն սենեկապետին քո։ և որ խորհեցար վասն իմ և կարծեցեր զինէն չար, թողցէ քեզ տ՟ր ա՟ծ զյանցանքն զայն Ապա յետ ոչ բազում աւուրց ասէ զինուորն ցարքայն. տէր իմ արքայ՝ կին մի սիրեր եմ ես յերկրին քում. և այսօր առնելոց եմ ընդու-



նե

նելութի կնոջն այն . և աղաչեմ ըզ-
տէրն իմ զի նստիցի այսօր 'ի սեղան
իմ . և կերիցէ ընդ իս և ընդ կնոջ
իմոյ զոր սիրեմ ես . և եղիցի ինձ
փառք առաջի ամենեցուն ։

Ասէ Թգրն . արարից զկամս քո՝ և
ցուցից զսէրն իմ զոր ունիմ առ քեզ
Ապա զինուորն ուրախացեալ՝ գնաց
ընդ գաղտ դուռն և եմուտ 'ի դար-
պասն և ասէ ցԹագուհին . զգեցի՛ր
պատուական զգեստ . զի այսօր 'ի սե-
ղան իմ ուտելոց ես ճաշ հանդերձ
արքայիւ ։ Ասէ ցնա Թագուհին .
կամք քո եղիցի՝ լինիմ պատրաստ
վասն սրտի քո ։ Ապա յորժամ պատրաս-
տեցաւ ճաշն՝ եկն Թգրն 'ի տուն
զինուորին . յետ նր եկն և Թագու-
հին ։ Ապա իբրև ետես զնա Թգրն .
ասէ ցզինուորն . ո՞վ է դա այդպէս
գեղեցիկ և հաճոյ աչաց հայելոյ
հարս գեղուշէն ։ Ասէ զինուորն .
տէր իմ արքայ՝ դա՛ է զոր ես սիրեմ .
և նստոյց զնա առ ընթեր Թգրին ։


և

Այս թղթին հայէր աստ և անդ · խոր
հէր ընդ միտս իւր թէ ո՞վ նման է
կինս այս թագուհոյն իմոյ · և խա_
բէր զինքն ամրութեն աշտարակին ·
և տեսանել հանապազ բանիցն զին
ուորին քան աչաց իւրոյ։ Այս սկը
սաւ թագուհին խօսիլ ընդ ար_
քային և ասէ · տէր իմ արքայ հրա_
մայէ կէր զինչ որ ա՜ծ տուել է մեզ։
Այս արքայն լուեալ զձայն նր՝ ասէ
ընդ միտս իւր · փառք քեզ ա՜ծ՝ թէ
ո՞վ կինս այս 'ի տեսս և 'ի խօսս՝ 'ի
գործս և 'ի շարժմունս՝ ամ՜ն իրօք
նման է կնոջ իմոյ։ և ամրութն աշտա
րակին խաբէր զնա · և ոչ իշխէր
ասել թէ կին իմ է կամ ոչ · այլ
աղաչէր զզինուորն զի փութով ե_
լեցի ճաշն · քանզի փութայր մտա
նել 'ի պալատն իւր և տեսանել ե_
թէ իցէ թագուհին 'ի դարպասն ։
Ասէ զինուորն · տէր՝ մի՛ շտապիր 'ի
կարօտանաց ։ Ասէ թագաւորն ·
գործ ինչ է իմ 'ի պալատն՝ վասն այն

շտապիմ գնալ ։ Ասէ Թագուհին ․
տէրն իմ արքայ աստ ուրախասցի ,
և Թագուհին քո ընդ ուրախասցի
՚ի դարպասի իւրում։ Ասէ արքայն
ցզինուորն ․ ժողովեա զսեղանս ։ և
Նա արար ըստ հրամանի արքային ։
Ապա իբրև ժողովեցին զսեղանն՝ որ
քոյն գոհացեալ զնմանէ՝ ել և գը
նաց ՚ի պալատն իւր ։ և զինուորն ը̅
գաղտ դուռն եմոյծ զԹագուհին
՚ի դարպասն իւր ։ Ապա Թագուհին
յորժամ եմուտ ՚ի դարպասն իւր ,
առժամայն հանեալ յանձնէ իւրմէ
զհանդերձն՝ Նստաւ առ պատուհանն
և հայէր յանցորդս ճանապարհին ։
Ապա Թգ̃րն յորժամ եկն ՚ի պալատն,
ոչ Նստաւ ՚ի գահոյսն իւր ․ այլ առ
ժամայն եմուտ առ Թագուհին ․ և
ետես զի Նստեալ էր Թագուհին ՚ի
պատուհանն ․ և գրկեալ համբու-
րեաց զնա և ասէ ․ ով սիրելի տիկին
իմ , այսօր ես մեղանչեցի քեզ ։
Ասէ Թագուհին ․ որպիսի իրք՝

տամ ինձ զպատճառն։ Ասէ Թգրն·
գնացի այսօր ՚ի տուն զինուորին իմոյ
և կերայ հաց ընդ սիրողի նորա ·՚ի
ծննդենէ մօր իմոյ մինչև ցայժմ
ոչ երբէք տեսի զոր տեսայ այսօր
անդ։ զի ՚ի տեսս ՚ի խօսս ՚ի գործս
և ՚ի շարժմունս՝ ամ̃ իրօք նման քեզ
էր կինն այն · մինչ զի փութայցայ
տեսանել զ.քեզ։ Ասէ Թագուհին·
օրհնեալ է ա̃ծ՝ այժմ և ես մեղայ տէր
իմ արքայ · մի թէ ոչ գիտես զամ
րուն աշտարակին՝ որ ոչ ոք կարէ
մտանել անդ կամ ելանել · այլ և
զայս ոչ գիտենաս որ զփականս դր
անն դու ինքնին ունիս։ Այլ և
միոջ մարդոյ վկայէ · զի մարդ մար
դոյ նման լինի · և չէ զարմանք։ ոպ̃
յայնժամ մտատանին զինուորին՝ նը
մանեցաւ մտատանութիւն.քո։ Ասէ Թա
գաւորն · ճշմարիտ ասես Թագուհի
իմ · այլ և յայնժամ մ̃ն մտատանութիւն
մեղայ ես քեզ։
Յետ այնորիկ յորժամ էանց աւ

ուրք

ուրք բազում, եկն զինուորն առ ար-
քայն և ասէ. տէ՛ր իմ արքայ՝ բազո՛ւմ
ժամանակ եղև զի ծառայեցի քեզ.
արդ աղաչեմ զտէրդ իմ զի տացես
ինձ հրաման որ երթամ 'ի սեպհա-
կան երկիրն իմ։ Ասէ արքայն. տամ
քեզ հրաման զի երթայցես. բայց
լա՛ւ էր եթէ ոչ երթայիր. զի ո՛չ ու-
նիմ քեզ նման բարեկամ 'ի յերկրի
իմում։ Արդ՝ եթէ խնդիրք ունիս՝
խնդրեա՛. և կատարեցից զխնդրուա-
ծս քո։ Ասէ զինուորն. վասն բա-
զում ծառայութեան իմոյ որ ծառայե-
ցի քեզ՝ զայս կու խնդրեմ 'ի տեառնէ
իմմէ. զի զկինն զայն զոր կու սիրեմ
և տէրդ իմ իսկ տեսեր զնա, կամիմ
զի առցեմ 'ի կնութիւն ինձ և պսակի
ցիմ 'ի մէջ եկեղեցւոյն։ Ասէ աղա-
չեմ զտէրդ իմ զի զշնորհս զայս ա-
րասցես ինձ՝ որ դու քոյին ձեռամբն
տացես զնա ինձ առաջի ամենեցուն. և
եղիցի այն ինձ փառք և պատիւ 'ի
մէջ առաջի ամենայն ժողովրդեանն.



և

և գիտասցեն թէ 'ի պալատէ քումմէ
առից զնա ինձ 'ի կնութի:
Ասէ ցնա Թգրն. սիրելի զինաւոր իմ
ուրուրից քեզ զայդ և կատարեցից
զկամս սրտի քո: Ապա զինաւորն ժամ
եդ թէ յորում աւուր այս լինիցի:
Ապա իբրև եհաս օրն այն և եղև ժամ,
եկն Թգրն յեկեղեցին. և բազմութի
ժողովրդեանն ընդ նմա: Ապա զին֊
աւորն յառաջագոյն խրատեալ էր
զԹագուհին՝ զի ժողովեսցէ զամ
ինչս 'ի գանձարանէ Թագաւորին.
և ելցէ ընդ գաղտ դուռն զոր արա
րեալ էր: Ապա եկեալ զինաւորն և
Թագուհին յեկեղեցին: Ապա քահա
նայքն զգեստաւորեալ և յառաջ ե֊
կեալ ասեն. ով տայ զկինս զինաւո֊
րիս այս: Ասէ Թագաւորն. ես տամ:
Ապա առեալ զձեռանէ Թագուհոյն
և ասէ. սիրելի տիկին՝ դու յոյժ
նման ես Թագուհոյն իմոյ. վն այն
յոյժ սիրեմ զքեզ. այլև պալատէ
իմմէ՝ կին զինաւորի իմոյ լինիցիս:


զայս

զայս ասացեալ՝ տայ 'ի ձեռն զինուո-
րին զկինն: Եւ քահանայն պսակ ե-
դեալ՝ օրհնեաց զնոսա: Եւ յետ պսա-
կին՝ ասէ զինուորն ցարքայն. տէր իմ
արքայ՝ նաւն պատրաստական է ընդ
որում երթալոց եմ: Արդ աղաչեմ
զքեզ զի նստիցիս ընդ իս 'ի կառս.
և խրատես զկինն իմ օգտակար բա-
նիւք առաջի ամենեցուն. թէ որպէս պարտ է
նմա այսուհետև սիրել զիս առա-
ւել քան զամենեսեան: Ասէ թագաւորն
արարից զայդ ես վասն քո: Եւ նըս-
տան 'ի կառս և գնացին խմբովին 'ի
նաւն. և բազմութիւն ժողովրդեանն
ընդ նմա: վասն զի յոյժ սիրէր զնա թա-
գաւորն. և տրտմէր վասն բաժանելոյն
'ի նմանէ: Եւ իբրև եկին մերձ 'ի
նաւն, ասէ թագաւորն ցթագուհին.
սիրեցեալ տիկին՝ լուր խրատու իմոյ
և բարի լիցի քեզ: Արդ այժմ սա է
այր քո. պարտ է քեզ զի սիրեսցես
զնա որպէս զանձն քո. զի Աստուած զայն պա-
հանջէ 'ի քէն. զի դու ամենայնիւ

ամ իւրոք հաւատարիմ և հնազանդ
լինիցիս նմա։ Զայս ասացեալ՝ ետ
զնա ՚ի ձեռն զինուորին և ասէ. եր
թիցէք խաղաղութբ և որ եղիցի
ընդ ձեզ։ Իսկ զինուորն էառ զթա
գուհին. և երկրպագեալ արքային
մտին ՚ի նաւն։ Իսկ նաւապետն բարձ
րացոյց զառագաստն. և զի հողմն յա
ջողակ էր՝ գնայր նաւն արագօրէն։
Իսկ թգհն եկաց առ ափն ծովուն
և հայէր. մինչև աներևոյթ եղև
նաւն յաչաց նր. և ապա դարձաւ ՚ի
պալատն իւր։ Իսկ իբրև եմուտ ՚ի
դարպասն և ոչ եգիտ անդ զթա
գուհին, տրտմեցաւ յոյժ. և շուրջ
եկեալ աստ և անդ՝ եգիտ զդաղտ
դուռն ընդ որ ելեալ էր թագու
հին. և ասէ՝ վայ է ինձ. ընդ որում
յուսայի ես և առաւել սիրէի՝ նա
էառ զկինն իմ յինէն և փախեաւ։
Իսկ լայր դառնապէս և ասէր. մի թէ
խելագարեցայ ես. որ աչաց իմոց ոչ
հաւատացի՝ և խօսից զինուորին
խաբեցայ։

Յետ այնորիկ ասէ Թագուհին ցը
կայսրն. տէ՛ր՝ 'ի միտ առէ՞ր զասա
ցեալս իմ։ Ասէ կայսրն. այո՛ 'ի միտ
առի։ Ասէ ցնա Թագուհին. արդ
ո՞չ Թագաւորն այն հաւատայր զկին
ւորին այնմիկ, նոյնպէս և դու հա
ւատաս փորձապետաց նզովեալ որ
դւոյ քո. որ այսպիսի որոգայթս
պատրաստեն քեզ խաբէութեամբն
իւրեանց։ Ո՛չ ի ես որ կին քո եմ,
ո՛չ հաւատաս ինձ քան թէ նոցա հա
ւատաս. որ այսպիսի նախատինս ա
րար ինձ և խայտառակեաց զիս. որ
դու որդի իմ աչքոյ ինքնին տեսեր։
Ապա զայս տեսանես՝ զի դեռևս
օգնեն բանիւք նզովեալ որդւոյ քո։
Յորժէ երկիցես՝ զի մի՛ լինիցիս նը
ման Թագաւորին այնմիկ զոր ասացի
քեզ զայդ այժմ։ Ասէ կայսրն՝ ո՛չ լինի.
այլ 'ի վաղիւն անպատճառ տամ ըս
պանանել զնա ։ Ասէ Թագուհին.
եթէ այդպէս առնես՝ մեծ իմաստու
թիւն է քեզ. զի չէ՛ պարտ նմա կեն
դանի մնալ։

❋ Յեօթն երորդ անգամ տանէին զորդն ար-
քային ՚ի մահ. և եօթննորդ դպրապետն յաղ-
ջեմ անուանեալ՝ առաջօք փրկէին զնա։

Յեօթն երորդում աւուրն՝ ե-
լեալ կայսրն նստէր ՚ի գա-
հոյսն իւր. և հրամայեաց կո-
չել զդահճապետն. և ասէ՝ երթ
հան զորդին իմ ՚ի բանտէն և տար
սպան զնա. և հեռացո զգլուխն ՚ի
մարմնոյն նետաձիգ մի։ Այն Թագու-
հին յառաջմէ կոչեալ զդահճպետն՝
ետ նմա բազում պարգևս. խնդր Թէ
նման մահապարտի սպանցէ զնա։
Այն եկեալ դահճապետն՝ եհան զոր-
դի արքային ՚ի բանտէն. և ետ ըղ-
ձեռան ՚ի յետսն կապել որպ մահա-
պարտի. և մունետիկն առաջի իւր
ձայնէր ասելով. եթէ որ կամենայ
մեղանչել ընդ յետնամօրն իւրոյ,
այսպիսի մահուամբ մեռանի։
Այն Թագուհին հայէր ՚ի պատուհա-
նէն. և ուրախանայր ընդ միտս իւր
Թէ

թէ այսօր կու կորնչէի որդի արքային
Աւա՜ղ այսպիսի նախատանօք՝ տանէին
զորդի արքային 'ի մահ. և նա աղէկտ
տոր սրտի՜ երթայր։ և ժողովուրդ
քըն ափսոսալով ասէին. ա՜ւաղ ա՜ւ‿
աղ և ա̃ ա՜ւաղ որ այլվի տանէին զոր
դի արքային 'ի զուր սպանումն։
Աւա՜ղ եօթներորդում դպրապետն
որում անուննն էր յովակիմ, հե‿
ծեալ սրընթաց երիվարա՜ն նոյն‿
ժամայն եհաս նց̃ և ասէ. զինչ գոր
ծէք։ և բարկացեալ դաշնապետին
ասէ. Ը̃էր այդպէս նախատինք ես
արկեր զորդի արքային. և ետուր ար
ձակել զձեռսն։ Ասէ դաշնապետն
ով բարի դպրապետ՝ ոչ գիտեմ թէ
զինչ արարից. զի հրաման թագու
հոյն սաստիկ է. եթէ կարող ես ա‿
զատել՝ ես արգելից զամ աստ. և
դու գնա առ կայսրն և ազատեա։
Աւա՜ղ ժողովուրդքն աղաղակէին ե՜
ասէին. փութա առ կայսրն և ազա
տեա զաշակերտն քո՝ որպ̃ ընկերքն


քո

քո ստորին։ Նա՛ որդի արքային էր
կիրեպագ վարժապետին իւրոյ.
իբր կամէր տեսել թէ ազատեա՞ զնա
՚ի մահուանէ։ Նա՛ դպրապետն փու-
թանակի եկն առ կայսրն. և երկր-
պագեալ մեծաւ պատուով ողջու-
նեալ զնա։ Ասէ կայսրն. ա՞ծ կըր
րեսցէ զբարիքն ՚ի քէն։ Ասէ դպրա-
պետն. տէ՛ր արքայ զի՞նչ գործ գոր-
ծեցի որ այդպիսի բան խօսիս ը՞ն իս։
Ասէ կայսրն. ետու զորդին իմ ՚ի
ձեզ՝ ճարտար լեզուաւ ՚ի բանս և
՚ի խօսս. և այժմ համրացեալ է։
Ետու զորդին իմ ՚ի ձեզ՝ զի պար-
կեշտ վարս ուսանիցի. և նա զկինն
իմ կամեցաւ լկել։ Վա՛ այնր գոր-
ծոյն ահա մեռանի նա այսօր. և ըզ
ձեզ զամենեսին դատն մահուամբ
կորուսից։ Ասէ ցնա դպրապետն.
տէր արքայ՝ ունկն դիր բանից իմոց
և երկայնամիտ լեր. տեսցես թէ որ-
դի իմ պապանձեալ է։ Ասէ կայսրն՝
այո։ Ասէ դպրապետն. զանձն իմ

եղից 'ի մահ՝ և ընկերքն իմ ամ̃ .
եթէ ոչ խօսի 'ի վաղիւ̂ն յառաջ քան
զեօթներորդ ժամն առաջի ամ̃ցուն:
Ասէ կոյսն . եթէ տեսից և շատ է
ինձ: Ասէ դպրապետն . այլ մի' ու-
նիցի կենդանութի̃ եթէ ոչ ելցէ 'ի
փառաւորդ` որ անիրաւ̂ զրպարտեաց
զնա Թագուհին քո : Ալ զոյշ ա-
սեմ քեզ . եթէ տացես սպանանել
զորդին քո վ̃ բանի կնոջ քո` պա-
տահեսցէ քեզ այնպէս զոր պատա-
հեաց զինո̂որի ուժեմն . որ մեռաւ̂
վ̃ կնոջ իւրոյ: Ասէ կոյսն . աղա-
չեմ զքեզ ասա՛ ինձ զառակդ զայդ:
Ասէ դպրապետն . վ̃ էր իզուր աշ-
խատիմ և ասեմ . զի մինչ ես պատմե-
ցից զառակս` զորդին քո սպանցեն:
Եթէ կամիս լսել զառակս իմ, նախ
դարձո՛ զորդին քո 'ի բանտ . և ես
պատմեմ զառակս ազնու̂ագոյնս:
Յայնժամ խղճմտանք քո դատեսցէ
վ̃ նր̃ . կամ սպանանել կամ կեցու-
ցանել զնա : Ասէ կոյսն . դարձցի

'ի տուն և ոչ 'ի բանտ. առաւել վասն
բանին այնորիկ՝ զոր ասացեր թէ՝
'ի վաղիւն խօսեսցէ առաջի ամենեցուն:
Ապա դարձուցին զմանուկն 'ի տուն
և պահապանս եդին նմա. և դպրա-
պետն սկսաւ ասել զառակս զայս:

## ※ Առակ եօթներորդ. զոր ասաց Յովսէփ Դպրապետն և փրկեաց զմանուկն. և խոստացաւ զխօսելն նորա:

Ի քաղաքի միում՝ էր զինուոր
ամն ագաստազն. և ունէր կին
գեղեցիկ. որպէս զթագուհին քո
և յոյժ սիրէր զնա առաւել քան
զանձն. մինչ զի ամենեւին առաջի նր
ուրեք դադարումն ոչ առնոյր:
Ապա յաւուր միում խաղալեն այրն
և կինն իմիասին խաղալ ասկոր կամ
վէգս. և զինուորն այն ունէր 'ի ձե-
ռին իւրում դանակ մի փոքրիկ. և
կինն 'ի խաղալն ընդ նմա՝ զարկոյց
զձեռն իւր ընդ դանակն և վիրա-


ւո

հարեաց զինուորին մատն . և ել առ-
կա՛ մի արիւն ։ Ագրև ետես այրն
զարիւնն 'ի ձեռն կնոջն՝ անկա՛ւ և
ուշաթափեցա՛ւ . ո՞չ թէ ոք հարկա-
նեցէ զկատուած ն՟ր ։ Ա՜յ կինն ջուր
ցանեաց յերեսս ն՟ր զի ուշաբերիցի
փութով . և նա եբաց զաչսն և ասէ
կոչեցէք փութով զքահանայն . զի
ահա մեռանիմ վ՟ն արեան կնոջ իմոյ
Ա՜յ ծառայքն ընթացան կոչել ըզ-
քահանայն՝ զի եկեալ հաղորդեսցէ
զնա . բայց աւա՜ղ հոգալոյն վասն
սակա՛ւ մի արեան կնոջ իւրոյ՝ մինչ
չև եկեալ էր քահանայն՝ մեռա՛ւ ։
Ա՜յ բարեկամքն ն՟ր կոծէին և ա-
ւաղէին զնա որ 'ի զուր մեռա՛ւ . և
կինն լայր դառնապէս և ասէր՝ վա՜յ
ինձ . արդ զի՞նչ լինիցիմ ես ։ այսու-
հետև նման տատրակի մնացի անայր ։
Ա՜յ տարեալ թաղեցին զնա մեծա՛ւ
պատուով . և կինն անկեալ 'ի վերայ
գերեզմանին լայր անմխիթար ։
Ա՜յ ազգատոհմք նորա կամէին զնա



տա

տանել 'ի տուն իւր· այլ նա երդ-
մամբ ասէր ցնոսա· եթէ 'ի տեղւոջէս
յայսմանէ ոչ ուրեք երթայց· այլ
աստ մեռայց վ̃ս սիրոյ տան իմոյ։
Ասեն ցնա բարեկամքն· ով բարի
տիկին՝ մի թէ այդպէս տանելովդ՝
շահ մի լինի՞ հոգւոյ ն̃ր· որ աստ ան-
կեալ կաս· լաւ է զի երթիցես 'ի տուն
քո և արասցես ողորմութի̃ վ̃ս հո-
գւոյ նորա։ Ասէ ցն̃ա կինն· չէ՛ր է
խրատն ձեր զոր ասէք ինձ· զի ես
'ի տեղւոջէս այլ ուրեք ոչ շարժե-
ցայց· այլ աստ մեռայց վ̃ս սիրոյ տան
իմոյ· զի նա վ̃ս սիրոյ իմոյ մեռաւ։
Ապա տեսեալ բարեկամացն թէ ոչ
կամի գնալ 'ի տունն՝ արարին նմա
խուղ մի փոքրիկ 'ի վ̃ր գերեզմանի
տան ն̃ր։ և բերին առնա անդ կերա-
կուր և զա̃մ պէտս ն̃ր։

Յայնմ ժամանակին սահման կայր
'ի քաղաքին յայնմիկ և յա̃մ թա-
գաւորութի̃ւնս ն̃ր· եթէ գող մի
որ կախիցեն՝ քաղաքացի մի պետի


որ

որ պահէ զկախեալն . զի մի՛ եկեալ
ընկերքն գողասցեն զմարմին նր̃ :
Եւ եթէ անփոյթ արարեալ պահա-
պանն գողացուսցէ զմարմին կախե-
լոյն , զա̃մ ինչս նր̃ յարքունիս տու-
գանել . և զինքն ևս 'ի տեղի նորա
կախել : Եւ յաւուրսն յայնոսիկ՝
կախեալ եղև գող մի . մերձ 'ի գե-
րեզմանի զինուորին այնմիկ : և քա-
ղաքացի մի եղև կարգեալ պահա-
պան՝ առ 'ի պահել զգողն . որ էր դը-
րացի զինուորին . և էր այրի :
Որև զգեցեալ զլահ . և առեալ
զէնս . և հեծեալ 'ի ձի՝ ել հանդէպ
քաղաքին 'ի պահել զկախեալն :
Եւ 'ի մէջ գիշերոյն՝ եղև ցուրտ
և պարզ յոյժ . և սառնոյր այրն
որ պահապանն էր . և ոչ կարէր ժու-
ժել : և հայեցեալ ետես զի հուր ինչ
ցոլայր 'ի տեղւոջէն ուր էր կինն 'ի
վր̃ գերեզմանի զինուորին . և գնա-
ցեալ անդ՝ բախէր զդուռն : Ասէ
կինն . ով է այդ որ այժմ յայս ժա-



մուս

մաւս եկեալ է աստ։ Ո՜վ պահապանն․
սի՛րելի տի՛կին՝ ես եմ դրայլի քո․ և
պահապան եմ ՚ի գիշերիս վասն դո
ղուն․ և սաստկացեալ եմ ՚ի ցրտոյ․
բայց զի առկա՛ մի ջեռնում առ հր
րոյն․ զի ոչ կարեմ ընդդիմանալ
ցրտոյս։ Ո՜վ կինն․ մուծանէի ըզ
քեզ ՚ի ներքս՝ բայց երկնչիմ զի ան
պատշաճ խօսս խօսիս առաջի իմ։
Ո՜վ պահապանն․ երդնում հաստա
տութ՝ զի զբանս զորս դու կարծես
ոչ բնա՛ խօսեցայց առաջի քո․ այլ
առկա՛ մի ջեռուցայց և գնացից։ քանզի
լուա՛եալ եմ վ՜ն քո՝ որ կին ս՜բ ես․ և
վ՜ն սիրոյ առն քո բնակեալ ես աստ։
Յա՛ կինն եբաց զդուռն․ և եմոյծ
զնա ՚ի ներքս․ և նա սկսաւ ջեռնուլ։
Յա՛ իբրև ջեռաւ՝ ասէ պահապանն
ցկինն․ տի՛կին բարի՝ մի՛ չար թուես
ցի եթէ ասացից ինչ քեզ։ Ո՜վ
կինն․ ասա՛ և ես տաց քեզ զպատաս
խանին։ Ո՜վ պահապանն․ սի՛րելի
տի՛կին՝ դու կին գեղեցիկ ես փա

 ռա

ռաւոր և ընչաւէտ. լաւ էր քեզ 'ի
տան քում բնակիլ և ողորմութիւնս առ-
նել վասն հոգւոյ առն քո՝ քան թէ
աստ բնակել և լալով զկեանս քո
անցուցանել: Ասէ կինն. եթէ գի-
տացեալ էի որ զայդ խօսէիր՝ ո՛չ մու-
ծանէի զքեզ 'ի ներքս: բայց զայս
ասեմ քեզ՝ զոր ոմանց ասացի. և
դու լաւ գիտես թէ ո՛րչափ սիրէր զիս
այրն իմ. և վասն սիրոյ իմոյ մեռաւ՝ տե-
սեալ սակաւ մի արիւն 'ի ձեռս իմ.
Նոյնպէս և ես վասն սիրոյ նորա կամիմ
մեռանել աստ: Լուեալ զայս պա-
հապանն՝ ողջունեաց զնա և գնաց
տեսանել զգողն: Եւ հայեցեալ
ետես զի գողացեալ էին զմարմինն
կախեալ. և երկեաւ յոյժ և ասէ՝
վա՛յ ինձ որ կորուսի զամենայն ինչս իմ.
արդ զինչ արարից. կամ առ ո՞ եր-
թայց հարցանել խրատ: Գնացից
առ որբ կինն և 'ի նմանէ ուսայց ըզ-
խրատս: Եւ եկն առ նա և ասէ.
ո՛վ կին բարի՝ ես եմ պահապանն



որ

որ տաս առ քեզ ջեռայ․ այժմիկ ու-
նիմ ծածուկ բան ինչ ասել քեզ․
աղաչեմ զքեզ՝ վն̄ այ̄ սիրուն բա՛ց
ինձ զդուռդ։ Ապա կինն եբաց ըզ-
դուռն․ և նր̄ մտեալ ՚ի ներքս և ա-
սէ․ բա՛րի տիկին՝ խընդրեմ ՚ի քէն
ուսանիլ բարի խրատ։ Ո՛ սահման
երկրիս գիտես թէ ո՛չ պատրաստ է պա-
հել զկախեալն․ և եթէ գողացեն՝
յայնժամ պահպ̄նն կորուսցէ զա̄մ
ինչս իւր․ և զինքն ՚ի տեղի նր̄ կա-
խեսցեն։ Ապա ես մինչ տաս ջեռայ՝
գողացեալ են զգողն ՚ի կախաղանէն։
Վն̄ որոյ աղաչեմ զքեզ՝ խրատ ինչ
ուսո՛ ինձ թէ զի՞նչ արարից․ վն̄ զի
զրկիմ յա̄մ ընչից իմոց․ և զիս ՚ի տե-
ղի նր̄ կախեսցեն։ զայս ասացեալ
անկա՛ւ առ ոտս կնոջն և աղաչէր։
Ասէ ցնա կինն․ ցա՛ւ է ինձ վն̄ սահ-
մանի քաղաքիս․ որ այսպիսի հա-
մատեալ են։ Ապա որդ՝ լո՛ւր խրա-
տու իմոյ և ո՛չ կորուսցես զինչս քո
և ՚ի մահուանէ ես ապրեսցիս։

Ասէ պահապանն · ասա սիրելի տի
կին · զի զնմ զոր ինչ և ասիցես դու՝
արարից ես ըստ խրատու քո · զի վն̅
այն եկեալ եմ առ քեզ՝ որ քոյին
խրատովդ ազատեցայց ՚ի վնասու
յոյամանէ ։ Ասէ կինն · ահա դու
կին ոչ ունիս · եթէ զիս առնես ՚ի
կնութի̅ քեզ , տամ քեզ խրատ ։
Ասէ պահապանն · այժմ դատս շը
նորհս առաջի քո · որ կամիս ելանել
՚ի դերեզմանէս՝ ունելով զիս քեզ այր
Ա՛յ յօժարու̅ արարից զինչ և ա
սիցես · զի դու ո՛չ հոյեցար յաղքա
տութիս իմ և սիրեցեր զիս ։ Ասէ
ցնա կինն · ես միայն զքեզ կամիմ
և ո՛չ զայլ ոք ։ Ասէ պահապանն ·
ես այլ ո՛չ զոք կամիմ քանի որ դու
կենդանի ես ։ Ասէ կինն · այրն իմ
որ մեռաւ վն̅ սիրոյ իմոյ · որ և դու
խակ պիտակ ես · զնա յերեկեան օրն
թաղեցին · հան զնա ՚ի դերեզմա
նէն և տար կախեա ՚ի տեղի դողոյն
որ ազատիս ՚ի մահուանէ ։ Ասէ պա

 հա

հապանն․ որպ̃ կամիս՝ այնպէս եղիցի։ և բացին զգերեզմանն և հանէին ըզմեռեալն։ Ասէ պահապանն․ երկնչիմ յոյժ․ զի գողոյն այնմիկ ՚ի վերի կողմանն բ̅ ատամն հատեալ էր․ և եթէ զդա կախեսցուք՝ ատամամբըն ճանաչիցեն թէ ո՛չ է այն։ Ասէ կինն ա՛ռ քար և հան զատամ դորա։

Ասէ պահապանն․ սիրելի տիկին՝ այր քո սիրելի էր ինձ և ընկերակից և բարեկամ էր ՚ի կենդանութե̅ իւրում․ այլև նախատինք ինձ որ հատանեմ զատամունս մեռելոյն։

Ասէ կինն․ ես հանեմ զատամունս դորա վ̅ս սիրոյ քո։ և առեալ քար՝ եհան վերի զատամունս մեռելոյն և ասէ․ տար կախեա զդա այժմ։

Ասէ պահապանն․ դեռևս երկնչիմ կախել զդա․ զի գողն այն՝ ունէր վէր մեծ ՚ի գլուխն իւր․ և զերկուին ականջսն ո՛չ ունէր։ եթէ գտանիցեն զդա առանց վիրաց և ականջաց՝ ասիցեն թէ ո՛չ է այն․ և ինձ



ամօթ

ամօթ մեծ եղիցի։ Ասէ կինն. հան
զսուրդ և հա՛ր զգլուխ դորա. և հար
թեւ՛ զականջսն։ Ասէ պահապանն.
սիրելի տիկին՝ ոպ̃ հանեցիր զատամն՝
այնպէս և զայս այլ դու արասցես։
Ասէ կինն. տուր ինձ զսուրդ քո
և ես արարից վս̃ սիրոյ քո. և նա
ետուր։ Նա՛ նորա առեալ զսուրն՝
արար վէր մեծ ՚ի գլուխ նր̃. և կտ
րեաց զերկոսին ականջսն և ասէ.
արդ տար կախեա՛ զդա։ Ասէ պա
հապանն. ունիմ այլ ևս երկիւղ.
զի գողն այն ոչ ունէր երամս ։ և
եթէ զդա երամնօք տեսանիցեն՝ ձա
նաչիցեն թէ ոչ է այն։ Ասէ կինն.
ոչ եմ տեսեալ այր երկչոտ քան
զքեզ ՚ի վր̃ երկրի. արդ կտրեա՛ զե
րամնք դորա և տար կախեա՛ ։ Ասէ
պահապանն. ով սիրելի տիկին՝ դու
լա՛ գիտես որ առանց երամնաց այր՝
չէ՛ կատարեալ մարդ. և եթէ կտ
րեցից զերամնք դորա, նոյն և ինձ
պատահի. վս̃ այն և զայդ ևս դու

 արաս

արարացես։ Ասէ կինն․ ճշմարիտ է
զոր ասես․ և ես վ՟ն սիրոյ քո զա՟մ
ինչ առնեմ։ Իսկ նոյնժամայն առ-
եալ զսուրն՝ կտրեաց զերանս մեռե-
լոյն որ էր տէր իւր և էարկ շանց։
և ասէ՝ արդ տարեալ կախեսցես
զայրդ տգեղեալ դիմօք ՚ի նզովս։
Ասէ պահապանն․ այդպէս արարից․
և տարեալ կախեաց զմեռեալն ՚ի տե-
ղի գողոյն և ապրեցաւ պահապանն։
Յետ այնորիկ ասէ կինն․ ով սիրելի
իմ արդ ապաստեցար յա՟մ տրտմու՟է․
եկ երթիցուք յեկեղեցին․ և առա-
ջի ա՟մյուն առցես զիս ՚ի կնութ՟ի։
Ասէ պահապանն․ ուխտ եդեալ եմ
ա՟յ որ դու քանի կենդանի ես՝ ես
այլ կին ոչ առնից։ Ասէ կինն․ վ՟ն էր
Ասէ պահապանն․ ով թշուառական
և նզովեալդ ՚ի մէջ կանանց․ ով առ-
ցէ քեզ նման նզովեալ և զչար կինն
՚ի կնութ՟ի ինքեան։ Զի այր քո որ
վ՟ն սակաւ արեանն քո զանձն եդաւ
՚ի մահ, դու այդպէս խայտառակ



արար

արարիեր զնսա։ զպատմուճանն Թափեցեր. զգլուխն վերաորեցեր. զականջան կտրեցեր. և զերանան հատեալ՝ շանց ընկեցեր։ Եւ ես փոխան այդորիկ տուից զքեզ ՚ի կնութիւն զի և ինձ զայդ արասցես։ Ո՛չ թողից զքեզ կենդանի՝ զի միւսանգամ գործեսցես զայդ. և զայս ասացեալ՝ եհան զսուրն իւր և կտրեաց ըզգլուխ կնոջն։

Յետ այնորիկ ասէ դպրապետն ցըկայսրն. տէ՛ր արքայ ՚ի միտ առե՛ր զասացեալսն իմ։ Ասէ կայսրն. այո՛ ՚ի միտ առի։ զի վն՟ ամ՟ չարեաց կանանց զոր լուեալ էի՝ դա՛ չարագոյն էր քան զամ՟ և նզովեալ։ Սակայն ո՛վ դպրապետ՝ եթէ զձայն որդւոյ իմոյ լուէի որ խօսէր, և թէ մեռանէի՝ ո՛չ էր ինձ կսկիծ։ Ասէ դըպրապետն. ամ՟ պահէ զքեզ ՚ի մեռանելոյ։ արդ տուր զորդին քո ՚ի յիս. և ՚ի վաղիւն՝ ժողովեսցին առ քեզ ամ՟ իշխանք քո և ամ՟ կուսակալք քո


Ի՛

Այ՜ մեք ընկերօքս հանդերձ՝ բեր-
ցուք զորդին քո 'ի քեզ. և լուիցես
զձայն որդւոյ քո. նոյնպէս և ամ̃ ինչ
խնամքն և կուսակալքն քո։ Քանզի
յոյս ունիմ առ ամ̃՝ զի փառքն յայտ-
նելոց է ճշմարիտն 'ի մէջ որդւոյ և
Թագուհոյն քո. որ անխրած զըպար
առեաց Թագուհին զորդին քո։

Այ՜ նոյնժամայն հրամայեաց ար-
քայն՝ տալ զորդին 'ի ձեռն յովա-
կիմ դպրապետին։ Այ՜ էառ դըպ-
րապետն զորդի արքային և գնաց
առ ընկերսն իւր։

Այ՜ Թագուհին իմացեալ որ ո՛չ
սպանան որդի արքային, յայնժամ
ասէ ցբարեկամսն իւր. արդ զի՞նչ
արարից՝ զի այսօր է օր է որ ջանա-
ցի սպանանել զորդի արքային և ո՛չ
կարացի. ահա եհաս ժամ զի 'ի փա-
ռքն խօսելոց է. և ես ո՛չ գիտեմ
զի՞նչ արարից. զի երկնչիմ թէ 'ի
կենացս ելանեմ։ Այ՜ բարեկամքն
Թագուհւոյն մխիթարեցին զնա և



ասէ

տաճէին. մի՛ երկնչիր ո՛վ Թագուհի՝
զի՞նչ առնելոց է քեզ որդի արքային
Լուա՛ կայսրն՝ մտեալ երեկոյին առ
Թագուհին և տաճ. ահա որդին իմ
'ի վաղիւն խօսելոց է ո՛վ սիրելի Թա
գուհի իմ. և յայնժամ տեսցուք թէ
'ի ձեռնջ ո՛րն է ճշմարիտ: Ո՛ ի այսօր
եօթն օր է որ դուն ջանացիր սպա-
նանելոյ զորդին իմ, և դպրապետքն
ջանացին ապրեցուցանել. ահա վա
ղիւն տեսցուք թէ ինչ կաջողէ: և
Թագուհին ինչ ոչ խօսեցաւ:

※ Յութերորդում աւուրն ժողովումն դըր
պրապետացն. և առնուլ զորդի արքային. և
բազում ժողովրդոց երեսունն առ կայսրն
և խօսելն:

Յութերորդում աւուրն ժո-
ղովեցան եօթանեքին դըրպ
րապետքն իմաստին. և հար-
ցանէին որդոյ արքային և տաճէին.
եղե՞ քեզ ժամ խօսելոյ: Ասէ որդի
արքային. այժմ եհաս ինձ ժամ խօ-
սել

սելոյ և ապրեցուցանելոյ զիս և ըզ
ձեզ այսօր․ և դուք ընաւ մի՛ տըրտ
միք թէ զինչ խօսելոց եմ ՚ի ժամուն
այնմիկ։ Ապա դպրապետքն զգեցու
ցին նմա զբեհեզեայ պատմուճանն․
և բազմեցուցին զնա ՚ի վ̃ր ոսկեա
կազմ երիվարի։ Ապա դ̃ ՚ի նոցանէ
յառաջ երթային բ̃ բ̃․ և երեքն ըզ
կնի՝ ոսկեակազմ երիվարօքն։ Ապա
փողովք ազդեցութե՝ սրընկօք եւ
թմբկօք և ամ̃ արուեստականօք և
բազում ժողովրդօք և մեծաւ փա
ռաւորութեամբ և խնդութեամբ
եկին առ կայսրն։

Ապա կայսրն լուեալ զձայնն ուրա
խութե՝ ասէ ցն̃ա որ շուրջն կային
Զինչ է այդ զոր լսեմ ես։ Ապա նո
քա ասեն․ արքայ յաւիտեան կաց՝
որդին քո գայ առ քեզ․ զի այսօր ա
ռաջի քո և առաջի ամ̃ նախարարաց
քոց խօսեսցի։ Ապա նոյնժամայն մը
տեալ ՚ի պալատն․ որև դղրդեցաւ
պալատն։ Ապա մտեալ յառաջ դըղ

րապետքն առաջի կայսերն · և ողջու-
նեցին զնա մեծաւ պատուով:
Եւ կայսրն մեծարեաց զնոսա:
Եւ զկնի վարժապետացն՝ եկն որ-
դի արքային առաջի հօրն · երկիր ե-
պագ նմա և ասէ: Ողջ լեր գորովա-
գութ հայր իմ և տէր արքայ: Եւ
դարձեալ ողջունեաց զմեծամեծսն
և ասաց · ողջոյն ընդ ձեզ իշխանք
հօր իմոյ՝ և մեծամեծք բոլոր հո-
մոյ: Իբրև լուաւ արքայն զձայն
որդւոյ իւրոյ՝ 'ի մեծ խնդութիւնէն
անկաւ յաթոռոյ իւրմէ · և դարձեալ
նստաւյին յաթոռն իւր: Եւ զորդի
արքային՝ նստուցին մերձ առ հայրն
իւր · և ամ մեծամեծք և իշխանք՝
եկեալ երկրպագեցին որդւոյ ար-
քային: Եւ որդի արքային կամէր
խօսել ընդ հօրն իւրում, բայց 'ի
ժողովրդենէն ոչ լինէր լսելի բա-
նն: Եւ կայսրն հրամայեաց ծա-
ռայից իւրոց զի ոսկի և արծաթ ցա-
նեսցեն 'ի փողոցսն · որ այնու գը

նայեցէն ժողովուրդքն անտի • և ինքն
կարիցէ լսել զխօսիլն որդւոյ Իւրոյ։
Սակայն ժողովուրդքն 'ի խնդութէ
բանից որդւոյ արքային՝ ոչ հայէին
յոսկին և արծաթն • և ոչ ոք շար_
ժեցաւ 'ի տեղւոջէն Իւրմէ։ Այլ տե
սեալ կայսրն որ ոչ շարժեցաւ ժո_
ղովուրդն՝ հրամայեաց քարոզ կար
դալ և ասել զի լսեսցեն ամենեքեան •
և եթէ ունէք ձայն լսելի լինիցի ,
նոյնժամայն սպանցեն զնա։
Այլ իբրև լսեցին ժողովուրդքն
ամենեքեան որ ոչ բնաւ խօսէին,
ասէ որդին կայսրին • Տէր արքայ՝
ոչ խօսեցայց մինչև գայցէ թագու
հին քո աստ։ Աղաչեմ զքեզ՝ զի
հրամայես կոչել զնա աստ առաջի
քո և առաջի նախարարաց քոց • և
ամենայն կուսանքն և օրիորդքն Իւր ե_
կեսցեն ընդ նմա։ Այլ իսկոյն հրա
մայեաց կայսրն կոչել զթագուհին
զի ժամանեսցէ անդ ամենայն կուսանօքն
Իւրովք։ Այլ եկեալ ծառայիցն ծա

 նու

Նուցին զհրամանն արքային։

Եւ եղեալ Թագուհին ժողովեաց
զամ աղջկունսն իւր. և եկեալ
առ կոյսըն խռովեալ անձամբ եւ
տրտմեալ սրտիւ։ Յորժամ ետես
որդի արքային զԹագուհին, յայն
ժամ բարկութ ասէ ցԹագուհին.
կացցես դու այդր առաջի ամ ժողո
վրդեանդ և առաջի ամ մեծամեծաց
հօր իմոյ. և ամ կուսանք քո՝ կար
գաւ կացցեն ընդ քեզ. զի ամքեան
տեսցեն զձեզ. զի ունիմ բան ինչ
խօսելոյ։ Յայնժամ կանգնեցաւ
Թագուհին համդէպ արքային. և
ամ աղջկունքն կարգաւ կացին
առ ընթեր Թագուհոյն։

※ Սայփատանէղէն Պուխոյզէտխանոսն զԹա-
գուհէն. և Ձերջայրուցանէղէն զէրբետոսատրդն՝ է
նանայէ զգէտոյեն։

Յայնժամ ասէ որդի արքային
ցհայրն իւր . տէ՛ր արքայ՝
ամբարձ զաչս քո և հայեաց



՚ի

՚Ի կուսանան թագուհւոյ քո· և առա
ւել ընդ այն որ գեղեցկագոյնն է
զգեցեալ քան զամենեսեան· և կայ
առ ընթեր թագուհւոյն կանանչ
պատմուճանաւ։ Ասէ կայսրն· այժ
գիտեմ որդեակ իմ· տեսանեմ և
ճանաչեմ զնա՝ զի նմա է ի վ̄ր ա̄մցն·
և յոյժ սիրէ զնա թագուհին· և գո
վէ զնա ինձ՝ թէ լաւ է քան զամե-
նեսեան։ Ասէ որդին· հայր իմ ա-
ղաչեմ զքեզ՝ հրամայեա մերկացու
ցանել զնա առաջի ա̄մցն· և ցուցից
քեզ զարբութի̄ թագուհւոյն քո՝
թէ աղջիկ ունի յանկողնի իւրում։
Եւ լուեալ կայսրն զխօսս որդւոյն
իւրոյ՝ զարմացաւ և ասէ· որդե̄կ իմ
ամօթ մեծ է մերկացուցանելն ըզ
կինն առաջի ժողովրդեանն։ Ասէ
որդին· հրամայեա հայր իմ մերկա-
ցուցանել· և եթէ ոչ հրամայես ծա
ռայից քոց մերկացուցանել՝ ես ինք
նին մերկացուցից զնա։ Եւ առժա
մայն հրամայեաց կայսրն մերկացու


ցա

ցանել. և խնկոյն մերկացուցին զնա
անդ։ Արդ՝ իբրև մերկացուցին՝ տե
սին ամենեքեան զի ոչ է աղջիկ,
այլ երիտասարդ մանուկ։ և զարմա
ցան ամենեքեան. վարժապետքն և
իշխանքն թէ ո՞պ ծանեաւ զնա որ
երիտասարդ էր։ Ասէ որդին ցհայրն
տէ՛ր իմ արքայ՝ երիտասարդդ այդ՝
համապազ պոռնկէր յանկողնի քում
ընդ թագուհոյն քո. և չէ զարմանք
որ առաւել սիրէ զնա և գովէ զնա
քեզի։ Արդ՝ տեսեալ կայսրն զայս՝
յամօթոյն իւրոյ ոպ խելագար եղև.
և հրամայեաց զի առ ժամայն այրես
ցեն հրով զթագուհին և զերիտա
սարդն։ Ասէ որդին. տր իմ արքայ
և հայր իմ սիրելի՝ թող այժմ զդո
սա զի ասասցեն զճշմարիտն զոր ինչ
ճնաս եդին խվէ իմ։ Ասէ կայսրն.
ով սիրելի որդեակ իմ, ՚ի ձեռս քո
եմ զդատաստանս դոցա. զի դու
իմաստնագոյն ես քան զիս։ Ասէ որ
դին. ոչ ես և ոչ դու՝ այլ օրէնքն

դատաստանին դառնայցեն զդդքս ·
եթէ խոստովանեսցին զպարտութիս
իւրեանց: Ո՛վ յորժամ հրամայե-
ցեր ինձ գալ առ քեզ, յայնժամ
տմ վարժպտքն իմ հոյեցան յառաջն
և ես ընդ նս հոյեցայ · և տեսաք՝
զի եթէ յեօթն օրն այն թէ խօսէի
բանն մի՝ մահու մեռանէի · և վս այն
պատճառի 'ի լռու կայի: Իսկ թա-
գուհին քո որ ասաց քեզ թէ բռ-
նադատել կամեցան զիս, ասէց քեզ
յայտնիկ: Ո՛վ յորժամ առ ընթեր
քո նստած էի՝ և եկն թագուհին՝
և հարցեալ քեզ թէ ո՞վ է որդին քո՝
և դու ասացեր այո այս է և ոչ խօսի,
յայնժամ էառ զիս հրամանաւն քո
և տարեալ զիս 'ի սենեակն իւր և
հրամայեաց ամենեցուն իբաց գնալ
իւրմէ և սկսաւ խօսիլ ընդ իս այսպէս:
Սիրելի իմ դիոկղէտիանոս՝ զկու-
սութ իմ վասն քո պահեալ եմ · ըն-
ծեալ էի զհամբաւ գեղեցկութե քո՝
արդ այժմ տեսայ և ծանեայ զգե-

 ղեց

ղեցկութ̅ քո. ե՛կ ննջեսցուք իմիա֊
սին. և կամէր համբուրել զիս. և
ես հեռանայի 'ի նմանէ: Աւ՜ յորժ̅մ
այս այսպէս եղև, ետուր թուղթ
և թանաք և ասաց. գրեա՛ իմ̅ թըղ
թին և ծանո՛ ինձ զկամս քո. ահա՛
խևացուցեր զիս ո՛վ սիրելի իմ դի
ոկղետիանոս: Աւ՜ իմ ասեալ ըզ
թուղթն՝ գրեցի այսպէս. ո՛վ թա֊
գուհի՝ ո՛չ կամիմ ես պղծել զտուն
և զանկողին հօր իմոյ. ոչ ինչ է ինձ
շահ՝ այլ մեծամեծ մեղք է առաջի
այ̅. և ետու զթուղթն 'ի ձեռս նր̅:
Աւ՜ իբրև էառ նա և կարդաց, նոյն
ժամայն ցտեաց զերեսս իւր. և պա
տառեաց զհանդերձսն իւր. և ըզ
վնասն վր̅ իմ ասաց:

Աւ՜ լուեալ կայսրն զայսոսիկ 'ի յոր
դւոյն իւրմէ՝ խոժոռեալ նայէր
դէպ 'ի թագուհին և ասէր:
Ո՜վ թշուառական՝ ո՛չ բաւականա
ցար առ սիրաւն քո. այլ կամեցար
զորդեակն իմ ձգել 'ի մեղս.


Աւ՜

Ո՜վ Թագուհին անկեալ խնդրեր ողորմութի։ Ասէ ցնա կայսրն · ո՛վ նոր զովեալ կին՝ դու ոչ մի մահու ծառայեցեր, այլ բազում։ Նախ և առաջ պոռնկեցար առաջի իմ և պղծեցեր զանկողին իմ։ Երկրորդ, զոր կամեցար զորդին իմ ընդ քեզ ձգել 'ի մեղս ։ Երրորդ՝ որ զուր վնաս եդեր իմ̃ր ն̃ր։ Չորրորդ՝ զի յորդորեցեր սպանանել զնա։

Ո՜վ Թագուհին լայր և խնդրեր ողորմութի։ Ասէ կայսրն · իրաւունքն ցուցանէ քեզ թէ ոչ պարտէ ողորմել քեզ։ Ասէ որդին · տէ՛ր արքայ գիտեմ՝ զի վ̃ս մատնելոյն նմա զիս՝ անմեղս տարեալ եղէ ա̃մ աւուրս 'ի կախաղանն · այլ ա̃ծ փրկեց զիս մինչև ցայսօր 'ի ձեռն վարժապետաց իմոյ։ և այսօր փրկեաց զիս տ̃ր՝ ես և զվարժապետսն իմ ։ Ո՜վ թէպէտ կամօքն ա̃յ՝ լինէր այնպէս որ թագաւորէի և տիրէի 'ի կենդանութեան քում որպէս թագուհին



զը

զրպարտեաց զիս, սակայն եւ պատուէի և՛ի մեծարանս պաշտէի զքեզ ո՞չ վայելէ որդւոյ մեծարել զհայր իւր։ և դու առանց աշխատանաց լինէիր ՚ի հանգստեան։ Այլև ուսուցանէիր զիս թէ որպէս վարեցից զթագաւորութ՟ս իմ. և ըստ կամաց քոց առնէի զամ՟. զի ՚ի քէն ուսանէի Որպէս զինչոր ոմն որ զորդի իւր ընկէց ՚ի ծով. այլ ա՟ծ փրկեաց զնա և եղև թգ՟ւոր եգիպտացւոց. և եգիտ զհայր և զմայր իւր. և պահէր ՚ի պատուի ողջան կենդանի էին։ Եւ էպ՟տ նոքա ընկեցին զորդին իւրեանց ՚ի ծով, այլ նա ոչ արհամարհէր զն՟ս. այլ մեծարէր և ՚ի մէջ փառաց պահէր։

Ասէ կայսրն. ով քաղցրիկ որդեակ իմ. օրհնեալ է ժամն այն որ դու ծնար յերկրի. զի լսեմ ՚ի քէն բան իմաստութեան։ Արդ՝ եօթանեքին վարժապետքն քո՝ գեղեցիկ առակօքն իւրեանց ապրեցուցին զքեզ. և այժմ

դու ասասցես մեզ գեղեցկագոյն առակ մի և զուա՛րճացուսցես զմեզ: Ասէ որդին. Հայր իմ՝ հրամայեա՛ զի լուեսցեն ամ̃քեան մինչև պատմեցից զբանս իմ: Եւ հրամայեաց կայսրն զի լուեսցեն. և իբրև լուեղեն ամենեքեան՝ սկսա՛ որդին առքայլին ասել:

* Առակ Պոլիքոնիքէտիտանոսի Արտայ որդւոյն. Ասացեալ ՚ի լուր ամ̃ հրապարակին:

Այր ՚ի քաղաքի միում յեգիպտական սահմանին զինուո՛ր մի և ունէր որդեակ մի միամօր. որպ̃ և դուն զիս ունիս. և յոյժ սիրէր զնա: Եւ ՚ի տղայութեան հասակին առաքեաց զնա առ իմաստասէր ոմն. որպէս և դուն զիս եդուր վարժապետաց իմոց. զի իմաստնասցի և դաստիարակեսցի յիմաստութ̃ե աճումն: Եւ մանուկն էր սուր միտօք. աճէր և զօրանայր օրըստօրէ



իմաս

իմաստութե՟ սրբուեանէն. և եղև
բուն իմաստասէր. եղեալ առ վար
ժապետն ամս է: Յաւուր միում
կամեցաւ հայր նր բերել զմանուկն
Գրեաց առնա թուղթ և ասէ. 'ի
հասանել քեզ նամակիս՝ եկեսցես
առիս: Եւ մանուկն հնազանդեալ
հրամանի հօրն իւրոյ՝ եկն առնա 'ի
ժամադրեալ օրն: Եւ ուրախացան
ծնողք նր 'ի գալն նր. և մանուկն
էր յոյժ գեղեցիկ տեսլեամբ և 'ի
մաստուն: Եւ յաւուր միում նս
տեալ էին հայրն և մայրն իւր 'ի սե
ղանն. և մանուկն կանգնեալ կայր
առաջի նց և ծառայէր: Եւ յան
կարծակի եկն պիւլպիւլ մի և նս
տաւ 'ի վր դատիկոնի սրահին և կար
դայր քաղցրաձայն: Եւ այնչափ
քաղցր կարդայր որ զմայլեցաւ զին
որն և ասէ. 'ի չափ ծերութե՟ հա
սայ և այսպիսի քաղցր եղանակ ոչ
եմ լուեալ: և երանի այնմիկ որ գի
տէ զբանն և զխօսս դորա:

 Նաէ

Ասէ որդին ցհայրն իւր․ որ իմ և
սիրելի հայր՝ գիտէ ծառայ քո ըղ
խօսս դորա․ բայց երկնչիմ մեկնել
առաջի քո․ զի մի՛ չար թուեսցի ա-
ռաջի ձեր ։ Ասէ հայրն․ ասա որ-
դեակ իմ զի տեսից և իմացայց․ և
վասն է՞ր բարկանալոց եմ քեզ։
Ասէ որդին․ պիւլպիւլս այս՝ վ͞ս իմ
խօսի․ և այսպէս ասէ ՚ի կարդալն
իւրում։ ո՞չ թէ լինելոց եմ ես մե
ծատուն և անուանի յոյժ․ զի ամե-
նեքեան ՚ի պատուի ունիցեն զիս։
Ո՜վ հայր իմ հարազատ՝ ջուր արկ
ցէ լուանալ զձեռս իմ․ և մայր իմ
դաստառակ առցէ ՚ի ձեռին իւրում
տացէ ձեռաց իմոց ։ ահա այս է որ
եղանակէ և կու խօսի պիւլպիւլն։
Յայնժամ սրտմտեալ մայրն իւր և
ասէ․ մի՛ հասցես յօրն այն որ ես
և հայր քո ծառայեսցուք քեզ։
Ասէ որդին․ ես զհասանելն և զչի
հասանելն ոչ գիտեմ․ այլ զխօսս
պիւլպիւլին մեկնեցի առաջի ձեր․



և

և աշխատասիրիլ եմ զոր ինձ առնելոց էք ինձ ։ Ապա էր մայր նորա այնպէս` որպէս թագուհին քո ինձ է . և կամէր սպանանել զմանուկն . և հայրն ոչ կամէր զի միամօր էր . այլ թոյլ տայր ասելով . համբերեա կին` տեսցուք վերջն ուր կու դադարի ։ Ապա կինն էր անհամբեր որպէս զթագուհին քո . ետուր բերել փայտերոյ տապան մի . և ձիւթով ամրացուցին ՚ի ներքուստ և արտաքուստ . և եդին զմանուկն ՚ի մէջն նորա սակաւ ինչ կերակրօք և ըմպելեօք . և ամրացուցին ըզ բերանն . և ետուր ընկենուլ զնա ՚ի ծովն . և ասաց` աշա թող մեծացուցանէ զ.քեզ պիւղպիւղն ։ Ապա փայտերոյ տապանն լողայր ՚ի մէջ ծովուն և հանդիպեցաւ նաւի միոյ . և նաւապետն կարծեաց թէ նաւ ընկղմեալ է . և ասաց թէ` ջրոյ կամ գինւոյ աման է ։ Ապա ուղարկեաց ըզ սանտայն զի երթեալ բերցեն ըզ փայտերոյ տապանն . և իբրև ՚ի վեր



ա-

ածին և բերին ՚ի նաւն, նաւապետն բացեալ զբերան տապանին՝ ետես զմարմինն և զարմացաւ: Եւ ասէ ցմարմինն. ով եդ զքեզ ՚ի փայտեայ տապանիս. և մարմինն պատմեաց կարգաւ զամ նաւապետին: Եւ նաւապետն դարմանեաց զմարմինն. մինչև գնացեալ հասին յեգիպտոս. զի անդ գնային: Եւ յորժամ հասին ՚ի յեգիպտոս՝ վաճառեաց նաւապետն ըզմարմինն նախարարի միոյ արքային եգիպտացւոց: Եւ նախարարն այն յոյժ սիրեաց զնա վս յաջողակ լինելոյն յամ բանս իւր:

Եւ յայնմ ժամանակին Թգրն եգիպտացւոց՝ կոչեաց զամ նախարարսն իւր և զամ մեծամեծս և իշխանս իւր՝ վս իրիք ինչ խորհրդոյ: Եւ ժողովեցան առնա ամ իշխանքն և նախարարքն ՚ի պալատն արքունի: Եւ նախարարն այն որ առեալ էր զմարմինն ՚ի նաւապետէն՝ տեսանէր որ յոյժ իմաստութբ շարժէր



հա

հագուց նմա պատմուճանս գեղե_
ցիկս. և առեալ ընդ իւր գնաց։
Եւ տեսեալ թգւրն որ ժողովեցան
առ նա ամ իշխանքն, եկն և նստաւ
յատեանն։ Յայնժամ ասէ թգւրն
ցիշխանսն իւր. սիրելի իշխանք իմ
և մեծամեծ նախարարք իմ. գիտէք
զպատճառն կոչելոյն իմ զձեզ։
Ասեն նախարարքն՝ ոչ գիտեմք. այլ
հրամայեսցէ արքայ՝ և մեք տացուք
պտսխանի։ Ասէ թգւրն. սիրելիք իմ
եթէ ուտիցեմ եթէ ըմպիցեմ, ե_
թէ նստիցիմ և եթէ կանգնիցիմ,
երեք ագռաւք սեաւք միշտ թռու_
ցեալ աղաղակեն զկնի իմ հանապազ
անդադար ձայնիւ. և ահացուցանեն
զիս ՚ի հայելն իմ զնա։ Եւ մինչդեռ
արքայն խօսէր ը̄ նախարարաց իւրոց
եկին ագռաւքն և սկսան աղաղակել.
և ասէ արքայն՝ ահա եկին։ Եթէ
դք գիտասցէ զպատճառ աղաղակի
դոցա թէ վասն էր աղաղակեն ըզ_
կնի իմ հանապզ. և եթէ հալածեսցէ

 դք

ոք զնոսա զի մի այլ երևեսցին ինձ
և ոչ լուիցէմ զձայն աղաղակի նց,
երդնում 'ի թագաւորութիւնս իմ
որ տաց նմա զդուստրն իմ 'ի կնութի
և յետ վախճանի իմոյ՝ թգւորեսցէ՛
'ի տեղի իմ: Նա ագռաւքն աղաղա
կէին և աճայուցանէին զամնեան:
Նա ոչ ոք գտաւ անդ 'ի նախարա-
րացն պատասխանի տալ արքային.
քանզի ոչ կարէին հալածել զագռաւսն
և ոչ իսկ ճանաչէին զխաւսս նց:
Յայնժամ մանուկն ասէ ցտրն իւր.
գիտէնայի եթէ արքայ կատարէր
զխոստմունսն իւր, ես թարգմանէի
զայն: Նա ասէ ցնա տէր իւր. եթէ կա
րես պատմել ստուգիւ՝ ես ծանու-
ցից արքային վս քո: Նա ասէ մանուկն
տէր՝ զանձն իմ փոխան տաց եթէ
ոչ թարգմանեցից ստուգիւ:
Նա նախարարն որ էր տր մանկանն՝
եկեալ առ արքայն՝ երկիրպագ
և ասէ. տէր իմ և հզօր արքայ՝ գի
տեմ այն մանուկ որ գիտէ թարգ-

մտանել զայդ. եթէ տացես նմա զոր
խոստացարն: Ասէ ցնա Թգ̃ւորն.
երդնում ՚ի թագաւորութիւնս իմ
որ զոմ̃ ինչ զոր խոստացայ բանիւ`
կատարեցից գործով: Եւ դեռեւս
աղաղակէին ագռաւքն: Եւ նախա
րարն լուեալ զայս յարքայէն` կա_
ցոյց զմանուկն առաջի արքային:
Եւ տեսեալ արքայն զմանուկն` ա_
սէ ցնա. ո՛վ պատանեակ` կարես պա
տասխանի տանել առ այս: Ասէ մա
նուկն. այո՛ կարող եմ տէր իմ և հ_
զօր արքայ: Ասէ արքայն. զի՞նչ ա_
ղաղակեն դոքա: Ասէ մանուկն.
թարգմանութի̃ դոցա այս է որ հե
տեւեալ են արքայիս իմոյ և աղաղա
կեն թախանձանօք: Ագռաւքդ
այդոքիկ` են արու և էգ. և երր̃դն
ձագ դոցա է: ՚Ի ժամանակի միում
եղև սով սաստիկ. որ մարդ և անա_
սունք և թռչունք մեռանէին ՚ի սո_
վու. և ձագ դոցա` նստէր ՚ի վերայ
բունոյն: յայնժամ մայր նր̃ թողեալ

զձագն իւր՝ Թուուցեալ զնոսա յե-
րեսաց սովուն · և այլ ոչ եկն առ
ձագն իւր ։ Նա՛ հայր իւր՝ սընոյց
զնա մեծաւ՛ ջանիւք · զի Թուուցեալ
յօդս՝ զոր ինչ և գտանէր կերակուր
ինքեան՝ զայն ոչ ուտէր · այլ բերէր
ձագոյն · և ինքն սովեալ մնայր ։
և այնչափ կերակրեաց զձագ իւր՝
մինչև Թռոյց զնա ։ Նա՛ յորժամ
էանց աւուրն՝ եկն մայր նորա և կամէր
բնակել և ընկերակցել ընդ նոսա ·
և այրն նորա որ էր հայր ձագոյն՝ ոչ
Թողոյր զնա ասելով · Թէ ուր՝ 'ի ժամ
սովուն իբրաց մեկնեցար 'ի մէնջ ,
այժմ ես մի՛ ուրախասցի ընդ մեզ ։
Ասէ ցնա էգն · ես ցաւօք ծնայ՝ և
կամիմ վայելել 'ի սէր նորա · զի իմ է
ուրախանալ և ընկերակցել ընդ ձա
գոյն՝ և ոչ արուին ։ Մն այն զկնի
արքայիս Թուուցեալ աղաղակեն ան
դադար · զի դատաստան արասցես 'ի
միջի նոցա · Թէ ո՛ 'ի նոցանէ ունիցի
ընկերակցութիւն ձագոյն ։ Արդ որ իմ
և

և հզօր արքայ՝ խրատատուս արա և
հատ զվճիռ նոցա · զի գիտասցեն թէ
ո՞ ՚ի նոցանէ ունիցի զձագն · և այլ
ոչ երևին քեզ ագռաւքդ։

Մինչև ցայսօր՝ ոչ աղաղակէին
ագռաւքն։

Ասէ Թգ̃րն · յորժամ մայրն եթող
զձագն իւր ՚ի ժամ սովուն և գնաց,
այժմ ևս ՚ի բաց կոչցէ ՚ի նմանէ։
Նա՛ եթէ առիցէ զնեղութին ՚ի ժամ
ծնանելոյն , այն նեղութին եղև նմա
ցնծութի յորժամ ետես զզաւակ իւր ·
այլև պատճառ ծննդեն նր̃ հայրն է ·
և յաւել որ սրնայր զնա և կերակ
րեաց ՚ի ժամ սովուն · և ինքն նուա
ղէր և կայր սովեալ։ Ա՛րդ որոյ հրա
մայեմ ձագույն լինել ընդ հօր իւր
ում · և մայրն նր̃ մի՛ ունիցի մասն ինչ
՚ի նմանէ։ Լուեալ զայս ագռաւքն՝
մեծաձայն աղաղակեցին · իբր թէ
շնորհակալ եղեն յարքայէն · և թռու
ցեալ հեռացան յերկրէն այնմանէ։
Յայնժամ ասէ Թգ̃րն ցմանուկն ·

 որ

որդեակ՝ զինչ է անուն քո։ Ասէ
մանուկն. անուն իմ աղէքսանդր կոչի
Ասէ Թգ̃աւորն. որդեակ իմ աղէք-
սանդր՝ այսուհետև մի՛ զոք անուա-
նեսցես քեզ հայր՝ բաց յինէն. զի
զդուստր իմ տաց քեզ 'ի կնութի̃ն.
և յետ վախճանի իմոյ՝ դու լիցիս
Թգ̃ր իմ̃ց երկրին եգիպտացւոց։
Այլ մանուկն աղէքսանդր՝ երկիր
եպագ արքային. և բնակեցաւ առ
արքային ժամանակ ինչ. և ամենե-
քեան սիրէին զնա։
Յետ այնորիկ մանուկն աղէքսանդր
արար հեծեալս. և արշաւեալ առ-
նէր պատերազմ և յաղթէր ամ̃ցն։
Այլ ոչ ոք իշխէր մարտնչիլ ը̃ նմա.
և կամ բաւական լինել իմաստուե̃
նորա։ և ամ̃ ոք հարցանէր խրատ
և ուսանէր 'ի նմանէ։
Այր 'ի ժամանակին յայնմիկ կայսր
ոմն որ կոչիւր անուամբ տիւրոս.
որ անցեալ էր իմաստութ̃բ և մեծութ̃բ
զամ̃ Թագաւորս երկրի. և նստէր



յա

յաղէքսանդրիայ․ և համբաւն նորա
տարածեալ էր ընդ ա՟մ տիեզերս։
Նա՛ եթէ ոք կամէր ուսանիլ մար-
դաւարութի՟ն․ և տեսանել մեծագործ-
գեղեցկութի՟ն ոսկւոյ և արծաթոյ և
ականց պատուականաց՝ գային առ
նա և ուսանէին մարդաւարութի՟ւն։
քանզի ա՟մ ինչ գտանէր առ նա։
Աղէքսանդր լուեալ զկայսրն տիւ-
րոս՝ եկն առ արքայն և ասէ․ հայր՝
ա՟մ աշխարհ գովէ զտիւրոս կայսրն․
զկարգ և զսահմանն ն՟ր․ զի ցանկալի
ասեն լինել զսահմանն ՚ի պալատ ն՟ր։
Արդ աղաչեմ զքեզ՝ եթէ հաճոյ
թուեսցի յաչս քո՝ առաքեա զիս
առնա․ թերևս կարասցից ուսանիլ
իմաստութի՟ն ինչ և ՚ի նմանէ։
Ասէ ցնա թա՟ւրն․ և ինձ հաճոյ է այդ-
մա ընդ քեզ բազմական ոսկի և ար
ծաթ և գնա․ վ՟ն զի այդ լեցի ինձ
անուն, և քեզ շահ։ Բայց պատ-
շաճաւոր համարիմ զի նախ առցես
զդուստր իմ և ապա գնասցես։

 Ասէ

Ասէ աղէքսանդր · տէր իմ արքայ և հայր սիրելի՝ հանդերձեալ սակաւ մի ժամանակ · և յորժամ դարձայց՝ յայնժամ մեծաւ պատուով առից զդուստրն քո 'ի կնութիւն ինձ։

Ասէ Թագաւորն · ոչ հաճոյ է քեզ՝ այնպէս արա որդեակ իմ։

Յայնժամ արքայն գրեաց հրովարտակ և ետ 'ի ձեռն աղէքսանդրի։

Ապա աղէքսանդր երկրպագեալ որ քայլին՝ և առեալ ընդ իւր զանձս բազումս՝ և ծառայս ազնիւս և քաջամարտիկս՝ և եկեալ յաղէքսանդրիա՝ գնաց 'ի դուռն արքունի։ և դռնապանն եմոյծ զնա 'ի ներքս։

Ապա նա մտեալ՝ երկիր եպագ կայսերն · և ողջունեաց զնա մեծաւ պատուով · և ետ զհրովարտակն 'ի կայսրն

Ապա կայսրն հարցեալ զաղէքսանդր և ասէ · որդեակ՝ յորմէ՛ երկրէ ես դու · և զի՞նչ է բան քո ասա առ իս։

Պատասխանի ետ աղէքսանդր և ասէ · տէր իմ արքայ՝ որդի եմ արքային

 եգիպ

եգիպտացւոց. և ժառանգ աթոռոյ
նորա. և եկեալ եմ՝ ծառայել քեզ՝
եթէ գտի շնորհս առաջի մեծութե̃ քո
Քանզի ընդ ա̃մ աշխարհ հռչակի
համբաւ մեծութե̃դ. և շնորհք գի-
տութե̃ քոյին. և ես կամիմ ծ̃ռայել
՚ի պալատի քում:

Եւ կայսրն ընթերցեալ զհրովար-
տակն. և խնդրեալ զկամս նորա՝
ասէ ցնա. որդեակ իմ, զի՞նչ անուն
է քո: Եւ նա ասէ ցնա. աղէքսանդր
կոչի անուն իմ: Ասէ կայսրն. որ-
դեակ իմ աղէքսանդր՝ տացէ քեզ
ա̃ծ ունել զբարիս. և զայս ծ̃ռայու-
թիս կու պատրաստեմ քեզ. զի ա̃մ
ամէնուր դու պատրաստես զճաշ իմ:
Պ̃ատասխանի ետ աղէքսանդր և ասէ.
տ̃էր՝ պատրաստ եմ կատարել զկամս քո
Եւ նոյնժամայն սենեկապետն ար-
քային՝ եցոյց նորա դարպաս մի. զի
ա̃նդ լինիցի հանդերձ ծառայիւքն
իւրովք: Եւ աղէքսանդր՝ զա̃մ ինչ
իմաստութ̃բ առնէր առաջի կայսերն.
և ա̃մենքն սիրէին զնա:

Յետ այնորիկ ոչ յետ բազում աւուրց՝ եկն որդի արքային Խորայէլացոց. որում անունն էր Լութֆիբիկ: Որ և նա ևս եկեալ էր զի ծառայեսցէ կայսերն. և ուսանիցի կարգ և սահման: Որ և զնա ընկալաւ մեծաւ պատուով կայսրն. հարցեալ զանուն նր̄ և զտոհմ և զերկիր նր̄: Եւ նա պատասխանի տուեալ ասէ. անուն իմ կոչի Լութֆիբիկ. որդի ծառային ձերոյ՝ արքային Խորայէլացոց: Ասէ ցնա կայսրն. կարգեալ եմ զԱղէքսանդր զի բերցէ ճաշ առաջի իմ. արդ կամիմ և զքեզ զի դու առցես բաժակ 'ի ձեռին քում և տացես ինձ գինի 'ի սեղան իմ: Ասէ Լութֆիբիկն. Տ̄ր՝ պատրաստ եմ կատարել զկամս քո: Եւ նոյնժամայն սենեկապետն եցոյց նմա բնակութի̄ 'ի նոյն դարպասի յորում բնակեալ էր Աղէքսանդր: Եւ նոքա երկոքեանն՝ Լութֆիբիկն և Աղէքսանդրն՝ յոյժ նմանք էին միմեանց. դիմօք և շարժմամբ 'ի բանս



և

և՚ի խօսս ամ խրոց · մինչ զի ո՛չ ոք
կարէր ճանաչել զնոսա թէ ո՛րն է
լուսթվիլին կամ աղէքսանդրն։
Այլ սոքա երկոքեանն՝ յոյժ սիրե_
ցին զմիմեանս։ Այլ էր աղէքսանդր
յոյժ զօրեղ և փայթ · բայց լուսթ_
վիլին՝ էր կամկար և անուժ։ այսուիկ
միայն ոչ էին նման միմեանց։
Այլ կայսրն ունէր միայն դուստր
միամօր · որ կոչիւր անունն Ֆլօ_
րէնցիա · որև նա էր ժառանգ կայ_
սերն · և հայրն նր՝ յոյժ սիրէր զնա։
Այլ աղջիկն էր պարկեշտ և գեղե
ցիկ յոյժ · և էր առանձնակի ՚ի դար
պասի մի՝ համդերձ ծառայիւք և ա_
ղախնօք իւրովք։ Այլ յամ ա՛ւուր
՚ի մեծամեծ այն դայր ախորժակ թա
գաւորական · և՚ինոցանէ բաժանէր
կայսրն մասն ինչ՝ և ուղարկէր դըս
տերն իւրոյ ձեռամբն աղէքսանդրի։
Այլ դուստր կայսերն՝ յոյժ սիրէր
զաղէքսանդրն · ո՛չ թէ վս ծառուն ,
այլ վս իմաստութն · զի իմաստութբ


և

և շնորհօք առնէր զամենայն բան։
Եւ յաւուր միում գործ մի մեծ
ինչ էր աղէքսանդրի․ և՛ի ժամ
ճաշոյն ո՛չ գտաւ անդ․ և լութփիկն
ծառայէր փոխանակ նորա։ Եւ յորժամ
կերաւ կայսրն զյետի ախորժակ կե-
րակուրն , ասէ ցլութփիկն կարծե-
լով թէ աղէքսանդրն է․ ո՛րդեակ՝
տարցես զայս յինէն դստերն իմոյ։
Եւ լութփիկն՝ դեռևս չէր տե-
սեալ զդստերն կայսեր․ և իբրև ե-
մուտ ՛ի դարպասն՝ երկիրպագ նմա
և ողջունեաց զնա․ և ետ նմա զկե-
րակուրն և ասէ․ հայր քո առաքեաց
զայս քեզ։ Եւ իբրև ետես զնա
դստերն կայսեր , իսկոյն ճանաչեաց
զնա զի ո՛չ էր աղէքսանդրն։ Ասէ
փլօրէնցեայն․ սիրելի իմ զի՞նչ է ա-
նուն քո․ և ո՞ւմ որդի իցես դու։
Ասէ լութփիկն․ անուն իմ կոչի
լութփիկ․ և որդի եմ թագաւորին
խարայէլացւոց․ և ծառայ կայսերն։
Ասէ ցնա աղջիկն․ ո՛չ լէր ՛ի տէր

և երթ 'ի խաղաղութի· և շնորհակալ
լեր հօրն իմոյ յինէն: Սա̂ լութֆիկն
երկիրպագեալ նմա և ելեալ գնաց:
Սա̂ յորժամ լութֆիկն առնմա էր՝
ո՛չ գիտէր առ կայսրն որ տայր նմա
զբաժակն · և եկեալ աղէքսանդրն
ետես զի ո՛չ գիտէր անդ՝ ծառայեաց
նմա փոխանակ լութֆիկին · ոպ նա
փոխան նորա արար:

Յետ այնորիկ՝ անկաւ լութֆիկն
'ի մահիճս հիւանդութեան մեծ:

Լուեալ աղէքսանդրի՝ եմուտ առ
նա և ասէ · ով սիրելի իմ լութֆիկ
զինչ է այդ որ կաս 'ի մահիճս:

Ասէ լութֆիկն · հիւանդութի մեծ
անկաւ իվր իմ · կարծեմ թէ մեռա
նելոց եմ 'ի հիւանդութենէս:

Ասէ աղէքսանդրն · ճշմարտիւ գի
տեմ ես զպատճառ հիւանդութէ քո ·
զի յերէկեան օրն փոխանակ իմ տա
րեր կերակուր դստերն կայսեր · և
տեսեր զնա և հայեցար 'ի գեղ դի
մաց նր · և 'ի նմանէ խոցեցա սիրտ քո


այդ

այդ է պատճառ հիւանդութեան քո։
Ասէ ցնա Լութփին · Եղբայր ա-
ղէքսանդր՝ եթէ բժիշկք համօրէն
աշխարհի 'ի մի վայր ժողովէին, ո՛չ
կարէին ճանաչել զցաւս իմ որպէս
դու ճանաչեցեր · և այս ո՛չ միայն
հիւանդութեան, այլև մահու ես լինի
ինձ պատճառ։ Ասէ աղէքսանդր ·
Եղբայր իմ Լութփիկ՝ լե՛ր դու հաս
տատ · և ես օգնեցից քեզ 'ի բանդ ·
մի՛ երկնչիր եղբայր իմ, զի զանձն իմ
դնեմ իվ̃ քո և կատարեմ զբանս քո ·
զի մի՛ 'ի զուր մեռանիցիս։
Իսկ երեալ 'ի նմանէ՝ գնաց 'ի շու-
կայն · և գնեաց իւր արծաթովն
դաստառակ մի մետաքսեայ ոսկեթել
և լի՛ ակամբք պատուականօք · առանց
գիտութեան Լութփիկին։ Իսկ տարեալ
առ աղջիկն և ասէ · ո՛վ սիրելի եւ
քոյր իմ Փլօրէնցիա՝ Լութփիկն ա-
ռաքեաց զդաստառակս զայս քեզ
պարգև, Իսկ աղջիկն տեսեալ զայն
և ասէ · ո՛վ աղէքսանդր՝ մեր կարաց



գտա

գտանել լուծութիւնն զայսպիսի գե-
ղեցիկ իրքս ։ Եւ վ̃ն էր առաքեաց
զայս ինձ · զի ո՛չ երբէք ետես նա զիս
բայց մի անգամ։ Ասէ աղէքսանդր·
որդի է Թագաւորին իսրայէլացոց ·
եւ զա̃մ ինչ ունի ընդ իւր բաւական
Ապա եթէ հարցանես Թէ վասն էր
առաքեաց քեզ զպարգեւս զայս ձե-
ռամբ իմով, այնպէս գիտասցես՝ զի
վ̃ն սիրոյ քո հիւանդացեալ է մերձ
՚ի մահ · եւ եթէ հասանի նմա մահ ,
դու մահապարտ լինիս ։ վասն որոյ
ասեմ քեզ զի փոքր ինչ մխիԹարես-
ցես զնա։ Ասէ աղջիկն · ո՛վ աղէք-
սանդր՝ խրատով քո կամիս զի ապա-
կանել տացես զկուսութիւն իմ · քաւ լի-
ցի ինձ առնել զայդ · եւ ո՛չ կամիմ
ես շահել զայդպիսի գործդ։ ՚ի բա՛ց
գնա յինէն · եւ այլ մի՛ եւս յիշեսցես
առաջի իմ այդպիսի բան։

Ապա աղէքսանդր երկրպագեաց նմա
եւ ել ՚ի շուկայն կրկին անգամ ·
եւ գնեաց իւր արծաԹով աւելի



գնոջ

գնոջ մարգարտով ընդելուզեալ և
ոսկեմբ պատուականօք յօրինեալ
մէկ լաւ իր մի՝ առանց գիտութեան
լութեքիկին. և տարեալ յերկրոր-
դուամ օրն՝ յորժամ տարաւ 'ի հօրէ
իւրմէ զախորժակ կերակուրն՝ եդ
զնա առաջի աղջկանն. և ասաց թէ՝
լութփիկն առաքեաց քեզ զողջոյնս
զայս: Նոյն աղջիկն տեսեալ զմեծա-
գին պարգևան՝ սկսաւ ասել ցաղէք
սանդր. զարմանամ ես քեզ զի դու
միշտ և հանապազ տեսանես զիս՝
և վ̅ս̅ քո երբէք ինչ ոչ ասացեր:
Ասէ ցնա աղէքսանդր. այդպիսի
իրք ոչ պատահեաց ինձ որ̅պ̅ նմա.
և ինձ պարտ է սիրել զընկերն իմ
իբրև զանձն իմ: արդ աղաչեմ ըզ
քեզ՝ վ̅ս̅ ա̅յ մի՛ տար նմա մեռանիլ
և կորիլ վասն քո 'ի զուր. սակաւ մի
մխիթարեա զնա: Ասէ աղջիկն.
'ի բաց գնա յինէն՝ զի այժմ ոչ տամ
քեզ պատասխանի:
Նոյն էլ աղէքսանդր յերեսաց նր̅
և

գնաց ՚ի շուկայն. և գնեաց մեյ մե
ծագին պարգև մի. և յերրորդում
աւուրն յորժամ տարաւ ՚ի հօրէն
խուրմէ զախորժակ կերակուրն, խո
նարհեալ երկիրպագ նմա. և ե
դեալ առաջի նորա զմեծագին պար
գևսն՝ անկաւ յոտս նր և ասաց.
ով սիրելի իմ Փլօրէնցիա՝ պարգևս
զայս լութփիկն առաքեց առ քեզ
այրեցած սրտով. Նա աղջիկն ծի
ծաղեցաւ և ասէ. կու զարմանամ
ով աղէքսանդր սիրելի իմ որ այս
չափ կու ջանաս վն նր: Նա երդ
ուաւ աղէքսանդրն և ասաց. ծնեօն
ածն է կենդանի՝ եթէ ոչ մխիթարես
զնա, ՚ի սիրոյ քո նա իզուր կու մե
ռանի. և դու մահապարտ կու լի
նիս: զի կարի՛ յոյժ վիրաւորեալ է
՚ի քո սիրոյն. խեղճ և ողորմելի ան
կեալ կայ ՚ի մահիճս. և հայր քո օր
ըստօրէ հարցանէ զիս թէ ով կայ
լութփիկն: Նաև աղջիկն. եթէ
այդպէս իցէ՝ վն սրտի քո երթ ա



ռե

աւետիս տուր լութփիկին. զի երբ
կամիցի՝ գայցէ մտցէ և ելցէ. և ոչ
ոք խօսիցի նմա. զի բացեալ լիցին
դրունք առ նա։

Եւ աղէքսանդրոն յորժամ լուաւ
զխօսս 'ի փլօրէնցիայէն՝ ուրախա
ցաւ յոյժ. և խոնարհեալ երկիր ե
պագ նմա. և ելեալ գնաց առ լութ
փիկին և ասէ. ե՛ղբայր իմ լութփիկ
աւետիս քեզ և ուրախ լեր. զի հաս
տատեցի զսէր քո ընդ աղջկանն. և
յորժամ կամիցիս՝ երթիջիր առ նա.
և գտցես զնա պատրաստ. և ես ծա
ռայիւքս իմովք պահապան լինիմ
քեզ։ Յորժամ լուաւ լութփիկին
զխօսս 'ի յաղէքսանդրէն՝ զարթեաւ
ող 'ի քնոյ և ողջացաւ։ Եւ 'ի միւս
գիշերին՝ եմուտ առ աղջիկն և նն
ջեաց ընդ նմա։ Եւ ընդ այնմ օրէ
կապակցեցաւ հոգի լութփիկին՝
ընդ հոգւոյ աղէքսանդրի. և սի
րէին զմիմեանս յոյժ։ Եւ լութփիկին
յամ ժամ երթայր առ աղջիկն.

մինչև թ՟մ բանն յայտնի եղև ՚ի պա
լատին։ Եւ զինուորքն բապաւաղի
նեալք՝ պահէին զճանապարհ նր՟. զի
՚ի գիշերի սպանցեն զնա։ Եւ լուեալ
աղեքսանդր՝ եւ ՚ի միւս կողմանէ
հանդերձ ծառայիւքն իւրովք. ե
դեալ զանձն իւր ընկերին. և պա
տրաստ էր ՚ի մեռանիլ վ՟ս նորա։ Եւ
Թշնամիքն լութքիկին յորժամ տե
սին զաղեքսանդր հանդերձ ծառա
յիւքն իւրովք զինուք և սուսերօք,
ոչ կարէին մերձենալ առ լութքիկն
Եւ լութքիկն աներկիւղ մտանէր
և ելանէր։ Եւ աղեքսանդր թ՟մ
իրօք ա՟մի՟ նման էր լութքիկին.
որ ոչ ոք կարէր ճանաչել զնոսա՝
բաց յաղջկանէն։

* Հայրն Աղէքսանդրի Սառակէ Բուզբ
աշնա. զի փութով ծամանեցի
այ քնին։

Յետ այնորիկ եհաս նամակ ա
ղեքսանդրի զի փութով հասցէ

անդ վ͞ս մահուան հօրն իւրոյ․ զի
Թագաւորեսցէ 'ի տեղի ն͞ր։ Այլ ա-
ղէքսանդր լուեալ զայս՝ պատմեաց
զիւր գնալն լուԹեփիկլին և աղջը-
կանն ։ Այլ իբրև իմացան զգնալն
աղէքսանդրի առ հայրն իւր՝ կարի
յոյժ տրտմեցան ։ Այլ աղէքսանդր
եմուտ առ կայսրն և ասէ ․ տէ՛ր ար-
քայ՝ ԹուղԹ եկեալ է ինձ վ͞ս մահ-
ուան հօր իմոյ․ վ͞ս որոյ աղաչեմ ըզ-
քեզ հրաման տուր ինձ երԹալ յեր-
կիրն իմ և յաԹոռն հօր իմոյ․ զի ա-
ռանց հրամանի քո ոչ կարեմ եր-
Թալ․ Թէև կորուսից զժառանգու-
Թիւն իմ․ և ետ զԹուղԹն 'ի կայսրն։
Այլ կայսրն առեալ զԹուղԹն՝ ըն-
Թերցաւ և ասէ ցաղէքսանդր ․
ոչ է ինձ հաճոյ գնալն քո ․ զի չու-
նիմ ոք իմաստուն առ իս իբրև զքեզ։
Այլ եԹէ ոչ Թողուցում զքեզ գը-
նալ, Թուի Թէ քեզ դժուարանք
լինիցի։ Վ͞ս որոյ տամ քեզ հրաման
երԹիջիր խաղաղուԹ͞բ․ և տ͞ր եղիցի

 ընդ-

ընդ քեզ։ Ո՜վ կոչեցեալ կայսրն ըզ
սենեկպետն եւ ասէ · աղեքսանդր
որչափ գանձի պէտս ունիցի՝ տացես
նմա։ Ո՜վ առեալ ընդ իւր բաւա֊
կան ոսկի · եւ գոհացեալ զարքայէ՝
երկիր եպագ նորմա։ եւ ողջունեալ
զամենեսեան որք էին 'ի պալատի անդ։
Ո՜վ բազումք 'ի նոցանէ լային եւ՜
ողբային զգնալն նր · զի ամենեքեան
սիրէին զնա։ Ո՜վ լութֆիկն եւ փլօ
րէնցիային ամ ծառայիւք եւ աղախ֊
նեօքն իւրեանց՝ գնացին ընդ նմա
մղոնս է · եւ կամէին այլ եւս երթալ։
եւ ո՛չ եթող զնոսա աղեքսանդր։
Յայնժամ երկոքեանն նոքա լութ֊
ֆիկն եւ աղեքսանդրն՝ անկան զպա
րանոցէ միմեանց եւ լային։ Ասէ փր
լօրէնցիային · ո՛վ սիրելի իմ լութֆիկ
լո՛յց որչափ եւ կարես ։ Քանզի մեծ
բարեկամն մեր՝ հեռանայ այսօր 'ի
մէնջ։ Ո՜վ եթէ չէր եղեալ նա,
ո՛չ երբէք վայելէիր դու զսէրն իմ։
Քանզի իւրեան արծաթովն գնեց


ու

ոսկով և մարգարտով նկարեալ ե-
րեք մեծամեծ պարգևան և ես ինձ
ոչ թէ դու ուղարկեալ ես ։ զայս
արար առանց գիտութեան քո ։ Արդ հա
նապազ սպասաւորեալ պահէր ըզ
քեզ 'ի թշնամեաց քոց · և արդ ահա
այժմ հեռանայ 'ի մեզանէ ։ Արդ զայս
ասացեալ՝ նորս անկան յերկիր և
լային դառնապէս ։ Յարոյց զնոսա ու-
ղէքսանդր 'ի գետնոյն և ասէ · սիրե-
լեք իմ մի' ողբայք զգնալն իմ ի ձէնջ ։
քանզի երթամ և ողորմութիւն այ
թագաւորեցից անդ · սակայն զձեզ
ոչ մոռանամ թղթով և գրով ։

Բայց ունիմ ինչ ասել քեզ եղ
բայր իմ լուիթփիկ · զի աւելի քան
զչորս ամ է՝ որ որդի աղքոյին սպա
նիացւոց կամի ծառայել կայսեր ·
և է անուն նորա սիդոն ։ Արդ՝ եթէ
լուիցէ զգնալն իմ աստի, իսկոյն ե-
կեսցէ նա աստ ։ Արդ ծառայելոց է
կայսեր · և դու զգոյշ լեր մի' ինչ
ունիցես առաջի նորա վասն դատերն


կոյ

կայսեր. զի թէ լուիցէ և իմասցի
զապականելն քո զկուսութին նր, վաղ
վաղակի տասցէ առաջի կայսերն.
և դու չարաչար մահուամբ մեռա-
նիցիս։ Ասէ լուսթքիկն. ով եղբայր
աղեքսանդր՝ կեա հոգւոյ իմոյ. լուա
երև որ զգուշացուցեր զիս մյդրկ
բայց յառաջ քան զբաժանելն քո 'ի
մէնջ՝ խնդրեմ 'ի քէն բան ինչ։
Ասէ աղեքսանդր. խնդրեա՛ զինչ և
կամիս։ Ասէ լուսթքիկն. ունիմ ա-
ւիս պատուական մատանի մի որ տր
ւեալ է ինձ մայրն իմ. աղաչեմ ըզ
քեզ զի զնա դնիցես 'ի մատնքո. և
հանպզ ընդ քեզ ունիցիս. և որքան
տեսանես զնա 'ի մատն քո՝ միշտ յի-
շես զիս։ Ասէ աղեքսանդր. բարի է
եղբայր իմ լուսթքիկ. առից զմա-
տանին քո յիշատակ անուան քո.
բայց դու զաստայեալս իմ 'ի միտ
պահեա. և ես արդ երթայց՝
յանձն առնելով զձեզ այ։

 Պանուշն

* Գնալն աղեքսանդրի յերկիրն իւր 'ի բաբելոն. և գալն սիդոնի՝ որդոյ սպանիացւոց արքային:

Եւ գնաց աղեքսանդր զճանապարհ իւր. և աղջիկն և լութփիկն դարձան 'ի պալատն իւրեանց: Յետ այնորիկ լուաւ սիդոն որդի արքային սպանիացւոց՝ եթէ գնաց աղեքսանդր յերկիրն իւր, եկն առ կայսրն և խնդրէր ծառայել նմա: Ասէ ցնա կայսրն. յառաջ քան զքեզ էր առ իս մանուկ մի՝ որում անուն էր աղեքսանդր: արդ նա թագաւոր է եգիպտացւոց. և յոյժ ծառայեաց ինձ իմաստութբ. և զկերակուրն իմ նա պատրաստէր ինձ, արդ այժմ զտեղի նր՝ քեզ տամ:

Եւ սիդոն շնորհակալ եղև կայսերն

Եւ սենեկապետն՝ եցոյց նմա ըզ դարպասն յորում բնակէր աղեքսանդր. զի ընդ լութփիկին բնակեցին ի միասին: Եւ լութփիկն ջանայր հեռանալ 'ի նմանէ. պատճա



ռե

ւելով զպատճառս բազումս․ ամ-
կայն ոչ եղև հնար․ և ակամայ կա-
մօք յանձն էառ զհրաման սենեկա-
պետին։ Տեսեալ սիրողն թէ ոչ կա-
մի Լութփիկն զնա առ իւր , ատե-
լութիւն կալաւ ընդ նմա։ Այս Լութ-
փիկն տեսանէր զնա զի զչարէր ընդ
նմա․ և բազում ժամանակս ոչ եր-
թայր առ աղջիկն․ և յետոյ դարձեալ
զնայր՝ որպէս յառաջագոյն առնէր։
Զոր տեսեալ սիրողն՝ ուրախ եղև
յոյժ․ և լրտեսէր հանապազ։ մինչ զի՝
ըստուգիւ տեղեկացաւ որ ապակա-
նեալ էր Լութփիկն զկուսութիւն
աղջկանն․ և պատճառ ապականութե-
անն՝ էր աղէքսանդր։
Յաւուր միում գովեաց կայսրն
զբարութիւն և զյաջողակութիւն աղէք-
սանդրի։ Ասէ ցնա սիրողն․ տէր՝
մի՛ այդպէս գովաբաներ զաղէքսանդր
վասն զի նա էր դաւաճան քո։ Ասէ
կայսրն․ ընդէ՞ր։ Ասէ սիրողն․ դուստր մի
ունէիր միամօր՝ որ ժառանգ լինե-

լոց է քեզ․ Լութֆիկն՝ գիտուք ա-
ղէքսանդրի՝ ապականեալ է զկու-
սութի նր̄․ և յորժամ կամի՝ մտանէ
և ելանէ։ Այո՛ յորժամ լուա՛ զայս
կայսրն ՚ի Սիրդոնէ՝ տրտմեցա՛ւ յոյժ։
Այո՛ մինչ դեռ զայս խօսէր Սիրդոն
ընդ կայսերն, եմուտ Լութֆիկն ՚ի
պալատն։ Այո՛ իբրև եմուտ՝ ետես
զնա կայսրն․ կոչեաց զնա առ ինքն
և ասէ․ զինչ է այս որ լսեմ զքէն։
եթէ Ճշմարիտ իցէ բանդ, չարաչար
մահուամբ կորուսից զքեզ ։
Ասէ ցնա Լութֆիկն․ տէր արքայ
ասա ինձ թէ ինչ բանն է․ քանզի՝
ոչ գիտեմ ես ինչ։ Ասէ ցնա Սի-
րդոն․ ես մատնեցի զքեզ առաջի տ̄ն
իմոյ արքայի․ քանզի դու ապականե-
ցեր զնամօս դստեր նր̄․ և արդ ես
ննջես ՚ի նմա։ և ՚ի նշան այդմիկ՝ յա-
ւուր միում մարտնչեցայց ՚ի քեզ։
Ասէ Լութֆիկն․ և ես պատրաստ եմ
յաւուրն յայնմիկ մարտնչել ՚ի քեզ․
և զչար քո՝ հանից ՚ի գլուխդ քո։



Այո՛

Ապա դարձեալ ասէ լութֆիկն ցը
կայսրն. տէր իմ, թէ մ̅ա էր չարա
խօսեաց զիս սիդոն առաջի տ̅ն իմոյ՝
ծանուցից արքայիս իմոյ։ Ապա ասէ
կայսրն. ո՞րպ̅։ Ասէ լութֆիկն.
յորժամ որ եկն սիդոն ծառայել
քեզ, սեննեկապետն եցոյց նմա ըզ
բնակութ̅ն աղէքսանդրի. և ես ո՛չ
կամեցայ բնակիլ ի միասին. զի լու-
եալ էի յառաջագոյն զչարութ̅ն դ̅ր.
և սեննեկապետն ակամայ կամօք բը
նակեցոյց ընդ իս։ մ̅ա այն ահա չա
րախօսեաց զիս առաջի տ̅ն իմոյ։
Ասէ կայսրն. երբ այդ այդպէս իցէ
նշանակեմ ձեզ օր մարտի այս նիշ
օր. և տեսանեմ թէ ՚ի ձէնջ ո՛րն է
ճշմարիտ։ Ապա յանձն էառ լութ-
ֆիկն։ Ապա իբրև այսպ̅ եղև այս,
եմուտ լութֆիկն առ աղջիկն և
ասէ. այժմ եղէ որդի մահու. ոպ̅
ատաց ինձ աղէքսանդր՝ նոյնպ̅ եղև։
Քանզի սիդոն մատնեաց զիս առա
ջի հօր քո՝ թէ ապկ̅նեալ եմ զ.քեզ։


և

և հայր քո բարկացաւ ինձ յոյժ։
Նաև սիդոն վ՟ս փորձելոյ զարդա
րութ՟ե ճշմարտութ՟են՝ նշանակեաց օր
մարտնչելոյ ընդ իս · և ես ոչ կարեմ
կալ ընդդէմ նո՟ր՝ քանզի տկար եմ·
և վ՟ս տկարութ՟ե իմոյ մեռանիմ։
Ասէ ցնա աղջիկն · եթէ այդ՟պ իցէ
և ոչ է հնար զերծանիլ, արա ըստ
խրատու իմոյ և եղիցի քեզ բարի։
Փութա և գնա առ կայսրն և ասա
ցնա · թէ թուղթ ուղարկեալ է ինձ
հայրն իմ · քանզի հիւանդացեալ է ·
և գրեալ է թէ փութով հասցես ինձ
մինչ դեռ կենդանի եմ։ և խնդրեա
հրաման՝ զի տացէ քեզ երթալ առ
հայրն քո · և զօր մարտին՝ յերկարես
ցես յերթալդ և գալդ։ Ապա յոր
ժամ կայսրն տացէ քեզ հրաման եր
թալ, երթիջիր վաղվաղակի առ ա
ղեքսանդր արքայ Ծիծ·ծուկ՝ զի մի՛ ոք
գիտասցէ։ Ապա աղաչեմ զնա վ՟ս ա՟յ
և վ՟ս սիրոյ մերոյ՝ զի օգնեսցէ քեզ
միաբանգամ · և եկեալ աստ՝ պատե

բազմեացն փոխանակ քո ։ զի դուք
նմանէք մեռելոց · և ոչ ոք է որ կա
րիցէ ճանաչել զձեզ և բաժանել 'ի
մեռելոց՝ բաց յինէն ։ Եւ է արտասուս
զայս՝ ապրեցիս 'ի մահուանէ · և
զպատիւ քո և զիմ յաւելցես ։

Մաշէ ցնա լուսթքիկն · լաւ խորատ
ասացեր · բայց երկնչիմ գուցէ թէ
ոչ թողցէ աղէքսանդր զթագաւորութիւն
իւր և գայցէ աստ ։ Մաշէ աղջիկն ·
ոչ երբէք դարձոյց նա զերեսս իւր
'ի մէնջ · վ̃ն որոյ յուսամ յա̃ծ՝ զի և
այժմ ևս ոչ դարձուցանէ զերեսս
իւր վ̃ն կենդանութե̃ քո ։

Յայնժամ լուսթքիկն սահմանեաց
թուղթ մի · և ետուր 'ի հաւատա
րիմ մի 'ի ծառայից իւրոց և ասաց ·
բե՛ր այս ինչ որ զթուղթս զայս՝ յոր
ժամ ես սպասաւորեմ կայսերն 'ի
սեղանն · և տուր առաջի նորա ըզ
կնքեալ թուղթս ինձ՝ և կամ սենե
կապետին ։ Նա արար ծառայն ըստ
հրամանի տեառն իւրոյ · և եբեր



ըզ

զթուղթն և ետ սենեկապետին: Եւ սենեկապետն բացեալ զթուղթն կարդաց և տեղեկացաւ. և ծանոյց Լութֆիկին: Լութֆիկն և սենեկապետն ծանուցին արքային թէ հայրն հիւանդացեալ է. և փութով խնդրեալ է զորդին զի տեսանիցէ: Եւ արդ խնդրէ յարքայէս հրաման զի երթեալ տեսանիցէ զհայրն և դարձեալ գայցէ: Ասէ կայսրն՝ երթիջիր. բայց 'ի ժամադրել աւուրն եկեսցես: Ասէ Լութֆիկն. աղաչեմ զմեծութիւնդ քո տէր՝ զի յայլում աւուր տեսցես զմարտնչելն մեր ընդ միմեանս. զի կարացից ժամանել: Եւ կայսրն երկարեաց զօր մարտին և ասէ. Նայեաց յանձն քո՝ զի եկեալ հասցես 'ի ժամադրեալ օրն: Եւ եթէ ոչ եկեսցես՝ յարուցից իմ քո պատերազմ. և քայքայեալ աւերեցից զերկիրն ձեր. և զքեզ չարաչար մահ սպանանել: Ասէ Լութֆիկն. անպատճառ եկից 'ի ժամա-

 դրեալ

դրեալ օրն · Թէև կորուսից զժառանգութիւն իմ · և երկիրեպագ արքային և ել։ Եւ վաղվաղակի հեծեալ՚ի ձի՝ գնացյեգիպտոս · և ազդ արար զգալն իւր աղէքսանդրի · և ինքն կեցեալ՚ի Թաքստի ։ Եւ արքայն աղէքսանդր լուեալ զգալուստ նորա՝ ուրախ եղև յոյժ · և ել ընդ առաջ նորա։ և իբրև ետես զնա , համբուրեաց և ասէ · բարի եկիր սիրելի եղբայր իմ։ և առեալ եբեր ՚ի պալատն իւր և արար ընդունելութիւն մեծ։ և հարցեալ վասն Փլօրէնցիային

Թէ ո՞րպէս կեայ · և վասն որդւոյն։

Ասէ լութֆիկն · տէր իմ և ընկերակից · այժմ մահ իմ և կեանքն իմ ՚ի ձեռս քո է։ զի ո՛չ տասցեր վասն սիդոնի՝ նոյնպէս եղև · քանզի մատնեաց զիս առաջի կայսերն՝ Թէ ապականեալ եմ զդուստրն նորա։ Եւ կայսրն կարգեաց մեզ օր մարտընչել ընդ միմեանս · զի փորձեսցի և յայտնեսցի ճշմարիտն ։ արդ նա զօրեղ է



քան

քան զիս՝ և ես տկար. ոչ կարեմ պա
տերազմիլ ընդ նմա: Նա՛ լուեալ
զբանս Փլորենցիոյն՝ զայս խրատս
ետ ինձ. զի եկից առ քեզ խնդրել
զքո օգնութն. զի դու բազում ան
գամ օգնեցեր ինձ. և այժմ դար
ձեալ ՚ի քէն եղիցի ինձ օգնութիւն
միայն՝ որ ոչ մեռանիմ ՚ի զուր:
Ասէ աղէքսանդր. գիտէ՞ և այլ ոք
զգալուստ քո առ իս. թէ միայն Փլ
որէնցիոյն: Ասէ լութփինկն. ոչոք
գիտէ զգալն իմ առ քեզ՝ բաց ՚ի Փլ
որէնցիոյէն: Քանզի հրաման ա
ռի ՚ի կայսերէն՝ եթէ երթայց տե
սից զհայրն իմ զի հիւանդացեալ է.
և շուտ ասի եկից առ քեզ: Զի
Փլորէնցիոյն ասաց թէ դուք նման
էք միմեանց. և ոչ ոք ճանաչէ ըզ
ձեզ բաց յինէն: Երբև զայս ասաց՝
անկաւ՛ առ ոտս նր և սկսաւ՛ լալ:
Նա՛ արքայն աղէքսանդր՝ յարոյց
զնա և ասէ. ով սիրելի իմ տա՛ս ինձ
յորում աւուր եդեալ է ձեզ ժամ

մար

մարտնչելոյ ։ Ասէ լութֆիկին · այս
նիշ օր մարտնչելոց եմք ։ Ասէ ա_
ղէքսանդր · այժմ կայսրն համարէ
զօրն · և եթէ ես յամփյեմ զգլիշերս
զայս՝ անհնար է ինձ ժամանել ՚ի ժա_
մադրեալ օրն ։ Նա՛ ես ՚ի վաղիւն
առնլոց եմ զդուստր թագաւորին
՚ի կնութի · զի ՚ի ձեռն նր թագաւո_
րելոց եմ աստ · և ամ նախարարք նր
եկեալ են ՚ի հարսանիս ։ Նա՛ եթէ
վասն հարսանեացս յամեցից աստ ,
կորիցես դու ՚ի յալխտեսան ։ Բայց
լա՛ է ինձ թողուլ զթդրութիս իմ
և զկինն իմ · և զքեզ ոչ ։ Նա՛ ա_
ռեալ զնա՝ եմոյծ ՚ի սենեակն իւր ·
և հանեալ ՚ի յանձնէն զիւր հան_
դերձն՝ ագոյց լութֆիկլին · և ըզ_
հանդերձն լութֆիկլին՝ զգեցաւ
ինքն ։ Նա՛ եցոյց զամ դարպասն բո_
լորովին և ասաց · արդ արասցուք
այսպէս ։ Ես երթայց անդ և հասից
՚ի ժամադրեալ օրն · և դու նստիցես
՚ի տեղի իմ ոչ թողր ։ բայց յորժամ

 մաս

մտանիցես 'ի մահիճ աղջկանն՝ հա
ճանապարհիմ լինիցիս ընդ իս։

Եւ իբրև զայս ասաց՝ նոյնժամայն հեծեալ 'ի ձի՝ գնաց առ կայսրն փոխանակ լուսթֆիկին։ Եւ լուսթֆիկն 'ի վաղիւն անդր փոխանակ աղեքսանդր թ͞գրի՝ (քանզի ոչ ճանաչէր զնա ոք) եառ զկինն աղեքսանդր թ͞գրին և տարաւ հարսանիք։ և յորժամ եղև գիշեր՝ եմուտ լուսթֆիկն 'ի մահիճն․ և բերին զթագուհին անդ առ նմա։ Յայնժամ լուսթֆիկն առեալ սուր մերկ՝ եդ 'ի մէջ իւրն և աղջկանն․ զի մարմին աղջկան՝ 'ի մարմին իւր ոչ հասցէ։ Եւ թագուհին զարմանայր վ͞ս բանիս այսորիկ․ բայց ինչ ոչ ասէր ցընա թէ վ͞ս էր առնես զայդ․ և ա͞մ գիշեր այնպէս առնէր մինչև եկն
աղեքսանդր արքայ։

Իսկ յորժամ աղեքսանդր գընաց առ կայսրն փոխանակ լուսթֆիկին՝ ասէ ցարքայն․ տէր՝ զհայր իմ թողել

'ի մահիճս հիւանդութեան՝ եկի առա
ջի ժամադրեալ աւուրն։ Ասէ ցնա
կայսրն․ հաւատարիմ եղեր 'ի բանսիդ-
ոյդմիկ և յաւելեր զպատիւ քո։
Ասէ լուեալ Փլորենցիոյն զգալուստ
նր՝ ուրախ եղև յոյժ․ և գաղտ կո
չեց զնա առ ինքն։ Իբրև ետես զնա
համբուրեաց և ասէ․ օրհնեալ է օր
ծննդեան քո․ արդ ասա ինձ թէ
ո՞ւր թողեր զլութփիկն։ Ասէ աղէք
սանդր պատմեաց նմա զամ զոր ինչ
եղեն․ և թէ ո՛չ եթող զնա թգւր
փոխանակ իւր։ Ասէ յետ խօսիցն ող
ջունեաց զաղջիկն․ և ելեալ գնաց
անտի և եմուտ 'ի սենեակ լութփի
կին․ իբր թէ ինքն իցէ լութփիկն։
քանզի ո՛չ ոք էր որ ճանաչէր զնա
թէ ո՛չ է լութփիկն բայց 'ի Փլորէն
ցիոյէն։ Ասէ 'ի վաղիւն անդր նախ
քան զժամ մարտին՝ ասէ աղէքսան
դրոր ցկայսրն․ սիրոնս այս զչարեալ
ինձ՝ մատնեաց զիս քեզ․ որպ թէ
զդուստր քո ապականեալ եմ։

Արդ՝ փորձեցից զդա այսօր 'ի մար
մին դորա. և ասից զվրէժ իմ 'ի դը
մանէ։ Ասէ սատանան. այո՛ ճշմարիտ է
զոր ասացեր. զի դու ապականեցեր
զդուստր կայսերս. և կամիմ փոր-
ձել զայդ իմ̃ք ջ.։ Եւ իբրև ասաց
զայս՝ երկոքեանն իմիասին հեծեան
'ի ձի. և սկսան հարկանել զմիմեանս
և մարտեան։ Եւ եհար սրով աղէք
սանդր թգ̃րն և կտրեաց զգլուխն
սատանին. և տարեալ ետ աղջկանն.
և աղջիկն մեծաւ խնդութ̃ տարաւ
առ հայրն և ասէ։ Ահա հայր իմ
գլուխն այնորիկ որ ստութ̃ն խաբով
ապականեալ եցոյց զիս։ Եւ կայսրն
տեսեալ զքաջութիւնն՝ կոչեաց զա
ղէքսանդր առ ինքն՝ կարծելով թէ
լութփինն է և ասէ. ո՛վ սիրելի լութ
փին՝ ազատեցուցեր այսօր զքեզ և
զդուստրն իմ. և յաւելեր զպատիւ
իմ։ արդ սիրելի իմ եղիցիս դու 'ի
յաւիտենն։ Ասէ աղէքսանդր. ա̃ծ է
որ փրկէ զայնոսիկ որք յուսան 'ի նա։


Բայց

Բայց զհայրն իմ թողեալ հիւանդ
և եկի վասն կռուոյս · արդ աղաչեմ
զմեծութիւնդ՝ զի հրամանս տացես ինձ
երթալ առ հայրն իմ · և տեսանել
զնա թէ ոչ եղև · և դարձեալ փու-
թով եկից ։ Ասէ ցնա կայսրն · եր-
թիցես խաղաղութեամբ · և դարձիր փու-
թով եկեսցես · և'ի կամս քո ունի-
ցիս զամենայն ինչ ։ Ապա աղէքսանդր ող-
ջունեաց զարքայն · և ելեալ գնաց
յերկիրն իւր ։

Ապա լութփիկն լուեալ զգալուստ
աղէքսանդրի՝ ուրախ եղև յոյժ
և ասէ · սիրելի եղբայր իմ զինչ գոր-
ծեցեր անդ · և որպէս եղև բանն ։
Ասէ աղէքսանդր · երթ առ կայսրն
և ծառայեմ նմա ոչ յառաջն · քանզի
խոստացայ նմա փութով դառնալ
առ նա · և քո թշնամեացն հատի՛ ըզ-
գլուխն ։ Ապա լութփիկն շնորհակալ
եղև նմա և ասէ · ով սիրելի իմ ա-
ղէքսանդր՝ ես ոչ կարացի հատու-
ցանել քեզ զփոխարէնն՝ փոխանակ


այդ

այդ ամ՟ բարութ՟ց քոց. որ բազում անգամ փրկեցեր զիս ՚ի մահուանէ. եւս առաւել ասա՝ որ զամենեսեան անցոյց։ Ասէ աղեքսանդր. երթ ՚ի խաղաղութ՟ և տ՟ր եղիցի ընդ քեզ։ է ա՟ծ յերկինս որ հատուցանէ իւ-
րաքանչիւր ըստ գործոց իւրոց։

Եւ լութփիկն ողջունեալ զնա, դարձաւ առ կայսրն։

Եւ ՚ի գիշերի միում աղեքսանդր նստաւ յաթոռն իւր. և ոչ ոք գիտաց զգնալն և զգալն ն՟ր։ Եւ իբրև երեկոյ եղև՝ եմուտ աղեքսանդր ՚ի մահիճն առ թագուհին. և սկսաւ խաղալ ընդ նմա և համբուրել։ Ասէ թագուհին. հազիւ եհաս ժամ զի ցուցցես ինձ նշան սիրոյ փոքր իշխանէ։ Ասէ աղեքսանդր. վա՟ էր ասես զայդ։ Ասէ թագուհին. յայնմ օրէ որ առեր զիս՝ յա՟մ գի-
շեր մերկ սուր դնեիր ՚ի մէջ մեր. զի մի՚ հասցէ մարմին քո՚ի մարմին իմ։ Եւ աղեքսանդր լուեալ զայս՝ ասէ



ընդ

ընդ միտս իւր · թէ ընկերն իմ լութ-
փիկ` հաւատարիմ եկաց ընդ իս:
Ապա դարձեալ ասէ ցթագուհին ·
ով սիրելի տիկին` ես ոչ արարի զայն
վասն չարութեան, այլ վասն փորձելոյ զքեզ:
Ապա թագուհին ասէ ընդ միտս իւր ·
դու արարեր զայդ ինձ, և ես առից
զվրէժ իմ 'ի քէն: Ապա իսկոյն սկ-
սաւ սիրել զգլխաւոր ոմն 'ի պալատէն
և պոռընկէր ընդ նմա · և խորհէին
սպանանել զթագաւորն աղէքսանդր:
Ապա արբուցին նմա մահադեղ · և
դեղն ոչ մահացոյց զնա · բայց բո՛ր
գօթոյ եղև ամենայն մարմին նորա: Ապա տե-
սեալ նախարարացն թէ ոչ վայելէ
գօթոյ թագաւորութիւն` աքսորեցին զնա
յերկրէ անտի:
Ապա յայնմ ժամանակի` մեռաւ տիւ-
րոս կայսրն · և լութփիկն էառ
զդուստր նորա 'ի կնութիւն · և թագաւորեաց
'ի տեղի նորա: Ապա յետ ոչ բազում
աւուրց` մեռաւ և թագաւորն իս-
րայէլացւոց · և լութփիկն տիրեաց


մի

միանգամայն խմերոյ երկրի նոցա․
ոյաւինքն՝ երկրի կայսեր, և երկրի․
հօրն իւրոյ։

Եւ լուեալ աղէքսանդր՝ ասէ ընդ միտս իւր․ արդ՝ ընկերն իմ լութփիկ՝ եկաւ զդուստրն տիւրոսի ՚ի կնութի․ և եղև կայսր ՚ի տեղի նորա և թգր խարոյելի։ և ես յոյս ունիմ առ ած զի երթայց անդ և մխիթարեցայց ՚ի նմանէ․ որ հնպզ զանձնիմ դնէի իմ նր։ Եւ նոյնժամայն ելեալ ՚ի գիշերի և առեալ ցուպ ՚ի ձեռինն՝ եկն առ լութփիկ ընկերն իւր որ եղեալ էր կայսր։ Եւ յորժամ եհաս ՚ի դուռն պալատին՝ ետես առ դրանն զի մի կողմն նստէլ էին աղքատք՝ և միւս կողմն գոթիք առնուլ ողորմութի․ ինքն ևս նստաւ ՚ի մէջ գոթւոցն։ Եւ ելեալ կայսրն լութփիկ էանց․ և աղէքսանդր՝ ըն այլ աղքատն խնդրէր ողորմութի․ բայց ինչ ոչ էառ։ Եւ իբրև ժամ եղև ճաշոյ և նստաւ կայսրն ՚ի ճաշ,



եկն

երկն արքայն ալեքսանդր և սկսաւ
բախել զդուռն : Եւ ելեալ դռ-
նապանն հարցանէր զնա թէ ով էր
բախէր զդուռն : Ասէ ալեքսանդր
ես բորոտեալս ՚ի գօթուն՝ աղքատ
և արհամարհեալ յամենեցունց՝ ա-
ղաչեմ զքեզ վս այ զի հասուցես
զբանս իմ առ կայսրն : Ասէ դռնա-
պանն · զի՞նչ է խնդիր քո : Ասէ ա-
ղեքսանդր · երթ աղաչեա զկայսրն
և ասա ցնա յինէն՝ վս այ սիրուն
և վս ալեքսանդր թագաւորի սիրուն
հրամայեսցէ վս իմ զի ես երթայց
ևնստայց առաջի աչաց նր և կերայց
ճաշս : Ասէ դռնապանն · զարմանամ
քեզ զի զայդպիսի իրս խնդրես ՚ի
տնէ իմմէ · քանզի պալատն նր լի է
իշխանօք · և թէ տեսցեն զքեզ լի բո
րոտութբ՝ զարշեալ ոչ կարիցեն ու-
տել կերակուր : Բայց որ աղաչես
զիս վս այ՝ ծանուցից տն իմում
զբանս քո : Եւ մտեալ դռնապանն
առ կայսրն և ասէ · տէր իմ և հզօր

տղքոյ՝ բորոտ ոմն կացե՟լ առ դրանն
և խնդրէ 'ի ձէնջ վ՟ս ա՟յ և վ՟ս աղէք
սանդր Թ՟գրի սիրուն՝ զի մտցէ 'ի
ներքս և առաջի աչաց քոց նստիցէ
և ուտիցէ կերակուր։

Եւ լուեալ կայսրն զանուն աղէք
սանդր Թ՟գրին՝ ասէ ցդռնապանն
մուծ զնա այսր և կերիցէ հաց ա
ռաջի իմ։ Եւ դռնապանն իսկոյն ե
մուծ զնա ներքս. և նա մտեալ նըս
տաւ ի վ՟ր գետնոյ առաջի կայսերն։
Եւ կայսրն ուղարկեաց նմա քաղց
րահամ կերակուր. և աղէքսանդր
կերեալ զայն՝ կոչեաց առ ինքն ըզ
մինն 'ի ծառայիցն կայսեր և ասէ.
սիրելի եղբայր իմ վ՟ս ա՟յ սիրուն
երթ առ կայսրն և ասա ցնա. թէ
աղքատն այն բորոտ՝ աղաչէ վ՟ս ա՟յ
և վ՟ս աղէքսանդր Թ՟գորի սիրուն
տացէ ինձ գինի իւր սկուտեղամբն։
Ասէ ցնա ծառայն. ով եղբայր ոչ
գիտես թէ զինչ խնդրես. վասն զի
անպատշաճ բանս կամիս ուզել. զի

թէ մի անգամ ըմպիցես դու գինի
՚ի բաժակէ անտի զոր տէրն իմ ըմպէ,
յաւել եւս ոչ կարէ ըմպել ՚ի նմանէ
բայց վասն աղաչանաց քոց՝ պատմեցից
կայսերն զբանս քո։ Ապա գնացեալ
ծառայն առ կայսրն եւ ասէ. տէր՝ Թո
ղութիւն շնորհեա ինձ զոր ինչ ասելոց
իցեմ տեառնդ իմում։ բորոտն այն զոր
նստեալ կայ ՚ի վերայ գետնոյ, խնդրէ
վասն Աստուծոյ եւ վասն սիրոյ Աղեքսանդր Թա
գաւորին՝ զի սկհոփն զոր ըմպէ տէրդ
իմ, տացես եւ նմա գինի նոյն սկհոփն
ըմպել։ Ապա լուեալ կայսրն զանուն
Աղեքսանդր Թագաւորին՝ զուարթ երե-
սօք հրամայեաց տալ նմա անապակ
գինի. եւ ծառայն տարեալ ետ ցբո-
րոտն։ Ապա Աղեքսանդրի առեալ զգո-
հացան զարքայէն՝ եւ ըմպեաց զբա
ժակն. եւ իբրեւ ըմպեաց՝ հանեալ
զմատանին ՚ի ձեռանէն՝ արկ ՚ի սկիհն.
եւ ասէ ցծառայն՝ սիրելի եղբայր իմ
տուր զսկիհդ եւ զմատանիս տեառնդ
քում։ Ապա ծառայն առեալ տարաւ
եւ

և ետ 'ի կայսրն: Այլ կայսրն իբրև
ետես զմատանին, ետկոյն ճանաչեաց
զնա՝ զոր ինքն տուեալ էր աղեք-
սանդր Թագաւորին 'ի Նշան սիրոյ.
և խանդաղատեցաւ սիրտ նր̅ և ասէ
'ի միտս իւր. կամ աղեքսանդր ար-
քայ մեռեալ է, կամ բորոտդ այդ
գողացեալ է զմատանիս զայս:

Այն հրամայեաց կայսրն ծառայից
իւրոց և ասէ. բորոտն այն մի՛ ելցէ
'ի պալատէս մինչև խօսեցայց ը̅դ նմա

Այն յետ ճաշոյն՝ առեալ կայսրն
զբորոտն մեկուսի՝ որ էր ինքն ա-
ղեքսանդր արքայն՝ և ասէ ցնա.
երդմնեցուցանեմ զքեզ յԱծ̅ կեն-
դանի՝ ասա ինձ թէ ուստի ունիս մա-
տանիս այս 'ի ձեռն քո: Ասէ աղեք
սանդր. տէ՛ր՝ մի թէ ճանաչես զմա
տանիս զայս: Ասէ կայսրն. որպէս
չեմ ճանաչեր՝ զի իմ է մատանիս
այս. և ես ետու աղեքսանդր Թա-
գաւորի ընկերին իմոյ 'ի Նշան սի-
րոյ: Ասէ աղեքսանդր. այս այն



ա-

աղէքսանդրին է՝ աչօ՛ որում տուեր զմատանիդ։ Նա՛ լուեալ զայս կայսըրն՝ պատուեաց զպատմուճան իւր և անկեալ յերկիր լայր դառնապէս և ասէր․ ո՜վ սիրելի իմ աղէքսանդր կէս հոգւոյ իմոյ՝ զիա՞րդ կամ որպ՟ եղև վիրաւորեալ փափուկ մարմին քո։ Ո՜վ աղէքսանդր․ դու որ ունէիր զմեծ սէրն քո ընդ իս՝ և եդեալ էիր սուր մերկ 'ի մէջ քո և 'ի մէջ Թագուհոյն կնոջ իմոյ, սակս այնորիկ բարկացա՛ւ նա յոյժ․ և սիրեաց զզինուոր ամ՟ն 'ի պալատէս և պոռնկէր ընդ նմա։ Վ՟ն պատճառի դեղեցին զիս և արբուցին ինձ մահադեղ թէ մեռանի, և ես եղէ այսպէս վիրաւորեալ բորոտ․ և յետ այնորիկ աքսորեցին զիս 'ի Թագաւորութենէս։ Նա՛ լուեալ զայս կայսրն յարուցեալ համբուրեաց զնա ե՛ւ ասէ․ վա՜յ է ինձ կէս հոգւոյ իմոյ՝ զինչ արարից քեզ և կամ որպ՟ բժըշկել տաց քեզ․ համբերեա՛ փոքր մի



և

և ես առաքեցից առ ճարտար բը
ժիշկս․ զի եթէ հնար իցէ՝ բժշկես
ցես զքեզ ՚ի բորոտութենէդ։
Ո՛վ սիրելի իմ աղէքսանդր՝ մի՛ ու-
մեք յայտնեսցես զայս․ և առաւել
թագուհոյն իմոյ փլօրէնցիոյին՝ զի
մի՛ անկանիցի ՚ի մեծ տրտմութի։
Նա նոյնժամայն ետ նմա դարպաս
մի առանձին․ և զամ պէտս նորա։
Նա առաքեաց զծառայս իւր ընդ
ամ երկիր առ իմաստուն բժիշկսն․
զի առանց ինչ յապաղելոյ հասցեն
առ նա։ Նա նոքա սրընթաց երիվա-
րաւ փութանակի ժողովեցան առ
կայսրն․ բժիշկք իմաստունք՝ համա
րով երեսուն․ յոյժ անուանիք և
հմուտք արհեստին։ Զոր տեսեալ
զնոսա կայսրն՝ ուրախ եղև յոյժ․ և ա-
սէ ցնոսա՝ սիրելիք՝ մէկ բարեկամ իմ
վիրաւորեալ է յոյժ․ եթէ բժշկէք
զնա ՚ի վիրաց անտի, պարգևս մե-
ծամեծս առնուցուք յինէն։ Ասեն
բըժիշկքն․ տէր՝ զոր ինչ հնար է և

 գի

գխտեմք՝ արտասուք։ և յորժամ տե
սնն զքոյր նր՝ ասեն․ ոչ կայ դմա հը
նար առողջանալոյ․ զի դր մահացեղ է
արբուցած։ Ո՛վ որ լուեալ կայսրն՝
տրտմեցաւ յոյժ․ և հրամայեաց կո
չել զաղքատս և զկրօնաւորս և ըզ
քահանայս՝ զի աղօթս արասցեն վն
նր․ զի ՚ի տնէ եղիցի բժշկուն նմա
Այլ իւքն կայսրն պահօք և աղօթիւք
խնդրէր յայ տալ առողջուն աղէք
սանդր թգւրին։ Այլ ՚ի միում գի
շերի՝ աղէքսանդր կայր յաղօթս․
և յաղօթելն նր՝ ձայն եղև յերկնից
առնա և ասէ․ զհնգեսին տղայքն
կայսեր՝ որ ծնեալ է նմա թագուհին՝
եթէ զենցէ ձեռամբն իւրով և ոչ
երկմտիցի՝ և արեամբն նց լուացէ
զմարմինն քո, նոյնժամայն բժշկեսցիս
յախտէ քումմէ․ և եղիցի մարմինն քո
փափուկ իբրև զմանկան տղայի։
Ո՛վ որ լուեալ զայս աղէքսանդր՝ ա
սէ ընդ միտս իւր․ ոչ է պիտոյ և
ոչ է արժան յայտնելոյ զայս ումեք․


ով

ո՞վ է որ զմին որդին իւր զենցէ որ
բեւր զորս իմ, որ նա զհնգեսին որ-
դիսն զենցէ վ͞ն իմ: վ͞յ ո՛չ յայտ-
նեաց ումեք: Եւ կայսրն ՚ի գիշերի
և ՚ի տուընջեան աղաղակէր առ ա͞ծ
վ͞ն առողջութե͞ աղեքսանդրի:
Եւ ՚ի միում ժամու կալ առջային
յաղօթս՝ լուաւ ձայն յերկնից որ
ասէր. վասն էր աղաղակես առիս.
աղեքսանդր թագաւորն՝ ինքն գիտէ
զդեղ առողջութե͞ իւրոյ:
Յորժամ լուաւ զայս կայսրն՝ գը-
նաց առ աղեքսանդր և ասէ.
ո՛վ աղեքսանդր կէս հոգւոյ իմոյ՝
լուայ զբարբառ ՚ի յերկնից որ դու
ինքնին գիտես զդեղ առողջութե͞ քո
և վ͞ն էր ինձ ոչ ասես: Ամէն ասեմ
քեզ. ես կարծէի թէ զա͞մ ինչ քո
յայտնես ինձ. և ո՛չ մի բան թաքու-
ցանես յինէն: արդ ասա ինձ թէ
որպ͞ս բժշկիս: Ասէ աղեքսանդր.
ո՛չ է զարմանք որ թաքուցի ՚ի քէն
զդեղ առողջութե͞ իմոյ. վ͞ն զի յայժ-

 դըժ

դժուար թուեսցի քեզ առնել զայն։
Ասէ կայսրն. ասա ինձ որպէս դժուա-
րին է։ Ասէ աղէքսանդր. ոչ բերէ
համարձակութիւն սիրտ ՚ի բերան առ-
նուլ ինչ խնդրել զնա։ Իսկ կայսրն
բռնադատեալ երդմնեցոյց զնա՝ զի
պատմեսցէ նմա թէ ինչ ինչ իցէ լինե-
լոց է նմա բժշկութիւն։ Ասէ աղէք-
սանդր. անցեալ յաւուրն կայի յա-
ղօթս. և լուայ բարբառ ՚ի տեառնէ
այսպէս. եթէ դու զհնգեսին որ-
դիսն քո զենցես և ոչ երկմտիցես՝
և արեամբն նոցա լուասցես զես, եղի-
ցի մարմին իմ որպէս էրն յառաջագոյն
իբրև զմանկան տղայի։ և ես վասն այն
լռեցի և ոչ պատմեցի քեզ. զի անհնար
նոր է սպանանել քեզ զորդիսն քո
վասն առողջութեան իմոյ։ Ասէ կայսրն.
ով եղբայր աղէքսանդր՝ թերահա-
ւատեցեր զիս. ոչ հաւատաս որ ս-
պանանեմ ես զորդեակսն իմ վասն
առողջութեան քո. ոչ թէ զհնգեսինն
միայն, այլ թէ լինէր և տասն՝ զպա-


նա

նանէի զամենեսեան վասն քո ։

Յետ այնորիկ կայսրն ապաստանէր գը-
տանել զժամ պարապոյ՝ զի մ՛ անդ-
լեցի Թագուհին ։ Եւ իբրեւ գնաց
Թագուհին յեկեղեցին ամ աղախ-
նօքն իւրովք, եմուտ կայսրն ՚ի սե-
նեակ անդր ուր մանկունքն նր նըն-
ջէին հնգեքեանն իմիասին . եւ առեալ
զսուր՝ զենեաց զհնգեսին որդիսն
ձեռամբն իւրով . եւ ելից զարիւն նց
յաման մի . եւ առեալ եբեր աղէք-
սանդրի . եւ անց շուտով լուացվել ։
Եւ իբրեւ լուացվեցաւ՝ նոյն ժա-
մայն ձեղքեցաւ մարմինն . եւ անկան
ող կեղեւանք ՚ի նմանէ . եւ սրբեցաւ
մարմինն նր . եւ եղեւ փափուկ իբրեւ
զմարմին տղայի ։ Եւ տեսեալ լութ-
ֆիկն՝ ճանաչեաց զնա . եւ անկան
զպարանոցաւն միմեանց եւ համբու-
րեցին զմիմեանս ։ Եւ ասէ լութ-
ֆիկն . ով աղեքսանդր՝ օրհնեալ է-
ղիցի ժամն այն որ սպաննեցի զոր-
դիսն իմ վն առողջութեան քո ։

Ապա նոյնժամայն ազդեց նմա զգես
տըս թագաւորական. և իշխող
անուշիւ էօծ զնա. և ասէ՝ եղբայր
իմ, որքն թագուհին որ ոչ է եկեալ
յեկեղեցւոյն, գնասցես յինէն մը
ղոնս քսան. և առաքեսցես առաջի
քո հրեշտակս՝ զի եկեալ հռչակես
ցէ զգալուստ քո: և ես մեծաւ պա
տուով ելանեմ ը̅ առաջ քո. և դու
եկեալ բնակեսցես ընդ իս իմիասին՝
մինչև տր̅ ած̅ բացցէ քեզ զդուռն
ողորմութեան: Ասէ աղէքսանդր.
բարի է խորհուրդդ այդ:

Ապա նոյնժամայն գաղտ 'ի գիշերի
ել բազում ամբոխիւք և գնաց
մղոնս քսան. և առաքեաց հրեշտակս
առ կայսրն զի ծանուսցէ նմա զգա
լուստն աղէքսանդր թագաւորին 'ի
յեգիպտոսէ: Ապա թագուհին լուեալ
ուրախ եղև յոյժ և ասէ ցկայսրն.
Ել դու ընդ առաջ նր̅ բազում զօրօք
և ես զկնի քո ելից ամ̅ աղախնեօքս
և ծառայիւք իմովք: և զմահ տղայոց

իւրոյ ո՛չ գիտէր ։ Եւ կայսրն եւ
մեծաւ զօրօք և մեծաւ պատուով
ընդառաջ նր̃ · և Թագուհին զնմ̃ի ·
և եկին առ աղեքսանդր Թգ̃աւորն ։
Եւ տեսեալ զմիմեանս՝ անկան ըզ-
պարանոցէ · և ցմեծ ժամս համբու-
րեցին զմիմեանս ։ Նոյնպէս և Թա-
գուհին · և եկին ՚ի պալատն արքունի
Եւ յորժամ եղև ճաշ՝ բազմեցու-
ցին զաղեքսանդր արքայն ՚ի մէջ
իւրեանց · այսինքն՝ ՚ի մէջ Թագու-
հւոյն և կայսերն ։ Եւ Թագուհին
յո՛յժ ուրախ եղև · և զուարթ երեսս
և պայծառ սիրտ ցուցանէր նմա որ-
չափ և կարէր · և ինքն ձեռամբ իւ-
րով մատուցանէր նմա ուտել ճաշ ։
Տեսեալ զայն կայսրն՝ ասէ ցԹագու-
հին · ո՛վ սիրելի տիկին իմ փլօրէն-
ցիս · ուրա՛խ եմ ՚ի բանդ զոր դու-
առնես · և սէր ցուցանես եղբօր մե-
րում աղեքսանդր արքայի ։ Ասէ
Թագուհին · տր̃ իմ, առաւել ևս քեզ
արժան է սէր ցուցանել վս̃ գայդ

 Թա

Թագաւորիս մերոյ աղեքսանդրի ·
քանզի ո՛չ այլ ինչ իրաց՝ այլ միայն
վ՟ն այն՝ զի 'ի ձեռն սորա ետ մեզ
ա՟ծ համանիլ մեծութե՟ս այսմիկ։
Ասէ կայսրն · ո՛վ փլօրէնցիս՝ լո՛ւր
բանից իմոց · տեսե՞ր դու զբոլորովն
զայն՝ որ անցեալ յաւուրն նստեալ
կայր առաջի մեր · և ըմպեալ գինի
'ի սկհոյն իմմէ։ Ասէ Թագուհին ·
տեսի՝ որ ո՛չ երբէք տեսեալ է իմ
այնպէս գարշ այր և վիրաւորեալ
ոտ՟ք այրն այն։ Ասէ կայսրն · այն ա
ղեքսանդր արքայ ինքն էր որ այժմ
'ի միջի մերում նստեալ կայ ։ Ասէ
ցնա Թագուհին · քա՛ւ լիցի և հեռի
եղիցի յաղեքսանդր արքայէ մերում
այնպիսի աղտեղի կերպարանք։
Ասէ կայսրն · ճշմարիտ ասեմ քեզ
ո՛վ Թագուհի՝ որ աղեքսանդր արքայ
ինքն էր։ Ասէ Թագուհին · եթէ
այն էր՝ ապա վ՟ն էր ոչ ա՟սցեր ինձ։
Ասէ կայսրն · վ՟ն այն ոչ ասացի քեզ
որ չէ վշտանայիր։ Ասէ Թագուհին ·

 ապա

ապա ի՞ն ի՞նքն եղև դեղ առողջու՟ե
սորա։ Ասէ կայսրն․ յորժամ ստու-
գի՞ իմացայ որ աղէքսանդր արքայ
ինքն էր, նոյնժամայն ետու կոչել
որչափ որ բժիշկ կայր․ և նոքա յոր-
ժամ տեսին զսա, ասացին թէ՝ նմա
մահադեղ է արբուցած՝ ճար չի լի
նիր։ Յայնժամ ապա՞ւինեցայ յա՟ծ
և իւր ամենակարող զօրութիւնն․
կոչեցի զաղքատս և զկրօնաւո՞րս և
զքահանայս․ և ետու նց՟ պարգևս՝
զի աղօթս արասցեն վասն նորա։
Եւ՞ ես այլ պահօք և աղօթիւք խնդ-
րէի յա՟յ տալ սմա առողջութի՟։
Եւ՞ յաւուր միում մինչ կայի յա-
ղօթս և աղաղակէի, նոյնժամայն
ձայն եղև աւխս և ասաց․ զի՛ աղա-
ղակես՝ աղէքսանդր թգ՟րն ինքնին
գիտէ զդեղ առողջութե՟ իւրոյ։
Եւ՞ յառաջմանէ ազդ եղեալ էր եղ
բօրս իմում․ և սա յինէն թագու-
ցեալ էր և ոչ ասէր։ Եւ՞ իմ եկեալ
բռնադատեցի զսա․ և երդմնեցուցի

 մին

մինչև պատմեաց ինձ. և ասաց թէ
վս այն թագուցի՝ որ յոյժ դժուա
րին է բանս: Ո՜վ իմ հարցաքննել
թէ ո՛րպ: Եւ նա ասաց. եղբայր իմ
եթէ զհնգեսին որդեակն քո զեն-
ցես ձեռամբ քով և նոյն արեամբն
լուասցես զնա, նոյնժամայն բժշկիմ:
Ո՜վ իմ սպասաւորի գտանել ժամ պա-
րապոյ՝ որ սպանանէր զնոսա. և դու
յորժամ գնացեր յեկեղեցին, նոյն
ժամայն սպանի՝ և արեամբն լուա-
ցի. յայնժամ ձեխքեցաւ մորթ նր
և թափեցաւ ոտք կեղևանք: Ս՛պա
տեսի և ճանաչեցի զնա. և ագուցի
նմա բեհեզս թագաւորական. և ա-
ասցի՝ գնասցես և հեռասցիս մղոնս
քառն. և առաքեսցես հրեշտակս որ
եկեալ հաչակեսցէ զգալուստ քո.
և ես ելանեմ ընդ առաջ քո. և ե-
կեալ բնակեսցուք խաղաղին:
Ո՜վ արդ ո՛վ թագուհի իմ՝ եթէ
յառաջմանէ իմացեալ էիր, տայիր
հրամանն որ սպանանէի զորդեակն իմ


վս

վն աւուրջունն նր։ Մեւ թագուհին ընդհէր փորձեա զնա · ոչ թէ զհինգն այլ եթէ լինէր և տասն՝ տայի ապանանել վն աւուրջուն արքայիս իմոյ։ Ձի եթէ հոգի սորա երթայր՝ այլ ոչ դառնայր · բայց որդւքն իմ եթէ մեռանն՝ այլվր տայ ած ինձ փոխանակ նոցա · քանզի դեռևս ոչ եմ ծերացեալ ։

Ձայս լուեալ դայեակք մանկանցն ողբալով մեծաձայն մտին առ մանկունսն ՚ի սենեակ անդր։ Եւ իբրև մտին՝ տեսին զմանկունսն որք պար առեալ խաղային և օրհնէին զած · և ելեալ պատմեցին առաջի կայսերն և առաջի ամցուն՝ թէ մանկունքն կենդանի են և երգեն զերգս օրհնութեան։ Եւ ամենեքեան մտեալ ՚ի սենեակն՝ տեսին և փառս ետուն այ · որ այնպիսի սքանչելիս արար առաջի ամենեցուն։

* Գնալն Պոլիփիէ կայսերն զօրօք յեգիպ-
տոս. և նուաճելն զեգիպտոս ընդ ձեռամբ
Աղէքսանդրի. և այրելն զթագուհին:

Յետ այնորիկ կայսրն բաղում զօրս գումարեալ՝ գնաց յեգիպտոս. և ըմբռնեաց զթագուհին Աղէքսանդրի. և հրամայեաց հրով այրել ընդ սիրաուն իւրում:

Եւ ունէր կայսրն քոյր մի. եւ զնա Աղէքսանդրի 'ի կնութի. և որդւոյ Աղէքսանդր՝ հնազանդեցոյց զերկիրն 'ի ներքոյ ձեռին իւրում. և կայսրն դարձաւ յերկիրն իւր:

Եւ որդոյն Աղէքսանդր՝ իմաստութե վարէր զերկիրն իւր. և զթշնամիս իւր զամ կոտորեաց:

Յետ այնորիկ 'ի միտ էած զհայր և զմայր իւր՝ որ ընկեցին զինքն 'ի ծով. և բնակութի նոցա՝ էր ընդ հրամանաւ թագաւորութե իւրոյ: Առաքեաց առ նոսա հրովարտակս և ասէ. թէ այս ինչ օր թագաւորն գայցէ առ ձեզ և նստիցի ընդ

ընդ ձեզ ՚ի ճաշ ։ Եւ հրեշտակն գը
նաց ՚ի սահմանն այն՝ ուր էին ծը
նօղք թ͞գրին . և ոչ ոք գիտէր թէ
ծնօղքն էին արքային ։ Եւ ելեալ
առ նս͞ա հրեշտակն՝ ողջոյն մատուցա
նէր նց͞ա յարքայէն աղէքսանդրէ .
և ասէ ցնս͞ա՝ ով սիրելիք իմ, տեսէք
զպատրաստութ͞ի ձեր . զի տէրն իմ ար
քայ՝ կամի ընդ ձեզ այս նիշ օր ՚ի սե
ղան նստիլ և ճաշակել ընդ ձեզ ։
Ասէ զինն̂որն . որ էր հայր թագա
ւորին . ով սիրելի իմ օրհնեալ եղի
ցի ժամն այն յորում ա̂ուր նստե
լոց է տէր արքայ ընդ մեզ ՚ի ճաշ ։
Ապա և մայրն ասէ ցհրեշտակն .
մեծապէս ասասցես տ͞ն մերոյ արքայի՝
եթէ ոչ լինի մեզ ցնծութ͞ի և առա
ւել ուրախութ͞ի մեծ քան զայն , որ
նստիցի ընդ մեզ ՚ի ճաշ . քանզի ծա
ռայք նր͞ա եմք ։ Եւ դարձաւ հրեշ
տակն առ արքայն և ասէ . տէր ար
քայ՝ ծանուցի զհրամանս քո . և ն͞ք
ուրախ եղեն յոյժ վ͞ս գըլնալոյն քո
առ ն͞ս ։

Յետ այնորիկ ոչ բազում աւուրց՝ եկն արքայն բազում զօրօք առ հայր իւր. և հայրն ել ընդ առաջ նր: Իսկ յերբ եհաս առ արքայն՝ էջ 'ի ձիոյն և անկեալ երկիրպագ արքային. և ոչ գիտէր թէ իւր որդին է որ ընկէց զնա 'ի ծով: և արքայն յարոյց զնա 'ի գետնոյն և հրամայեաց դարձեալ հեծանել 'ի ձի: Իսկ նա հեծեալ 'ի ձի՝ երթային երկոքեանն իմիասին. մինչև եկին 'ի տուն զինուորին: Իսկ մայրն ևս ել ընդառաջ նր. և անկեալ երկիրեպագ նմա. և արքայն յարոյց զնա: Իսկ ասէ մայրն. տր արքայ՝ ուրախութի է մեզ մեծ այսօր. որ տրն մեր արքայ՝ փառաւաշուք անձամբն իւրով նստելոց է ընդ մեզ 'ի ճաշ: Իսկ իբրև պատրաստեցաւ ճաշն՝ ասէ զինուորն ցարքայն. տր արքայ՝ ժամ է ճաշելոյ: և ել արքայն նստիլ 'ի ճաշ: Յայնժամ զինուորն էառ 'ի ձեռն իւր ջուր՝ ծառայել արքային. և կինն

 նր

Նորա որ էր մայր արքայի՝ առեալ սրբիչ 'ի ձեռն՝ կայր յանդիման արքային։

Ապա արքայն իբրև ետես զայս՝ ծիծաղեցաւ և ասէ ընդ միտս իւր․ աշա՛ կատարեցաւ բանն պիւլալիւլէն․ զի աշա՛ հայր իմ և մայր իմ՝ առէին ջուր և սրբիչ՝ և սպասեն ըստանալոյ ձեռաց իմոց։ Ասէ Թագաւորն ցծառայս իւր․ առէ՛ք զջուրն 'ի ձեռանէ զինուորին՝ և զսրբիչն 'ի ձեռանէ կնոջն․ և դո՛ւք ծառայեցէք ինձ։ Ասէ զինուորն ցարքայն․ տէ՛ր՝ ընդէ՞ր ոչ համարիս արժանի զմեզ ծառայել քեզ․ և եղիցի մեզ փառք յաւիտենից։ Ասէ Թագաւորն․ Հրաժարո՛ւք դուք՝ քանզի ծերացեալ էք․ և վասն ծերութեան ձերոյ պատուեմ զձեզ։ Ապա իբրև բազմեցաւ արքայն 'ի սեղանն, Նորա տայց զհայրն 'ի յաջմէ և զմայրն 'ի յահեկէ․ և նոքա որչափ և կարէին՝ ուրախացուցանէին զարքայն։

Ապա յետ ճաշոյն՝ եմուտ արքայն



'ի

՚ի ներքսագոյն սենեկի · և հրամայ
եաց զինուորին և կնոջ նր՝ մտանել
զկնի իւր · և ամենեցուն հրամայեց
արտաքս ելանել և փակել զդուռն :
Ասէ ցնս արքայն · սիրելիք իմ
աղաչեմ զձեզ՝ հարցից ձեզ բան մի
և ասասջիք ինձ զճշմարիտն : Ունէիք
զաւակ ի վր երկրի՝ թէ ոչ : և նոքա
ասեն · ո՛չ որդի և ո՛չ դուստր :
Ասէ թգւորն · բնաւ ո՞չ է ծնեալ
ձեզ որդի : Ասէ զինուորն · ունէաք
որդի մի և մեռաւ : Ասէ թգւրն ·
որպիսի մահուամբ մեռաւ :
Ասէ զինուորն · իւր մահուամբն :
Ասէ թգւրն · եթէ լուայց որ այլ
մահուամբ մեռեալ է , յայնժամ դար
ձուցից զատուն ձեր ՚ի գլուխ ձեր :
Ասէ զինուորն · տր արքայ՝ ընդէ՛ր
քննելով հարցանես վս որդւոյ մերոյ :
Ասէ թգւրն · ո՛չ է առանց պատճա
ռանաց · և կամիմ գիտել թէ ո՞րպ մե
ռաւ : լուեալ է իմ եթէ սպանել էք
դուք զորդին ձեր · և եթէ ոչ պատ

 մեք

մեք լինձ զըստոյգն , մեռանիցիք և
դուք։ Այո՛ նոքա լուեալ զբանն ար
քային՝ անկան իվ՛ր երեսաց իւրեանց
յերկիր՝ և խնդրէին զներումն։
Իբրև ետես զնս արքայն անկեալ
յերկիր առաջի իւր՝ յարոյց զնոսա
և ասէ . կարծեմ թէ սպանեալ էք
դուք զորդին ձեր։ Ասէ զենաւորն .
տէր արքայ ողորմեա մեզ . էր մեզ
որդեակ մի՝ և մեկնեաց մեզ զխօսս
պիւլպիւլին . իբր թէ լինելոց էր
ինքն մեծատուն՝ որ ես և մայրն նր
ծառայելոց իցէաք նմա . և մեք լցեալ
նախանձու՝ ընկեցաք զնա ՚ի ծով։
Ասէ թգ՛ւորն . զինչ չար լինէր ե
թէ կատարէր այդպէս . այլ պատիւ
և փառք ձեր յաւելուին։ Այո՛ արդ՝
մեղս ծանրագոյնս գործեցիք առա
ջի այ . քանզի յոյժ յիմարութիւն է
հակառակ լինել կամացն այ։
Յետ վճար խօսիցն՝ ասէ ցնս թա
գաւորն . ո՛վ քաղցրիկ ծնօղք իմ
ես եմ աղէքսանդր որդին ձեր


զոր

զոր ընկեցիք 'ի ծով։ Այ՛ տէր ողոր-
մութեն իւրով փրկեաց զիս և հա-
սոյց այսպիսի մեծութեն · և կատարե-
ցաւ խօսքն պիւլպիւլին՝ որ հայրդ
իմ ջուր առեալ 'ի ձեռին լուանայ
զձեռս իմ, և մայրդ իմ զսրբիչն · և
խօսքն այն ոչ խափանեցաւ։ Այ՛ նք
լուեալ զայս՝ երկեան յերկիւղ մեծ ·
և անկան իվր երեսաց իւրեանց առ
ոտս որդւոյն իւրեանց · և խնդրէին
ներումն և ողորմութի։ Եւ ասէ ցնս թա-
գաւորն · մի՛ երկնչիք՝ զի ոչ ինչ լինի
ձեզ չար · և եթէ ո՛չ էիք ընկեցլ զիս
'ի ծով, ո՛չ հասանէի այս մեծութենս։
Այ՛ համբուրեց զհայր և զմայր իւր
և մայրն յառաւել խնդութեն լայր։
Եւ ասէ ցնս թգւրն · մի՛ լայք՝ այլ քա-
ջալերացարո՛ւք։ և ամ ինչ որ իներքոյ
ձեռին իմոյ է՝ հնազանդ լիցի ձեզ։
Այ՛ առեալ զնս մեծաւ պատուով
և ոսկիակազմ կառօք՝ դարձաւ յետս
'ի քաղաքն 'ի պալատն իւր · և էին ծը-
նողք նր 'ի պատուի զամ աւուրս
կենաց իւրեանց։

Եւ իբրեւ վճարեցաւ դիոկղետիա-
նոս զաւակն իւր, դարձեալ առ
կայսրն և ասէ․ Տէր արքայ և հայր իմ
սիրելի՝ ի միտ առեր զբանս իմ զոր
ասացի։ Ասէ ցնա կայսրն․ այո՛ ի միտ
առի։ Ասէ որդին․ այսպէս թէ և ինձ
շնորհէր Տէր իմաստութիւն, ես ո՛չ հա-
նէի ի ձէնջ զտէրութիւն ձեր․ և ո՛չ պա-
կասեցուցանէի զպատիւ ձեր․ այլ
օրըստօրէ յաւելուի զպատիւ ձեր․
որպէս նա արար ծնողաց իւրոց։
Ասէ կայսրն․ ո՛վ քաղցրիկ որդեակ
իմ լաւ առակ ասացեր մեզ։ Այսու-
հետև ի քեզ յանձնեմ զթագաւորութիւն
իմ․ և ես բնակիմ առանձին․ վասն զի
ծերացեալ եմ։ Ասէ որդին․ հայր
իմ՝ արդ լիցին իրաւունք Թագու-
հոյն։ Եւ հրամայեաց կայսրն դա-
տաւորաց քննութիւն առնել։ Ասեն
դատաւորքն ցկայսրն․ տէր արքայ՝
զի՞նչ քննեսցուք զդա․ զի ինքնին
բերանով իւրով խոստովան եղև։
Եւ այլ մեծագոյն վնաս սիրական իւր



որ

որ գտաւ կանացի զգեստիւ ։
Նա՛ նոյնժամայն հրամայեաց որդի
արքային՝ որ կապեցին զԹագուհին
ամեհի ձիոյ ագի․ և քարշեալ փողո
ցէ 'ի փողոց՝ տարեալ այրեցին ընդ
սիրաւն իւրում։ Նա՛ ամենեքեան օրհ
նեցին զած․ որ զանպարտն փրկեաց
և զԹագուհին պատժեաց ։
Յետ այնորիկ ոչ բազում աւուրց
մեռաւ կայսրն․ և Թգրեց 'ի տեղի
նր որդի արքային դիոկղետիանոս ։
Նա՛ զդպրպետքն մեծացոյց ևս քան
զևս յոյժ ։ Նա՛ իմաստութբ վարեր
զամ երկիրն որ ններքոյ տէրութե
իւրոյ էին․ և ամենեան օրհնէին զած
և գովէին զիմաստութին դիոկղետի
անոսի կայսերն․ և սիրէին զնա որ
այնպիսի քաղաքավարութբ վայելէր
զաթոռն իւր։ Նա՛ կեցցէ բարի կե
նօք՝ ծաղկեալ որդւովք և դստե
րօք՝ լի՛ աւուրբք հանգեաւ խաղա
ղութբ ։ Նա՛ քի մարդասիրին՝
փառք յաւիտեանս յաւիտե
նից․ ամէն ։

Ա Բ Գ Դ Ե

Զ Է Ը Թ Ժ

Ի Լ Խ Ծ Կ

Հ Ձ Ղ Ճ Մ

Յ Ն Շ Ո Չ

Պ Ջ Ռ Ս Վ

Տ Ր Ց Ւ Փ

Ք

(Ա՟)

Սուրբ երրորդութ՟ն փրկէ ըզ
քեզ յա՟մ փորձութ՟է. փարատե
ցաւ՟ ցաւ՟ սրտի քո. մեծ ու-
րախութ՟ի և շնորհ ՚ի յա՟յ. և դու
բարձրանաս մեծ պատուով: Ա.մե
յորժամ ընծայեցար ՚ի ծնողաց քոց՝
մեծ հիւանդութ՟ի կրեցեր. և հալա
ծական եղար ՚ի յազգականաց քոց
և՚ի բարեկամաց: Բայց պատրաստ
կացո զանձն քո ՚ի գողանաց և յա
նօրինաց. զի փախթորակ կայ առաջի
քո. և չարախօսքն քո շատ են. գնա
աղօթք արա առ ա՟ծ որ փրկիս ՚ի նո-
ցանէ. և՚ի խորհուրդս քո զինչ որ

բղխեալ ես և կամիս՝ այնպէս կա
տարի։ վիճակ բարի եղաւ քեզ։

(Բ.)

Բանն ա՟ծ անսկիզբն՝ որ ՚ի հօրէ ա_
ռաքեցաւ, նա է լոյս նեղելոց. որ
փրկէ զքեզ յա՟մ փորձու՟է։ փարա_
տեցաւ ցաւ սրտի քո. և կատարեսցի
վիճակն քո ՚ի բարին. զինչ բան որ
բռնես՝ ա՟ծ յաջողէ քեզ և առաջ
նորդէ։ Արդ արա զխորհուրդ քո.
թէ վաճառ ունիս՝ շահիս. թէ ՚ի ճա
նապարհ երթաս՝ բարով գաս. թէ
հեռաւոր ունիս՝ բարով տեսանես.
թէ հիւանդ ունիս՝ շուտով ողջա_
նայ. զոր կորուսեալ ես՝ գտանես։
աբրահամու վիճակն է։

(Գ.)

Գնա՝ մի՛ ինչ հարցաներ՝ զի բա_
զում նեղու՟թի ունիս. և տրտմու՟թի
կայ առաջի քո. և վիշտք մահու տրտ
մեցուցին զքեզ. և եհաս ՚ի վ՟ր քո
նեղու՟թի մեծ։ չկայր քեզ օգնական
և

և ո՛չ սիրելի։ զի 'ի հայրենական ժա-
ռանգութենէն զրկեցար. և այժմ տա-
րակուսեալ ես վ̅ս̅ կենացդ։ Արդ
աղաչեմ զա̅ծ և ուխտ կատարեմ նը-
մա. որ կործանէ զթշնամին քո. և
հանէ զքեզ 'ի նեղութենէ 'ի լոյս. և քո
սրտի կամքն 'ի բարին կատարի։ 'Իջրէ
պատրաստ կայ. յուսանաս վիճակն է

(Դ.)

Դու ո՛վ սիրելի՝ վ̅ս̅ այդ բանիդ
հարցանես և հոգաս հանապազ.
Ա̅ծ փրկէ զքեզ և հանէ յա̅մ նե-
ղութենէ զանձն քո. և յանկործակի 'ի
տեղւոյ մի րուզակին՝ ուստի ակն ոչ
ունիս. և բանայ քեզ Ա̅ծ դուռն բա-
րի։ 'Ի ճանապարհ երթաս և բա-
րով գաս. և թշնամին քո յամօթ լինի։
Հեռաւո՛ր ունիս՝ տեսանես. վիշտք
մահու տրտմեցուցին զքեզ՝ բայց մո-
ռանաս զայն։ փոխիլ կամիս 'ի տեղւո-
ջէ 'ի տեղ, սակա՛ւ մի համբերէ և
ապա փոխեսցիս. և բարի գտանես.


մե

մեծանաս և ուրախ լինիս. յուսամ առ
ա՟ծ որ չկամասցիս։ դանիէլի վիճակն է

(Ե)

Երանի՛ է քեզ ո՛վ սիրելի՝ զի ա՟ծ է քեզ օգնական. բայց դու շատ ես դատել և չեղաւ քեզ հանգստութի՟. և չեղաւ քեզ օգնական. ո՛չ եղբայր և ո՛չ սիրելի։ Ո՟պ զալիս ծովու կու ծփաս. և քո կենացդ հանգիստ չես գտաներ։ ո՛վ սիրելի տուր փառս ա՟յ զի ուրախութի՟ հասանի քեզ յ՟այ և առողջութի՟։ Թէ փոխիս ՚ի տեղացդ բարոյ հանդիպիս. և ա՟մ դժուարութի՟ ՚ի բարին դառնայ։ ՚ի յաւագաց պատրաստ կաց. որոգայթ կու ցուցանէ. ՚ի յընկերոտաց և ՚ի մատնողաց պատրաստ կացիր։ ս՟բ գրիգորի վիճակն է։

(Զ)

Զարմացեալ եմ ո՛վ այր՝ զի երկմտեալ ես և ՚ի թշնամեաց սասանիս։ և խորհիս վ՟ս մեծանալոյ. և ո՛չ խորհիս առնել զաղաչանս ա՟յ։ աղօթից



ծուլ

ծուլ կու կենաս · վ՟ս այնորիկ եկն 'ի
վ՟ր քո նեղութ՟ի մեծ · և թշնամին քո
զօրացաւ՟ 'ի վ՟ր քո։ Գ՟նմ աղաչեմ
զ՟ած և ուխտ կատարեմ նըմա՝ զի
համեցէ զքեզ յ՟ամ նեղուէ · և ազա
տես յորոգայթէ · վաճառ ունիս՝ սի
րով շահիս։ մատթէոսի վիճակն է ։

(Լ)

Ս՛վ այր՝ առնուս զոր խորհիս և ու
րախ լինիս · և ազատիս 'ի չարէ ։ գը
նմ գոհացիր զ՟այ։ բայց մարդամբ կայ
որ մոռք չար կու խորհի քեզ · բայց
՟ած համէ զքեզ յ՟ամ նեղութենէ
և որոգայթէ · զի դու բարի ես և
՟ած բարի առաջնորդէ քեզ։ զինչ 'ի
ձեռքդ բան բռնես՝ յաջողէ քեզ ՟ած
զոր ցանկաս՝ տեսանես · զոր կորու
սեալ ես՝ գտանես · թէ հիւանդ ու
նիս՝ ողջանայ · թէ տուն շինես կամ
հողագործութ՟ի առնես՝ բարի գայ
և բազակով կատարի ։ 'Ի կախարդ
կանանց պատրաստ կայ · մովսէսի
վիճակն է։



Ս՛վ

(Ը)

Ո՛վ մարդ՝ ժամանակ դժուարութեան եկն ի վերայ քո · և տրտմեցար յազգականաց քոց և՛ ի բարեկամաց · և ազգն քո նենգաւոր եղեն քեզ · և եղև աւերումն տան քո · և շրջեցար դու ՚ի վերայ երկրի ։ Այլ գոհացիր զԱյ · զի գալոց է քեզ ուրախութի մեծ · և զոր ուզես տեսանես ։ Թէ ՚ի ճանապհ երթաս՝ բարով դառնաս · զինչ բան առնես՝ յաջողէ քեզ Ած ։ զուխտն զոր խոստացեր ես Այ կատարէ ։ Թէ վաճառ առնես՝ շահիս · ապա սրտահեշտ կացիր ։ սեթոյ վիճակն է ։

(Թ)

Ո՛չ յաջողեցար ՚ի բարին · զոր ունէիր՝ զրկեցար · ո՛չ կայր քեզ օգնական · ո՛չ եղբայր և ո՛չ սիրելի ։ Արդ աղաչեա՛ զԱծ որ փրկէ զքեզ և հանէ ՚ի նեղութենէ զանձն քո ։ Բայց դու անյաւուրդ ես · և աղօթից ծուլ կու կենաս · վասն այսորիկ եկն



ի վերայ

ի վր՟ քո նեղութիւն · և դու շրջեցար
յօտար երկիր՝ բայց ոչ փասսեցար։
Ապա թէ ոչ դառնաս ՚ի կամս իմ ,
գայ ի վր՟ քո նեղութիւն · և լինի յափշ
տակութիւն ընչից քոց եւ աւերումն
տան քո։ և ամ՟ բան զինչ որ բանես՝
ոչ յաջողի · և զով սուզես՝ ոչ տեսա
նես · զոր կորուսեալ ես՝ ոչ գտանես։
Ապա թէ դառնաս ՚ի կամս իմ , նա
փակած դուռն բացցի քեզ և յա
ջելու բուզակն քո։ Գնա աղօթք արա
առ իմ և ուխտ կատարէ · որ ոյլ չի
գործես զչարիս · և աղօթիս ՚ի տան
ջանայցդ։ Սբ՟ գրիգորի վիճակն է։

(Ժա)

Ով որ ինչ ՚ի ձեռքդ բան բանես ,
յաջողէ քեզ իմ · և արա զխորհուրդ
սրտի քո։ Աւետիս տուր անձին քո՝
զի ուրախանալ կամիս ՚ի բանդ որ
բանել ես։ Ի ձեռաց քոց ելանէ ո
ղորմութիւն · և բազում կերիցեն ըզ
վաստակս ձեռաց քոց։ Ապա հիման



դա

դացար շատ՝ որ 'ի մաՀ գնացեր. և
ած եՀան զքեզ 'ի նեղութենէ և
ազատեցոյց: 'Ի Հեռաւոր տեղաց մի
ուստի ակն ոչ ունիս՝ բարի գալոց է
քեզ. և արտմութի քո՝ ուրախութի
փոխարկի. զի դու բարի ես՝ և ած
բարի առաջնորդէ քեզ: և զաւակն
շնորՀաւոր լինի քեզ: Բայց 'ի սիրե-
լեաց բախտ ոչ ունիս. վն այնորիկ
պատրաստ կացիր՝ զի 'ի զուր լեզու-
անկանիս և տուգանք տաս: Գնա՛
աղաչեա՛ զած եւ ուխտ կատարեա՛
նմա. զի ողորմութիւն նր եկեսցէ
խնդր քո: Թէ 'ի ճանապարՀ երթաս՝
բարով գաս՝ և բարւոյ Հասանիս:
սողոմոնի վիճակն է:

(Ի)

Ս'վ այր՝ ապաւինեալ ես 'ի խոր-
Հուրդ քո և մոռանաս զուխտն
այդ: զի արտմութի քո՝ ուրախութի
փոխարկի: 'ի Հեռաւոր տեղաց՝ ձայն
աւետեաց լսես. կամ Հեռաւոր

մարդ տեսանես · և յայդ առողջութ
գտանես · և դարման ոսկերաց քոց
ոչ պակասի։ բայց ծննդոց քոց դու
մաղթարձ մի՛ լինիր · նա զինչ որ ու-
զես յայն՝ տայ քեզ ա̃ծ։ Իւր փոխել
տեղւոյն 'ի տեղ՝ բարի լինի քեզ · և
յամ դժուարութենէ ազատիս։ և
զինչ խորհուրդ զոր ունիս և բան
որ բանես՝ նա գնա արա · շատ շահ
և բազում աւնուս · և վախճան քո 'ի
բարի օր լինի։ ղազարու վիճակն է։

(Ղ)

Ո՛վ այր՝ կու տեսանեմ զքեզ և
զխորհուրդ քո որ նմանիս աղեաց
ծովու · նմանիս ճրնճղկի որ անկա
'ի ձեռս որսողաց · նոյնպէս և դու
'ի ձեռս բռնաւորաց անկանիս։
Գնա աղաչեա զա̃ծ և ուխտ կատա
րեա նմա · որ փրկէ զքեզ տ̃ր ա̃ծ։ քո
յամ որոգայթէ և 'ի նեղութենէ ·
բանայ քեզ դդուռն բարեաց և բա-
զմաց · այլ զուխտն զոր խոստա-

 ցեր

ցեր ես՝ կատարեմ։ Այլ թէ ոչ դառնաս 'ի կամս իմ, գայ 'ի վերայ քո նեղութիւն. և լինի յափշտակութիւն տան քո և ընչից քոց։ Այլ դու հալածական լինիս. և վերջոյ մահու տրտմեցուցանեն զքեզ. և յօտար երկիր վտարիս։ Այլ թէ դառնաս 'ի կամս իմ, նա փակած դուռն մի բացուի քեզ. և զոր ինչ 'ի ձեռքդ բան բռնենես՝ յաջողէ քեզ Աստուած։ Այլ պատրաստ կաց 'ի ջրոյ և 'ի գազանաց. և 'ի վատ գործոյ։ յօնանու վիճակն է։

(Խ)

Ո՛վ մարդ՝ ողորմութիւնն իմ լինի ընդ քեզ զամենայն աւուրս կենաց քոց. բայց 'ի յօտար աշխարհ վտարեցար։ զով ուզես՝ տեսանես. զինչ կամիս առնուս. զոր կորուսեալ ես գտանես. այլ յընկերացդ բախտ ոչ ունիս. այլ 'ի յիմ շատ շնորհ ունիս. և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ։ Բայց վերջոյ մահու տրտմե-

ցուցին զքեզ. խակ բան և խորհուրդ
զոր արարես՝ գնա արա շահիս և
բարի գտանես. այլ՛ի քո ազգէն
ոչ շահիս։ Նա՛ ՛ի քո փառաւորէն բա
զումք կերիցեն. և պարգևս ՛ի յոյ
առնուս։ յերկան կնկանէ մի փա-
Թորակիս. յիշոցաց և՛ի կախար-
դաց պատրաստ կացիր։ սուրբ մար
տիրոջ վիճակն է։

(Ծ.)

Ա՛վ այր դու՝ նման ես գետոյ որ
երթայ յերկար և ոչ կայ նմա
դադարումն։ Դու հաւատակամ ե-
ղար և՛ի հայրենական ժառանգու-
Թենէն զրկեցար. և՛ի ծնողաց քոյ
ոչ խնդացեր. զրկաբախտ ես որ ա-
մէն մարդ զրկեալ է զքեզ։ Արդ
աղաչեմ զա͞ծ եւ ուխտ կատարեմ
նմա. որ օգնէ քեզ ա͞ծ և փրկէ ըզ-
քեզ յորոգայթէ։ Դու մի՛ տրտմիր
զի բանիդ դժուարութեն ՛ի լոյս ե-
լանէ. և քեզ ձայն աւետեաց գայ
և

և դու խնդաս և ուրախանաս։ յան
կարծակի ըռզակ գայ քեզ՝ ուստի
ակն ոչ ունիս։ սեթեայ վիճակն է։

(Կ)

Ո՛վ սիրելի՝ կանկղացո՛ զեւոքեդ քո
և պահեա՛ զկամս այ՟ · եւ տո՛ւր
հաց քաղցելոց և ջուր ծարաւեաց։
Ապա թէ ոչ դառնաս ՚ի կամս քո·
նա գայ ՚ի վր՟ քո նեղութիւն մեծ
և յափշտակութիւն ընչից քոց և աւե
րումն տանն քո · և ամ՟ բան զոր ինչ
բռնես ոչ յաջողի · և որում ցան
կաս ոչ հասանիս · և զոր կորուսեալ
ես ոչ գտանես։ Ապա թէ դառնաս
՚ի կամս այ՟ և զպատուիրանս նորա
պահես, նա ողորմութիւն այ՟ հասանէ
՚ի վր՟ քո · և յաւագաց մեծարիս · և
դուռ մի փակած բացի քեզ · և յա
ւելու ըռզակն քո։ Ո՟պ արեգակն ՚ի
վր՟ արարածոց՝ այնպէս այ՟ բարին
հասանէ ՚ի վր՟ քո · և յաջողէ քեզ
զոր ինչ դու կամիս ։ աչք աւագաց

 քաղց

քաղցրանայ 'ի դիմացդ. և տարիս բա րով գայ քեզ: յակոբայ վիճակին է:

(Չ)

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ. զի դու բարի ես և այժմ բարի ա ւաջնորդէ քեզ. և տէր փրկեաց զքեզ յամենայն որոգայթէ: Ինիս ցանկալի ամենեցուն. և ոչ լինի պակասութիւն ընչից քոց. և տայ քեզ Աստուած փառք և մեծութիւն: բայց պատրաստ կաց 'ի լեզուէ մի որ չփաթորանկիս. զի հա նապազ ընդ քեզ է այն լեզուն: Գնամ աղաչեմ զԱստուած և ուխտ կատա րեմ նմա որ ազատիս 'ի չարէն. զինչ խորհուրդ որ ունիս՝ արա և մի՛ վա խեր. զինչ դու ուզես՝ այնպէս կա տարի: բարսեղի վիճակին է:

(Զ)

Ո՛վ մարդ՝ ձայն ցնծութեան և ուրա խութեան մատուցանեմ քեզ. զի դու վախեալ ես և տարակուսեալ. և սա սանեցար յազգաց և 'ի բարեկամաց



քոց

քոյ. և ազգն քո նենգաւոր եղեն քեզ. և շատ խրատ զրկեցար: Տուն քո հայրենի՝ դարձաւ 'ի յաւեր. և դու շրջեցար խլր երկրի. և սուգ մահու տրտմեցոյց զքեզ: այլ այժմ փառք տուր այ՝ զի հասեալ է քեզ ուրախութի մեծ. բազմանայ ըղակն քո. ոսկին և արծաթն. զինչ ուզես կատարի: Այլ պատրաստ կաց 'ի յանօրինաց և'ի պտունկութ̃ որ 'ի փաթերակ չանկանիս. թէ հեռաւոր ունիս դոյ. և այլ զինչ խորհուրդ ունիս կատարի: մուխեալ վիճակն է:

(Գ.)

Ով մարդ՝ պարգևեցաւ արձակումն կապանաց քոց. այժմ մոգքն որ եղին յարևելից և եկեալ առ քո̃ դոլին զնա և ուրախ եղեն, նոյնպէս և դու ուրախանաս 'ի բանս քո և 'ի խորհուրդս որ բաներես: Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով դառնաս և բարի գտանես: Ով մախես

 յաղ

յաղթեաց փարաւոնի և եգիպտա_
ցւոցն, նոյնպէս և դու յաղթես
թշնամեաց քոց. եւ զինչ խորհէր ես
գնա՛ց արա՛. 'ի բարին առաջնորդէ
քեզ տ̃ր ա̃ծ: մոգուց վիճակն է:

(Ճ՛)

Ո՛վ մարդ՝ զոր հարցանես՝ ասեմ
քեզ. եղար դու 'ի մանկութենէ
քումմէ հալածական. և պանդըխ
տութ̃ի կրեցեր զա̃մ աւուրս կե_
նաց քոց. և սասանեցար յազգաց և
'ի յանօրինաց. և ազգն քո նենգա_
ւոր եղեն քեզ: Ո՛վ սիրելի մի՛ վա
խեր՝ զի հասեալ է քեզ ուրախութ̃ի
և կատարեցաւ վիճակս քո 'ի բարին:
զինչ ուզես 'ի յա̃յ՝ տայ քեզ ա̃ծ.
թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով
գաս: այլ 'ի կանանց դրացեաց պատ
րաստ կաց զի շատ բանսարկանք լեա
դանիէլի վիճակն է:

(Մ՛)

Ո՛վ այր՝ նենգաւոր տեսանեմ

զքեզ · որդ 'ի չարդ յիմարեալ ես՝ և ընկերոջդ չար առնես · և ամենե-ցուն փոյթ խորհիս ։ Ընկեա՛ զնեն-գութի 'ի մտաց քոց · և ընկերոջդ չար մի՛ խորհիր · որ չանկանիս 'ի մեծ նեղութի · և պատուհաս գոյ 'ի վ̄ր քո ։ Ո՛չ խնդասցիր 'ի ծնողաց և ո՛չ 'ի զաւակաց · և ա̄մ բան զինչ որ առնես՝ ո՛չ յաջողի քեզ ։ Ապա թէ գտանիս 'ի կամս ա̄յ՝ և ընկե-րոջդ և ամէն մարդոյ նենգութիւն ոչ առնես, նա ծագէ ա̄ծ զողորմութի իւր 'ի վ̄ր քո · և ո՛չ լինի պակասութի ընչից քոց · և մեծաւ պատուով վախ-ճանիս ։ յաբեթոյ վիճակն է ։

(Յ)

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ · զի կատարեցաւ վիճակս քո 'ի բա-րին · և դու խորհուրդ ունիս 'ի սիրտդ · ո՛չ կարես բռնել եւ ո՛չ թողուլ ։ մի՛ վախեր գնա՛ առա · զի խորհուրդ քո 'ի բարին կատարեցաւ

Որպէս լուսինն որ զխաւար գիշերն
լուսաւորէ՝ այնպէս լուսաւորի խոր
հուրդ քո որ բանեցես. և հաստատէ
քեզ ընդդէմ 'ի յ͞ոյ. և ում ցանկաս
հաստատնես. և յաւագագաց բարի գոր
ծես. և աւետեաց ձայն լսես և խնդաս
զնա́ ասացեալ զ͞Ած որ խորտակէ զ.քո
թշնամին։ ͞Տր գրիգորի վերձանին է։

(Կ)

Ա՛մ մարդ՝ աչս 'ի ներքուստ տեսա
նեմ զ.քեզ. զի մեծամեծ փաթե
րակ կոյ առաջի քո. և 'ի նեղութ͞ի
անկանիս։ Բազում խորհին քեզ
չարիք և դու ոչ իմանաս զկորուստ
անձին քո. և զի ոչ առնես զկամս ͞այ՝
վ͞ս այնորիկ եկին ի վ͞ր.քո նեղութի։
զինչ խորհուրդ ունիս ոչ կատարի.
թէ 'ի ճ͞պհ երթաս՝ ոչ լինի.քեզ բա
րի։ Նաև թէ դառնաս 'ի կամս ͞այ
և զուխտն զոր խոստացեր ես կատա
րես, նա փակած դուռն մի բացանի
քեզ. և յաւելու ընդդէմն քո։

(Ռ)

Ո՛վ մարդ՝ բազում բարիս կու տեսանեմ առաջի քո. առնուս պարգեւս 'ի մեծամեծաց. ողորմանաս և բարոյ հանդերձիւ. խնդաս 'ի զաւակէ և 'ի կնոջէ քումմէ. և լինիս յիշատակ ծնողաց քոց։ Եւ՞ զինչ որ խնդրես 'ի յա͞յ՝ առնուս. զոր կորուսեալ ես՝ գտանես. թէ հեռաւո՛ր ունիս՝ գայ որ տեսանես. թէ հիւանդ ունիս՝ ողջանայ. և օր քան զօր աղէկ լինի քեզ։

(Ս)

Ո՛վ մարդ՝ պա՛րտ է քեզ յա͞մ ժամ գոհանալ զա͞յ. զի թէպէտ տրտմեցար, բայց դարձեալ ողորմանաս և շնորհն ա͞յ հասանէ իվերոյ քո։ Մ. յլ պատրաստ կաց 'ի յանօրինաց և 'ի գազանաց. զի փաթորակ կայ առաջի քո։ բայց պարգեւ և շնորհ 'ի յա͞յ առնուս. և յորդոց խնդաս. և լինիս ցանկալի ամենեցուն. և ոչ



լինի

լինի պակասութիւն ընչից քոց ։ Ոչէ փոխիս 'ի տեղւոջէ 'ի տեղ՝ բարոյ համ դիպիս • ձայն աւետեաց լսես • և հեռաւոր մարդ տեսանես • քո մահն 'ի բարի օր լինի • և երազն որ տեսեր ես բարի է ։ աբրահամու վիճակն է ։

(Զ)

Ո՛վ մարդ՝ փառաւորիս յամենեցունց • և առնուս բարի իշխանութիւն • որ թշնամին քո յամօթ լինի • և յօտար երկիր գնաս • և առնուս պարգևս • և յամ դժուարութենէ ազատիս • և զով ուզես՝ բարով տեսանես • և ում ցանկաս՝ հասանիս ։

Նմա պատրաստ կայ 'ի գազանաց և 'ի բարձր տեղաց • 'ի կախարդաց և 'ի պնտերես կնոջէ՝ որ շատ է փաթորակեր ։ Գնա՛ աղաչեա՛ զԱծ և ուխտ կատարեա՛ նմա ՟ որ ազատիս 'ի շատ չարէ • և բանայ քեզ տ̃ր մ̃ծ դուռն բարի և ըղձալեաց ։ սեթայ վիճակն է ։

(Գ)

Պարզև բարեաց տացէ քեզ ած ․ չարն հեռացաւ՝ և բարին մօտեցաւ կամօքն այ ։ Այլ դու ես ի մատատուն որ խրատ տաս ամցուն ․ բայց պահեա զանձն քո ՚ի չարկամաց ․ և զոր ինչ գործես և բան որ բանես՝ ՚ի բարին առաջնորդէ քեզ տր ած ։ բայց ՚ի սիրելեաց բաժան ոչ ունիս ։ Յած ապաւինէ որ կործանէ զքո թշնամին ․ և հանէ զքեզ յամ որոգայթէ ․ և լինիս ցանկալի ամենեցուն ․ և ոչ լինի պակասումն ընչից քոց ․ և զինչ խորհիս՝ կատարի ՚ի բարին ։ մովսէսի վիճակն է ։

(Ո)

Ով մարդ՝ մեծ էիր և խոնարհեցար ․ զմտաւ ածես և ոչ կարես կալ ՚ի վր մեկ խորհրդի ․ դու մի տրտմիր՝ գալոց է քեզ ուրախութի մեծ՝ ուստի ակն ոչ ունիս ․ զի դու բարի ես՝ և ած բարի առաջնորդէ



քեզ

քեզ։ Փոխանակ տրտմութե՛ ուրախութի՛ լինի քեզ. բարի և շնորհ 'ի յոյս առնուս։ Գնա՛ արա՛ զխորհուրդ-քո. թէ վաճառ առնես՝ շահիս. թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գաս։ այլ 'ի վ̃ր բախտիդ քննութի̃ առնես և հարցանես. ա̃ծ բանայ քեզ ըզդրունս բարոյ. և յաւելու ըղձակն քո։ մատթէոսի վիճակն է։

(Ո.)

Ո՛վ մարդ՝ սասանեցար յաղագս և 'ի յանօրինաց. հասա՛ն ի վերոյ քո տրտմութի̃. և եղև ա՛նէրութն տան քո 'ի բարեկամաց քոց. և խորհուրդ-քո հանապազ 'ի կորուստ եղանէ։ Ո՛վ այր՝ մի՛ հոգար վ̃ն այդ բանիդ զի շուտ գայ ի վ̃ր քո բարին. և տ̃ր ա̃ծ հանէ զքեզ 'ի խաւարէ 'ի լոյս. և քո մուրատին հասանես։ Այլ պատրաստ կաց 'ի յընկերացդ՝ զի բախտ ո՛չ ունիս. և կայ մարդ մի չարակն՝ որ մտօքն չար կու խորհի

 քեզ

քեզ· 'ի կատարդաց պատրաստկաց։
ադամայ վիճակն է։

(Ա)

Մ'ի մարդ՝ վասն կենաց քոց ընդէր հարցանես· զի՞նչ յիմարեալ ես և չար խորհիս· և ամենեցուն վնաս առնես· 'ի աւեղջէ 'ի տեղ փոխիս՝ և ուրեք ո՛չ հաստատիս։ զոր կորուսեալ ես ո՛չ գտանես։ Ընկեա՛ զնեն գութի 'ի մտաց քոց· ընկերոջ և ամէն մարդոյ չար մի՛ խորհիր· թէ չը լսես՝ փաթերակիս։ գնա՛ աղաչեա՛ զած որ ազատիս 'ի շատ չարէ։

(Կ)

Մ'ի սիրեր՝ տո՛ւր փառս այյ· զի գալոց է քեզ ուրախութի ուստի ակն ոչ ունիս։ Եւ 'ի քո վաստակէն շատ մարդ կերիցէ· և զամանակ մի խնդամիտ տեսանես· և տայ քեզ ած առողջութի։ Նաև պատրաստ կաց 'ի բոլորերես մարդոյ մի և 'ի չարակն կնոջէ· որ մտօքն չար կու խորհին

 քեզ

քեզ · պատրաստ կաց 'ի նոցանէ որ
չանկանիս 'ի փորձութի: և զինչ բան
բռնես՝ 'ի բարին առաջնորդէ քեզ
տր ած: 'ի հեռաւոր տեղաց ձայն ա–
ղետեաց լսես · կամ հեռաւոր մարդ–
տեսանես: զնա արա զխորհուրդ քո:

(Տ)

Ո՛վ մարդ՝ ուրախութի մատուցա–
նեմ քեզ · զի դու վախել ես
և տարակուսեալ: զրաբախտ ես ·
զոր կուտաս՝ կավով կու թափես ·
ում բարի կամնես՝ նա քեզ չար
կամենէն: Ս. ալ լաղօթից և աղաչա
նաց դու մի՛ դադարիր · գալոց է
քեզ ուրախութի ուստի ակն ոչ ու
նիս: հեռաւոր ունիս գոյ · թէ աղ
քատ ես՝ հարստանաս · թէ հիւանդ
ունիս ողջանայ · թէ երազ ես տե–
սեր բարի է: ղուկասու վիճակն է:

(Ր)

Ո՛վ մարդ՝ ցնծութի և ուրախութի
տամ քեզ · զի դու բարի ես և

 ած

ած բարի առաջնորդէ քեզ • և ում
ցանկաս հասանիս ։ բայց թշնամիքն
քո շատ են • այլ դու մի՛ վախեր 'ի
նոցանէ՝ զի ած է քեզ օգնական •
բայց և 'ի կնոջէ բախտ ոչ ունիս ։
Պատրաստ կաց որ 'ի զնտան չի մտա
նես • խրատի տուգանք տաս ։ այլ
իրք զոր կորաւ քեզ՝ գտանես ։
Ի ճանապարհ կամիս երթալ և եր
կումտես • գնա՛ և մի՛ վախեր •
ընդ որ երթաս՝ բարով գաս ։ զինչ
բան որ բռնես՝ յաջողէ քեզ ած • և
զինչ խորհուրդ որ ունիս՝ ած 'ի բա
րին կատարէ • և օրքան զօր աղէկ
լինիս ։ մարկոսի վիճակն է ։

(Յ)

Ով մարդ՝ բազում բարիս կուտե
ամնեմ առաջի քո • առնուս պար
գևս 'ի մեծամեծաց • ուրախանաս
և բարոյ համդիպիս ։ Խնդաս 'ի զա
ւակէ և 'ի կնոջէ քումմէ • և լինիս
բարի յիշատակ ծնողաց քոց ։ Թէ

 մո

փոխիս ՚ի տեղւոյդ՝ ոչ հաստատիս·
զի ամ̃քեան նենգաւորք են քեզ։
Նա՛ ՚ի մարդոյ բախտ ոչ ունիս· այլ
քո բարին ՚ի յայլ է· և տայ քեզ ա̃ծ
զիւր ողորմութիւն անչափ· և յա̃մ
դժուարութ̃է ազատիս· և երազն որ
տեսեր ես՝ ՚ի բարին կատարի։

(Ւ)

Ո՛վ մարդ՝ չարն հեռացաւ ՚ի քէն
և բարին մօտեցաւ· այլ սաստ
նեցար ՚ի յազգաց և անօրինաց· և
ազգն քո նենգաւոր եղեն քեզ։
Պատրաստ կացիր ՚ի թշնամեացքոց·
զի կայ մարդ մի չարակն և կին մի
կախարդ՝ որ մօջքն չար կու խոր
հին քեզ· և ՚ի յընկերութեանդ փաթե
րակ կայ առաջի քո։ դատաստան ունիս
կամ ճանապարհ կամ վաճառ՝ համ
բերէ։ աբրահամու վիճակն է։

(Փ)

Անգամ մարդոյ մի՛ լինիր սիրելի
որ չի փաթերակիս· և ՚ի ձեռացդ



քո

քո խոզք է կորել. մի՛ տրտմիր՝ ՚ի քեզ դառնայ: Ո՛ ինչ խորհուրդ ունիս կատարէ ած. բայց սակաւ մի համբերէ. զի ապիղծ մարդ մի կայ՝ որ մրտօքն չար կու խորհի քեզ. Թէ պատրաստ կենաս իւրմէն՝ նա ազատիս ՚ի չարէն: Կամէր գալ իվր քո տրտմութի՝ բայց ած խափանեաց. և բազում ուրախութիւն կայ առաջի քո: Նման ես աբրահամու. որ ած զինքն սիրեաց և՚ի տրտմութե ազատեաց. Նոյնպէս և դու ազատիս յամ չարէ: սահակայ վիճակին է:

(Կ)

Ո՛վ այր՝ տեսանեմ զքեզ որ մէկ մի կու յաղթէ քեզ. և լեզուով և արտաքն չար կու խորհի քեզ. կամ հոր մի կու փորէ քեզ. այլ ո՛չ կարէ վնաս առնել քեզ: Գնա՛ ուխտ կատարէ այ՝ որ շատ չարէ փրկեցար. զի հասեալ էր քեզ նեղութի մեծ, այլ ած դարձոյց զչարն ՚ի գլուխն



իւր

իւր։ Նման ես դու իսահակայ. որ հայր իւր կամէր զենուլ զնա. այլ ա͞ծ օգնեաց նմա և փրկեաց զնա. և բազում մեծութե͞ և փառաց հասաւ. Նոյնպէս և դու ուրախանաս կամօքն ա͞յ։ ո͞ք յակոբայ վիճակին է։

Ա՜յ այսոցիկ ամենեցուն գիտօղն է ա͞ծ ճշմարիտ. զի մարդ ոչ է տեսօղ սրտից և ապագայից, այլ՝ ա͞ծ։ Ուստի զոր ինչ ասեն և գրեն իմաստասէրքն, թէական կարծեօք են. Վ͞ս որոյ նմա միայնոյ ա͞յ գիտողէն գաղտնեաց և յայտնողէն ծածկութից՝ փառք ՚ի յա͞մ արարածոց ՚ի յաւիտեանս յաւիտենից Ամէն։

| | | |
|---|---|---|
| Խոյ | Ցուլ | Երկաւոր |
| Խեցգետին | Առիւծ | Կոյս |
| Կշիռ | Կարիճ | Աղեղնաւոր |
| Այծեղջիւր | Ջրհոս | Ձուկն |
| Հրատ | Արեգակն | Լուսաբեր |
| Փայլածու | Լուսին | Երեւակ |
| | Լուսնթագ | |

## Խոյն:

Ո՜վ մարդ՝ լոյսն ահագին փա-
ռաց և շառաւի՛ղն աննուա՛ղ,
ծագեցի ի վր՛ քո ոպ՛ արգ՛ին
ի վր՛ արարածոց: Նոյնպէս և դու 'ի
բանս քո ուրախանաս: Եթէ ուխտ
ես դներ կատարեմ. և տ՛ր լցուսցէ
զխնդրուա՛ծս քո. ապա երազ ես տե-
սեր և զարհուրեր՝ մի' վախենար
երազն 'ի բարին եղև:

## Ցուլն:

Ո՛վ մարդ՝ լուսաւո՛րի խորհուրդ
սրտիդ. յո՛ր ժամ տրտում ես.
մի' վախեր՝ զի չարն հեռացա՛ւ 'ի քէն
և

և բարին մօտեցաւ. և զոր խորհել ես
շուտով տայ քեզ ած զիւր ողորմուն

## ❋ Երկուորն ։

Ո՛վ մարդ՝ զինչ որ խորհել ես՝ կատարի աստուծով. զի շատ բարութիւն կայ յայդ խորհուրդդ. զի դու բարի ես՝ և հարամն քեզ չի գար ։ առ ժամս տրտում ես և ՚ի ցնորի կաս. մի՛ ցնորիր՝ զի շատ բարութի կայ առաջի քո. և զինչ խորհել ես՝ ՚ի բարին կատարի ած ։

## ❋ Խեցգետինն ։

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհել ես ՚ի սիրտդ՝ փախիր ՚ի դմանէ որ չի փաթերակիս. զի քո բանդ ՚ի վերայ չի գար։ պատրաստ կացիր ՚ի չարկամաց. զի ընդ քեզ ուտեն և ըմպեն և քեզ չար կու խորհին։

## ❋ Առիւծն ։

Ո՛վ մարդ՝ տայ քեզ ած զիւր ո-

ղորմութե՟ն · ցանկութե՟ սրտի քո կատարի · և՛ի մօտ աՙուրս՝ ձայն աՙետեաց լսես և ուրախանաս ։

Բայց 'ի կուՙոյ պատրաստ կայցիր · և զոր ուզես՝ տեսանես կամքն ա՟յ ։

❋ Սյոյան ։

Ո՛վ մարդ՝ զլոյսն անըսպառ ծագեսցէ ա՟ծ խորհրդոյ քո · և ողորմութեամբն իւր յաջողեսցէ քեզ զոր դու կամիս ։ այլ երազ ես տեսեր և զարհուրեր · մի՛ վախեր՝ զի Թէպէտ պատերազմն ահագին է , բայց Նշան բարւոյ է · ըռզակ գալոց է քեզ ուստի ակն ոչ ունիս · և այլ զինչ խորհել ես՝ կատարի · Թէ հիՙանդ ունիս ողջանայ · և պատուհասն 'ի քէն հեռանայ կամօՙն ա՟յ ։ այս աՙուրքս որ խ՟ր քո գալոց է՝ լաՙէ քան զառաջինն ։

❋ Սչյան ։

Ո՛վ մարդ՝ զինչ որ խորհեցար մի՛



վա

վախեր այնպէս ուրախանաս որպէս
պիտոյ է քեզ . բայց զխորհուրդ-
ամէն մարդոյ մի՛ ասեր . զի քո մի
ձայն 'ի կշիռն է . և ամէն բան քեզ
յաջող է : Յիշոցաց պատրաստ կացեր
և յամենայն ժամ աղօթք արա . զի
ամէն չար 'ի քէն հեռանայ և 'ի հո
գոյ ազատիս : Թէ 'ի ճանապարհ
երթաս՝ բարով գաս . և թէ վաճառ-
ուանիս՝ բարով շահիս :

### Կարէհն :

Ո՛վ մարդ՝ գիտացի՛ր որ կարճի
թիւնով կամի հարցանել զքեզ
մարդ մի . պատրաստ կացիր 'ի նմանէ
և յայդ խորհրդոյդ հեռացիր՝ որ
պահէ զքեզ ած : Թէ չէ յետոյ ա-
պաշաւես . և թէ համբերես սակա-
ւիկ մի, զինչ որ կամք ունիս կատարի

### Մուշղնաւորն :

Ո՛վ մարդ՝ ժամանակս ըղորդե-
ցաւ քեզ . և քո սրտին խորհուրդն
'ի

՚ի բարին կատարեցաւ · արդ զինչ
որ կամիս և խնդրես ՚ի բանս քո ·
և տայ քեզ ած զխնդրուածս քո ·
մի՛ արտորար սակաւ մի համբերէ ·
և ուստի այն ոչ ունիս՝ ուրախա-
նաս · թէ տուն շինես՝ յաջողէ քեզ
ած · և ՚ի նեղութենէ ազատիս · թէ
հեռաւոր ունիս՝ տեսանես : բայց
՚ի լեզուէդ պատրաստ կացիր :

※ Այծեղջերուն :

Ո՛վ մարդ՝ յիշեա՛ զած ՚ի բանս քո
և նա հանէ զքեզ ՚ի տրտմութե
զի տրտմութի հասանէ քեզ ՚ի սի-
րելեաց քոց · կասես երբ ճար լինի
ինձ կամ յաջողութի · և կու ցու-
ցանէ թէ հիւանդանաս՝ բայց շու-
տով ողջանաս · թէ հեռաւոր ունիս
գայ · և կատարի խնդիրքդ ՚ի բարին :

※ Ջրհոսն :

Ո՛վ մարդ՝ բարութի շատ ունեիր
և յամենեն զրկեցար · պատճառն

տեցար և չար դիպեցաւ քեզ. կը
ուիս սիրելեացդ՝ հետ քեզ եղեն.
և զէտ նաւ խիլք ծովուն երերման
կաս. և կամիս քո կենացդ համ-
գիստ գտանել՝ և ճար չես գտա-
ներ: ո՛վ մարդ մի՛ տրտմիր՝ զի տրտ-
մութի քո յուրախութի փոխի. և
զոր խորհիս՝ կատարի կամաւն այ:

### Ձուկն:

Ո՛վ մարդ՝ հեռաւոր տեսանես. կամ ձայն աւետեաց լսես և խնդաս. զի դժարն քո անցաւ և բարեն մօտեցաւ: այլ թէ խոստումն ունիս կատարէ. և յիշոցաց պատրաստ կացիր: և որպէս կապեալքն որ արձակին՝ և փակեալ դուռն որ բացուի, այնպէս բանալոց է քեզ այծ զդուռն ողորմութեան:

### Հրաշն:

Ո՛վ մարդ՝ նման ես դու հովուին որ փախեաւ ՚ի ցրտոյն և եմուտ ՚ի

՚ի լոյսն · և ոչխարաց հօտս ո՛չ տա-
րաւ̂։ երեկ գայլն և արար գէշ։
Նոյնպէս և դու ՚ի բարոյն հեռանաս
և երթաս զհետ չար խորհրդոյն ·
պատրաստ կաց ՚ի նմանէ և ՚ի նենգա
ւոր մարդոյ · և յայդ խորհրդոյդ
հեռացիր · զի չար խօսք կամ հետ
քեզ · այլ բանդ որ ՚ի մտիտ է՝ քեզ
չար է։ ահա՛ ասացի քեզ զ̃մ։

## ❈ Մ. րէգաչնն։

Ո՛վ մարդ՝ ո՞չ արեգակն որ լու-
սաւորէ զարարածս, այնպէս լու-
սաւորի խորհուրդ քո · զոր կամիս
կատարելոց է քեզ ա̃ծ ըզ բարին։
բայց ՚ի թուխ բոլորերես մարդոյ մի
պատրաստ կացիր · զի որոտոմն նեն-
գէ՛ զքեզ · և լեզուօվն քաղցր խօսի
ընդ քեզ։ բայց դու ՚ի բանի մի վ̃ր
հօգս ունիս՝ և հետ մտիտ քննութ̃ի
կաս · մի՛ վախեր՝ շուտով լուսա-
ւորի խորհուրդ սրտի քո։

### ❋ Լուսաբերն ։

Ո՛վ մարդ՝ ՚ի հետ չար մարդոյ ՚ի
շուրջ մի՛ գար · այս թէ ոչ լսես
փաթերականս ՚ի Նմանէ · և՚ի քո լեզ
ո՞ւէդ պատրաստ կայցէր · և յամէն
մարդոյ քաղցր խօսք մի՛ խաբիր ·
զի կամին կորուսանել զքեզ ։ սա
կաւ՞ մի համբերէ · թէ չէ յետոյ
ապաշաւես ։ շատ բարութիւն կայ
առաջի քո · կորուսածն գտանի · և
զինչ որ առնես՝ յաջողէ քեզ ա̃ծ ։

### ❋ Փայլածուն ։

Ո՛վ մարդ՝ ՚ի հեռաւոր տեղեաց
ձայն աւետեաց լսես և խնդիր
քո կատարի · և ուխտն զոր դրել ես
կատարէ ա̃ծ · չարն հեռանայ ՚ի քէն
և բարին մօտենայ քեզ ։ զինչ բան
որ ունիս՝ արա՛ համարձակ · զի քո
կամքն լինի և ուրախանաս ա̃լ ։

### ❋ Լուսինն ։

Ո՛վ մարդ՝ ցօղ ողորմութեանն ա̃յ
ան

անապական լցի ՚ի քէն . և որ ած
հաստատեսցէ զսիրտ քո։ զոր ինչ
խորհել ես՝ արա և մի՛ վախեր . զի
շատ բարութիւն կայ առաջին քո։
և՚ի հեռաւոր տեղաց ձայն առեա-
եաց լսես ՚ի մօտ ա՛ռուրս և ուրա-
խանաս։ և զինչ սրտովդ ուզես՝
անջքդ տեսանես և խնդաս։

## * Լորխաշն։

Ո՛վ մարդ՝ ընդէ՞ր անխրատ ջանաս
և՚ի զուր աշխատիս . զի դժուա-
րին է բանդ և անհաստատ գործդ .
զի խորհուրդդ այդ որ ՚ի սրտիդ է
ոչ է պատշաճ ժամանակիս։ փոխա-
նակ բարւոյ՝ չար հանդիպի քեզ .
և թէ չլսես խրատու՝ փաթերակիս
ժամանակ մի համբեր տուր սըր-
տիդ . և զյոյսդ առ ած կալ հաս-
տատուն և մի՛ վախեր . զի թշնա-
մին քո գլորի՝ և դու կանգնիս
կամաւն այ։

## Լ ուանլագին:

Ո՛վ մարդ՝ վիճակս ՚ի բարին ելաւ քեզ. այս ղազարու վիճակն է որ չորեքօրեայ մեռեալն յարեաւ:

Տաս աւուրք էր որ քո վիճակն ՚ի պղծէն ելած էր. և դու ՚ի տրտմութե կաս՝ զերդ նաւ երերալով ի վերայ ծովուն. մի՛ վախեր՝ շուտով ելանես ՚ի նեղութենէդ:

Այլ խոստումն զոր ունիս կատարէ. և յիշոցաց պատրաստ կաց. և զաղօթս հասարակաց կատարեա որ ելանես ՚ի նեղութենէդ: և ՚ի մեծ մարդու մի բարի լինի քեզ:

Ա՛ռ այսոցիկ ամենեցուն գիտօղն՝
է ա՟ծ ճշմարիտ ․ զի մարդ ոչ է
տեսօղ սրտից և ապագայից ՚ այլ՝
ա՟ծ ։ Ուստի զօր ինչ ասեն և գրեն
իմաստասէրքք, Թէակամ կարծեօք են
Կ՟ս որոյ Նմա մեծայնոյ ա՟յ՝ գիտօղին
գաղտնեաց և յայտնօղին ծածկու-
Թեց՝ փառք ՚ի յա՟մ սրբարածոց ՚ի յա
ւիտեանս յաւիտենից Ա՟մէն ։



* Յիշատակարան Գրոց։

Շնորհիւ և ողորմութեամբն այ Ամենակարողին և Ամենագորին՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և բարեխօսութեամբ Ամենագովաւելոյն Սրբոյ ածծին Մարիամայ, յանկ ելեալ աւարտեցաւ տպումն պատմութեան գրքոյս ․ որ կոչի՝

ԵՕԹՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ․

Արդ՝ ով բարեմիտ ընթերցօղք սորին․ ՚ի հանդիպելն ձեր այնոյ գրքինս՝ յիշեսջիք ՚ի Քս յայս մեր բնաւ իցս, զհանգուցեալ հայրն իմ զմահտեսի ածատուրն և զկին զորդի նորին զյօհաննէսս, հանդերձ բարեջան և բազմաշխատ որդւովն իմով տէր պօղոսիւ՝ և միւս որդւովս տէր յարութիւնիւ՝ որ շարեաց զգիրս կապարեայս։

Յիշեսջիք և զմշակն գործարանիս՝ բաղուցի տիրատուրի որդի զտէր զաքարն, և դուք յէշ"։